

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ի Ր

№ 4 1889

Ա Պ Ր Ի Լ

1889 № 4

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

	Կրկն	
1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՆԵՅ ԱԼԵՏԻՔ. . . . .	551	«Մարծ»-ը որպէս հասար. օրգան. Ա:
2 ԼՕՆԳՅԵԼԼՕ-ից՝ ՄԱՆՈՒԼԵԱՆՆԵՅ. . . . .	572	Ալարը և Երզր (բանաստեղծութ.):
3 " " . . . . .	573	Անճրեալին օր (բանաստեղծութ.):
4 ԱԼԵՒՐ . . . . .	574	Ինքնապո՛ճ ազրատար (բանաստեղծ.):
5 ՍԱՐԳՍԵԱՆՆԵՅ ԼԵՒՈՆ. . . . .	576	Այց Թիւրքաց Հայաստանին:
6 ՊՈՕՃԵԱՆՆԵՅ ՊԵՐՃ. . . . .	610	Յեցեր (չարահատկութիւն):
7 ԲԱՐԹՈՒԳՈՐԵԱՆՆԵՅ ՅՈՒՀԱՆՆԵՍ. . . . .	650	Տեմպերամենտ (Տպ. մանկ. հետ.):
8 Ա. Լ. . . . .	668	Գրախօսութիւն:—«Ազգիս ր»:
9 . . . . .	675	Գորոցական զորքեր:
10 . . . . .	676	Թիֆլ. Հ. Գրք. Հրատ. Բնկերութիւն:
11 . . . . .	678	Կալիտեան աղբի հաճաճող:
12 ԻՈՐ. . . . .	684	«Մարծ»-ի համակարգութիւնը:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԵՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротинянца, на Гол. просп. соб. д. № 41.

1889



# Մ Ո Ւ Ր Ձ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1889

Ա Պ Ր Ի Լ

1889 № 4

ԱՐԱՋԻՆ ՏԱՐԻ



Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1889

Дозволено цензурою Тифлисъ. 3-го Апрѣля 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.

## „Մ Ո Ւ Ր Ջ“ -Ը

### ՈՐՊԷՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԳԱՆ

#### II

Ի՞նչ է մեր նպատակը, ձեռնարկելով գրել մեր մամուլի անցեալի և ներկայի մասին յօդաձևների այս շարքը: Ի՞նչ է նշանակում, դեռ ևս գործունէութեան միայն շեմքը կոխած՝ սկսել դատողութիւններով մեր նախորդների և ժամանակակից մամուլի ներկայացուցիչների մասին:

Այդ հարցերին արդէն բաւականաչափ պատասխանում են մեր յօդաձևների վերնագիրները: Աշինչ չը կայ աւելի բնական, քան հասարակութեան առջև ներկայանալով՝ պարզել մեր հայեացքները անցեալ և ներկայ գործողների մասին: Այդ գործողների անունների հետ կապւած են որոշ մտքեր, գործելու և քարոզելու որոշ եղանակներ, որոշ աշխարհայեցողութիւններ, գրելու որոշ ձևեր. նոցանից իւրաքանչիւրը աշխատել է իւր ձևով ըմբռնել հասարակութեան և ազգի պահանջները. նոցանից իւրաքանչիւրը աշխատել է այս կամ այն ուղղութիւնը տալ հասարակաց կարծիքին և, այդ նպատակի համար, ամեն մէկը ընտրել է խօսելու մի որոշ եղանակ: Մեր ամեն մի օրգանը ունեցած է և կամ ունի պաշտպանած դատեր, որոնցից կախւած է եղել հասարակաց կարծիքի ուղղութիւնը այդ խնդիրների նկատմամբ. իսկ այդ հասարակաց կարծիքները արտաբայելել են իրականութեան վերայ, նոքա ազդել են մեր հասարակական և ազգային և պետական հաստատութիւնների կառավարչութեան վրայ, մէկի վրայ աւելի, միւսի վրայ պակաս: Աերջուպէս, ամեն մի գործող, ամեն մի օրգան ունեցած է և կամ ունի իւր որոշ բնաւո-

րութիւնը, որը հետեւանք է թէ՛ այդ գործողների անձնական յատկութիւնների և թէ՛ նոցա ունեցած մտաւոր պաշարի կեանքի ամեն տեսակ երևոյթների վերաբերեալ: Եւ նոյն իսկ գործող անձերի կըրթութիւնը՝ նոցա ներշնչման աղբիւրները, անգամ նոցա իւրաքանչիւրի տեմպերամենտը ունեցած են ազդեցութիւն հրապարակաստութեան վրայ: Մի խօսքով, ամեն մի օրգան ունեցած է իւր մտածելու և գործելու եղանակը, որը ուղիղ, որը սխալ, որը օգտաւէտ, որը վնասակար, որը չառաջդիմութեան նպաստող, որը չառաջդիմութեան գործը խանգարող, որը սահմանափակ և որը լայն աշխարհայեցողութեամբ, որը ժամանակակից և որը անժամանակակից՝ հասարակութեան մտածող դասի պահանջները չ'ըմբռնող և նորա թէ արձագանքը լինելու և թէ նորան առաջնորդելու անընդունակ: Դեռ ևս մեր առաջին յօդւածում մենք մի օրինակ տեսանք, թէ ի՞նչպէս միևնոյն անունը կրող մի օրգան, ղեկավարւած միևնոյն անձից, կարող էր իւր գործունէութեան մի շրջանում լինել օգտակար, յառաջադէմ, ժամանակակից, հոսանքներ առաջացնող, անգամ տաղանդներ արտադրող, վառող,—իսկ հետեւեալ շրջաններում լինել և երևալ մերկ, գաղափարից զուրկ, տաղանդներ փչացնող, մարող, աւելի գայթակղող, քան ստեղծող և, վերջապէս՝ անբովանդակ, չնչին: Գալ և խօսել հասարակաց կարծիքը ղեկավարող օրգանների մասին, այդ մի վարմունք է, որ եթէ մենք ինքներս չ'անէինք, ընթերցող հասարակութիւնը ինքը կը պահանջէր մեզնից և կը պահանջէր ամենաիրաւացի կերպով: Եւ կեղծ ենք համարում այն զարմանքը, որ այս կամ այն անձը փորձած կը լինէր ցոյց տալ մեր այդ վարմունքի պատճառով:

Եւ այդ կեղծութիւնը այն աստիճան բնորոշ է հասարակութեան մի որոշ դասի համար, որ ոչինչ զարմանալի չէ գտնում կարծես, երբ քննադատութիւնը համեստութեան խնդիր է շինում և մանաւանդ երբ այդ զարմանքը յայտնուում է մի օրգանի բերանով, որը ամեն ջանք գործ է դրել անհամեստութիւնը գրական-հասարակական ախտ դարձնելու:

Հասարակութիւնը, եթէ նա չէ սիրում թիւրիմացութիւններ, ինքը, ասում ենք, կը պահանջէր մեզնից մեր հայեացքը գործող օրգանների մասին: Արոշել մեր ղիրքը մեր կեանքի վերայ իշխած և

իշխող մտաւոր հոսանքների զիմաց և ցոյց տալ, թէ ներկայումս գոյութիւն ունեցող գործող խմբերի մտածելու և գործելու եղանակները ի՞նչ ծագումն ունին ու ո՞րքան նոքա յարգելի են և ո՞րքան անյարգելի և, վերջապէս, թէ ո՞ր չափով մենք կարողացել ենք ըմբռնել իւրաքանչիւրի գործելու շարժառիթները—նոցա լաւագոյն ես-ը—ահա՛ մեր այս յօդւածների նիւթը, իսկ նպատակն է՝ «Մուրճ»-ի բնաւորութիւնը որոշել:

Մենք շատ քաջ դիտենք, որ շատերը մեզնից առաջ այս ձևով չեն յայտնել իրանց ինչ լինելը: Գիտենք և այն, որ մի ուրիշը կը սկսէր իւր յառաջարանը մի ծրագրով, որի մէջ «յառաջդիմութիւն, ազատամտութիւն, հասարակաց և ազգային շահերի պաշտպանութիւն և նախանձախնդրութիւն» բառերը իրար հետ կը մրցէին: Բայց և այս հաստատ է, որ ոչ ոք այդ ստէօրեօրիպ դարձած Ֆրազներից բան չէր հասկանալ: Ո՞ւմ համար է զաղտնիք, եթէ ոչ մտքով անկիրթ և զրականութեան անսովոր մարդու համար, որ գեղեցիկ բառերը իրանց սեպհականութիւն դարձնելու համար ամենքը իրար հետ մրցում են, բայց հէնց որ խօսքը աւօրեայ մի խնդրի մասին է—բոլորեքեան տարբեր կարծիքների են:

Խօսքերը նշանակութիւն ունին, եթէ միայն նոցա հետ կապւած են որոշ մտածողութեան եղանակներ, որոշւած կամ գիտութիւնից կամ կուսակցութիւնների պատմական անցեալից: Եւ այն ժամանակ ազատամտութիւն, պահպանողականութիւն և այլ խօսքերը ոչ այնքան իրանց բառի բուն նշանակութեամբ են հասկացւում, որքան համեմատ այն ոգու, որն բղխում է կուսակցութեան անցեալ և ներկայ գործունէութիւնից: Բայց քանի որ մեզանում քաղաքական, հասարակական, ազգային հաղար ու բիւր խնդիրներից դեռ ևս շատ քչերն են յուզւած, կուսակցութիւնների զիրքերն էլ դէպի այս կամ այն խնդիրը դեռ ևս չեն որոշւած: Նշանակում է թէ գոյութիւն ունեցող զանազան խմբերն էլ չեն կազմում կուսակցութիւններ՝ բառիս բուն նշանակութեամբ:

Ոչ, մենք մեր ծրագիրը և մտածելու եղանակը հին, ոչինչ չ'ասող, իսկ շատ անգամ միայն մոլորեցնող խօսքերով չենք ուզում ներկայացնել հասարակութեան առջև. մենք ասպարէզ ենք զալիս քննադատութեամբ, որը շատ աւելի պատասխանատու գործ է. այն

քննադատութեամբ, որը, մենք ևս ուրիշների հետ պնդում ենք, չի եղած մեր գրականութեան մէջ, բայց որը թէ ամենաազնիւն է և թէ շատ սովորական է զարգացած երկիրների մամուլի համար: Որոնել և գտնել այն, ինչ կար և կայ դնահատելի թէ մեր անցեալ և թէ ներկայ գործողների գործունէութեան մէջ և ուղղակի ցոյց տալ այն, ինչ մեզ համար որ և է կերպով ընդունել անկարելի է, այն, ինչ հակառակ է մեր կազմած գաղափարներին ժողովրդական յառաջդիմութեան համար— դա միայն այն օրդանը կարող է և միայն այն օրդանը պէտք է անի, որը ներկայ նեղ, սնտախ կուսակցութիւնները չի ընդունում, այլ որը կարծում է, թէ հարկաւորութիւն կայ ստեղծել մի նոր սերունդ՝ աւելի լայն և աւելի բարձր աշխարհայեցողութեամբ: Սերունդ, որի ոտքի տակի հիմքը այնքան ստոր չը լինի, որ չը կարողանայ իւր հայեցողութիւնը տարածել բոլոր գործառնութիւնների վերայ, որ կատարւում են մեր ժողովրդական կեանքում և որի խելքը այնքան տափակ չը լինի, որ կորցնի ընդունակութիւնը հասկանալու այն բոլորը, ինչ մի նեղ և սահմանափակ ծրագրից զուրս է, և այն էլ մի ծրագրից և մտածելու ու գործելու եղանակից, որի սահմանները որոշող եղել է մտքի տափակութիւնը, նեղութիւնը, յաճախ մտքի կուրութիւնը: Այդ պայմանները ստեղծելու համար անհրաժեշտ է մտցնել մեր կեանքի մէջ քննադատութեան մեթոդը, որը գրեթէ կատարելապէս բացակայում է մեզանում և որին ճանապարհ հարթելու համար «Մուրճ»-ը այժմ հիմնաքարն է դնում: Եւ երբ այս ուղղութիւնը խոր արմատներ կը գցի հասարակութեան մէջ— այն ժամանակ պէտք է յուսալ, որ հրապարակախօսութիւնը մեզանում մի աստիճանով կը բարձրանայ և շատ բան, ինչ այսօր սովորական է թւում այժմեան մամուլի մէջ, նոյն ձևով արխիւ կը գցելի, որպէս արխիւ է գցում յառաջդիմութեան պահանջներին չը համապատասխանող ամեն մի ուղղութիւն:

Վտանգաւոր, վտանգաւոր դրութիւն, երբ ինտելիգենտ, ձրգտումներով լիքը, բարին գործելու դիտաւորութիւններով, եռանդը սրտներում մարդիկ, մանաւանդ որ բնութիւնը չի զլացել նոցա ձիրքերով և դատողութեան ընդունակութիւններով օժտել, երբ այդ մարդիկ, ասում ենք, սոխալած են լինում սեղմել նեղ ինտերեսներից դէնը սիրտը չբացւող մի ընկերութեան մէջ... Եւ երբ միտքը

և սիրտը ընդհանուրը ընդգրկելու կարելիութիւնից զրկւած են, ոչինչ չէ մնում, քան նեղ շրջանակի մէջ պատել ու պտտել, նեղանալ, բորբոքւել, և կամ բոլոր ոյժը կորցնել աննպատակ և յաճախ ընդհարումներից միմեանց հետ, ընդհարումների, որոնց շարժառիթը աւելի մեծ գործերի մէջ բաւականութիւն չ'գտնող եսն է և կամ ուղղակի իրար չ'հասկանալը և իրար հասկանալու համար հարկաւոր պայմանների բացակայութիւնը:

Հին հրապարակախօսական ուղղութեան բնորոշ յատկութիւններից մէկը հէնց այն է, որ նա իւր բնաւորութեան հակառակած կը լինէր, եթէ փորձէր ակնարկ զցել անցեալի և ներկայի վերայ իմաստասիրական աչքով. իսկ եթէ նա ստիպւած էր լինում մէկ կամ միւս գործիչի անունը տալ, այդ անում էր և անուում է՝ լոկ բանակուական դիտումներով: «Մուրճ»-ը և՛ այդ կողմից հետևում է այլ ուղղութեան. նորա քննադատութիւնը ուսումնասիրութեան արդիւնք է և չէ ծագում կուելու պահանջներից: Ահա թէ ինչո՞ւ մեզանում ամեն մի զրւածք, որը խոստանում է քննադատական լինել—իսկապէս ոչ այլ ինչ է լինում, եթէ ոչ ամեն բանի հերքումն, և, ընդհակառակը, երբ մի քննադատութիւն վերջանում է ոչ ի նպաստ քննադատուած անձի, զբրււածքի, ուղղութեան—նորան արդէն առանց այլ և այլութեան անւանում են հայհոյական: Հրապարակախօսական անշնորհքութիւնը, միտք արծարծելու և առաջադրւած խնդիրները լուսաբանելու և քննադատելու համար հարկաւոր գիտութեան և ուղղամտութեան պակասութիւնը այլապէս չէին կարող կրթել մի հասարակութիւն, որը զարեւրից ի վեր չի ունեցած զրական և քաղաքացիական կրթութիւն: Եւ ոչինչ չը կայ զարմանալու, որ շնորհիւ մեր այժմեան մամուլի բռնած ուղղութեան, հասարակութիւնը մանաւանդ գործը շարունակելու կոչւած մատաղ թէկուզ և ուսեալ սերունդը գրեթէ ոչինչ չը զիտէ մօտ երեք տասնեակ տարի մեզից առաջ գործած անձերի և օրգանների մասին և ոչ էլ մեր ժամանակների գործող օրգանները քննադատութեան են առնւած: Եւ միակ մարդը, որով զբաղւած է եղել մեր ներկայ մամուլը—Ստեփաննոս Նազարեանցն է, այն էլ ոչ կամովին, այլ պատահաբար՝ մահւան պատճառով և ստիպւած՝ բա-

նակոււի համար: Ինչ կասկած, որ և մտաւոր հոսանքները, որոնք այս րոպէին իշխում են մեր մէջ և որոնք արտայայտուում են ներկայումս գոյութիւն ունեցող «խմբերով» (որոնց կուսակցութիւնների անունները տալ չենք կարող)—ինչ կասկած, ասում ենք, որ այդ հոսանքները քննադատութեան չեն առնւած և որ ոչ զիտակցօրէն կազմւած այդ խմբերը իրար չեն ճանաչում, չը նայած նոցա փոխադարձ խորին ատելութեան:

Ինքնաճանաչութեան նպատակով ձեռնարկած այդ ուսումնասիրութեան առաջին փորձը անում է «Մուրճ»-ը իւր առաջին իսկ համարից: Այդ առաջին համարում մենք զբաղւեցինք «Հիւսիսափայլ»-ի և «Մշակ»-ի բնաւորութիւնները որոշելով. այս անգամ մենք կ'աշխատենք ճանաչել ներկայումս իշխող շրջաններից մի երկրորդին, որի արմատը դտնելու համար «Յուռնի» ամսագրին պէտք է դիմել:

Հայ հասարակութեան յառաջդիմութիւնը միմիայն մի ուղիով չէ ընթացել, այլ նա ունեցել է և շարունակում է ունենալ զանազան շառաւիղներ: Նազարեանցն ըստ ամենայնի ուզում էր եւրոպականը պատւաստել հայկական կեանքին. նորա մտածողութիւնը զուտ եւրոպական էր և գիտնական. զիտութիւնը իւր բոլոր ճիւղաւորութիւններով—փիլիսոփայական և՛ բնագիտական և՛ պատմական—Նազարեանցի մտածողութեան գլխաւոր աղբիւրն էր: Թէպէտ և շատ հմուտ հայկական պատմութեան, Նազարեանցը իւր մտածողութեան եղանակը հայկական խնդիրների մասին որոշում էր համեմատ զիտութեան և եւրոպական քաղաքակրթութեան թելադրութիւններին—բոլորովին անկախ հայկական պատմական զարգացման ընթացքից: Այդ ուղղութեան մեծ արժանաւորութիւնը նորա նորութիւնն էր. նա լաւ ազդեցութիւն ունեցաւ յառաջդիմութիւն որոնողների վրայ, որովհետեւ այդ հրապարակախօսութիւնը կարծես վերցրեց մի ծանրութիւն, որի տակ ընկճւած էր քաղաքակրթութեան զաղափարը, որը ղեզբուում էր շատ տեղերում մութ, անաչակ, խառն, քննադատութեան բովով չ'անցկացած, միակողմանի, աւելի սիրտ շարժող քան մըտ-

քին սնունդ տուող հայկական պատմութեան մէջ մի կողմից և զրաբարամոլութեան մէջ՝ միւս կողմից: Նազարեանցի հրապարակախօսութիւնը սթափեցուցիչ, ազատիչ ներգործութիւն ունեցաւ, բացելով հայի առջև եւրոպական աշխարհայեցողութեան լայն ասպարէզ և ազատելով հայի միտքը աւանդական հայեացքների կաշկանդումից:

Այլ բնաւորութիւն էր կրում «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը, որի խմբագիրն էր Մարկոս Աղաբէկեանը և որը հրատարակւում էր նոյնաժամանակ, բայց մեր հայրենիքին մօտ Թիֆլիսում: «Կռունկ»-ի պատրաստած շիօլան շատ մեծ է և այսօր էլ հայկական մտածողների և գործողների մի մեծ մասը գտնւում է «Կռունկ»-ի թէ միջական և թէ անմիջական ազդեցութեան ներքոյ, ղեկավարւելով «Կռունկ»-ի սերմանած մտքերով և նորա վառած զգացումներով:

Իսկ այդ մարդիկ մի սերունդի չեն պատկանում: Կայ մի սերունդ — այժմ ծերունի, որի ներշնչանքը սկիզբն է առնում «Կռունկ»-ից առաջ, բայց որի արտայայտողներին էր «Կռունկ»-ը ինքը. և այդ զպրօցի գլուխն է հայկական այն մեծ մարդը, որը ներկայ մարտ ամսի 10-ին իւր հրաժեշտը տւեց այս աշխարհին: Կա էր Պետրոս Շանշեանցը, հիմնադիրը կրօնական-բարոյական կրթութեան հայերիս մէջ: 50-կան և 60-կան թւականներին գործող անձերից նշանաւորները Կովկասում — Շանշեանի երկրպագուներն են՝ Իւրի Հախվերդեան, Գրիգոր Եղմիրեան և ուրիշները: Մի այլ սերունդ կազմում են «Կռունկ»-ի բուն խումբը՝ Համբարձում Էնճիաճեանը, որպէս կապող ոգին և խմբի գլխաւոր տնտեսը, մէկը հիմնադիրներից «հայկական սուլարանի» և հիմնադիրը «Կռունկ» ամսագրի, Մարկոս Աղաբէկեանը, Յակոբ Կարինեանցը, Նախկին Գարեգին Սուրահեանցը, Պետրոս Սիմոնեանը և ուրիշները: Այդ խմբի մէջ կրթւում է մի աւելի նոր սերունդ. «Կռունկ»-ի մէջն է, որ զարգացրեց իւր տաղանդը Պերճ Պօօշեանցը. «Կռունկ»-ի մէջն է, որ ստացաւ առաջին գրական ճաշակը նախկին գրաշար, յետոյ ազատ ուսանող, այժմ յայտնի հեքիաթաբան Ղազարոս Աղայեանցը: «Կռունկ»-ի խմբի մտաւոր և բարոյական մթնոլորտի մէջ շունչ քաշողներից չիշենք Միսաք Արամեանցին: Մի խօսքով, «Կռունկ»-ի շիօլան ամենամեծ հայկական շիօլաններիցն է, որոնք ուղղութիւն են տւել հայկական գրականութեան, դաստիարակութեան և առհասարակ յառաջդիմութեան գործին: Այդ շիօլայի նորագոյն

սերունդն է «Նոր-Դար»-ի խումբը՝ Սպանդար Սպանդարեանց և Միսաք Արամեանց. խումբ, որին իւր հակումներով պատկանում է Պերճ Պռօշեանցը, չը նայած որ նորա աշխատութիւնները ուրիշ շրջաններումն են փայլած: Դոցանից ամենակուռնկականն են Պռօշեանցը և Արամեանցը. երկրորդը ժառանգել է «Կռունկ»-ի մտքերի հետ միասին նաև «Կռունկ»-ի յատկանիշ ոճը և նորա հրապարակաստեան յատկութիւններից շատերը. իսկ առաջինը՝ հողեպէս ապրում է «Կռունկ»-ով, որի հետ մտքի և սրտի մտերմութիւնը այնքան մեծ է, որ կարելի է համարձակ ասել, որ նորա վերայ ժամանակը գրեթէ չի ազդել: Առանց յայտարարելու, գուցէ և անդիտակցաբար, «Նոր-Դար»-ը շարունակում է այսօր «Կռունկ»-ի շիջան, «Կռունկ»-ի հրապարակաստեութիւնը, ի հարկէ ոչ իւր սկզբնական ձևով, այլ այն փոփոխութիւններով, որ կարող էր մտցնել ժամանակը, և պիտի խոտովանած, ոչ այն տաղանդով: «Կռունկ»-ի հիմնական միտքը ժառանգած է «Նոր-Դար»-ը՝ յանձին խրմբագրի, իսկ ոճը, գրելու ձևը, մասնաւորապէս Մարկոս Աղաբէկեանինը և «Կռունկ»-ի ամբողջ ոգին և ուղղութիւնը ժառանգած է Միսաք Արամեանցը:

Բայց ի՞նչ բնաւորութիւն էր կրում «Կռունկ»-ի հրապարակաստեութիւնը, ո՞ր խնդիրներն էին կազմում «Կռունկ»-ի հրապարակաստեութեան նիւթը, ի՞նչ էր քարոզում նա, ի՞նչ ոգով էր տողարւած, ի՞նչ մնաց նորանից և ի՞նչ կորաւ:

«Կռունկ»-ի հրապարակաստեութեան ծուծը ամբողջապէս պարունակւած է Մարկոս Աղաբէկեանի հետևեալ գլխաւոր յօդւածների մէջ, որոնք են՝ «Ճաշակ ազգային և հրապարակական դաստիարակութեան վրայ» («Կռունկ»), առաջին տարի, 1860 թ., №№ 2, 3 և 4-րդ), «Խօսք մեր հայոց աշխարհի որդւոցն ազգային և բարոյական լուսաւորութեան վրայ» (1860 թ., №№ 5-դ, 6-դ, 8-դ, և 9-դ), «Ազգային և բարոյական հրահանգ» (1860 թ., № 11). «Մտածմունք մեր հայոց ազգային և բարոյական զարգացման վրայ, թէ ի՞նչպէս է եղել մեր նախնի հայոց մէջ և թէ ի՞նչպէս պէտք է լինի մեր արդի հայոց մէջ ընտանեկան կեանքն ու հողին ազգօրէն և

բարոյապէս նկատելով» (1861 թ., №№ 8, 9, 11), «Հայոց աշխարհի Կռնկան կողմէն ջերմեռանդ սրտով շնորհաւոր նոր տարի համօրէն ազգայնոց» (1862 թ., № 1.), «Բանաքննական» (1862 թ., № 8, 9.): Համեմատելու է նաև «Հայոց աշխարհի Կռնկան խապրիկները», ցրած զանազան համարներում, Կ. Մուրադեանի (1860 թ., № 1) «Թէ ինչո՞ւ է անուեն Կռունկ» և «Նկատմունք Ս. Նազարեանցի մի ամենամեծ խնդրոյ պատճառաւ» (1860 թ., № 8):

Այդ յօդուածները մէջ պարունակեալ է բոլորը, ինչ վերաբերում է «Կռունկ»-ի ծրագրին, նորա կոչման. նոցա մէջ ենք գտնում այն խնդիրները, որոնք զբաղեցնում էին 60-կան թւականների սկզբի հայ գործիչներին և մտածողներին. նոցա մէջն է, որ պէտք է որոնել այն ժամանակակից ինտելիգենտ հայի ողին և մտածողութեան սահմանները:

«Կռունկ»-ը անկասկած յառաջդիմական մի օրգան է, բոլորովին արժանի Նազարեանցի «Հիւսիսափայլ»-ի ժամանակակիցութեան: Երկու հրատարակութիւններին էլ յատուկ է յառաջդիմական դաւանանքը: Վերջինս երկուսի մօտ էլ հաւասարապէս անկեղծ է և երկուսի էլ հրապարակախօսական արդիւնքները եղան բեղմնաւոր թէ մտքի և թէ կեանքի համար:

Բոլորը, ինչ զուտ հայկական կեանքը կարող էր լուսագոյնը ստեղծել, ներշնչելով հայկական քաղաքակրթութիւնից, մաքուր հայկական աւանդութիւններից, դորա արդիւնքն է՝ «Կռունկ»-ը իւր չորս տարեայ հրապարակախօսութեամբ՝ 1860-ից մինչ 1863 թւականի վերջը:

«Կռունկ»-ի դադարումից յետոյ այն օրգանը, որի մէջ մտաւ «Կռունկ»-ի հրապարակախօսական աւանդութիւնը, պ. Սիմէօնեանցի «Մեղուն» էր. բայց «Մեղուն»-ի մէջ «Կռունկ»-ի գտութիւնը նսեմացաւ այն աստիճանի, որ «Կռունկ»-ի մէջ աւանդապահութեան հետ անլուծելի կերպով կապեալ յառաջդիմական զաղափարը տեղ սուեց լոկ աւանդապահութեան զաղափարին. իսկ այս վերջինս էլ չէր քննադատուում այն պարզութեամբ և այն նախապաշարումից բոլորովին զուրկ աչքով, ինչ աչքով որ նայում էր աւանդութեան խնդրի վերայ Մարկոս Աղաբէկեանը: «Մեղուն»-ի մէջ անցկացան «Կռունկ»-ի խնդիրները, «Կռունկ»-ի գատերը, բայց ոչ «Կռունկ»-ի զուտ ողին և, մասնաւորապէս, «Կռունկ»-ի

հրապարակախօսական տաղանդը: Այդ ոգին իսկապէս իւր իշխանութիւնը կորցրեց. նորան չը կարողացաւ շարունակել և, որ զլիսաւորն է, զարգացնել՝ ո՛չ Խորէն Ստեփանէն, «Առունկ» ամսագրի հրատարակութեան զանազան անուններով շարունակողը և ոչ էլ պ. Միմէօնեանցի «Մեղու»-ն, շարունակողը Մանդինեանցի հրատարակութեան: «Առունկ»-ի ոգին մնաց միայն մասնաւոր խմբերի մէջ, որոնք օրգան չունէին: Այդ խմբից նոքա, որոնք աւելի «Առունկ»-ի ցառաջղիմական դաղափարին էին յարած, 70-կան թւականներին, ընտրութիւն անելով «Մեղու»-ի և «Մշակ»-ի մէջ՝ մտան «Մշակ» լրագրի, իսկ յետոյ մանաւանդ «Փորձ» ամսագրի մէջ. իսկ նոքա, որոնք «Առունկ»-ի լոկ աւանդապահութեան վարդապետութեանն էին յարած՝ ընտրեցին «Մեղուն» իբր ապաստան, թէպէտ և այդ օրգաններից ոչ մէկը, առանձին վերցրած, չէր համապատասխանում «Առունկ»-ի շիջւոյն: Այդ խումբ մարդիկ, որոնք իրանց ուղղութիւնը ստացած էին «Առունկ»-ից, բաց որոնք կարող էին և մոռացած լինել իրանց զայրոցի անունը, չէին կարողանում գոյութիւն ունեցող ոչ մի օրգանին տեղապէս չարել, այլ փոփոխում էին, ընկնելով դէս ու դէն: Իսկ ժամանակաց նորագոյն սերունդը, որը աչքը բացած՝ հէնց «Մեղու» և «Մշակ» էր տեսել, ոչինչ տեղեկութիւն չ'ունենալով այդ խումբ մարդկանց հոգեկան դրութեան մասին, «բանակ»-ների այդ փոփոխութեան մէջ տեսնում էր լոկ փոփոխամտութիւն և կամ, ինչպէս «Մշակ»-ը մի ժամանակ գիտէր ասել՝ «դրօշակի դաւաճանութիւն»: Պերճ Պռօշեանց, Միսաք Արամեանց, Յովակիմ (այժմ՝ Նդիշէ քահանայ) Գեղամեանց, Սպանդար Սպանդարեանց, մասամբ նաև Ղազարոս Աղայեանց և շատ ուրիշները, առանց ուղղակի մի խմբի պատկանելու նոյն հոգեկան դրութիւնը պէտք է կրում լինէին: Բոլոր այդ գործողները, որոնց անունները երկար կըլինէր տալ, երկար ժամանակաց ընթացքում, քան քան տարբեր շրջանների, տարբեր կրթութեան և տարբեր ընկերութիւնների միջով էին անցել, որ ամենքն այլ ևս իրար գրկել չը կարողացան, երբ հիմնընդէս «Նոր-Ռար»-ը, որը իւր մեծ անտաղանդութեամբ հանդերձ, աւելի մեծ իրաւունքով կարող է «Առունկ»-ի շիջւոյնց համարել քան պ. Միմէօնեանցի «Մեղուն», թէպէտ և նա անցաւ վերջինիս միջով: «Նոր-Ռար»-ի աշխարհայեցողութիւնը աւելի լայն է, քան «Մեղու»-ինը և աւելի սիստեմական, քան «Մշակ»-ինը. բաց և այնպէս

մենք գտնում ենք, որ «նոր-Նար»-ը ցայժմ մի նշանաւոր դեր չը կատարեց: Նա, կարելի է համարձակ ասել, ոչ մի հոսանք չառաջացրեց, իւր հետ գրեթէ ոչինչ չը քաշեց և իրանից նոր բաց չը թողեց:

Ինչի՞ցն է այդ: Օ՛հ, դորա զաղտնիքը մի մեծ հանդամանքի մէջն է, որը ոչ մի կապ չունի անձնաւորութիւնների հետ: Անշուշտ այդ հարցը շատերն են դրել, բայց կարծում ենք, որ պատասխանը մի քանի անձնական նկատողութիւններից զէնը չի անցել: Մենք մեր կողմից գտնում ենք հետեւեալը: Այն սերունդը, որը կազմւել էր «Վոունկո»-ի ազդեցութեան ներքոյ, որքան էլ զաղափարական լինէր նա,—և մենք մեր կողմից գտնում ենք, որ զաղափարը մեծ տեղ է բռնում նորա մէջ,—այնու ամենայնիւ նորա հիմնական զաղափարի ներու-թիւնը չի թող տւել մտածողութեան բաւականաչափ ազատ և ընդարձակ ծաւալման: «Վոունկո»-ը իւր ներշնչման բոլոր ազբիւրը որոնում է ազգի անցեալի մէջ, իսկ ներկայումս Հայաստանեայց եկեղեցու հաստատութեան մէջ, որը կապ ունի նոյն այդ անցեալի հետ: Թողնենք սա այժմ՝ թէ ինչպէս այդ միտքը կարող էր զարգանալ մի այլ եղանակով, այժմ մենք վերցնենք միայն այն, ինչ իրօք ներկայացնում են այդ մտքի ժառանգները, այսինքն նոքա, որոնք սերւեցին «Վոունկո»-ից: Այդ սերունդների մասին մենք արդէն խօսեցինք վերև, բայց միայն այս տեղում յարմար ենք համարում այդ սերունդների բնաւորութեան մի ուղղութեան մասին խօսել, որը կապ ունի մեր առաջադրած խնդրի հետ: Այդ սերունդների բնաւորիչ յատկութիւններից մէկն է՝ մտավախութիւնը, որով իսկապէս այդ սերունդները զանազանւել են միւսներից: Ամեն միտք, ամեն մի նոր առաջարկութիւն, ամեն ձեռնարկութիւն, որոնք քիչ թէ շատ նորութեան բնաւորութիւն են կրում, որոնց մէջ ուրիշ ազգի կուլտուրայի ազդեցութիւն է երևում և կամ ոչ անպատճառ ազգային, այլ սոսկ անհատական հանճարի արդիւնք են, այդ բոլորից քաշոււմ են այդ սերունդները: Ամեն բան, ինչ հնուց ժառանգած չէ—դոցա աչքում ազգային չէ, թէկուզ մեր ազգին վերաբերելիս լինի: Արպէս զի չափազանցութեան ոյժով մեր միտքը աւելի ընդհանր կերպով արտայայտենք, կ'ասենք, որ քիչ է մնում քիմիական գիտութեան նշանակութեան մասին մեր ազգի համար՝ նոքա զիմեն

խորհուրդի Մովսէս Խորենացուն և Եղիշէին: Յետ քաշած և խորասուզած իրանց մի քանի շագագային մտածմունքներով», նոքա ականջները փակած են բոլոր միւս լուրերի համար և մտքերը՝ բոլոր միւս գաղափարների համար: Եւ զարմանալի է այս երևոյթը: «Հիւսիսափայլ»-ի ազատ մտածողութիւնը ժառանգաբար հասաւ «Մշակ»-ի անհեթեթութեան, իսկ «Վուռնկ»-ի հայրենական մտածողութիւնը՝ «Մեղու»-ի քաղցածութեան: Եւ «Վուռնկ»-ի մտածողութեան մօտիկ շրջանները ցայժմ այդ տիպարի մարդիկ են ստեղծել՝ մտավախներ, ինչպէս վերը ասացինք:

Այդ դպրոցի մեծ սխալը սա է, իբր թէ հայկական կեանքը ինքն իւր մէջ բոլոր տարրերը բաւականաչափ ունի՝ անկախ զարգանալու համար: Իսկ սխալ է և մեծ սխալ: Գոնէ երկար զարբերով հայը, զրկւած անկախ զարգացումից և վայրենաբարոյ ասիական ազգերի հարևանութեամբ՝ պէտք է կորցրած լինի նաև որոշ հասկացողութիւնը յառաջդիմական կեանքի բոլոր պայմանների մասին: Ուրեմն ամեն ինչ կշռել, այսպէս ասած՝ «հայի խելքով», դա զբւարին գործ է, գուցէ և անկարելի. այնպէս որ օտարի օրինակով համար շատ հանգամանքներում ուղղակի պարտապիւր է: Մենք զրուում ենք, որ «Վուռնկ»-ի այս միտքը, թէ միմիայն այն պէտք է ընդունել, ինչ զերծ կարող է դուրս գալ հայկական ոգու բովից անցկացնելուց յետոյ՝ այդ միտքը ասում ենք, շատ նեղ կերպով էր ըմբռնած: Մենք գտնում ենք նաև, որ «Վուռնկ»-ի յորդորը դէպի անցեալը մեր աչքը դարձնել՝ ունեցաւ նաև այս հետևանքը՝ որ շատերը այդ պատրւակով ուղղակի աչքերը փակեցին դէպի ամեն բան, ինչ զուտ հայկական չէր: Եւ այդ, արդէն նեղացրած ուղղութիւնը, շարունակեց կոչւել շագագային ուղղութիւն: Այդ ասելով, մենք ի նկատի ունինք իրականութիւնը: Արդ, իրականութիւնը սա է, որ «ազգային» կոչւած ուղղութեան ճանաչւած ներկայացուցիչները ցոյց չբուին մեծ հասկացողութիւն ժամանակի յառաջդիմական պայմանների մասին և ոչ էլ բարեկամական սէր դէպի նոր սերունդները: Սոցա ղեկավարութիւնը, այդ իսկ պատճառով, նոցա ձեռքից դուրս պրծաւ: Նոքա կորցրել էին մտքի թարմութիւնը նորանոր գաղափարները նորագոյն մտքով ըմբռնելու և հասկանալու, ուրեմն և իւրացնելու համար: Այսպիսով ստեղծւեց մի մեծ խոր-

Թուժիւն եւրոպական գաղափարներով կրթւածների և սոսկ հայկական կրթութիւն ստացածների մէջ:

Այդ հանգամանքների պարզ հետեւանքը սա է, որ այդ սերունդների ներկայացուցիչները նշանաւոր դեր չը շարունակեցին. նոքա ժամանակից աւելի յետ մնացին: «Վոուսի»-ի դրական առաջարկութիւնները ուսումնարաններին վերաբերեալ, որպէս պիտի շուտով տեսնենք, իրագործւեցին և «Վոուսի»-ը աւելի ժամանակակից էր և յառաջադէմ, քան նորանից սերւածները, որոնց մէջ նոր մտքեր այլ ևս չենք նկատում: Արդ, այդ մտքից սերւածների հէնց լաւագոյն ներկայացուցիչներն են, որ ստեղծեցին «Նոր-Նար»-ը, որը, ի հարկէ, որպէս այդպիսին, նոր հոսանք չը պիտի կարողանար յառաջացնել:

«Վոուսի»-ը պահանջում է, որ հայկական ազգը հոգով վերանորոգւի, թօթափելով իւր վրայից այն բոլորը, ինչ կարող էին ապականիչ կերպով ազդել դարերով իւր կեանքի մէջ մտցրած զանազան թէ՛ ասիական և թէ՛ եւրոպական ներմուծումները: Նա խստորէն պահանջում է, որ ամեն գաղափար, ինչ ընդունւում է, անցկացւի հայկական ոգու բովի միջով և ընդունել միայն այն, ինչ կարող է այդ բովի միջից զերծ դուրս գալ: Այդ ասելով նա բոլորովին համոզւած է, որ ամեն իսկապէս յառաջդիմական գաղափարին և մանաւանդ եւրոպական զիտութիւններին, եւրոպական յառաջդիմական և հանրամարդկային մտքերին ոչ միայն հակառակ չէ զուտ հայկական բնաւորութիւնը, այլ ընդհակառակը՝ նա նպաստող է: Աղաբէկեանը հակառակ է միայն ամեն ազդեցութիւնների անզիտակցական կերպով ընդունելուն, որը կարող է պատահել միմիայն հայկական ազգային դաստիարակութեան պակասութիւնից:

«... Մենք՝ հայոց աշխարհիս որդիքս՝ այսօր ստանում ենք գաղղիական, անգլիական, ամերիկեան, գերմանական, իտալական լուսաւորութիւն՝ հանդերձ պապական, բողոքական և այլ վարդապետութիւնների, խառնում ենք մեր ի հնուց ունեցած պարսկական, թուրքական բարուց և սովորութեանց հետ և չը գիտենք՝ ինչ է դուրս գալիս:

Նե իրօք, այդքան բազմազան և զօրեղ ազդեցութիւնների տակ

չ'ընկճելու, նոցա մէջ հայկական ինքնուրոյնութիւնը չը կորցնելու համար, բայց և այնպէս կանգ չ'առնելու, այլ յառաջդիմելու համար՝ ինչ հակակշիռ ոյժ է ներկայացնում հայութիւնը: Կ'նչ ոյժով կարող է հայը քննադատաբար վարել ամեն մի քարոզի դիմաց. ի՞նչ ոյժ ունի, որ կարողանայ կամք բանեցնել ամեն մի դէպքում, երբ նա զգում է մի անուղղամտութիւն և կամ համոզում է իւր շահերին հակառակ գործողութեան մէջ, լինի նա օտարի կողմից, թէ հէնց նոյն իսկ իւր ազգակցի կողմից:

Ահա՛ խնդիր, այո՛, ծանրակշիռ խնդիր, որովհետև արդէն փաստերը այնտեղ էին հաստատելու համար, որ ազգային բարք ու վարքերի փշանալը, ինքնուրոյնութեան, ինքնաճանաչութեան անհետանալը արդէն այն տեղ էին հասել, որ բաւական էր մի որ և իցէ մտտի հրապոյր դրսից, որ հայը, ի հարկէ մանաւանդ գոնհիկը, ուրանար իրան, գրւելով անդամ մի համայնքի, որի հետ նա չէր կապած ո՛չ սրտով, ո՛չ հոգով, ո՛չ մտքով, համայնքի, որի հետ նա չ'ունէր առնչութիւն իւր անցեալով և որի ինչ լինելն էլ այնքան անհասկանալի էր նորան, որ իւր ներկայի մասին անգամ հասկացողութիւն չ'ունէր, ուր մնաց թէ ապագայի: Մեր խօսքը կրօնափոխութեան երևոյթի մասին է, կրօնափոխութիւն, որի ողին մեր մէջ այս դարում սնունդ առաւ, ճարակելով կաթոլիկ պրօպագանդայի և Ամերիկայի բողոքական միսիօնարների ձեռքով:

Կրօնափոխութիւնը մեզանում հետևանք չէր և չէ մի նոր վարդապետութիւնից դրդած ողևորութեան, որպէս բողոքականութիւնը Յուսի, Լութերի, Յւինզլիի, Կալվինի: Եւրոպայում բողոքականութիւնը ընդաբոյս էր և նա ունեցաւ նշանաւոր հետևանքներ՝ շնորհիւ այն գիտակցութեան, որով ընդգրկեց բողոքականութիւնը. իսկ այս վերջինը կապ ունէր ազգերի այն ժամանակեայ կրօնական, քաղաքական, թէ հասարակական և տնտեսական դրութեան հետ: Այդ հանգամանքները պակասում են մեզանում և բողոքականութեան քարոզութիւնը հայերիս մէջ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մասնաւոր գործ բողոքական ընկերութիւնների, իսկ ընդունելութիւնը այդ եկեղեցու հայերի կողմից կապած է աւելի տգիտութեան, անզօրութեան և նախապաշարմունքի և մի յայտնի չափով՝ ասրուստի օգնութիւն ստանալու ակրնկալութեան հետ:

Եթէ բողոքականութեան տարածումը մեզանում այդ բնաւորութիւնն է ունեցած և շարունակում է ունենալ, ի՛նչ ասել ապա հռոմէական կաթողիկոսութեան մասին, որի մուտքը մեր երկրում ներմուծւած է Եւրոպայում շատ թէ քիչ ամենուրեք հալածող միաբանութիւնների ձեռքով, միաբանութիւնների, որոնք վաղուց արդէն կաաբեալ անսխորնիզմ են կազմում նոյն իսկ այն երկիրներում, որտեղ նոքա ծնունդ են առած:

Կրօնափոխութիւնը հայերիս մէջ հետեանք չէր և չէ կրօնական-բարոյական վերափոխման. իսկ երբ կրօնական և եկեղեցական շարժումների մէջ պակաս է կրօնական-բարոյական խոր զգացմունքը, կրօնական-բարոյական շարժառիթը—այն ժամանակ նա ուղղակի միասակար է, հասարակական բնաւորութիւնը փչացնող և անգամ դէպի վեհ գաղափարական հոսանքները—անզգայացնող: Եւ այս րուպէիս հայկական մեծ համայնքի մէջ յետադէմ մասը, ամենաանզգայացած մասը նոյն այդ բողոքական և հռոմէադաւան հայերն են, եթէ ամբողջութիւնը վերցնելու լինինք:

Բայց այս րուպէին մեզ զբաղեցնողը կրօնական խնդիրները չեն, այլ այն երևոյթը, որ կրօնաորմները կարող էին Հայաստանի զաւակների մէջ մինչ մի շարունի չափ յաջողութիւն ունենալ: Այս րուպէին և արդէն դարերից ի վեր հաւատափոխական շարժումներ Եւրոպայում չկան, չը նայած որ պետական կրօնները վերացրած են, վերացրած են և հալածական օրէնքները, որովհետև հաստատւած համայնքները ամուր են, դրութիւնները որոշ, կրթութիւնը սիստեմական և ամեն միջոց կայ դիմադրելու: Մարդիկ մթութեան մէջ չեն: Իսկ որտեղ դիմադրելու ոյժերը, գլխաւորապէս բարոյական ոյժերը, պակաս են, այնտեղ բարոյական հիմունքները առհասարակ խախուտ են և մարդիկ տրամադիր են ամեն բան ուրանալու, և ոչ միայն կրօնը:

«..... Ո՛հ, այս կրօնական բաժանման հոգին, որ է աղբիւր մեր ամէն անմիաբանութեանց, երկպառակութեանց, ազգատելութեանց և օտարասիրութեանց, անչափս աղէտալի և աղիողորմ է մեր ազգութեան և եկեղեցւոյն համար»....

Այդ դատողութիւնը շատ է բացառիկ, որովհետև կրօնափոխութիւնը մեզանում ոչ թէ պատճառ է, այլ միմիայն հետեանք է համայնական, սնտեսական կազմակերպութեան թուլութեան:

Բայց այն մի քաղաքով սպառնալով չը պիտի համարել Մարկոս Աղաբէկեանի հայեացքը այդ խնդրի վերաբերմամբ, որովհետև ուրիշ տեղերում նա իւր յորդաբուղիս ճարտարախօսութիւնը չի խնայում մերկացնելու համար բոլոր չարիքները, որոնք ծնունդ են առած հայերի մէջ նոցա կրթութեան պակասութիւնից. այնպէս որ, թէ կրօնափոխութեան այն բացառիկ նշանակութիւնն է տալիս, որ մենք վերը նկատեցինք, այդ մասամբ մեկնում է նորանով, որ «Առունկ»-ը կամենում էր զորանով ոչ միայն քննադատել, այլ և զործող օրգան լինել յօգուտ այն եկեղեցու, որի հաստատութեան և ամրութեան մէջ նա համոզւած տեսնում էր առհաւատչեաց ազգային յառաջդիմութեան: Եւ Մարկոս Աղաբէկեանը, նորա հետ նաև «Առունկ»-ի մեծ խումբը և հետևողները իրօք համոզւած են, որ հարկաւոր է դիմել Հայաստանեայց եկեղեցուն՝ ձեռք բերելու այն միջոցները, որոնք հարկաւոր են ազգի կրթութեան նպաստաւոր լինելու համար:

Բայց այդ դաւանանքը կոյր չէ. «Առունկ»-ը, պնդելով Հայաստանեայց եկեղեցու հզօր նշանակութեան վրայ հայկական ազգի համար, պահանջում է նորա պաշտօնեաների ձեռնհասութիւնը: Այդ անհրաժեշտ է համարում «Առունկ»-ը, որովհետև նոցա ձեռքն է յանձնում ազգային և հոգևոր դաստիարակութիւնը, դաստիարակութիւն, որը միակ զօրեղ և արմատական միջոցն է առաջադրած նպատակին հասնելու:

«Եկեղեցւոյն մէջ, մեր հայրենական կրօնին, մեր նախնեաց հաւատին հօգուով և մարմնով ամենասամուր կերպով յարիլ և գրկել, ոչ թէ կուրօրէն, այլ լուսաւորելով և համոզելով... և պահպանելով նրա ոչ թէ ի նորումս Ֆրանզներից և յոյներից օրինակած արարողութիւնները, այլ ի հնուց Մամիկոնեանց, Բագրատունեանց և Արծրունեանց ժամանակներից մնացած և պահպանւած ծէսերը...»

Բայց Աղաբէկեանը չի ծածկում, որ Հայաստանեայց եկեղեցու այժմեան պաշտօնեաները նոյն իսկ այդ պարզութեան գաղափարին, որպէս յառաջդիմութեան, ընդդիմութիւն են ցոյց տալիս, «արգելք և խոչնդոտն են համարում իրանց հոգևոր իշխանութեան այս մեր աստուածանուէր զգացմունքը» («Առունկ», 1860 թ. հատոր բ. եր. 498): Եւ ահա Աղաբէկեանը զիմում է հոգևորականներին.

«Ո՛չ, ո՛վ մեր սիրեկան հոգևոր ծնողք, ո՛չ, ո՛վ մեր պատուական արե- նակից և հոգեկից եղբարք, մեր հոգևոյ ազատական յուզմունքից մի՛ վախենաք, մեր մտաց ազատական աճումից մի՛ սարսափիք, մեր մարդ- կային հոգեծին զգացմունքները մինչ որ Յիսուսի Քրիստոսի սիրովն ու շնորհօքը չեն ուղղուած և օրհնուած, ոչ նուիրական կը լինին և ոչ վաւերական... մեր մարդկային հոգեկան զգացմունքները մինչև որ ազատութեամբ, արդարութեամբ և ճշմարտութեամբ սնուած և աճած չեն, երկնային չեն կարող լինել ամենևին. բռնակալութեամբ, անիրաւութեամբ և մոլորութեամբ ուղղուած և վարուած հոգևոյ յուզմունքներն ամեն տեսակ մոլութիւններով շաղխուած աշխար- հային կիրքերն են» (նոյնտեղ, էր. 489):

Կրօնական-բարոյական դաստիարակութեան պակասութեան պատ- ճառով, ասացինք, զբից եկած ամեն մի ազդեցութիւն կարողա- նում էր այս կամ այն օտար կրօնական ուղղութիւնը տալ հային:

Համաձայն այդ գաղափարներին, Մարկոս Աղաբէկեանը ներկա- յացնում է մի ընդարձակ ծրագիր ազգային-հոգևոր դաստիարակու- թեան, ամփոփուած նորա գլխաւոր յօււածներից մէկի մէջ, որի վերնա- գիրն «ձաշակ ազգային և հոգևոր հրապարակական դաստիարակու- թեան»: Այդ ծրագիրը նշանաւոր է շատ կողմերով, բայց մանաւանդ նորանով, որ «Կռուենկի» սերունդը ամենայն ջանք գործ դրեց այդ ծրագիրը իրագործելու: Դա ուսումնարանական գործն է, ամենա- զրականը, որ կատարել է հայութիւնը ներկայ 19-երորդ դարում մանաւանդ Ռուսիայի սահմաններում բարեխնամ կայսրների և հայ- բենասէր կաթողիկոսների հովանաւորութեան ներքոյ: «Կռուենկը» կամ Աղաբէկեանը չէ ծնող այդ ծրագրի, այլ ժամանակաց հոսանքը, բայց հոսանքը, որի հաւատարիմ օրգանն է ներկա- յացնում «Կռուենկը»: Այդ հոսանքի առաջը բացողն էր Մատթէոս կա- թողիկոսը, հիմնադիրը հայոց հոգևոր ծխական երկսեռ դպրոցների: Այդ դպրոցների համար ուսուցիչներ պատրաստել էր Պետրոս Եան- շեան 50-ական թւականներին: Վերջինս սերունդ պատրաստեց, իսկ առաջինը՝ լայն բացեց ծխական երկսեռ դպրոցների դռները, ոգևո- բելով հայ գիւղական և քաղաքային ժողովուրդը այդ ազատիչ գոր- ծի համար: Արպէս ինքը կաթողիկոսը ժողովրդական էր, ժողովրդա- կան դառաւ և նորա գործը և, եթէ «Կռուենկը» բերան էր դառել ազգային լուսաւորութեան ծաւալման գործին, — նա պիտի ունեցած

լինէր աւելի քան մի ունկնդիր--նա ժամանակակից էր. ժամանակակից էր ինտելիգենտի համար՝ իւր ընդհանուր խորհրդակցութիւններով, ժամանակակից ժողովրդի համար՝ իւր գործնական առաջարկութիւններով:

Բանից ուրեմն զուրս է գալլա, որ հայոց ծխական երկսեռ դպրոցների հիմնարկութիւնը չը պէտք է բացատրել լոկ նորանով, որ հայ ժողովրդի մէջ կայ ուսումն ստանալու սէր: Նկատեցէ՛ք, որ այդ դպրոցները և արական և իգական և որ և իցէ, մանաւանդ այն ժամանակակից ժողովրդական հայեացքների իշխանութեան ներքոյ, աղջկերանց դպրոցները կարողացան չիրաւի մի փոքր աւելի ուշ քան տղայոցը վերջիններիս հետ հաւասար գոյութեան իրաւունք ձեռք բերել. այստեղ պէտք է գործած լինէր մի նախակազմ ծրագիր, զիտակցութիւն, բղխած ընդհանուր հայեացքներից: Եւ այդ ծրագիրը տալիս է «Պոռնկի»-ը, որի մէջ Մարկոս Աղաբէկեանը գործնականի վերածելով իւր խորհրդածութիւնները ներկայացնում է դաստիարակութեան մի ընդարձակ ծրագիր, որը երկու-երրորդի չափ այժմ իրագործւած պիտի համարել: Այդ ծրագրի առաջին կէտն է՝ առաջին աստիճան դաստիարակութիւն (տարրական ուսում), երկրորդ կէտն է՝ երկրորդ աստիճան դաստիարակութիւն, այն է՝ աւարտական կրթութիւն և ուսում (միջնակարգ կրթութիւն, թեմական դպրոցներ) և վերջապէս, խօսելով Մարկոս Աղաբէկեանի ոճով տեսական կամ սեպհականական կրթութիւն և ուսում: Էջմիածնի Գէորգեան ձեմարանը մի տեսակ իրագործումն է ծրագրի այս վերջին կէտի:

Երբ մշակում է այդ ծրագիրը, հայ հոգևոր ծխական դպրոցներ դեռ ևս գրեթէ չկային, թեմական դպրոցներից միմիայն Ներսիսեան դպրոցը իւր ծրագրի կիսով գոյութիւն ունէր, իսկ ձեմարանը չկար բոլորովին: Բայց ժամանակը աշխատեց իրագործել այդ ծրագիրը. տարրական ուսման գաղափարը թէ՛ ընդհանրացնելու և թէ՛ իրագործելու համար մանաւանդ «Պոռնկի» երամն է, որ պլոտտեց մեր երկրի զանազան տեղերը, և այսօր էլ, հայ ծխական ուսումնարաններին ամենից շատ սրտով և հոգով կպած են նոքա, որոնք անցած են Շանչեանի և «Պոռնկի» դպրոցներով, թէպէտ և եռանդով ոչ որ ուրիշներից չի ցանկալ նոցանից յետ մնալ:

Բայց այդ բոլորով դեռ չի վերջանում «Առունի»-ի ծրագիրը հայ դպրոցական գործին վերաբերեալ: Դպրոցներ նա պահանջում է որպէս գլխաւոր միջոց դաստիարակութիւն տալու համար և բոլոր հայերին, ինչ կարգի և լինին նոքա, որպէս զի նոցա հիմնական ձգտումների մէջ չը լինին դէպի իրար բոլորովին օտարացնող, իրար խորթացնող տարբերութիւններ: Գորա համար հարկաւոր են ոչ միայն դպրոցներ առհասարակ, որոնք դաստիարակութիւն պիտի տային, այլ հարկաւոր է որ դաստիարակութեան մէջ լինի միութիւն: Աղաբէկեանի այդ պահանջը ցայտմբաւականաչափ ի նկատի չի առնւած: Դաստիարակչական այդ միութիւնը, առանց կենտրոնական կազմակերպութեան, պահանջւած է ցայտմբաւոր քանով որ մասնաւոր ղեկավարները դպրոցների և դպրոցական բաժան-բաժան հոգաբարձուները ձեռնհաս կարող էին լինել միութիւնը ըմբռնելու: Եւ որովհետեւ մասնաւոր հոգաբարձութիւնները դաստիարակչական գործի մէջ խղճալականին ձգտելու քիչ ապացոյցներ ցոյց տւեցին ցայտմբաւոր, ուստի հաստատու կարելի է ասել, որ ժողովրդական դաստիարակչութեան միութիւնը դեռ ևս ստեղծելու գործ է:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Քանի որ ազգային-հոգևոր ուսումնարանները Հայաստանեայց եկեղեցու հովանաւորութեան ներքոյ են և քանի որ այդ եկեղեցու սխալածեանների վրայ պատմութիւնը դնում է ազգային դաստիարակութեան ղեկավարութիւնը. քանի որ, դարուս ոգուն հակառակ չը լինելու համար, դորա համար հարկաւոր է հոգևոր կրթութեան հետ կապել գրական գիտութիւնները: Ղեկավարելու համար պէտք է առհասարակ միմեանց հասկանալ. իսկ դորա համար պէտք է, որ հոգևորական դասը, գիտութեան կողմից, յետ չը մնայ աշխարհականից: Աղաբէկեանը առաջարկում է, որ Եջմիածինը հրատարակի մի հանդէս—ամսագիր ընդարձակ ծրագրով, որի մէջ լինին բոլոր գիտութիւնները, կրօնականին և պատմականին հետ նաև բնական գիտութիւնները:

«Արարատ» ամսագրի հիմնադրութիւնը, Գեորգ IV կաթողիկոսի ձեռքով, մի թոյլ իրագործումն էր այդ ընդարձակ ծրագրի: Բայց արդէն «Արարատ» ամսագիրը չը կարողացաւ իրականացնել Աղաբէկեանի ծրագրած «Հրեշտակ Արարատեան—հանդէս ազգային և բարոյական լուսաւորութեան Հայաստանեայց աշխարհին» սեթեթ վերնագրով ամսագրի վրայ դրած յոյսերը:

«Առունկի»-ը ամեն բան միայն եկեղեցուց չի սպասում. բայց նա այնքան զբաղւած է եկեղեցու և հոգևորական զսասկարգի ոգու վերանորոգման գործով, որին նա իրաւամբ մեծ նշանակութիւն է տալիս, որ աննկատ է անցնում նորա սպասելիքը մի այլ բանից. դա է՝ հայրենական գրականութիւնը:

Մտքի ուղղութիւնը ամեն բանի մէջ ցոյց է տալիս իւր նշանները: «Առունկի» ուղղութիւնը նպաստաւոր էր գրական այն ուղղութեան, որը իւր ներշնչանքը առնում էր ուղղակի հայրենի ժողովրդի կեանքից: Թէպէտ և այդ կեանքը իդէալացրած է, բայց կեղծ չէ. իսկ տենդենցիան – նաև «Առունկի» տենդենցիան էր:

«Առունկը» քարոզում է լուսաւորչական եկեղեցու պաշտօնեաներին՝ որ նոքա ներշնչւին մեր նախնիին մեծ եկեղեցականների ազգային և մաքուր կրօնական և նորագոյն գիտութիւնների ոգով, իսկ լեզուի լսնդրում՝ «Առունկը» բացարձակօրէն կանգնած է աշխարհաբարի կողմը և, մինչև անգամ, մեր բոլոր հայկական բարբառները ընդունում է աղբիւր մեր գրական լեզուի զարգացման: Արովեանցի «Վէրք Հայաստանին» ոգևորութեամբ գովելը, Պերճ Պոօշեանցի «Սու և Վարդիթեր» վէպի տպագրութիւնը նոյն իսկ «Առունկի» գոյութեան առաջին տարւայ առաջին համարից, բժ. Բաստամեանցի (Սարգիս ստորագրութեամբ) Թիֆլիսի բարբառով ֆէլետօնական գրոյցները «Առունկի» մէջ և այն – այդ բոլորը ցոյց են տալիս, թէ ի՞նչ ժողովրդական ոգով էր ներշնչւած «Առունկը»:

Մենք ասում ենք թէ այդ մտքերը համարձակ էին, որովհետև այդ ժամանակ դեռ ևս ոչ ունէր մի փոսած միտք, թէ հայերին յառաջդիմելու համար, երբ հարկաւոր են երկու բան՝ վաճառական լինել և գրաբար խօսել ու գրել: Ճիշդ է, որ լեզուի նկատմամբ ինդիքը արդէն սպասուած կարելի էր համարել («Հիւսիսափայլ»-ի և «Առունկ»-ի ժամանակ, բայց վիճաբանութիւնը դեռ վերջացած չէր: Այդ հայեացքները, որոնց դէմ հայկական մամուլի յառաջադէմներ կայացուցիչները միշտ աշխատել են մաքառել, վաղուց արդէն իրանց ոյժը կորցրած կը լինէին, եթէ միայն այն մասը հայերի, որոնք օտար քաղաքներն են թափառած, գերիշխող տարրը չը լինէին կազմում և իրանց ձայնով խեղդում չը լինէին հայաստանցիների ձայնը:

Այդ օտարաբնակ հայերը, որոնք ահագին կոնտինգենտ են տալիս վաճառական դասակարգին, երկար ժամանակ իշխել են հայկական ողու վերայ. նոքա մշակել են քաղաքակրթութեան մասին հայեացքներ, որոնք ոչ մի կերպ չեն յարմարուժ մի «խւրաբնակ» ազգի յառաջըլիմութեան պայմաններին: Այդ օտարոտի հայեացքների խօսքատարն էին մի ժամանակ Հնդկաբնակ հայերը, որոնց դեվիզն էր՝ վաճառականութիւն և գրաբարականութիւն: Սակայն, եթէ այդ մտքերը կորցրել են իրանց իշխանութիւնը գրականութեան և առաջնորդող մամուլի մէջ, նոցա իշխանութիւնը դեռ չէ մարել նոյն իսկ «խւրաբնակ» հայերի փողատիրական դասակարգի մէջ, որը դեռ ևս շատ գործերում գերիշխանութիւն ունի միւս դասակարգերի վրայ: Յառաջըլիմութիւնը այդ կողմից նորա մէջ է, որ այդ մտքերը չեն կարողացել իրանց համար օրգան ունենալու չափ հրապարակ դուրս գալ, թէպէտ և նոյն իսկ գրական շրջաններում այդ գաղափարները ունէին հետևողներ: Մենք կը յիշենք նոցանից ամենաանուանիին՝ Յովսէփ Նիշմանեանցը (Մերենց), որը, գոնէ իւր կեանքի վերջերում, խոստովանում էր, թէ հայերի փրկութիւնը փողի մէջն է: Ենորհակալ լինինք Աստուծուց, որ հին սերունդի միտքը կարող էր այնքան յառաջադիմել, որ այսօրուայ օրս մի այդպիսի միտք նոյնքան օտարոտի է թւում մեր ականջին, որքան օտարոտի կ'երևար մեզ, եթէ մի Հնդկացի հայ առաքելութեամբ գար մեզ մօտ լուսաւորութիւն քարոզելու:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՄԱՆԵԱՆՑ

## ՍԱՔՐ ԵՒ ԵՐԳՐ

ՀՕՆԳՖԵԼԼՕ-ԻՅ

ԼԵԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Longfellow. The arron and the song).

Ազատ օգուժ ես իմ նետը ձրգեցի.  
Նա սըլացաւ ընկաւ. բայց ո՛ւր—չը գիտեմ,  
Որովհետեւ այնքան արագ նա թըռաւ,  
Որ սըլաքըն անտեսնելի ինձ եղաւ:

Ազատ օգուժ ես իմ երգը երգեցի.  
Նա սըլացաւ ընկաւ. բայց ո՛ւր—չը գիտեմ.  
Ս.յն ո՛վ ունի այնքան սրատես, վառ աչքեր,  
Որ նըլագի թըռիչքին էլ հետևէր:

Շատ էր անցել այդ օրւանից և ահա  
Կաղնու վերայ գըտայ նոյն ողջ իմ սըլաք,  
Եւ իմ երգը՝ ըսկզբիցը մինչև վերջ  
Նոյնպէս գըտայ բարեկամիս սըրտին մէջ:

Մօսկւա. 1889. Թ. 13 յունւարի:

## ԱՆՁՐԵԻԱՅԻՆ ՕՐ

1,05936110-13

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

(Longfellow. The rainy day).

Օրը ցուրտ է, մրուայլ, տըխուր և մըթին.  
Անձրև է թափուում, քամին շառաչում-շառաչում.  
Ծառերը կըպչում են փըլուղ պատերին,  
Եւ հողմըն աւեր է ետիցը թողնում,  
Եւ օրը մրուայլ և մըթին:

Կեանքըս ցուրտ է, մրուայլ, տըխուր և մըթին.  
Անձրև է թափուում, քամին շառաչում-շառաչում.  
Մըտքերըս կըպչում են իմ հէգ անցեալին,  
Եւ թարմ իմ յոյսերը փըշըւում են օդում,  
Եւ օրերըս մրուայլ և մըթին:

Հանգարտ կ'աց, իմ սիրտ, և մի տըրտընջալ.  
Դեռ ամպի յետև փայլում է տըրև.  
Միակ չէ տըխուր և խեղճ քո բաժին.  
Ամեն մէկի կեանքը տեսնում է անձրև  
Եւ օրեր մրուայլ և մըթին:

Մօսկա. 1889 թ. 20 փետըւաըլ:

# ԻՆՔՆԱԳՈՅ ԱՂՔԱՏԸ

հեղ.

ԱԼԵԻՈՐԻ

---

Օրըն է մրուալլ, երկինքն ամպամած,  
Կարծես խաբուսիկ ժըպտում է յոյսը  
Մեռեալ բընութեան. և ո՞վ անկասկած  
Կը յուսայ ևեթ տանել գըրաւը:

Երջանիկ կեանքի յուսով շողշողուն—  
Նա է որ գէթ յուսոյ նշխարք հեռաւոր  
Եւ կամ բեկորներ յուսոյ վառվառն  
Հեշտալից կեանքն ունի տարփաւոր:

Եւ կամ որ հողմոց ալէկոծ ծոցին  
Փետուրի նըման սահի՞ եթերով,  
Կամ խըռովայոյզ ծովի երեսին  
Նաւակի նըման փախչում է փութով:

Եւ կամ գիշատիչ ահարկու արծուից  
Ձերդ սոխակ գիմէ գըտնել ապաւէն,  
Կամ ազատութիւն մութ գերող բանտից  
Բանտարկեալի պէս կուզէ վրէժ ու քէն:

Թէ լի, ապահով կեանքիցը գրկած՝  
Որին խորթ է կեանքն առատ ու զեղուն,  
Որին լի բարիք չէ իսկ վիճակած  
Կարօտութեան մէջ հեծէ օրն ի բճն:

Այն, խաբուսիկ ժըպտում է յոյսը  
 Այդ հէք, ինքնագոհ խեղճի երեսին.  
 Որի մէջ մեռած չէ ազատ սիրտը—  
 Նա դիմանում է բուռն կարիքին:

Նա տանում է իւր ցաւերն անվրդով  
 ձախտագրքի խիտ հարւածի տակ.  
 Բընութեան սրտին աշխույժի խանդով  
 Ուրախ է երգում իւր անել վիճակ.  
 Աշխարհի օրէնք նա համարելով  
 Լոկ մի օրասպառ, կարճատև կատակ:

## ԱՅՑ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրիստի յիշողութիւններէց)

### ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

«Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարին... սակայն և ոչ լուել կամ իմք ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ ասացուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ... զի և դու իբրև լուիցես՝ ոչ սակաւ արատուս հեղուցուս ի վերայ ազգիս Թշուառութեանն»:

«Ոչ բամբասանէր մտօք, այլ ճշմարտութեամբ զեյս իբացն ասելով ոչ լուեցից: Ոչ ի կարծ բնդոստուցեալ, և ոչ ի լուք դարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղոջն պատահեցի և տեսի և լուայ...»

ԵՂԻՇԷ:

Оглянись--зло вокругъ черезъчуръ ужь гнететь,  
Ночь вокругъ черезъчуръ ужь темна!

Надсонъ.

Վաղուց է որ ես փափազում էի ճանապարհորդել Թիւրքաց Հայաստանում, որի մասին առհասարակ իրականապէս շատ քիչ գիտենք և միայն ժամանակ առ ժամանակ կցկրուր, տխրալի լուրեր ենք ստանում: Ես ուզում էի «անձամբ անդէն ի տեղոջն» տեսնել Թիւրքա-Հայաստանցու վիճակը. «զի այլ է զոր լսէ մարդ, և այլ է զոր տեսանէ հաստատուն իւրովք աչօք», եթէ խօսելու լինինք Եղիշէի լեզուով:

Ձանազան պատճառներով, որոնց թւելը այստեղ աւելորդ է, ես չէի կարող 1888 թւի սեպտեմբերի 25-ից առաջ սկսել իմ ճանապարհորդութիւնը: Իմ ղիտաւորութիւնը գլուխ բերելիս ինձ հանգամանքները չէին նպաստում. ես չը կարողացայ ոչ մի ուղեկից

զտնել և առհասարակ ինձ չը յաջողեց զիւրացուցիչ միջոցներ ձեռք բերել:

Ես մտազիր էի ամբողջ մի տարի անցկացնել թիւրքաց Հայաստանում, պտտելով հետեւեալ մեր հին աշխարհներում՝ Բարձր Հայք, Տուրուբերան, Վասպուրական, որոնք Այրարատի և Սիւնիքի հետ կազմում են և այժմ, չը նայած բազմաթիւ եկտոր ազգերի մուտքին, հայութեան սիրտը, կենդրոնը: Տուրուբերան և Վասպուրական, նախնի ժամանակներում, շրջապատում էին Վանայ ծովը և Բարձր Հայքի հետ միասին այժմ կազմում են երեք ընդարձակ վիլայէթներ (Նահանգներ)՝ Երզրումի, Բաղէշի և Վանայ: Այդ վիլայէթները միայն մտաւորապէս պահպանել են հայոց վերոյիշեալ նախնի նահանգների սահմանները, այսինքն՝ Բարձր Հայք մտաւորապէս այժմ Երզրումի վիլայէթն է, Տուրուբերան՝ Բաղէշի (Մշոյ), Վասպուրական՝ Վանայ: Բայց ինչպէս յետոյ կը տեսնէք, ինձ չը յաջողեց բոլոր այդ վիլայէթներում պտտել:

Յիշողութիւններս զրելիս զուրս չը ձգեցի իմ ճանապարհորդութեան այն մասը, որը վերաբերում է մինչև սահմանադուխը՝ Ռուսահայաստանով անցած տեղերին, որովհետև այդ տեղերը (զլխաւորապէս Վարսի նոր նւաճած երկիրը) հետաքրքրական են, իբրև նոր առևանց ձեռքն անցած թիւրքաց Հայաստանի մի մասը. դա մի, այսպէս սասած, նախածանօթութիւն է Տաճկաստանի հետ: Ուղեորութեանս նկարագիրը յարմարութեան համար կը բաժանեմ երկու մասի. I. Երևանից—Վարս, Սարը զամբը, Ղարաուրդան—(«Մինչև սահմանը») II. Սահմանազլխից—Երզերում, Բայբուրտ, Գիւմիւշխանէ, Տրապիզոն, Բաթում, («Թիւրքաց Հայաստանում»):

Ստիպւած եմ մի քանի մանրամասնութիւններ թողնել: Սակայն ոչինչ մսիթարական մեզ համար մի՛ սպասէք և՛ այդ թողածներէց: Աւելորդ չէր լինի իմ կողմից, ի վերջոյ, նկատել որ ոչ մի, ամենաչնչին անդամ, չափազանցութիւն կամ փաստերի տենդենցիօզ լուսաւորութիւն ես ինձ թոյլ չեմ տւել պատմելիս:

## I.

## Մ Ի Ն Չ Ե Ի Ս Ա Հ Մ Ա Ն Ը .

1888 թւի յունիսի վերջերին հասաց Վօսկւայից իմ ծննդավայրը՝ Գողթան զաւառի (այժմ՝ Օրդուբաթեան բաժին) զիւղերից մինը: Սեպտեմբերի 25-ին այդ տեղից եւ ուղևորեցի Նրեան:

Ճանապարհը մինչև Նախիջևան ընկած է նախ՝ ամալի ձորերով, որոնք շրջապատւած են կամ լերկ ժայռոտ սարերով կամ աւազածածկ բլուրներով, և յետոյ՝ անապատ դաշտերով, որի վրայ ցըրւած են օաղիսի պէս կանաչադարդ զիւղեր: Զրի պակասութիւնից մեծ տարածութիւններ կորչում են բոլորովին ապարդիւն: Նրեանին մօտենալիս բնութիւնը աւելի գարթ կերպարանք է ստանում շնորհիւ մարգագետինների, հիանալի մշակւած հողերի, խիտ ցրւած, ծառաշատ և այգիներով պատած զիւղերի, արևտտական անտառիկների և այլն: Այդ բոլորը տեսնելիս հեշտ է համոզուել, թէ ի՞նչ հրաշքներ կարող է անել հայ աշխատասէր շինականը, եթէ ունենայ խաղաղութիւն, ապահովութիւն, ոռոգելու համար ջուր և այլ յաջող պայմաններ: Անվերջ պատերազմների և արշաւանքների ժամանակ թուրքերը խլել են հայերից ամենալաւ հողերը դաշտային տեղերում: Թուրք բեզերը և խաները այժմ էլ ահագին կալւածների տէրեր են: Շարուր-Նարալագեազի հիանալի դաշտը գլխաւորապէս բռնւած է թուրքերով: Չը նայած բոլոր յաջող պայմաններին և մի յայտնի տենդենցիական յարաբերութեան դէպի նրանց, նոքա հայերից ընդհանրապէս ստոր են տնտեսական կողմից և մանաւանդ մտաւոր զարգացումով:

Հին-Նախիջևանից մինչև Նրեան կարգին ճանապարհ չը կայ: Մի քանի տարի է որ վորձ են անում խճուղի շինելու: Ճանապարհին իմ ուշադրութիւնս գրաւեցին հայ ու թուրք զիւղացիների խմբերը, որոնք կեսօրւայ արեգակի կիզիչ ճառագայթների տակ, թանձր թողի մէջ կորած, երես ու ճակատից առուի նման քրտինք թափելով, մի քանի եասաուլների հսկողութեան տակ, աշխատում էին խճուղու վրայ:

Սեպտեմբերի 29-ին զիշերը հասաց Նրեան, ուր բաւական

ձանձրալի օրեր պիտի անցկացնէի, մինչև որ անցաթուղթ ստանալի ծանկատան զնալու: Այդ ժամանակամիջոցում ես տեսայ «Սարգարի պալատը», որը պահպանուում է իբրև մի պատմական հնութիւն ժամանակի կորուստից: Բաւական է այդ թուրքերի կարծիքով «հրաշալի պալատը» տեսնել՝ հասկացողութիւն կազմելու համար պարսկական անձոնի, ողորմելի ճաշակի մասին: Գլխաւոր դահլիճի պատերը և առատազր ծածկած են հայելիների փոքրիկ եռանկիւնի կտորներով և անձոնի ծաղիկների նկարներով ու մի քանի խաների պատկերներով: Մի պատուհան, գոյնզգոյն ապակիներից կազմած, նայում է դէպի քարափի (որի գլխին պալատն է) ստորոտում գոռոզ Ջանգուն և գետի միւս ափին գտնուող «Սարգարի բաղը»: Բացի այդ գլխաւոր սենեակից կան մի քանի փոքրիկ, ցած, դաճած, ողորմելի սենեակներ էլ, որոնք աւելի պահարանների են նման, քան թէ մի Սարգարի պալատի սենեակներին:

Հոկտեմբերի 8-ին ես ստացայ անցաթուղթը և միւս օրը, առաւօտեան, Ֆայտօնով ուղևորւեցի Էջմիածին, մի վաղարշապատցու հետ միասին: Մենք անցնում էինք մի քանի զիւղերով և ամալի դաշտերով, որոնց մեծ մասը վանքի կալածներ են: Ղանապարհի աջ կողմում ինձ հետաքրքրեց մի երկար տարածութեան վրայ ձրզուող ջրանցք (կանալ): Բանից դուրս եկաւ, որ այդ ջրանցքը երբէք գործածութեան մէջ չի եղել, այլ նախկին կաթուղիկոմներից մինը բաւականին գումար մխելով՝ կամեցել է այդ ջրանցքով ջուր հասցնել ուղղելու վանքապատիան այն մեծ տարածութիւնները, որոնք, ջրազուրկ լինելով, բոլորովին ամալի ու ասպարղիւն են կորչում: Գովելի՛ գործ. սակայն, ինչպէս առհասարակ սովորական է մեզանում, նախ քան այդ ձեռնարկութեան իրագործումը, չէ ուսումնասիրում կանխապէս հարցը հմուտ և տեղեակ մասնագէտներից, այլ ինչպէս իրանց խելքն է կտրում, այնպէս էլ կարգադրում են ջրանցքի փորելը: Եւ ահա, ահազին ծախսեր անելուց ու գործը վերջացնելուց յետոյ, համոզուում են որ ջրանցքը ջուր չի հասցնում տեղը, անպէտք է: Ժողովրդի կոպէկները պարզիւն մխելուց վերջը, ձեռք են քաշում գործից, թողնելով միայն անհեռատես գործի տխուր յիշատակը. լուռ վիան՝ ահա՛ այդ անպէտք ջրանցքը...

Հեռուից, հսկայ Մասիսի և Սրագածի ստորոտներում փռւած

դաշտում, դալար այգիների և ծառերի կանաչ սաղարթների միջից երևացին վանքի դմբէթները: Մի անսպասելի, անսխորժ տպաւորութիւն, մի կատարեալ հիասթափումն տիրեց ինձ, երբ տեսայ զանդակատների և դմբէթների կարմիր ներկած դուխները և սպիտակեցրած պատերը: Այդ բոլորովին չէր «սաղում» վանքի պատկառելի վեհութեան ու պարզութեան... Անցնելով ս. Հովսիսիմէի և ս. Գալանէի այժմ խարխուլ, անխնամ վանքերի մօտից՝ մտանք Էջմիածին: Վաղարշապատի գլխաւոր փողոցի երկու կողմից շարած են բաւականին գեղեցիկ, կոկիկ, եւրոպական ճաշակով շինած տներ: Հարց ու փորձից իմացայ, որ այդ գեղեցիկ տները զանազան եպիսկոպոսների և վարդապետների ազգականներին են պատկանում և շինել են, երբ այդ սրբազանները և սուրբ հայրերը, թողնելով իրանց աղքատ ծնողներին ու ազգականներին՝ հրաժարելով բոլոր աշխարհայինից՝ նւիրել են իրանց ազգին և եկեղեցւոյ ծառայելուն...

Էջմիածնում ես իջայ իմ ուսանողական ընկերներիցս մէկի մօտ: Մեծ էր զարմանքս և ուրախութիւնս, երբ մէկի տեղ երեքին պատահեցի: Բոլորն էլ նոյն տարի հրաւիրւած էին ձեմարանը ուսուցչութեան:

Էջմիածնում մի քանի օր մնացի. ծանօթացայ նորա նշանաւոր թէ՛ հնութիւնների և թէ՛ նորութիւնների հետ: Առ հասարակ տրխուր տպաւորութիւն թողեց իմ վրայ Էջմիածինը: Ուր կարծում էի տեսնել փառահեղ հնութիւններ, վեհ, պատկառելի շինութիւններ՝ տեսայ անխնամութիւնից քայքայւած և քայքայուող հին շինութիւնների խարխուլ, փլուղ, թշառ սոււերները: Ուր կարծում էի հայկական գեղարեւոյտի, ճաշակի նմուշներ տեսնել՝ տեսայ, այն էլ Մայր Աթոռի տաճարում, անզարգացած, անձոռնի, պարսկական ճաշակի ներմուծումը: Բայց այդ դեռ բաւական չէ: Ոչ պակաս տրխութիւն է պատճառում հային, երբ նա տեսնում է վանքի կալածների անխնամ դրութիւնը: Եթէ կալածների սնտոսական վիճակը յանձնէր մի քանի գիւղատնտեսներից կազմած «վանքաեկեղեցապատկան կալածների վարչութեան», որը լինէր մեր հոգեւոր կառավարութեան մի առանձին ճիւղը, կարելի կը լինէր կարգ ու կանոն մտցնելով և խելացի մշակութեամբ մի քանի տասնեակ անդամ աւելացնել այժմեան չնչին եկամուտները և ազատել այն ան-

իշխանութիւնից, որի շնորհիւ միայն զանազան ծակ ջէբեր են լրցուում: Կանոնաւոր տնտեսական կառավարութիւնը ոչ միայն կը ծածկէր այդ ճիւղի՝ «վանքա-եկեղեցապատկան կալւածների վարչութեան» ծախսերը, այլ և մի քանի տասնեակ անգամ կ'աւելացնէր եկամուտները: Հիմա այդ կալւածները կամ ամենաչնչին կապալադրամներով են տրւած մասնաւոր անձերի կամ նոցա հսկողութիւնը սուրբ հայրերի ձեռքում է, որոնք ի հարկէ ոչինչ հասկացողութիւն չունին զիւղատնտեսութեան մասին: Աերոյիշեալ բարենորոգութիւնը մտցնելուց յետոյ մեր սուրբ հայրերին և սրբազաններին, հաւատացէ՛ք, առանց տնտեսական ըզբաղմունքների էլ, բաւական գործ է մնում.— բուն վանքերի կառավարութիւնը, շրջակայ հայ ժողովրդի հովուութիւնը, ազքատ ու որբ շինական մանուկների համար վանքերում դպրոցներ պահելը և, մի խօսքով, իրանց բարձր բարոյական կոչման պատշաճ գործունէութիւնը:

Փորձեր, ասում են, եղել են Եջմիածնի կալւածների համար զիւղատնտեսներ բերելու. բայց դոքա ամեն բան ուղեցել են գլխիցը սկսել, իսկոյն և եթ ահագին անօգուտ ծախսերի մէջ են գցել վանքը, նոր մեքենաներ և գործիքներ բերել տալով, որ մի քանի փորձերից յետոյ, դէն են գցել նոցա մի որ և է անկիւն, առանց այլ ևս յիշելու նոցա մասին, իւրեանք էլ ընկղմել են նախորդների անգործութեան ու թմրութեան մէջ: Այդ տեսնելով, հոգևոր իշխանութիւնը ձեռք է վերցրել զիւղատնտեսներից: Բայց, համարձակուած ենք կարծելու, որ այդ անյաջող փորձերը դեռ ոչինչ չեն ապացուցում: Նախ և առաջ պէտք է մի քանի ձեռնհաս անձերից յանձնաժողով կազմել, որը ուսումնասիրէ գործի էութիւնը, պարզէ կալւածների ներկայ թշւառ վիճակը և յետոյ, ուսումնասիրութեան հիման վրայ, կարելի կը լինի իմանալ այն միջոցները, որոնք հարկաւոր են ազատելու մեր վանքա-եկեղեցապատկան կալւածները նոցա ներկայ ընկած, անմխիթար վիճակից:

Ես տեսայ Վաղարշապատում Ներսէսի հռչակաւոր անտառը ու լիճը: Նոր սերունդը, ինքը չը կարողանալով մի նոր բան ստեղծել, գոնէ եղածն էլ է պահպանէր. բայց անտառը այժմ մատնւած է կատարեալ անխնամութեան: Այցելեցի նոյնպէս և թանգարանը, ուր բացի եկեղեցական հազուսաններից և մի քանի դրամներից՝ ոչինչ, կամ համարեա՛ր ոչինչ պատմական հայոց հնութիւններ չը գտայ:

Տեսայ և Ռէորգեան ձեմարանը, միակ մխիթարական հաստատութիւնը էջմիածնում: Յոյս կայ որ ներկայ լաւ ուսուցչական խմբի և կանոնաւոր վարչութեան շնորհիւ, նա լիովին իրականացնէ այն մեծ յոյսերը, որ ունի ազգը նորա վրայ: Յանկալի է միայն, որ ուսումնի ու կրթութիւնը այնտեղ աւելի որոշ և ժամանակակից պահանջներին աւելի համեմատ ուղղութիւն ունենար. «աւնուցուք զգիտութիւն ի փրկութիւն անձանց և ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ», ասում է վարդապետի իդէալական տիպարը՝ Նղիշէն: Անուրանելի է, որ մեզանում զարգացած ու լուսաւոր խելքի տէր վարդապետների մի կատարեալ սով է. բայց ի՞նչ անել. գուցէ նախ պէտք է մտցնել անխշխանութեան և կամայականութեան մատնուած վանականների կեանքի մէջ օրինաւոր կարգ ու կանոն, և յետոյ բարձրացնել վարդապետացուների մտաւոր զարգացման աստիճանը, այնպէս որ նոքա համապատասխանէին «վարդապետ» բառի բուն նշանակութեան: Մեր ամենամեծ թշնամին՝ տգիտութիւնն է, խաւար ու նեղ հասկացողութիւնը իրերի մասին:

Մի քանիսները կարծում են որ բաւական է ձեմարանից նոր աւարտած աշակերտներին վարդապետ ձեռնադրել և ահա մենք կ'ունենանք կարգին վարդապետների մի խումբ. դորա համար պէտք է միայն նորաւարտ, բոլորովին անփորձ և խալ աշխարհահայեցողութիւն ու զարգացում ունեցող 20—22 տարեկան երիտասարդներին խուցեր մտցնել, վանքերում փակել: Ի հարկէ, մի յայտնի չափով, այդ հոսանքը գուցէ օգտակար լինի, բայց նորա ազդեցութիւնը հազիւ թէ մեծ լինի. այդ զարգացման աստիճանով նոր վարդապետները անկարող կը լինին իրերի և հանգամանքների խորքը թափանցել և ինչպէս հարկն է կառավարել (չէ՞ որ նոքա են մեր երարխիպի պաշտօնեաները), հովւել իրանց ազգը: Բացի այդ, վարդապետը կեանքի մէջ իր եսի համար վայելչութիւններ չը փնտռող մի անձն է, որը, հրաժարելով բոլոր աշխարհային զւարճութիւններից, բոլոր եսական հոգսերից ու շահերից՝ նւիրում է իրան միայն զազափարի ծառայելուն, ունենալով կամ ասկետական (անապատական) իդէալ, կամ ժողովրդի համար դործելու, զոհւելու նպատակ. ժողովուրդը նորա ընտանիքն է, ժողովրդի շահերը նորա անձնական շահերն են: Բայց ի՞նչպէս կարող են աշխարհային, նեղ անձնական ձգտումներից ու վայելչութիւններից հրաժարել դեռ բոլորովին կեանքին անձա-

նօթ, անփորձ, վայելչութիւններին կարօտ 20—22 տարեկան աշակերտական նստարանները ղեռնոր թողած պատանիները: Թո՛ղ նախ և առաջ դոքա վարժապետներ և քահանաներ դառնան, ցրեն զիւղերու՛մ ու քաղաքներում, ուսուցանեն, շփեն ժողովրդի հեռձանօթանան կեանքի հետ, գործեն և յետոյ իրանց հասունացած, փորձած խելքով և երբ այլ ևս իրանց անձնական շահերը, կրքերը չեն կապում նոցա աշխարհի հետ, այլ լոկ գաղափարի համար են ուզում գործել՝ հեռանան աշխարհային հոգսերից, վարդապետներ ձեռնադրեն և նւիրեն ազնիւ սրտով, բոլոր եռանդով, առանց շահամոլական և սնափառական ձգտումների իրանց ընտրած նպատակին՝ գործել յօգուտ ազգի և եկեղեցւոյ:

Բայց ժողովրդին օգտակար լինելու համար պէտք է վարժապետը և քահանան զարգացած մարդիկ լինին, ընդհանուր, լայն զարգացման տէր մարդիկ:

Բոլորովին ուրիշ խնդիր է նոցա նիւթական դուլթիւնը բարելաւելը:

Իսկ լայն զարգացումին, բացի ընդհանուր պատմութիւնից և գրականութիւնից, մեծապէս նպաստում են և բնական գիտութիւնները: Մինչդեռ վերջին ժամանակներս ձգտում է նշմարու՛մ կրճատել ընդհանուր զարգացուցիչ առարկաները, նա մանաւանդ բնական գիտութիւնները և տալ ձեմարանցիներին նեղ, սոսկ աբեղաչական կրթութիւն և ուսում, երբ պէտք էր մինչև անգամ մի քանի նոր առարկաներ էլ մտցնել: Վարժապետը և քահանան ժողովրդի մլտաւոր խաւարում բացի վառ ձրագներ լինելուց, որ փարատեն արգիտութիւնը, սիռեն համերաշխութիւն, լոյս և բարոյականութիւն՝ պէտք է նաև տգէտ ու աղքատ ժողովրդի, զիւղացու օգնող-խորհրդատուները լինէին: Առողջապահական ու զիւղատնտեսական օգտակար տեղեկութիւնները, խորհուրդներն ո՛ւմից կարող է լսել շինականը, եթէ ոչ իր վարժապետից կամ քահանայից. իսկ դորա համար այդ վերջինները պէտք է իրանք ունենան այդ գիտութիւններից տեղեկութիւններ. իսկ այդ գիտութիւնների հիմունքները հաստատուած են բնական գիտութիւնների անյողողդ, հզօր, մարդկանց յառաջադիմութիւն ու յաղթութիւն տւող ձշմարտութիւնների վրայ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ առողջապահութիւնը ղեռ ևս

բժշկականութիւն չէ: Առողջապահութիւնը, որի նպատակն է ցոյց տալ առողջութիւնը պահպանելու միջոցները, անհրաժեշտ է ամեն մարդու համար նոյն չափով, որքան զրել ու կարգալը. իսկ բժշկականութիւնը (նեղ մտքով թերապիան) ցոյց է տալիս միջոցները՝ վերականգնեցնելու, բժշկելու խանգարած, նորմալ (կանոնաւոր) դրութիւնից շեղած առողջութիւնը, և դա արդէն բժիշկների մասնագիտութիւնն է:

\* \* \*

Հոկտեմբերի 12-ն էր. մի պարզ, գեղեցիկ աշնանային առաւօտ: Ընկերոջս տան մօտ կանգնած էին երկու զիւղացի իրանց քնձռոտ սպիտակ-մոխրագոյն ձիերով. զիւղացիներից մինը հայ էր, միւսը թուրք: Գոքա պէտք է ինձ հասցնէին Ալէքսանդրօպօլ: Գնալ էջմիածնից ուղղակի Վան՝ Եղդիր-Քայազդով, առանց քարվանի կամ զինւած խմբի, փորձած մարդկանց կարծիքով, շատ վտանգաւոր է, որովհետև պէտք է անցնել Աբաղայի դաշտով, որը գտնոււմ է Պարսկա-Տաճկական սահմանի վրայ և բռնւած է աւաղակաբարոյ քրդերի հրոսակներով: Ես միայնակ էի, ուստի մնում էր զնալ Ալէքսանդրօպօլ և Վարս և, եթէ այնտեղ ընկեր պատահի, Թիւրքիա գնալ՝ կամ Ալաշկերտով անցնել Վան կամ ուղղակի զնալ նախ Վարին: Տալով իմ մնաք բարեաւս էջմիածնի բարեկամներին և առնելով նոցա բարեմաղթութիւնները, ես հեծայ թուրքի ձին, որը աւելի աշխոյժ էր երևում. իսկ իմ փոքրիկ բռնս՝ մի փոքրիկ չեմօղան և մի փոքրիկ խուրճին՝ բարձեցին հայ զիւղացու ձիու վրայ: Այդ երկու անգէն ձիապանների հետ ես ճանապարհ ընկայ դէպի Ալէքսանդրօպօլ: Ուղեցոյցներս ընտրել էին Արագածի հարաւ-արեւմտեան լանջով՝ Մաստարայի մօտից անցնող ճանապարհը, որը, նոցա ասելով, թէև աւելի դժւար ու երկիւղալի, բայց աւելի մօտ էր: Ես ունէի հետս միայն երկու բեվոյվեր:

Ճանապարհի երկու կողմին, արտերում, զիւղացի կանայք ու աղջիկներ բամբակ էին հաւաքում: Մի քանի օտեղ հայ շինականները իրանց նահապետական ամենապարզ կազմութիւն ունեցող արօրով, լծած եզներ ու գոմէշներ՝ երկիրն էին մշակում, արտապատելով իրանց զգայմունքները թուրքերէն երգերով: Մենք անցնում էինք հայ, թուրք կամ խառն ազգաբնակչութիւն ունեցող աղբա-

տիկ զիւղերով: Քանի հեռանում էինք Վաղարշապատից, այնքան բնութիւնը ամայի կերպարանք էր ստանում. ծառեր և այգիներ այլ ևս չէին պատահում, զիւղերի տեսքը աւելի թշւառ էր դանում:

Ինչպէս շինութիւնների նիւթը, նոյնպէս և տեղափոխելու միջոցները Հայաստանի զանազան կողմերում տարբեր են և կախւած տեղային, բնական պայմաններից: Ուր որ սարերը մօտ են, քար շատ կայ՝ տները շինւած են անտաշ քարերից ու կաւից կամ կրախառն ցեխից, ամենաանճոռնի, ողորմելի ձևով. ուր քար չը կայ, ինչպէս, օրինակ, Հին-Նախիջևանի ու Շարուր-Վարալագեաղի դաշտերում՝ տները, ինչպէս և այգիների պատերը, շինւած են կաւից և հողից: Փայտը առհասարակ շատ քիչ է գործածւում շինութեան համար՝ նորա սակաւութեան պատճառով: Իբրև ծանրութիւններ տեղափոխելու միջոցներ քարքարոտ ու լեռնային տեղերում, օրինակ՝ Գողթնում, ծառայում են ձին, ջորին ու էշը. սայլեր չը կան: Իսկ Հայաստանի աւելի լեռնադաշտային և տափարակ տեղերում տեղափոխութեան համար գործ են ածում նահապետական սայլերը, լծած զոմէշներով կամ եզներով, կամ թէ ուղղակի հէնց եզներին ու զոմէշներին բեռներով: Քանի հեռանում էք Արարատեան դաշտից դէպի Նիրակ ու Բարձր Հայք, այնքան սակաւ էք պատահում տեղափոխելու և առհասարակ մշակութեան համար ուրիշ անասուններ, բացի եզներից և զոմէշներից: Սայլերի (արաբա) կազմութիւնը բոլոր կովկասեան ազգերի մէջ միակերպ է: Հետաքրքրական է նկատել այն փոփոխութիւնը, որը սակաւ առ սակաւ մտնում է այդ սայլերի կազմութեան մէջ, ուսաց ազդեցութիւնից: Մանր, մի քանի հաստ տախտակներից միապաղաղ շինած ակների տեղ, մեծ քաղաքներին մօտ զիւղերում, սկսում են գործ ածել աւելի թեթեւ, եւրոպական ձևի անիւներ: Բայց դեռ այս նոր տեսակի անիւները անշարժ են ամրացրած արաբի ծալրերին, ինչպէս և առաջւայ նահապետական ակները, այնպէս որ ունին է պտուռում և սրտեցնում իր հետ անիւները և ոչ թէ սանին է անշարժ մնում, իսկ անիւները պտուռում նորա շուրջը:

Քարքարոտ, հրաբխային հետքերով ծածկած ճանապարհը քանի գնում բարձրանում էր: Արագածի լանջին ցրւած զիւղերը շատ

ողորմելի տեսք ունին: Առհասարակ բոլոր շրջակայքը, զուրկ ծառերից, ահագին հրաբխային ժայռերի կտորներով ու քարերով ծածկած սև հողը, ամաչի, խուլ ձորերը, ողորմելի խրճիթների հեռ միասին, մի առանձին տխուր սպաւորութիւն են թողնում մարդու վրայ: Ահա՛ ճանապարհի ձախ կողմին, բարձրութեան ստորոտում, երևում են մի հին հայոց եկեղեցու աւերակներ, որոնք լուելեայն պատմում են այժմ նորա մօտ դանւող թրքաց Կրինդ գիւղի անցեալը: Այդպիսի աւերակներով ծածկւած է մեր հայրենիքը: Այդ փլատակները անմռունչ վկաներ են նախնի հայաշատութեան և մեր ազգի բարգաւաճ անդառնալի օրերին: Շատ տեղերում, ուր այժմ ազգաբնակչութիւնը թուրք է, բացի եկեղեցիների, վանքերի ու բերդերի փլատակներից, հողի տակ կարելի է գտնել և հին հնձաններ, որոնք ի հարկէ թուրքերին չէին կարող պատկանել: Ոչ միայն հնութեան այդ շոշափելի, աչքի ընկնող հետքերը, այլ նաև շատ տեղերի հայկական անունները նոյնպէս պատմում են անցեալի մասին. բաւական է, օրինակի համար, յիշել այստեղ Վանանդ, Դաստակ, Օձօփի (թուրքերի արտասանութեամբ Ուստուփի) այժմ թրքաբնակ գիւղերի հայկական անունները հէնց միայն Գողթնում...

Երեկոյեան հասանք Արմզլու հայ գիւղը: Ալէքսանդրօպօլի դաւառի և Կարսի երկրի (ՕՃԼԱՅԵՒ) գիւղերը մի ընդհանուր կերպարանք ունին. բլրանիստ կամ տափարակ տեղերում զետեղւած ծառազուրկ գիւղեր են, որոնց անտաշ քարերից և ցեխից շինած ողորմելի, որջանման խրճիթները, խոտադէղերը և աթարների բուրգերը (պիրամիդ) տալիս են մի բնատրոշ տեսք: Այդ գիւղերի ժողովուրդը շատ տգէտ, բիրտ և աղքատ է: Համարեա բոլորը ուսումնարաններից զուրկ են: Արմզլու գիւղը ունի մի փոքրիկ եկեղեցի և թէպէտ համեմատաբար ունևոր գիւղերից է, բայց ուսումնարան չունի:

Թուրք ձիապանս յայտնեց, որ այդ գիւղում պէտք է զիշերենք: Մենք իջանք մի ունևոր գիւղացու տան առաջ: Այդ տունը մի քառակուսի ցածր շինութիւն էր, անտաշ քարերի և կաւի մի կուտակումն, լուսամուտներից բոլորովին զուրկ, հողածածկ կտուրով: Տան տէրը ներս տարաւ մի նեղ ու մութ «շվաք», բաց արեց մի դուռ շվաքի մէջ և մենք մտանք մի խաւար տեղ. հոտը և անասունների ֆունչոցը իմացրեց որ գոմումն եմ: Գոմի մի անկիւնը ա-

դօտ լուսաւորւած էր: Գիւնեցիինք այնտեղ. դա, հիւրերի համար շինած բաժանմունքը, օդանոց էր, մի անկիւնում: Այդ քառակուսի տարածութիւնը շրջապատող երկու պատերը (օդայի մուտքից դէմ ու դէմը և ձախ կողմինը) գոմի ընդհանուր պատերի շարունակութիւնն էին, բայց այդ մասում սրբատաշ քարերից շինած. իսկ միւս երկու պատերը, որոնք բաժանում էին օդանոցից, ցածր էին և գերաններից ու սիւներից շինած. մի դռան նման անցք տանում էր օդանոց: Մուտքի դէմուկէմ գանուղ պատում քարերից շինած էր բուխարին: Սրբատաշ քարերի վրայ մի քանի կոպիտ քանդակներ էին երևում: Օդայի մուտքից մինչև բուխարին տանում էր մի նեղ անցք, որի երկու կողմից, օդայի բոլոր երկարութեամբ, գետնից մի փոքր բարձր շինուած էին քարից ու կաւից երկու թախտաձև «սաքու» կոպիտ բրդեայ «քէշանեօով» ծածկած: Առատաղը գերաններից ու տախտակներից էր, մէջտեղում երեք փոքրիկ ծակ կար, որտեղից լոյս ու թարմ օդ է նոնում գոմը. բայց այդ փոքրիկ ծակերն էլ ձմրան ժամանակ ծածկում են: Մի փոքրիկ նաւթի թիթեղեայ լամպ, առանց ապակու, միալով աղօտ լուսաւորում էր մուտք օդանոց:

Բաւականին ցուրտ էր: Ես տեղաւորւեցի «սաքուներից» մէկի անկիւնում, բուխարուն մօտ: Նրկու տանտէր եղբայրներից մէկը բերու աթարների մի քանի աղիւս, դարսեց բուխարում և վառեց, նախ կրակելով «հուսը» (փշոտ փոքրիկ թուփ): Օդանոց իսկոյն լցեց զէղացիներով՝ բոլորը կոշտ, բիրտ, պարզ սարըցի հայի առնական դէքերով տղամարդիկ, զլիններին ահագին փափախներ, հազած ոչխարի մուշտակներ կամ բրդեայ չուխաներ: Ծառերը հէնց ինչպէս երի բանում էին, այնպէս էլ եկել էին, զլիններին մի կեղտոտ թաշկինակ, ծայրերը կապած ծոծրակի կողմից, կապաների թևերը վեր քաած, կոշտ, ուժեղ ձեռները մերկացրած: Բոլորը նստոտեցին, ով ինչպէս չարմար էր գտնում, սաքուների վրայ (որոնք նստարանների և մահճակալների տեղ են). նոքա ծխում էին, հետաքրքրութեամբ իձ ոտքից ցզլուսի դիտում, իրար մէջ նկատողութիւններ անում, խօսում, փնթփնթում...

Ես հետս թէյ ու շաքար էի վերցրել: Ունևոր տանտէրերիս Տօ, գանւեցաւ մի չայդան և երեք բաժակ: Չայդանը լիքը ջրով զրկուաւ վառուղ աթարների վրայ և երբ մի քանի ժամանակից

յետոյ թէյլ պատրաստ էր, հերթով բոլորս էլ խմեցինք: Այս կողմերի (Ալէքս. և Կարս) գիւղացիները միայն բացառիկ զէպքերում են թէյ գործածում և առհասարակ այդ տգէտ, աղքատ ժողովուրդը ապրուստի և կեանքի շատ սահմանափակ պահանջներ ունի: Ուրիշ տեսակ դժւար էլ է սպասել, քանի որ ամբողջ տարին շարշարելով և՛ ինքը և՛ իւր անասունները, հազիւ հազ է գիւղացին մուտք ու ելքի ծայրերը իրար հասցնում:

Գիւղացիք շատ էին հետաքրքրւում զինւորակոչութեան կանոններով, որովհետեւ վիճակահանութեան ժամանակը մտնում էր: Ամեն մէկը նոցանից մի հարց էր առաջարկում ինձ: Նս, ինչքան որ ինքս էի ծանօթ կանոնների հետ, բացատրում էի և վերջը նոցա ասացի՝ թէ այդ բոլոր կանոնները թարգմանւած են հայերէն:

—Աղա՛յ, ո՞վ մեզ համար կարգաց, մեր գիւղում՝ կարդացող չը կայ:

—Տէրտէր խօս՝ ունի՞ք:

—Ե՛հ, մեր տէրտէրը էդպիսի բաներ ի՛նչ գիտաց:

Ահա՛ ձեզ մի կարգի՛ն վարժապետի կամ քահանայի բացակայութիւնը: Ահա՛ ձեզ ժողովրդի ամենատարրական ուսումից էլ զուր լինելը:

Թէյից յետոյ տան մշակ-ծառան (նօքարը) բերաւ մի լայն տախտակ, որը զրեց կամուրջի ձևով երկու սաքունների ծայրերին և ադ «սեղանի» վրայ, առանց սիւնոցի, շարեց մի քանի լաւաշ, զրեց եկու աման ոսպէ ճաշ և մի երկու փայտեայ ներկած զգալ: Ինձ համար բերած էին մի երկու հաւկիթ և մի առանձին տեսակ պանր, որը ես կեանքումս առաջին անգամ էի տեսնում. այդ «ձիլ» աննով պանրի տեսակը կազմւած է միմեանց կպած պանրի թելոի բարակ շերտերից և բոլորովին համ չ'ունի. ես չը կարողացայ ուտլ: Սեղանին մասնակցում էին երկու տանտէր եղբայրները և իմ ձրպան Մանուկը. թուրք ձիապանը գնացել էր մօտակայ թուրքի զիւղում գիշերելու: Միւս գիւղացիները իրանց տեղերում նստոտ նայում էին մեզ վրայ և շարունակում իրանց խօսակցութիւնը, որ, կամաց կամաց դարձաւ իրանց գիւղական գործերին: Նոքա զանգատւում էին հողի մեծ պակասութեան, քրդերի (չօբանքեարների) ներեսութիւնների և մանր-մուկր պաշտօնեանների հարստահարու-

թիւնների համար: Մի առանձին աննպաստ կարծիք էին կազմել զիւղացիք մեր իրաւաբանների, դատաւորների մասին:

Քրդերը, այդ աւազակաբարոյ վայրենի ցեղը, կատարեալ Աստուծոյ պատիժ է խեղճ հայի համար: Քարնան երբ նոքա իրանց հօտերով բարձրանում են Արաղածի արօտատեղերը, կամ աշնան վերջերին իջնում են այդ արօտատեղերից՝ մեծամեծ փնամներ են հասցնում հայ գիւղացիներին, փշացնելով նոցա ցանքը, հունձը, արածացնելով նոցա արօտատեղերում, զողութիւններ անելով և այլն: Քիւղացիների զանգատները առհասարակ մնում են առանց հետեւանքի:

—Ինչո՞ւ ինքներդ չէք զիմաղրում, հարցրի ես:

—Աղա՛յ, մենք ուաշպար մարդիկ ենք, մեզ ի՛նչ կը սազի զոդ, աւազակ քրդերի հետ զլուխ դնել. այդ անիրաւները ոչ հունձ ունին, ոչ արտ, ոչ ցանք, ոչ տուն. այսօր իրանց հօտերով այստեղ են, վաղը քշեցին դնացին մի ուրիշ տեղ: Եթէ մենք հակառակենք, դոքա զիշերները կը զան կ'այրեն մեր խոտերի դէզերը, մարազները, կը խլեն մեր տաւարը, մի քարի տակից գնաակահար կ'անեն...

—Քիշերները ձեր միջից պահապաններ զրէք թէ՛ դիւղի և թէ արտերի համար:

—Ձի՛ լինում, մեր ժողովուրդը իրար չեն պահում...

Կամաց կամաց զիւղացիք ցրւեցան: Տանտերերս նոյնպէս հեռացան ընտանիքի բաժանմունքը (զլիւստուն), որը թէև գտնում է գոմի հետ մի ընդհանուր կտուրի տակ, բայց բոլորովին բաժանւած է նորանից: Օտարի համար նա մատչելի չէ: Օդաջում մնացինք՝ ես, ձիապան Մանուկը և նօքարը: Մի կերպ տեղաւորւեցանք սաքունների վրայ և քնեցինք՝ մեզ յանձնելով այս տեղերում բազմաբնակ լուերին և ուրիշ միջասաներին:

\* \* \*

Գնից ինձ զարթեցրեց թուրք ձիապանի ձայնը: Կարճ և անհանդիստ բունը մի կողմից և անսովոր գոմի հոտը միւս կողմից զլուխ ծանրացրել էին: Թէջ խմելուց չետոյ, մի քանի արասի տալով տանտիրոջ, դուրս եկայ գոմից: Քիշերը ձիւն էր եկել (հոկտեմբերի 13), սաստիկ ցուրտ էր. պարզ երկնքում շողշողում էին անթիւ աստղեր:

Գիւղի բնակիչները դեռ հանդիստ քնում էին. փողոցներում ոչ ոք չը կար: Ես հեծայ ձին, փաթաթեցայ եպիտունջիս մէջ, անցկացրի զրուսա գլխանոցը (բաշլըխը) և ճանապարհ ընկայ իմ երկու ձիապաններս հետ Արագածով Ալէքսանդրօպօլ: Ճանապարհը անտանելի էր իր ելեէջներով, քարերով ու փոսերով. դեռ մարդու ձեռք չէր կպել այդ կուսական տեղերին: Զիապան Մանուկը մի շատ ծոյլ, դանդաղկոտ մարդ էր. իր ձիով, չը նայած նորա բեռի թեթևութեան, (2 պուդ) միշտ յետ էր մնում, այնպէս որ այն ցրտին յաճախ կանգնում էինք և սպասում նորան: Մեզ հանդիպում էին ճանապարհին հօտեր հայ ու քուրդ հովիւներով, ուղտապաններ իրանց ուղտերով և զիւղացիներ, որոնք վերադառնում էին երևի քաղաքից (Ալէքսանդրօպօլ):

Արևը նոր էր ծագել, երբ, վայր իջնելով ձիւնապատ Արագածից անցնում էինք մի նեղ կիրճով: Զորի երկու կողմից բլրաձև սարերի շղթաներ էին ձգւած, միջից մի գետ. դորա և աջ կողմի սարերի արանքում ճանապարհն էր: Այդ կիրճը, Բօղաս-քեասան (կոկորդ կորոդ) անունով, աւազակների սիրած տեղն է: Նա ունի բոլոր յարմարութիւնները մարդիկ պլոկելու և սպանելու: Այդ անցքում, գետի ձախ կողմից, երևում է մի հայկական եկեղեցու փլատակներ: Աիրճից դուրս գալով և անցնելով Բօղաս-քեասան գիւղի մօտից, մտանք մեր հին Նիրակ գաւառը, որը մի միջին բարձրութեան ընդարձակ լեռնադաշտ է (մօտ 5000 ոտնաչափ բարձր ծովի մակերևոյթից) և որը տափաստանի (ստեպ) նման չէ, այլ բլուրների և լեռների զանազան կողմեր տարածւող շղթաներով բաժանւում է ամեն ուղղութեամբ, զանազան ձևի և տարածութեան լեռնադաշտակների, շրջանակւած բլուրների և լեռների պարերով, և միմեանց հետ կապւած անցքերով ու ձորերով: Այ մի ամաչի անկիւն չը կայ. ամեն տեղ անբաւ խոտ, հիանալի մշակւած արտեր: Նոյն բնութիւնն է՝ խոտաւէտ, բերրի հող, զուրկ ծառերից՝ բոլոր Նիրակ, Վանանդ, Բասեան (Տաճկ.) հին հայկական գաւառներում և Կարինի դաշտում: Այդ լեռնադաշտակը իր անթիւ սարերի կոհակներով ու ձորերով քանի գնում է դէպի Կարին, այնքան բարձրանում է ծովի մակերևոյթից: Այդ բերրի լեռնադաշտերից անցնում են բազմաթիւ գետակներ և գետեր: Սակայն արևեստական ոռոգումն չը կայ, որովհետև մի առանձին պահանջ էլ չ'ունի:

Նիրակը այժմ էլ իր հիանալի վարելահողերով և արօտատեղիներով ու խոտաւէտութեամբ մի հարուստ գանձ է: Զարմանալի չէ որ այդ արգաւանդ ու բերրի երկիրը նախնի հայերի մէջ անբաւ հացի, առատութեան և լիութեան հուշակ ունէր:

Կէսօրին անցնելով Աարաքիլիսէ հայ դիւղից, մի քանի ժամանակից յետոյ հասաց Ալէքսանդրօպօլ, որին հասարակ ժողովուրդը Գիւմրի անունն է տալիս, մտաբերելով այն Գիւմրի (Կումայրի) անունով դիւղը, որը յիշուում է մեր պատմութեան մէջ դեռ VIII դարում և որը գտնուում էր այժմեան քաղաքի տեղում: Ալէքսանդրօպօլ անունը, ինչպէս յայտնի է, ստացաւ այդ տեղը ներկայ դարուս երեսնական թւականներին, երբ բազմաթիւ հայ զաղթականութիւն էր գրգռումից, Կարսից և Բայազէդի կողմերից եկաւ և հաստատուեց այդ տեղ:

Ալէքսանդրօպօլ ես ունէի էջմիածնից երկու յանձնարարական նամակ: Կարին զնացող չը գտնելով, միւս օրը, հոկտեմբերի 14-ին, առաւօտեան դուրս եկաց դէպի Կարս Փայտօնով:

\*  
\* \* \*

Յուրտ, պարզ առաւօտ էր: Նրջակայ սարերը ծածկած էին ձիւնով, իսկ ճանապարհը, բլուրները, սարերի ստորոտները և դաշտերը՝ եղեամով: Գէս ու դէն ցրած երևում էին դիւղեր, որոնց խրճիթները նման էին հեռուից սև հողի կոյտերի: Առաւօտեան արեգակի ճառագայթների ազդեցութիւնից բարակ ծուխի պէս բարձրանում էր եղեամով ծածկած գետնից զոլորչի, որ հեռուից զրժուար էր զանազանել զիւղական խրճիթների ծխնելոյզներից զուրս եկող բարակ ծուխից: Կարծես, բոլոր շրջակայքը, մանաւանդ դաշտերի հեռաստանում, մխում լինէր:

Փայտօնում ես էի, կառապանը և մի տղայ, նորա օգնականը: Հայ կառապանը խոստացել էր արևը մայր մտնելիս հասցնել ինձ քաղաքը: Մօտ 3 վերստ Ալէքսանդրօպօլից հեռանալով, հասանք Արփաչայ գետը, ուսու-տաճկական նախկին սահմանադրութիւնը, և անցանք մտնելով նոր նւաճած երկիրը:

Բազմաթիւ հնութիւններ ծածկում են Նիրակը: Մեր ճանապարհի ձախ կողմից, մի երկար բլուրի ծայրին, ահա երևում է դեռ

բաւականին պահպանուած հին հայկական բերդի աւերակներ: Քանի՛ քանի՛ անգամ երևի նա դիմադրել է Յոյների, Արաբների, Տաճիկների և Պարսիկների անընդհատ արշաւանքներին և վերջը խորտակուած, չաղթուած վերջ է դրել իւր գոյութեան... Այդ բլուրի ստորտում գտնուում է Քիլիկիոյ անունով հայաբնակ գիւղը: Մի քիչ հեռու ճանապարհի աջ կողմից, Ալլչախչախ ու Ուզունքիլիսա գիւղերի մօտ, նոյնպէս երևում են մի ինչ որ հին բերդի վրաստակներ: Եարունակելով ճանապարհը և մօտենալով Կարսի գետին, պատահում էք Արգինա ողորմելի գիւղին, որը երբեմն նշանաւոր հայոց գիւղաքաղաք է եղել, իսկ այժմ՝ այդտեղ բնակուած են մի քանի թուրք և մալական ընտանիք: Իբրև հայութեան տխուր չիչատակներ, մնում են Արգինայում զեռ կանգնած մի պարսպի մասը, կամարածև անցքով և հին վանքի՝ փառահեղ շինութեան համարեա ոչնչացած բեկորները: Այդ, այժմ չնչին, ողորմելի Արգինան, Բագրատունեաց օրերում, մի ժամանակ կաթուղիկոսանիստ տեղ էր...

Արգինայի մօտից անցնելով, մենք մտանք մի ահռելի խոր ձոր, որի միջից անցնում է Կարսի գետը, երկու կողմից պատած բարձրաբերձ, ուղղահայեաց, ժայռոտ լեռներով: Այդ Արգինայի ձորը համարեա անընդհատ ձգւում է մինչև Կարս քաղաքը: Կարսի գետը անցնելով հին Վանանդ ու Եիրակ գաւառներից, մօտաւորապէս արևմուտքից արևելք ուղղութեամբ հին Եիրակաւանից (այժմ բաշ-Շեօրագեալ) հարաւ՝ միախառնւում է Արփաչայի հետ, որը հիւսիսից է հոսում, Արփա լճից սկիզբն առնելով: Այդ երկու գետերի ջրերը միախառնելով այնուհետև, իբրև մի գետ թափւում են Երասխը հին Բագարանի մօտերքում: Այդ մասը՝ միախառնման տեղից մինչև Երասխը, նոյնպէս կոչւում է Արփաչայ: Արփաչայն մեր հին Ալսուրեանն է:

Կէսօրին մենք կանգնեցինք մի զուքանի մօտ, որը գտնուում էր Ալաշկերտցի գաղթականներով բնակեցրած մի ազքատ գիւղի մօտ, Քաղըկ-Սաթրմըշ անունով: Այդ տեղ ձիերը պիտի հանդստանային և կերակրէին:

Մեր առջև երևում էր Ալաշա սարը իր ձիւնապատ զաղաթով. այդ սարի բարձրութիւնների վրայ, ուռս-տաճիկական պատերազմի ժամանակ, Լօռու-Մելիքեանը մի հռչակաւոր չաղթութիւն տարաւ: Ես իջայ Քայոսնից և մտայ զուքանը, որի դրան առջև նստած էր

Տօմ 25 տարեկան մի աղքատ հայ զիւղացի, երկու աչքերով կոյր և ծաղկից այլանդակած երեսով: Նա մի սաղի վրայ մեծ ոգևորութեամբ ածում էր և երգում: Երգերի մեծ մասը նւիրւած էին Ներսէս պատրիարքին: Այդ դարուս ամենանշանաւոր հայ եկեղեցական-հայրենասիրի ժողովրդականութիւնը ահագին է: Ցանջւած Ալաշկերտցու թշւառ զաւակը ոգևորութեամբ ածում էր և երգում «հայրենիքի արև լուսատուի, Ներսէս ջանի» մասին.

Ժամ ու կիսից յետոյ կրկին ճանապարհներս շարունակեցինք: Անցնում էինք բազմաթիւ ուսուցաղթականների զիւղերով: Այդ գաղթականները Կարսի շրջանում ստացել են և ստանում են հիանալի հողեր: Յոյն և ուսուցաղթականներով լցւում է նոր նւաճած երկիրը: Հայերից միայն թշւառ գաղթական Ալաշկերտցիներից 350 տուն է բնդուհւած. մի մասը զետեղւած է Կանը-քեօց հայաբնակ զիւղում, իսկ մնացեալը թուրքերից թողւած մի քանի զիւղերում: Հասկացողութիւն տալու համար գաղթականութեան վրայ, բերենք մի պաշտօնական տեղեկութիւն միայն 1883 թւի գաղթականութեան մասին (տե՛ս «Կարս» թերթը № 48, 1884 թ.):

Անդրիովկասից

Մայրականներ . . . . .	49	ծուխ	313	շունչ
Յոյներ . . . . .	13			107
Ռուս-ուղղ. . . . .	6			20
Հայեր . . . . .	2			3
Եհհայեր . . . . .	1			7

Ներքին նահանգներից.

Ռուս-ուղղ. . . . .	3			19
--------------------	---	--	--	----

Տաճկաստանից.

Յոյներ . . . . .	73			465
Հայեր . . . . .	1			18

Յոյներից, օրինակ, միայն աշնան վերջերին 1881 թ. Տաճկաստանից դաղթել է 2150 ծուխ Կարսի նոր նւաճած երկիրը:

Պաշտօնական տեղեկութիւնից առ 1 յունւարի 1887 թ. երևում է որ Կարսի երկրում (область) բնակութիւն հաստատած են 10,511 հողի ուսներ, որոնց մեծ մասը մայրականներ ու զուխօրօրներ են: Ռուս ազանդաւոր գաղթականները քիչ են մշակում հողը.

նոքա ահագին տարածութիւններից հաւաքում են, առանց գլխացաւի, բնութիւնից առատ պարգեւած անբաւ խոտը, խի մերձակայ խոտաւէտ սարերը իրանց անասունների համար հիանալի արօտատեղիներ են: Այդ գաղթականները բոլորովին տկոր, աղքատ՝ գալով նոր նւածած երկիրը՝ շուտ հարստանում ու բարգաւաճում են:

Արեւի մայր մտնելու մօտ էր, երբ մենք անցնում էինք Մելիք-քեօց անունով մալականների գիւղից: Ես շարած մնացել էի տեսնելով գեղեցիկ տները և ոչխարների, այծերի, եղների, կովերի, գոմէշների ու ձիերի բազմութիւնը, որը մի քանի աղքատ հաց հովիւներ և նախրապաններ քշում էին դէպի այդ գիւղը: Իսկ մի քանի աղջիկներ դաշտերում արածացնում էին սաղերի ահագին երամներ: Այդ բոլորը այդ գիւղի մալականների սեպհականութիւնն է:

Մութն էր բոլորովին, երբ հասաչ Կարս քաղաքը: Խաւարի միջից հաղիւ երևում էին գետի երկու կողմից, զառիվայրերի վրայ, ամֆիթէատրոնի ձևով շարւած տները: Զանազան բարձրութիւնների վրայ ցրւած, խաւարի մէջ վառուղ ճրագները, գետի ձայնը, ահագին մռայլ քարափները՝ բոլորը միասին մի առանձին տպաւորութիւն էին թողնում: Կառապանը կանգնեց մի միայրականի սպիտակ շինութեան առջև, ասելով. «ահա այստեղի ամենալաւ հիւրանոցը «Πετροδρυτς»: Հիւրանոցում ընդամենը չորս սենեակ կային, որոնցից միայն մէկն էր ազատ: Մի գիշերւայ համար պահանջում էին 3 բուբլի, և ի՛նչպիսի սենեակ՝ խոնաւ, հոտած, ցուրտ, կեղտոտ, չատակին ահագին ծակեր, պատասանները պատաստոտած, մահաճակալը կեղտոտ և այնքան կարճ, որ պտուկած տեղը կամ պէտք էր մի արշին ոտերս դուրս ցցէի կամ սաստիկ կուչ գայի:—Ահա՛ ինչ տեղի համար է ասւած թէ՛ «Աերմակիդ չափով ոտերդ մեկնիր»...»

\* \* \*

Միւս օրը, առաւօտեան, դուրս եկայ հիւրանոցից: Ողորմելի, անձոռնի տները տաճկաց ժամանակից մնացած մի կողմից՝ ժայռերը և ծառերից զուրկ լինելը միւս կողմից՝ քաղաքին տալիս են մի մռայլ կերպարանք: Միայն քաղաքի մօտ, գետի ափին, մի փոքրիկ տարածութիւն կայ, ուր անկած են մի քանի քոտոտ սոււնիւր և որը կրում է «Καρσεκίη Ραϊ» մեծ անունը: Քաղաքը հիմա քաօսական

ղրութեան մէջ է. ամեն տեղ նշմարուած է աշխատութիւն. նորոգում են, եւրոպական կերպարանք տալիս տաճիկների ժամանակ «հոտած» մականունն կրող քաղաքին: Նոր յատակադճով փողոցներ են ձգուած բերդի վերաբերմամբ շառաւիղանման, այնպէս որ բերդից բոլոր փողոցները հեշտութեամբ կարող են ումբակոծուել: Կարս քաղաքը տեղաւորուած է այն ձորի բերնին, որտեղից անցնում է Կարսի գետը: Այդ այն ձորն է, որը շարունակուած է Արգինայից մինչև քաղաքը: Գետը, մի քանի պոռոյաներ գործելով աւելի դաշտային տեղերով, անցնում է քաղաքի միջից, բաժանելով նորան երկու մասի և մտնում է վերոյիշեալ խոր ձորը, որին պատում են երկու կողմից ահագին, սեպածն բարձրացող, ժայռոտ լեռները, իրանց վրայ պահելով բազմաթիւ մարտկոցներ: Գետի (հոսանքի ուղղութեամբ նայելիս) աջակողմեան ահագին քարափի զլխին կանգնած է Կարսի մռայլ, ահռելի բերդը, որի տակին կուչ են եկել հայերի հին ողորմելի անակները, շինուած անտաշ քարերից և կրախառն ցեխից: Այդ տները զանազանուած են մինչև այժմ տեսած դիւղական խրճիթներից մեծութեամբ և փոքրիկ լուսամուտներով, որոնցից զուրկ են վերջինները: Նոքա բակ չունին, զոմը ու մարազը ներքին չարկումն են, իսկ «օղաները» (սենեակները) երկրորդ: Քաղաքի այդ մասում, բերդի տակ, արգելուած է այժմ նոր շինութիւններ անել: Պատճառներից մէկն այն է, որ քարափից պոկուած են ահագին ժայռեր, որոնք, զլորուելով ցած, խորտակում են այդ անակները և շատ անգամ փլատակների տակ թաղում տան մէջ ապրողներին: Բերդի տակին են, ուղիղ քարափի ժայռերին կպած, նոյնպէս հայոց եկեղեցին, ծխական դպրոցը և առաջնորդարանը, բոլորը մի գաւթում, բոլորն էլ ողորմելի, անշուք, բոլորին էլ սպառնում է ժայռերի տակ խորտակուել, թաղուել: Քաղաքի մի մասից դէպի միւսը, բերդի տակ գտնուողը, տանում է մի քարեայ կամուրջ, որից անցնելով, ծուռ ու մուռ, քարքարոտ, զառիվեր փողոցներով շնչասպառ բարձրացայ եկեղեցու գաւթիթը: Նս յանձնարարական նամակ ունէի Կարսի վիճակի յաջորդ հ. Յուսիկ վարդապետին: Այդ երիտասարդ համակրելի անձնաւորութիւնը սիրով ընդունեց ինձ և համոզեց տեղափոխուել իւր մօտ. շնորհակալութեամբ չիշում եմ նորա սիրալիր ընդունելութիւնը: Կարսում ես պիտի կամ ուղեկից զտնէի Կրկերում զնալու,

կամ, եթէ չը չաջողէր, վարձէի մի «ղլաւուս»), այսինքն ձիապան, որի պարապմունքն է լինում Մուշի ս. Կարապետ գնացող ուխտաւորներին տանել-բերելը: Բայց բանը այնպէս պատահեց, որ ես փոխեցի իմ որոշումս՝ նախ Կարին գնալ: Ես ծանօթացայ մի հայ պարոնի հետ (Վ. 2.), որը Վանի ուսաց հիւպատոսարանի թարգմանն է: Այդ պարոնը իր ամուսնու և մի քանի ուղեկիցների հետ, Տաճկաստանում ճանապարհորդելու բոլոր պատրաստութիւններով, Ալաշկերտի վրայով, մի երկու օրից յետոյ, պէտք է Վան ուղեորւէր: Ես յարմար առիթ համարեցի այդ, և յայտնեցի իմ ցանկութիւնս նոցա քարվանով գնալու: Պարոնը մեծ ուրախութեամբ համաձայնեց: Սահմանադիտին պիտի միանար այդ քարվանին և Վանի ուսաց փոխ-հիւպատոսը և այսպէս մի մեծ քարվան, իրանց զինուորւած մարդկանցով և տաճկական զաֆթիներով (պօլիցիական), մի երկու շաբաթից յետոյ պիտի հասնէին Վան: Ս. թարգմանի խորհրդով, ես մի ձի գնեցի, որովհետև անկարելի է վարձով ձի գտնել մինչև Վան: Յետոյ գնացի Կարսի տաճկական հիւպատոսի մօտ ներկայացնելու իմ անցաթուղթը: Հիւպատոսը, մի քաղաքավարի տաճիկ երիտասարդ էր, Պետերբուրգում ծառայած և ուսուերէն զիտցող, նա ինձ յայտնեց որ թիւրքաց-ձայաստանում այժմ դժուար է ճանապարհորդելը, որովհետև սաստիկ կասկածանքով են նայում հայերի, — նամանաւանդ ուսասհպատակ և ուսում ստացածների վերայ: Ես հաւատացրի իմ ճանապարհորդութեան նպատակի անմեղութիւնը և երբ անցաթուղթիս վրայ հարկաւոր գործողութիւնները կատարեցին, ես վճարեցի (2 ռ. 20 կ.) և դուրս եկայ: Հիմա մնում էր ուսական փողերը փոխել օսմանեանի: Չառաֆների մօտ 9 ռուբլի 20 կոպէկին այն ժամանակ տալիս էին 1 օսմանեան ոսկի մէջիդիէ (1 ոսկի մէջիդիէն հաւասար է ոսկով 5 ռուբլի 72 կոպ.): Բոլոր պատրաստութիւնները տեսնելուց յետոյ, ես սպասում էի որ «այսօր, վաղը» ճանապարհ կ'ընկնենք, բայց պ. թարգմանը յետաձգում էր, ասելով թէ հարկաւոր կարգադրութիւնները դեռ չի ստացել: Ստիպւած լինելով մի քանի օր մնալ Կարս, ես օգտուեցի հ. Յուսիկ վարդապետի սիրալիր առաջարկութիւնից և յաճախում էի ծխական դպրոցը, ծանօթանալու համար նորա դրութեան հետ:

Կարսի հայոց ծխական դպրոցի շինութիւնը հին, ողորմելի և վերին աստիճանի անյարմար է, բացի այն որ նորան ամեն մի բոսէ սպառնում են քարափից կախ ընկած ահուելի ժայռերը: Տեղի սակաւութեան պատճառով, սենեակներից մի քանիսը տախտակներով բաժանւած են զատ զատ դասարանների: Չը նայած արտաքին անջաջող պայմաններին, ուսման ընթացքը բաւականին կանոնաւոր է: Միւսնոյն ողորմելի շինութեան մէջ զետեղւած է թէ՛ տղայոց և թէ՛ աղջկանց բաժանմունքները: Տղայոց դպրոցը երկգասեան է, աղջկանցը՝ միգասեան: Իմ ժամանակ սովորում էին 151 աղջիկ և 308 տղայ: Աշակերտների մէջ կային և 3 հոգի հայ-կաթօլիկներ: Զարմանալի են մեր իրանց Ֆրանսոզ համարող արիւնակիցները. նոքա խորշում են ամեն բանից ինչ որ ազգային, հայկական է. օրինակ, այդ երեք կաթօլիկ տղաների անուններն են՝ Ռնօփրիոս, Ալոզիոս, Ֆրանչիսկոս...

Կարսի փոքրաթիւ հայ ինտելիգենցիան, որի հետ մասամբ պատիւ ունեցայ ծանօթանալու, իրան հեռու է պահում հայ դպրոցական գործերից, թողնելով ասպարէզը տգէտ հոգաբարձուների ձեռքում:

Կարս քաղաքը, ինչպէս ցոյց է տալիս «Карсѣ» պաշտօնական թերթը, առ 1 յունւարի 1887 թ. ուներ բնիկ ազգաբնակչութիւն 3.950 հոգի: Այդ թւից 2.166 լուսաւորչական հայեր են, 270 կաթօլիկ և 8 բողոքական հայ. մնացեալ ազգաբնակչութիւնը բաղկացած է տաճիկներից, յոյներից, ռուսներից և այլն: Քաղաքը իր հաշւով պահում է երկու փառահեղ շինութիւնների մէջ ռուսաց երկու ուսումնարաններ՝ քաղաքային երեքդասեան ուսումնարան (հիմնւած 1880 թ.), տղայոց և քաղաքային երեքդասեան ուսումնարան աղջկանց (հիմն. 1881 թ.). այդ ուսումնարաններում սովորում են զլիսաւորապէս հայերի, յոյների և ռուսների զաւակները: Օրինակ, առ 1 յունւարի 1888 թ. ռուսաց այդ աղջկանց ուսումնարանում սովորում էին 72 աղջիկներ, որոնցից ռուսուհի՝ 11, չեխուհի՝ 1, յոյսուհի՝ 29, հայուհի՝ 28, հրէուհի՝ 3:

Կարսի նոր նւաճած երկիրը գտնւում է մի առանձին վարչական պայմաններում՝ դա մի «զինւորական նահանգ» է (область), որը բաժանւում է ռուսական-զաւառների — շրջանների (округъ): Կար-

սի երկիրը (область) բաժանուում է չորս շրջանի (округъ)—Վարսի, Վաղղւանի, Արղահանի և Օլթւայ: Վիճակագրական տեղեկութիւններից, որոնք հաւաքւած են 1882 թ. կառարւած տնտեսագիտական-վիճակագրական հաշւեգրութիւնից և քաղւածօրէն հրատարակւած պաշտօնական «Карета» թերթում (№ 7, 1883 թ.), երևում է որ բնիկների թէ արական և թէ իգական (коренные жители) թիւը առ 1882 թ. էր 145,412 շունչ, ժամանակաւոր բնակիչներինը (временные жители) 6,308 շունչ, իսկ առ 1 յունւարի 1887 թ. հաշւում էր (նոյն №№ 7 և 17, 1888 թ.) բնիկների թիւը 175,601 շունչ, ժամանակաւոր բնակիչներինը՝ 11,837 շունչ, որոնցից 2027 հայ, Ուրեմն 1882 թ. ամբողջ երկրում 151,720 հոգի էր, իսկ 1887 թ. » » 197,438 »

Հիմա համեմատենք՞ զլիսաւոր ազգերի ու ցեղերի թիւը 1882 թ. և 1887 թ. ամբողջ Վարսի երկրում (միայն բնիկների, առանց հաշւելու ժամանակաւոր բնակիչներին):

	1882 թ.	1887 թ.
Տաճիկ	39.099 շունչ . . . . .	41.636 շունչ
Հայ	31.518 » . . . . .	38.184 »
Քուրդ	21.384 » . . . . .	24.367 »
Ղարաիափախ	21.652 » . . . . .	23.952 »
Յոյն	15.105 » . . . . .	23.364 »
Ռուս	7.928 » . . . . .	10.511 »
Թուրքմէն	6.155 » . . . . .	10.097 »
Եզդի	69 » . . . . .	2.051 »

օսերի, լեզգիների, զնչունների, պարսիկների և այլն թիւը աննշան է: Ահա՛ հայերի և ուսնների աւելի մանրամասն թւերը.

հայ	{	Ղուս.	30.656 շունչ	-	հայ	{	Ղուս.	37078 շունչ
		կաթ.	734 »				կաթ.	795 »
		բող.	128 »				բող.	311 »
ուսն	{	մալակ.	5.333 »	-	ուսն	{	մալակ.	6.261 »
		ղուխ.	2.016 »				ղուխ.	2.780 »
		ուզղ.	514 »				ուզղ.	1.013 »
		սուբբ.	39 »				մալոսուս.	242 »
		պրիզ.	17 »				սուբբ.	215 »
		կաթ.	9 »					

Հայերը զլուսաւորապէս խմբւած են Կարսի և Կաղզւանի շրջաններում (ОКРУГЪ): 1882 թ. ցոյց տւած յոյների և ռուսների թիւը գաղթականներից են կազմւած: Մինչև սլաւոներազմը յոյների թիւը այս կողմերում աննշան էր: Հէնց միայն 1881 թ. գաղթել են Կարսի կողմերը 2.150 ծուխ յոյներ Ցաճկաստանից:

Կարսի երկրում կայ 800-ից աւելի գիւղ, որոնցից միայն 84-ը Հայ լուսաւորչական գիւղեր են: Կարսի վիճակի Հայոց հոգևոր կառավարութեան կենդրոնը Կարս քաղաքումն է: Բացի Կարս քաղաքից, Հայերը գտնուում են և երկրիս միւս գիւղաքաղաքներում (ՄԵՇԵՊԵՔՈ)՝ Կաղզւան, Արդահան, Օլթի: Ամբողջ վիճակի Հայ լուսաւորչականները, վիճակիս փոխանորդի ցուցմունքով, 5.057 տուն են: Ամբողջ վիճակում Հայերը ունին.

1 Երկդասեան տղ. դպրոց (Կարս)

11 Միդասեան տղ. դպրոց

2 Միդասեան աղջ. դպրոց (Կարս և Կաղզւան)

Հետևեալ տեղերում են դպրոցները—Կարս, Կաղզւան, Արդահան, Սարըզամըշ, Բէնգլիահամէտ, Բերնա, Փիլվարի, Բաշ-Շօրագեալ, Ղալախչախ, Փալդրվան, Քիւրիկդարա, Վերին-Քաղբկլար (այդ վերջին երկու գիւղերում նոր էին բացւում): Ուրեմն 84 Հայ գիւղերից միայն 9-ը ունին միդասեան տղայոց դպրոց և ոչ մի աղջկանց <sup>1)</sup>: Բոլոր վիճակիս Հայոց ծխական դպրոցներում տարրական ուսում ստացող մանուկների թիւը հասնում էին 800-ի. այդ թւի  $\frac{1}{4}$  մասը աղջիկներ էին: Գիւղական դպրոցներից իւրաքանչիւրի վրայ ծախս լինում է 170—300 բուբլի: Եւ այդ չնչին գումարը մեր ինտելիգենցիան, մեր զանազան բարեգործական ընկերութիւնները մի՞թէ չեն կարող տալ, որ 84 գիւղից գոնէ 20-ը միջոց ունենար ամենատարրական ուսում ձեռք բերելու խաւարի և աղքատութեան մէջ կորած շինական մանուկների համար: Յաւալին այն է, որ ընկերութիւններ էլ ունինք գործունէութեան ամենալայն ծրագիրներով, բայց ժողովրդի մասապի համար ոչինչ արդիւնք նոցանից: Այդ նորանից է յառաջ

1) 1888 թ. հրատարակած «Վիճակ. տեղ. եկեղեց.—ծխակ. ուս. հայոց լրնթացս 1886—1887 ուսումն. ամի»—գրքից խմանում եմ, որ բոլոր Ռուսաստանի 5 վիճակներում կար 111 հայոց ծխակ. ուսումնարաններ՝ 4472 աշակերտներով և 3047 աշակերտուհիներով:

գայլիս, որ մեր ընկերութիւններում զործողներ ընտրւում են մարդիկ, որոնց ժողովրդի կարիքները նոյնքան են յայտնի, որքան և չինական այբ-բենը:

Մարդ սարսափում է, երբ մի կողմից տեսնում է այն մտաւոր թանձրամած խաւարը, այն սղիտութիւնն ու աղքատութիւնը, որի մէջ գտնւում է հայ ժողովուրդը, իսկ միւս կողմից ինտելիգենցիայի և ունեւոր դասի կատարեալ անտարբերութիւնը...

Կարսի երկրում գտնւում են և մի քանի ուսաց ուսումնարաններ, որոնց մէջ սովորողների մեծամասնութիւնը հայեր են — Կարս քաղաքում վերոյիշեալ երկու ուսումնարանները, Կաղզւանի երկդասեան նօրմալ ուսումնարանը և Օլթուայ սկզբնական ուսումնարանը: Մըտաղրութիւն կայ և մի քանի տեղերում ևս այդ տեսակ ուսումնարաններ բանալ: Ռուսաց դպրոցները պահւում են զլիսաւորապէս քաղաքային միջոցներով և զինւորական-նահանգապետից տրուող յայտնի գումարով:

Կարս քաղաքում հայերը ունին միայն երկու անշուք, ոլորմելի եկեղեցի, որոնցից մինը կիսաւեր է, թէև մէջը ժամասացութիւն կատարւում է: Բերդի մօտերքում երևում են և մի քանի հին հայոց մատուռներ, բայց նոքա այժմ կիսաւեր են և հայերին չեն պատկանում: Կարսում հայերը ունեցել են մի փառաւոր, բուն հայոց ճարտարապետութեամբ շինւած եկեղեցի ս. Առաքելոց անունով: Տաճկական բռնութեան ժամանակ նա զօրքի մթերանոց էր և անհոգութեան մատնւած: Կարսը տիրելուց յետոյ նա վերանորոգւած է և այժմ ուղղափառների սօբօրն է: Քաղաքում շինւում է և մի մեծ փառահեղ յունաց տաճար, թէև բնիկ յոյների թիւը քաղաքում 230 շունչ է: Հայ կաթօլիկներն էլ ունին մի եկեղեցի, որի սեղանի վրայ դրւած է մի մեծ պատկեր, ուր ներկայացւած է թէ ինչպէս Սիլվեստրոս պապը և ս. Գրիգոր Առասաւորիչը գրկխառնւում են:

Կարսի հայոց վիճակում կայ 80 հայ-լուսաւորչ. եկեղեցի, 89 քահանաներով. շատ զիւղեր զուրկ են թէ՛ եկեղեցիներից և թէ՛ քահանաներից: Հասկանալի են այդ անհովութիւնից յառաջ եկող շարիքները. հասարակութիւնը այդ տեսնում է, հոգևոր կառավարութիւնը իմանում և փոխանակ մի բան անելու, անվերջ ինտրիգներով են զբաղւած: Վիճակում կան բազմաթիւ հայոց վանքեր, բայց

շատերը ամայի, քանդուղ կամ վաղուց փլած աւերակներ: Մի քանիսները միայն շէն են և մէջերը մի մի վարդապետներ են բնակեցրած, որոնք միայնակ, ուրւականների պէս, շրջում են այդ տխուր, հին, կիսախարխուլ սրբավայրերում: Գոնէ այդ սուրբ հայրերը իրանց մեղամաղձ միայնակութիւնը փարատէին դպրոցներ պահելով շրջապատող ողորմելի հաց դիւղացի մանուկների համար, բաց... «ձայն բարբառոց յանապատի»: Եէն վանքերը սոքա են—Անի (1 վարդապետ), Հռոտմոսի կամ Ղօշայ վանք (1 վարդ.) և Խժկօնից կամ Բէշ-քիլիսա (2 վարդ.): Իբրև ուխտատեղի նշանաւոր է Վարդիհէրը: Վանքերը ունին հողեր, բաց, ինչպէս և մեր միւս եկեղեցական-վանքային կալաւածները, որովհետև զուրկ են կարգին սնտեսական հսկողութիւնից ու մշակութիւնից՝ համարեա ոչինչ արդիւնք չեն բերում:

\* \* \*

Հոկտեմբերի 24-ին վերջապէս պ. Վ. 2. յայտնեց, որ հետևեալ օրը ճանապարհ ենք ընկնում: Մինչև Սարըղամըշ պօստային ճանապարհ կայ, ուստի վաղ առաւօտեան, հոկտեմբերի 25-ին, ձիերը և բեռները ծառաների հետ առաջ ուղարկեցին. իսկ ես, Թարգմանը և նորա ամուսինը պօստային սայլակով ճանապարհ ընկանք Կարսից: Երջակայ բնութիւնը չէ զանազանում ընդհանրապէս մինչև այժմ տեսածից: Ճանապարհին պատահում ենք բազմաթիւ ոռու գաղթականների՝ մալականների, ղուխօբօրների և խախօյների զիւղեր: Բազմաթիւ են նոյնպէս և յոյների զիւղերը: Սակաւ են ճանապարհին պատահում հայերի, տաճիկների և չէրքէզների զիւղեր: Պատերազմից յետոյ, երբ երկիրը անցաւ ոռուսաց ձեռքը, Դաղստանի և Թերեքի չէրքէզ գաղթականները, ինչպէս և տաճիկներից և աջարցիներից շատերը կրկին անցան տաճկաց հողը, ստանալով Թիւրքաց-Հայաստանում բնակութեան տեղեր:

Կարսից հասնելով առաջին կայարանը մի ժամ պիտի սպասէինք. ձիեր չը կային: Միւս պօստային կայարանում՝ Ղարաղամգա անունով, պիտի զիշերէինք արդէն: Վաղ առաւօտեան ղուրս եկանք Ղարաղամգայից գէպի Սարըղամըշ: Խժուղին ընկած էր մի ձորով, որից անցնում էր մի փոքրիկ գետակ: Մենք մօտենում էինք Սարըղամըշին: Սկսում էին սարերի վրայ սոճի (շամ, соха) ծառեր պատահել: Քանի հե-

ուանում ենք մօտենալով Սարըղամըշին, այնքան բազմաթիւ են դտուում սոճիների խմբերը և ծածկում են սարերը խիտ անտառիկներով: Մենք մանում ենք հռչակաւոր Սօղանլու խի անտառը: Երևաց Սարըղամիշը շրջապատած ձիւնապատ սարերով: Այդ սպիտակ Փօնի վրայ նկարւում են սև-կանաչ սոճիների բազմաթիւ խմբեր: Եթէ շրջապատող սարերը և ասիական ձանապարհին պատահող սայլերը ու տաճկական հագուստներով յոյները չը լինէին, մարդ կարող էր երևակայել իւրեան Ռուսաստանի խորքերում, Վօսկայի մօտակայ գիւղերից մէկում, որոնք տեղաւորւած են լինում սոճիների (СОСНА) անտառներով շրջապատած դաշտերում: Սարըղամըշում, որ ուսւ զօրքերի մի դունդի բանակատեղին է, դուք տեսնում էք նոյն ուսական խրճիթները, ուսւ գիւղացիները (մալականներ) և այլն:

Երբ հասանք պօտոսյին կայարանը, պ. Թարգմանը իր ամուսնու հետ գնաց իրանց ծանօթների մօտ, խոստանալով ինձ յայտնել գնալու ժամանակը: Ես մնացի բոլորովին միայնակ ցուրտ կայարանի սենեակում: Ծագտուութիւնից ինքնաեռ պատւիրեցի, և աշխատում էի սակաւախօս մալական ստարօստայի հետ խօսակցութիւն կապել, բայց անջաջող...

Առաւօտեան եկաւ ինձ մօտ պ. Թարգմանը և յայտնեց որ Վանի ուսւաց փոխ-հիւպատոսը՝ պ. Կօլւբեակինը կանչում է ինձ իր մօտ: Նա եկած էր Սարըղամըշ, որտեղից կրկին պէտք է վերադառնար քարվանի հետ Վան: Լսելով իմ մասին, նա հրաւիրել էր իր մօտ: Երբ ես գնացի ներկայացայ, նա հարցրեց իմ ուղևորութեան նպատակը: Նա ցաւելով յայտնեց, որ ներկայ պայմաններում անկարող է ինձ իր հետ առնել և մինչև անգամ թոյլ տալ ինձ քարվանի հետ միասին գնալ, երկիւղ կրելով թէ մի գուցէ իր համար, տաճկաց տեղական կառավարութեան կողմից, բարդութիւններ ծագեն: Նա նկարագրեց ինձ տաճկական Հայաստանի սարսափելի դրութիւնը, և ես յետոյ համոզւեցայ թէ որքան ճիշդ էին նորա պատմածները: Ծածկաց տեղական կառավարչութիւնը իր երևակայութեան մէջ ստեղծել է «շարժում» և ամենամեծ կասկածանքներով ու խստութիւններով աշխատում է արմատախիլ անել նորան: Նա խեղճ, վիզը ծրուած հայերին աւելի է ճնշում այժմ նոցա երևակայական շարժման համար, իսկ ուսւ կառավարութեան ներկայացուցիչների վրայ կաս-

կաճանքով է նայում, իբրև թէ նոքա հայերին զրգում լինէին։ Կասկածանքը մեծ է նամանաւանդ ուսասհայերի նկատմամբ։ Տաճիկները իրանց աներևակայելի տղիտութեամբ հասկացողութիւն չ'ունին տուրիտի կամ զիտնական ճանապարհորդութեան մասին։ Մի քանի շաբաթ զորանից առաջ եկած էին Վան երկու զիտնական Փրանսիացիք՝ Պօլսից և Պարիզից հարկաւոր յանձնարարականներով՝ Վանի սեպածե արձանագրութիւնները ուսումնասիրելու։ Երբ միամիտ եւրոպացիք պտտում էին քաղաքում և պատրաստում էին սեպագրերի լուսանկարները հանելու, իսկոյն ձերբակալւում են։ Միայն ուսաց հիւպատոսի միջամտութիւնն է ազատում նոցա բանտարկութիւնից. այլ ևս ոչինչ հետազոտութիւն անելու թող չեն տալիս նոցա։ Մի քանի ժամանակ զորանից առաջ ուղարկւած է եղել մեր կայսեր կողմից մի ուս յայտնի նկարիչ՝ անցեալ պատերազմի մի քանի նշանաւոր տեղերը նկարելու։ Նորան այդ թող չեն տալիս անելու, թէև Սուլթանից հրաման ունէր ձեռքին, որ անարգել թող արւի իրան տեսարաններ նկարելու։ Վալին ասել է, թէ իրան յանձնւած երկրի պայմանները ինքը աւելի լաւ զիտէ, քան թէ Պօլսում, և թող չի տալ այդ անելու... Երբ ուսաց հիւպատոսի համար բեռներ են բերւում, տաճիկները լրտեսում են՝ չիցէ՞ թէ հայերի մէջ բաժանելու զէնքեր լինին։ Այնքան տեղն է հասել նոցա վեհերոս կասկածանքը, որ բեռի մէջ պիտնինճն թնդանոթի տեղ են ընդունել... Մատնութիւն, լրտեսութիւն, վախը սաստիկ տարածւած է ժողովրդի մէջ։ Բանտերը լիքն են անմեղ զոհերով։ Հիւպատոսը Վանումն էր անցեալ տարի պատահած քստմնելի իրողութիւնը կատարելիս. բանտում երկու հայ, որոնցից մինը կովկասեցիներն ծանօթ հ. Արսէն վ. Քոխմախեանը, ձեռներից կապւում և խաչածե կախում են բանտում։ Միայն մի քանի ժամից յետոյ, պատահմամբ լսելով չարչարողների հառաչանքները, մի քանի բանտարկւածներ (որոնց մէջ գլխաւոր զերն է խաղացել, ինչպէս յետոյ իմացայ, Քոռ-թագաւոր անունով մի վիթխարի բանտարկւած), որոնք հարեան սենեակումն էին փակւած, ջախջախում են դռները և քստմնելի բարբարոսութեան զոհերին ազատում մահից։ Խեղճ, անտէր ժողովուրդը յուզեց. լուսաւոր աշխարհը լսեց և գաղա-նային բարբարոսութիւնը, ամբողջ քրիստոնէութեան երեսին շարժած անպատուութիւնը, անպատիժ մնաց...

Տխուր, վհատեցուցիչ էին լուրերը: Ոչ պակաս չուսահատական էր և իմ զրութիւնը. հասնելով համարեա՛ սահմանազլխին, այնքան ջանքերից յետոյ, իմ բոլոր գիտաւորութիւններս պիտի անկատար թողնէի. մէնակ, անօղնական Սօղանլուխի անտառում, անտարբեր, սառնասիրտ միայն խօսքեր—«վերադարձէք յետ!»...:

Ես վճռել էի ինչ էլ լինէր՝ զիտաւորութիւնս գլուխ բերել: Սկսեցի որոնել Սարըղամըշում մարդ, որ յանձն առնէր ինձ հասցնել մինչև սահմանազլուխը՝ Ղարաուրզան, բայց չը գտայ մէկին էլ է որ այդ անէր: Իմացայ որ Երզրումից ուսուսաց զեներալ-կօնսուլի նամակատար «չափարը» եկել է Սարըղամըշ նամակներ բերել և նամակներ ու կապոցներ ստանալով պօստայից, կրկին նոցն օրը վերադառնալու է: Ես զնացի այդ ձիաւորի մօտ: Դա չէր համաձայնում իրերիս մի ամենափոքր մասն էլ է առնել իր ձիու վրայ, որպէս զի ես էլ իմ ձիովս կարողանայի նորա հետ միասին գնալ: Մնաց մի ելք. մինչև սահմանազլուխն ընկնել հիւպատոսի քարվանի հետ և գնալ. բայց ես միայն մի ձի ունէի, որը պիտի ինքս հեծնէի, իսկ իրերս ո՛րտեղ դնէի: Դիմեցի պ. Թարգմանին, խնդրելով որ իմ փոքրիկ չեմօդանս յանձն առնի ուղարկել իր իրերի հետ մինչև Ղարաուրզան:

—Տե՛ղ չը կայ, չեմ կարող:

Ես զարմացայ այդ մարդու վրայ, որը իր բեռի սալակում մի թեթև չեմօդանի համար տեղ չէր կարողանում զըտնել, գիտեցած լինելով, թէ ո՛րքան ինձ օգնած կը լինէր դորանով: Ի հարկէ իմ անսիրտութիւնս էր ճաճկաստանի պէս երկրում ճանապարհորդելիս չեմօդան հետս վերցնելը: Բայց ես մի թէ կարող էի գուշակել կէս ճանապարհին մի այսպիսի դէպք, քանի որ Պարսում բոլոր բանը կարգադրած և չարմարեցրած էր: Ի հարկէ ես հետս շատ չնչին բան կը վերցնէի, եթէ գիտենայի որ չէ յաջողւելու մի տարի մնալ թիւրքաց Հայաստանում. բայց ո՛վ կարող էր գուշակել: Վերջապէս պ. Վ. Չ. համոզեցաւ տեղ գտնել իր սալակում իմ իրերիս համար, երբ ես յանձնեցի նորան ի սեպհականութիւն իմ նոր, սիրուն չեմօդանս և նորա մէջ եղած շորերս հանեցի և զարսեցի պարոնից չեմօդանիս փոխարէն ստացած մի հին, կեղտոտ խուրջինի մէջ...:

Հոկտեմբերի 28-ին, առաւօտեան, պիտի դուրս գայինք Սարր-  
ղամբշից: Ամբողջ քարվանք կազմւած էր 15 հոգուց: Բոլորը, բացի  
ինձանից, գնալու էին Վան: Այդ խմբում կային և երեք Երևանցի  
հայ «հէքիմներ» — մզաքար կտրողներ, որոնք նոյնպէս գնում էին Վան  
իրանց արհեստով պարապելու:

Մի սալակ իրերով (լծած մի ձիով) և մի բեռնաբարձ ջորի  
ուղարկւում էին առաջուց, մինչև հիւպատոսի և իր մարդկանց ճա-  
նապարհ ընկնիլը: Բեռների հետ դրւած էր մի ուս սահմանապահ  
հեծած զինուոր և 2 Վանեցի ծառաներ՝ ոտքով, դոցանից մէկը քա-  
շում էր իր յետևից հիւպատոսի ձին, որը կաղում էր, որովհետև  
ոտը վնասուել էր, երբ նորա տէրը տաճկական սահմաններում արա-  
զութեամբ փախչում էր քրդերից: Բացի այդ երեք մարդկանց բեռ-  
ների հետ գնում էին և երեք հէքիմներ, նստած իրանց ձիերի  
վրայ: Նսնոյնպէս միացայ այդ խմբի հետ, հեծնելով իմ ձիս և առնե-  
լով հետս իմ մի խուրջինս (միւսը, չեմօդանիս փոխարէն ստացածը,  
սալակումն էր):

Անտանելի մի օր էր. ձիւն, քամի, սարսափելի ցելս: Նինւած  
ճանապարհ չը կար: Մենք պէտք է անցնէինք Սողանլուխի անտա-  
ռից: Դանդաղ յտաջ էինք գնում, նախ ճահճային տեղերով, յետոյ  
ձորով և ապա բարձրանում էինք սոճիի անտառներով պատած լայ-  
նանիստ սարերով: Սողանլուխի անտառը բացառապէս սոճի (շամ,  
сочка) ծառերից է բաղկացած: Անտառի մէջ տեղ տեղ բացւում են  
բաւականին մեծ լեռնադաշտակներ զուրկ բոլորովին ծառերից. այն-  
պէս որ մի քանի անգամ ճանապարհորդը անցնում է անտառից, կըր-  
կին զուրս գալիս բաց տեղ, որը միայն հորիզոնից է շրջապատւած  
լինում սոճիների սև պատով:

Յուրաքանչեւ աստիանում էր. ձիւնախառն քամին մարդուս կուրաց-  
նում, շունչը կտրում, երես, ձեռներ և ոտներ սառցնում էր: Եղած  
շաւիղն էլ կորած էր ձիւնի հաստ խաւի տակ: Սալակը ամենամեծ  
դժւարութիւնով էր յտաջ գնում. ժամանակ առ ժամանակ նա այն-  
քան յետ էր մնում, որ կորչում էր աչքերից և մենք հարկադրւած  
այդ անտանելի բքին պիտի սպասէինք մինչև կրկին նորա երևալը:  
Ղուրս էինք եկել բաց լեռնադաշտերից մինի վերայ, մի անապատ ծածկ-  
ւած ձիւնով, բոլորովին զուրկ կենդանութիւնից: Ռուս զինուորի ասելով,

դեռ 12 վերստից աւելի էր մնում մինչև մօտակայ գիւղը, իսկ Սարըզամըշից անցել էինք մօտ 18 վերստ: Հէքիմներից երկուսը, ես և զինւորը շատ առաջ էինք ընկել բեռներից: Յանկարծ մի ձիաւոր քշելով իր ձին՝ հասաւ մեզ, յայտնեց որ հիւպատոսն է ուղարկել իրեն մօտակայ գիւղը եղներ բերելու, կէս ճանապարհին ձգած սայլակը, որով հիւպատոսը և թարգմանի կինն էին դալիս, տեղ հասցնելու, որովհետև ձիերը չէին կարող քաշել նորան: Այս ասելով նա քշեց ձին՝ սլացաւ: Երկու հէքիմները իրանց թէթև ձիերով հետևեցին նորան. զինւորը մնաց սպասելու բեռներին, իսկ ես նոյնպէս քշեցի ձիս յառաջ: Մի քանի ժամանակից յետոյ ձիս յոգնեց, որովհետև վրան խուրջին կար և թանձր ձիւնի մէջ դժւար էր քայլել: Ես կորցրի աչքից թէ առաջուց գնացածներին և թէ յետ մնացածներին: Զիւնապատ լեռնադաշտում մնացի բոլորովին միայնակ. միայն առաջիցս փախած ձիերի ոտքերի հետքերն էին ինձ ճանապարհ ցոյց տալիս: Զիւնը և ցուրտ քամին դեռ շարունակւում էին: Երկինքը իր գոյնով ոչնչով չէր զանազանւում ձիւնապատ, ամալի տարածութիւնից, որը շրջապատած էր հորիզոնից մուալլ, մութ անտառներով: Անցնելով լեռնադաշտը՝ մտայ անտառը: Ինձ պատմում էին յետոյ, որ երբ գիւղացիք գնում են անտառը փայտ բերելու, այդ անում են հաւաքելով 30—40 հողի միասին, որովհետև միշտ այդ անտառներում պահւում են աւազակային խմբեր: Շատ անգամ սահմանից անցնում են աւազակներ այս կողմերը, կողուտում, սպանութիւններ անում, օգտւելով անտառի պաշտպանութիւնից և յետոյ կրկին յետ անցնում ծածկաստան: Բայց այդ բուք և ցրտով ո՞ր գիծը համբերութիւն կ'ունենար անտառում ստուգելով սպասել:

Ես կրկին դուրս եկայ անտառից մի բաց տեղ: Արդէն սկսում էր մթնել: Քամին ու ձիւնը դադարել էին: Շուրջս մեռելային լուսութիւն էր տիրում: Զիւնապատ ելեկջներով ես յառաջ էի արշաւում հետևելով հետքերին: Երկինքը իր միատեսակ բաց-մոխրագոյն կերպարանքը փոխում էր. ամպերը սկսում էին հաւաքւել սև կուտակներով, որոնք զանազան ձևեր ստանալով՝ խանդարում էին ստաջւայ միակերպութիւնը: Մի անպատմելի, սիրտ ճնշող, ահռելի սպաւորութիւն էր անում վայրենի, մուալլ, լուռ շրջապատող բնութիւնը, կարծես մի բոլորովին ուրիշ, երկրազնդից դուրս աշխարհում լինէի... Հեռու, իմ առջև,

աւելի մնալ տեսարանս. մութ ամպերը ծածկում էին հորիզոնի այն կողմում կարծես մի աւելի ևս վայրենի, ահուելի, անձանօթ աշխարհ, մի խաւարով պատած սոսկալի անդունդ...

Բաւականին զնալուց յետոյ, ես հասայ մի տեղ, ուր արդէն դժարանում էի ջուրը հեաքերը: Մթնում էր. հեաքերը խառնուում էին զանազան ուղղութիւններով զնացող ուրիշ հեաքերի հետ: Հաւանական էր, որ մօտ է մի որ և իցէ զիւզ: Գնալով այն ուղղութեամբ, որով աւելի էին հեաքերը, տեսայ հեռուից երկու շարժւող սև մարմիններ: Երբ բաւականին մօտեցայ, տեսայ որ երկու զիւզացի տաճիկներ էին: Բանից երևաց, որ նոքա էլ Ղարաուրդան են զնում, որ ձիաւորները վաղուց է անցել են այս ճանապարհով: Մինչև զիւզը դեռ երկու ժամուայ ճանապարհ էր մնում: Նոցա շատ էր զարմացրել իմ օտարոտի մէնակ ճանապարհորդութիւնս և սկսել էին երկար ու բարակ հարցեր տալ ինձ: Կարճ կորելու համար ասացի, թէ տաճկերէն չեմ հասկանում: Այդ առաւել ևս զարմացրեց նոցա...

Բոլորովին մութն էր, երբ մնանք մի զիւզ, որ քարերի և հողի ողորմելի կոյս էր ներկայացնում: Ես չը զիտէի ուր իջնեմ. մի տան առջև սկսեցի բարձր ձայնով կանչել. դուրս եկաւ մութ որջից մի կին, ձեռքին բռնած վառւած փայտի կտոր՝ լուցիկ (ЛУЧИНА). նա լուռ ու մունջ լուսաւորեց ինձ և մի բան քթի տակը փնթփնթալով հեռացաւ, թողնելով ինձ շարած: Յանկարծ փողոցի մի անկիւնից լսեցի հէքիմների ձայնը, որոնք կանչում էին ինձ: Գիւղում լաւ օդան, դոմում, պատրաստել էին հիւպատոսի համար. իսկ ես և հէքիմները իջել էինք տէրտէրի օդան, որը դոմից դուրս, մի ցուրտ, ողորմելի սենեակ էր՝ լուսաւորւած պատի քարերի արանքներում ցցած սոճիի վառւող լուցիկներով, որոնցից բարձրացող մութը լքցնում էր և ապականում սենեակի օդը: Այդ զիւզը Սաբասան անունով յոյներով է բնակւած: Պատերազմից յետոյ նորա առաջուայ տաճիկ բնակիչները անցան Օսմանեան հողը, իսկ նոցա տեղը բռնեցին յոյն (հուռոմ, ուռում) դաղթականները Տրապիզոնի կողմերից: Յոյները առհասարակ ահաղին քանակութեամբ զաղթում են Կարսի նոր նւաճած երկիրը և նոցա թիւը, որը սկզբում հազիւ մի քանի հազարի էր հասնում, այժմ մի քանի տասնեակ հազարների է հասել: Յոյս կայ որ մի քանի տարուց յետոյ նոցա թիւը Կարսի երկրում հայերից կանցնի: Այդ յոյները, կամ ինչպէս նոցա

ժողովուրդն է անւանում՝ «ուռումները», ազքատ, ազէտ, մոլեւանդ և թուլասիրտ մարդիկ են: Մեզ ծառայում էր տէրտէրի տղան. մի պատանի, որը չը նայելով ցրտին և ձիւնին, բաց կուրծքով, բոբիկ գնում էր գալիս՝ փայտ, ջուր բերում, և այլն: Այդ պատանին գիւղի տիրացուն ու վարժապետն էր: Երբ նորա բերած յունարէն այբբենարանը և սուրբ գիրքը ես կարդում էի և հին յունարէն բառեր հարցնում, նա վայրենու պէս զարմացած բացում էր իր սպիտակ ատամները և քրքչում: Այն բարբառը, որով նոքա խօսում են միմեանց հետ՝ ինձ բոլորովին անհասկանալի էր:

Սուբասանից մինչև սահմանազլխի վերջին գիւղը՝ Ղարաուրդան, ուր գտնւում է մաքսատունը, ընդ ամենը մօտ 8 վերստ է:

Առաւօտեան, հոկտեմբերի 29-ին, դուրս եկանք այդ գիւղից: Ճանապարհը ձորի միջով էր, որանդից մի գետ էր անցնում: Ղարաուրդան յոյնաբնակ գիւղը մտնելիս մենք հանդիպեցինք յունական հարսանիքի մի հանդիսի. մի քանի «ուռում» երիտասարդներ, տաճկական շորերով, Ֆէսները գլխներին, հեծած իրանց քնձոռո ձիերը, առանց թամբի, գժերի պէս դէս ու դէն էին քշում, ձեռքներին օղիի շիշեր բռնած. մի քանի կանայք և տէրտէրը նոյնպէս ձիերի վրայ, բայց աւելի դանդաղ էին գնում: Կնացքը վերջացնում էին ոտքով հետևող թմբկահարը և զուռնաչիները՝ վայրենի եղանակներ ածելով: Ո՛րքան զանազանութիւն հին, կլասիկական յոյներից...

Համեմելով գիւղը, ես իմացայ մաքսատնում ծառայող հայ պ. Ա. Տ.-Գ.-ի (որի անունով յանձնարարական նամակ ունէի Ալէքսանդրօպօլից) բնակութեան տեղը: Ինձ ցոյց տւին մի սպիտակ փոքրիկ տուն, որը իր կոկիկ տեսքով զանազանւում էր իրան շրջապատող որջերից: Պ. Ա. Տ.-Գ. ստիպւած լինելով իր պաշտօնը վարել այդ խուլ անկիւններում, ինքը իր աշխատանքով կարողացել էր կօմֆօրտ ստեղծել իր համար. տգէտ յոյնին, որի տանը նա ապրում էր իւր ընտանիքով, օգնել ու սովորեցրել էր մի մարդավայել տուն շինել, նա մանաւանդ որ անտառը մօտ է: Ապրելով այդ իւր նախաձեռնութեամբ շինւած տան մէջ, նա ազատ ժամերը պարապում է աթոռներ, սեղաններ շինելով իւր համար. ունի նաև նկարչութեան ձիրք. մի խօսքով, իւր տեսակի մի հայ Բօբինզօն է այդ խուլ, բարբարոս անկիւնում: Կրկնում եմ այստեղ իմ շնորհակա-

լուծիւնս ազնիւ պարոնին նորա հիւրասիրութեան և այն զիւրութիւններէ համար, որ նա ինձ տւեց:

Ղարաուրղանում կարելի է ընդհանուր հասկացողութիւն կազմել, թէ ինչպիսի ասորանքներ են ներմուծւում թիւրքաց-Հայաստանից, գլխաւորապէս Պարսի կողմերից—ձէթ, բամբակեայ ձեռագործներ, կոպիտ սապօն, Փէսեր, հայ արհեստաւորի (հիւննի, փականագործի և զարբնի) ձեռքի տակից դուրս եկած փայտեայ, երկաթեայ և պողպատից շինած զանազան իրեղէններ: Ներմուծւող ասորանքի վրայ մաքսը շատ մեծ է. օրինակ, 1 Փէսը, որը թիւրքիացում արժէ մօտ 30 կոպ., մաքսը 50 կ. է: Կովը, որը դնահատւում է 10 ուռբլի, մաքսը 3 ո. 50 կ.: Արտահանւում է գլխաւորապէս բրինձ, նաւթ, եգ, կով, ձի, ոչխար, բամբակից, բըրդից գործւածներ, խոշոր տաւարի կաշի և այլն:

Ես պէտք է Ղարաուրղանում կամ սպասէի, որ Պարսից մի ուղեկից պատահէր Պարսն գնալու, կամ մի կերպ հասնէի Զվին, որը տաճկական սահմանադրի մաքսատեղին է, և այնտեղից մարդ վարձէի ճանապարհս շարունակելու: Հիւպատոսի քարվանի հետ չէի կարող գնալ այլ ևս: Նոքա պատրաստւում էին մի քանի օրից յետոյ անցնել սահմանը: Զը նայած որ իրանք բաւականաչափ հողի էին, որ սեպհական զինւած մարդիկ ունէին, Զվինից էլ տաճիկ զաֆթիներ (պօլիցիական զինւոր) պիտի վերցնէին իրանց հետ, թէև Ալաշկերտի վրայով դէպի Վան ճանապարհը անհամեմատ աւելի ապահով է համարւում, քան թէ Իզդիր—Բայազէդ—Աբաղայով:

(Կը շարունակւի)

# Յ Ե Յ Ե Ր

Վ Է Պ

Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն Յ Ի

(Շարունակութիւն 1)

## Ժ Զ.

Հ Ա Ս Ս Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Օ. գիւղացիք բոլորը ջուր մաղուեցան. ամենքի բերանն էլ բաց մնաց, երբ հրամանը բարձրաձայն աղաղակեց. Օ. գիւղի հասարակութեան տանուտէր հաստատուած է կանդիդատ Խուզավերդի Գուքանէրուածովը, իսկ սուղիէք՝ Մարտիրոս Գարբէնովը, Սարիբէգ Փոշխմանովը, Գաւիթ Վաշէպողովը: Իսկ Արտեմ Գոմշակերովին քննութեան երթարկուած լինելու պատճառաւ՝ մերժուում է:

Արտեմ Սէրդէչիչի անցաջողութեան մանրամասնութիւններն իմանալու համար՝ մենք հետեւինք Բալասան աղային:

Տանուտէրի ընտրութիւնից յետոյ մի շաբաթ կացաւ Մելնիկովն

Օ. գիւղումը և այս շաբթումը նա մեծ գործ կատարեց:

Նորա հրաւիրանօքը միւս օրն իսկ եկաւ գիւղը Հաշտարար դատաւորն իւր պրիստաւով: Նոքա իջան Վլադիմիր Նեստորիչի մօտ: Երբորդ օրը հրապարակական անդրախօսութիւն եղաւ. մի քանի մուրհակատէրերի շարժական և անշարժ կայքերը սակարկութեան զրուեցին:

Գիւղականներից ոչ ոք մօտ չեկաւ բացի Խուզօցից և մեզ ծա-

1) Տե՛ս «Մուրճ»-ի 1, 2 և 3 համարները:

նօթ դատաւորներից, որոց հաստատութիւնը դեռ չէր եկել այս ժամանակ: Սուքա էլ շուտ չեա քաշուեցան աճրդից, իւրեանց ասելով ուժերիցը վեր էր:

—Ի՞նչ արած, ստիպուած եմ ե՛ս աւելացնելու, խղճաց բարեխիղճ Բալասան աղէն, թէպէտ ինձ վնաս է, բայց լաւ է ինձ վնասուել, քան խեղճերի ապրանքը կիսագնի կորչի:

Շատ զթոտ մարդ է եղել Մեխիկովը, ամեն մի վաճառի հանուած կալուածքի նշանակեալ գնի վերայ հինգ, տասը մանէթ աւելի էր տալիս և իւր վերայ թողնում աճուրդը:

—Ի՞նչպէս անեմ, եղբայր, բացատրում էր նա Հաշտարար դատաւորին, բոլորեքեան իմ ազդ ու ընտանին, իմ համագիւղացիքն են, ես ի՛նչպէս թոյլ տամ խեղճերի կաջքը կիսագնի ի կորուստ մատնուի. իմ ազգի զաւակներն են, ամենքիս սուրբ պարտքն է ազգասէր լինել:

—Անշարժ կալուածքները չեմ կարող գնահատել, կամ գինը մերձաւորապէս ճիշդ որոշել, որով և ձեր բարեսրտութեան աստիճանը, նշանակում է, չեմ կարող չափել. բայց ինչ վերաբերում է ձեր գնած շարժական աւարկանքին, զուք, Վլադիմիր Նեստորի՛չ, արժողութեան քառորդ մասը չը վճարեցիք, սառը պատասխան տուեց Հաշտարարը:

—Կարելի է ուղիղ էլ է ձեր ասածը, արդարացաւ Մեխիկովը, բայց այդքանն էլ աւելորդ եմ տալիս, այդ իրեղէններից ոչ մէկն ինձ պիտանի չեն, մեր մառանումը աւելորդ տեղ միայն պիտի բռնեն:

—Եդ տնաքանդ որդամեռը ո՞նց պտի մարսի, փսփսում էին բոլոր գիւղացիք, հազար մանէթանոց բազն երեք հարիւր մանէթ ա գնահատել տուել, իր պարտքն 290 մանէթ ա, հիմի 310 մանէթով իր վրայ ա թողում, դեռ պարծենում էլ ա, թէ քսան մանէթ աւել ա տուել, ողորմութիւն ա արել:

—Այ ձեզ զուրբան, ո՞վ ասեց, որ էդ անաստուածի պարտքը 290 մանէթ ա, ընդամենը դա հարիւր մանէթ էր տուել, 300 հասցրել եմ, էլի 290 մնում ա, պարզեց տարակուսանքը պարտապանը:

Միայն մի այգի չէր այս անգամի աճրդի դրուածը. շարիերի տունը քանդուեցաւ:

Ամենից զգալին էր զառամեալ մահտեսի Առաքելի դէպքը:

Հաշտարար դատաւորը վերջացրել է իւր գործը և վերադառնում է:

Նորա ճանապարհն է մի ջրաղացի առաջով: Ուղիղ ճանապարհի մէջ տեղովը՝ ղիմացիցը փայտի վերայ կռթնած գալիս է մի ծերունի:

Հաշտարարի ուղեկից ձիաւորը հեռուից ձայն տուեց ծերին՝ մի կողմը կանգնել, բայց եկողը ուշք չի դարձնում և ոչ զլուին է բարձրացնում: Զիաւորը յառաջ աշտանակեց և մտրակը բարձրացրած՝ սպառնում էր խփել, եթէ ծերը ճանապարհից դուրս չը գայ:

Ծերունին զողողում է և մէջ տեղը կանգնել է:

Յանկարծ նա սաստիկ երերաց ամբողջ մարմնով և երեսի վերայ ընկաւ: Հաշտարարի ձին խրտնեց, բաշը ցցեց, կանգնեց առաջի ոտքերի վերայ և մազաչափ էր մնացել, ոտքերով պիտի կանգնէր ծերի վերայ, եթէ դատաւորը չը յաջողէր սանձը թափ տալ և յետ քաշել:

Ամենայն դժուարութեամբ նա կարող եղաւ զսպել ամեհի երիվարի կատաղութիւնը և ցած թռչել թամբից:

Հաշտարարը հրամայեց իւր ուղեկիցներին վերցնել ծերին:

Նորան նստեցրին ջրաղացի պատին դէմ սուած:

Ջրաղացի ցրդանի (անի-ի անղը) տակից դուրս ցայտած ցօղերը և սառը հովը յետ բերին ուշագնաց ալևորին:

— Օխա՛յ, ես քո ցէլթուքսիդ (ցայանի) մատաղ, վերջի շնչումս է՛լի դու ինձ յետ բերիր, իւր սառած աչքերը դէպի ջուրը դարձրած՝ մրմնջում էր ծերունին. բայց սրանից յետոյ ապրեմ ո՞ւմ համար, դու էիր իմ մխիթարանքը, կորած որդուս եթիմների (սք) ապաւենը, որ ձեռիցս դուս եկար. ի՞նչ անեմ, Աստուած իրան բարի տա՛յ իր գործքովը...

Ծերի խօսքերը դատաւորի հետաքրքրութիւնը շարժեցին, նա մօտեցաւ ալևորին և երկար հարց ու փորձերից այս իմացաւ, որ իւր միակ որդին ընկել է ջրաղացի անիւի թուերի տակ և խեղդուել: Գաւառական բժիշկը կամեցել է անպատճառ անդամահատութեան ենթարկել նորա մարմինը, իսկ հայրը երեսուն մանէթ պարտք վերցնելով Բալասան աղաչից, շահել է լեզու չը հասկացող օտարազգի

բժշկին և ազատել սիրելի որդու դիակը մաս մաս յօշոտուելուց: Այն երեսուն մանէթը տոկոսակալել է, 500-ի է հասել և այսօր որդուն կլանող ջրաղացը նորա վեց որբերին էլ կենդանի կենդանի թաղում է իւր մէջ. անտէր թշուառների ապրուստի միակ միջոցն էր հայրասպան ջրաղացը, որ որպէսզէն էլ քաղցածութեան մէջ մահացնելու դատապարտած՝ սեպհականութիւն է դառնում այն մարդի, որը, ինչպէս ծերունին վերջումն ստուգել է, դրդել է բժշկին կորատել և ապա ինքն է համոզել ծերին կաշառքի միջոցաւ ազատել իւր մեռելն անդամահատելուց:

Հաշտարարը մի սառը զղուան քով ձին մորակել, հեռացել է սրտախաշ տեսարանից, թողած ծերունուն նոյն օրն իւր հաշիւը վերջացնել անցաւոր աշխարհքիս հետ՝ ճակատազրի կամայականութեանը յանձնելով վեց խմորակերներին:

Յերունու վերջին խօսքերը հասաւ բառացի կերպիւ Մելնիկովի ականջին. մի շարք անէժ քներ են եղել նոքա Բալասան աղայի ժառանգներին ուղղած՝ բաց նա—շունը կը հաչի, քարվանը կը քօչի—պարսկական առակն է պատասխան ուղարկել անշնչացած դիակի ետեւից՝ ու ինքը Հաշտարար դատաւորի գնալուց յետոյ՝ հրաւիրել է իւր մօտ փաստաբան շոլախ Յարութիւնին, կարգի է դրել նորա ձեռքով Դօնդարենց Ասոյին սպանող Դվակոթենց Հայրօջի թղթերն ու շտապել դէպի քաղաք:

—Մի բանի օր էլ կա՛ց, աղայ ջա՛ն, Բարսեղին կանչի՛, համոզի՛, կը լինի որ քո խօսքը լսի ու էլ չը տայ իր աղջիկը Գալօջի տղին, խնդրեց Խուզօն:

—Յիմա՛ր, ասաց Բալասան աղէն, իմ յետ մնացած իւրաքանչիւր ժամը կարող է քո գործը ծովը ձգել, յանկարծ Արտեմ Սերգէյիչը կը հաստատուի տանուտէր և քո ոտներդ սառը ջրումը կը մնան, ես շտապեմ՝ որ բանը փոխեմ:

Վլադիմիր Նեստորիչն ուղիղ էր, եթէ մի շաբաթ էլ ուշացած լինէր, Արտեմ Սերգէյիչը հաստատուած էր:

Գաւառապետն օգուտ էր քաղել Մելնիկովի գիւղում ուշանալուց և միւս օրը փութացրել էր ընտրողականը ներկայացնել հաստատութեան:

Բալասան աղէն իւր աչքովը տեսաւ դիւանատանը հաստատութեան հրամանը պատրաստ, մնում էր միայն ստորագրելու:

—Թող երկու չէ՛ չորս շաբաթով էլ չեա մնաց հաստատութիւնը, խոստացաւ Մեղնիկովի շնորհքով տեղ ստացած ատենադպիրը և հըրամանը գործերի տակը դրուեց:

—Ուրեմն ի գործ, վճուեց Վլադիմիր Նեստորիչը և ներկայացրեց քրէական ատենին իւր բերած թուղթը նրանց ստորագրողների հետ:

Բանն ինչ էր:—

Չորս տարի յառաջ գաւառի զիւղերի մէկից մի հաց աղջկաց փախցնելու ժամանակ՝ սպանուեց մի թուրք բէգ և կալանաւորուեցին նորա երկու սպասաւորները: Վերջիններս խոստովանուեցան, որ իւրեանք մասնակցել էին սպանուած կալուածատէր բէգի հրամանաւ: Փաստաբան Ս. Ա. պարոնի ճարտարախօսութեան շնորհիւ՝ թուրքերը դատապարտուեցան մի տարուայ բանտարկութեան: Նոքա իւրեանց ապաշխարանքը լրացրել էին: Այժմ այդ մարդիկը, կաշառուած Բալասան աղայից՝ թուղթ են տուել և անձամբ էլ եկել վրկայում են, թէ իւրեանց ուղարկողն և բէգի սպանուելու պատճառն եղել է Արտեմ Սերգէյիչը, որի եղբոր որդու համար, իբր թէ փախցնելուսն եղել աղջկանը:

Այն թղթովն առաջնորդեց Մեղնիկովը թուրքերին դէպի քրէական դատախազը:

Վերջինս անմիջապէս հեռագրեց իւր օգնականին Գոմշակերովին կալանաւորելու և դատի ենթարկելու:

Բալասան աղան այսքանով չը բաւականացաւ, մի հեռագիր ևս քաշեց Թիֆլիս Արտեմ Սերգէյիչի տիրոջը և այս մանրամասնութիւնների հետ յայտնեց, թէ իւր մօտ զբաւոր փաստեր կան նորա ստորին գործակատարներից, որոնցով ապացուցում է, թէ Արտեմ Սերգէյիչը խալվարն ու թ մանէթով դնած դարին հաշուել է տիրոջ վերայ 12 մանէթով. հետևաբար՝ ամեն մի խալվարի մէջ չորս մանէթ գողացել է տիրոջից:

Այժմ ինքը Մեղնիկովն առաջարկում է իւր պատրաստականութիւնը երաշխաւոր լինելու կապալառուին և փականքի տակ զննելու Գոմշակերեանցի շարժական և անշարժ կացքերը:

Երկու օր էր անցել այս անցքից, և ինչպէս ասացինք սկզբումը, Ս. զիւղացիք սարսափով լսեցին Խուղօյի տանուտէրութեան հրամանը

և իւրեանց աչքովը տեսան չորախ Յարութիւնին՝ կնքելուս Արտեմ Սէրգէյիչի ունեցած չունեցածը:

## ԺԷ.

### ՀԱՍԱՐԱԿԱՅ ԴԱՏԱՍՏԱՆ

— Բալասան աղէ՛ն:

— Օ՛հ, չը պրծանք այդ զղուելի մարդից, խոժոռ դէմք առած՝ բացականչութիւն արաւ զաւառապետը՝ Ս. զիւղի ընտրութեան օրից մի քանի օր անց, երբ որ թուրք եասավուլը ներս մտաւ նորա առանձնասենեակը և յայտնեց Սեւնիկովի դալուստը:

— Ասա՛ ներողութիւն էր խնդրում, հարկաւոր գործեր է ստացել, ուրիշ ժամանակ շնորհ բերէք:

Եասավուլը քայլերն ուղղեց դէպի դուռ:

— Ի՞նչ եմ գժուել, էլ կը պրծնե՞մ, օրն էգուց իւր քսութիւնը գործ կը դնի, ա՛յ անիծած դաժան հողի. սպասի՛ր, հրամայեց զաւառապետն այս կարճ մտածողութիւններից յետ եասավուլին, ասա՛ խնդրում էր:

Վերջին խօսքի հետ ինքը վեր կացաւ և յառաջեց դէպի դուռը:

— Օ... օ... օ... Վլադիմիր Նետտորի՛չ, мое почтение! շատ ուրախ եմ, զուարթ դէմքով ձեռքը ձգեց նաչալնիկը տուն մտնող թանկագին հիւրին, այդ ո՞ր քամին պտբտեց ձեզ դէպի մեր աշխարհքը, հրամայեցէ՛ք:

— Спасибо! և Բալասան աղէն երեք անգամ պինդ սեղմեց զաւառապետի ձեռքը:

— Չարժէ՛:

— Ինձ համար շա՛տ և շա՛տ արժէ, Գրիգոր Պետրովի՛չ, դուք ամեն ժամանակ իմ խնդիրներս կատարել էք, իսկ այս վերջին անգամն Ս. զիւղումն ինձ մեծ բարեկամութիւն ցոյց տուիք:

— Դէ՛ ի՛նչ անենք, Վլադիմիր Նետտորի՛չ, օրէնքից թէև մի փոքր շեղուեցինք, բայց պատուական բարեկամի համար մի շնչին ծառայութիւն անելը մեր պարտքն էր:

— Ի՞նչ էլ յարմար տեղ էիք ընտրել և ժամանակ, մի ժամէն ճա-

նապարհ, թուրքերի մէջ, երեկոցեան զէմ, հա՛, հա՛, հա՛, ЛОВКО, БРАТЬ, ЛОВКО, ИБЧЕГО СКАЗАТЬ, ДА! ո՞րքան խելօքութիւն, ի՞նչ հեռատեսութիւն, ո՞վ ընտրուեց, ո՞վ հաստատուեց, Դձ! մեր նահանգումը ձեզ նման գործ հասկացող ոչ եղել է և ոչ կը լինի, այդ ես միշտ տեղումն ասել և գրել եմ և այժմ նոյնպէս կը գրեմ:

—Մի՛ նեղանաք, խնդրեմ, Վլադիմիր Նեստորի՛չ:

—Ի՞նչպէս, արժանաւոր մարդի համար, այդ խորին պարտականութիւն է իմ կողմից. մենք գործի մարդիկ ենք, գործը պահանջում է լաւ ու վատ ամեն բան տեղ հասցնել, թո՛ղ որոշուին, թո՛ղ ճանաչուին հաւատարիմն ու ապերախտը, բարեմիտն ու վատակարը, թո՛ղ անպիտաններն արժանի սրտիժը, իսկ արժանաւորները վարձատրութիւնն ստանան: Այդպէս է, թէ ոչ, Գրիգոր Պետրովի՛չ:

—Անկարծի՛ք, Վլադիմիր Նեստորի՛չ, մենք ումնից հաց ենք ուտում, պէտք է նորա շահերն աչքի առաջ ունենանք, բայց ամեն ժամանակ՝ տեղի, անտեղի, աննշան և չնչին ղէպքերի համար ձանձութիւն տալը սորան կամ նորան՝ աւելորդ է:

—Սխա՛լ էք, Գրիգոր Պետրովի՛չ, ես այդպէս չեմ հասկանում, հաւատարիմ ծառան հաւատարիմ շան նման է, նա պէտք է դունչը կոխի ամեն քունջ ու պուճախ (անիխ), իւր սուր հոտոտելիքը լարի, պրտտի, քրքրի և ամեն դտածն իւր տիրոջը ներկայացնի. ես միշտ այդպէս եմ անում, խտրութիւն չեմ դնում միջոցների մէջ, մեծի ու պտակի, հասկացողի ու ռամկի մէջ, ինչ տեղից՝ ինչ կասկածաւոր հոտ առնում եմ՝ ձեռաց հասցնում եմ և դուք տեսնո՞ւմ էք, որ ես սխալուած չեմ. ամենքի մօտ պատիւ ունիմ, ամենքն ինձանից քաշուում են, կամքս կատարում են, ինչպէս դուք արիք: Իրա՛ւ է, արածդ մի մեծ բան չէ, ձեզ համար միւսնոյն էր՝ Մարկոսը լի նէր տանուտէր, թէ Կիրակոսը, բայց դուք չը զիտէք, թէ Խուզոն ո՞րքան է ինձ պէտք. ձեզ շատ քաջ յայտնի է, որ զիւղական հասարակութիւնն այնքան մեր չինովնիկիցն ահ չունի, ինչքան իւր տանուտէրից, և բնական է. նորան է միշտ տեսնում, նորանից անմիջական կախումն ունի, նորա աչքին է շարունակ նայում, բոլոր իւր գործը նորա ձեռքովն է կատարելու, և ի հարկէ, նորա ազդեցութիւնն աւելի կը լինի: Դուք չը զիտէք, թէ զիւղերի մէջ ես

ո՞րքան անձնական հաշիւներ ունիմ. մի տեղ փող ես տուել՝ դժուար է ստացուում, միւս տեղ լաւ կալուածք կայ ձեռք ձգելու, երրորդ տեղում մէկը ճանապարհիդ քար է գլորում, մի ուրիշի ուելը չի, ուղղակի, քեզ դիւր գալիս, դրանց բոլորի յառաջն առնելու է նոյն տանուտէրի ձեռքով: Ես այսօր մեր գաւառի տանուտէրներին շատերին իմ ձեռքին տալին ունիմ առած, ամէն տեղ իմ ցանկացածներն են ընտրուում:

— Բայց շատ էլ ժողովրդին ճնշել հարկաւոր չէ, Ալազիմի՛ր Նեստորիչ, ես վախում եմ հասարակաց կարծիքից. հզուց եթէ օրէնքը դատախազ չը լինի, աշխարհքը կը դղրդայ, թէ՛ բարեկամի համար ժողովրդի շահերը ունատակ է տրուել, ժողովրդի ցանկացածը մի տեսակ գլորուելէ՝ կանդիդատին ընտրել տալու համար, բաց քուէարկութիւն է եղել...

— Հա՛, հա՛, հա՛, քրքչաց Սենիկովը:

Ղեռ ծիծաղի վերջաւորութեան ծայրը ծորում էր, որ դուռը բացուեց և կիսաբաց արանքիցն երևեցաւ գաւառապետի կրտսեր օգնականի գլուխը:

Այս մարդը մի հին ծառայող էր, յիսուն տարին լրացրած մէկն էր երևում. նա իւր կեանքի մեծ մասն անց էր կացրել գաւառներին դիւաններում. չը դիտեմ՝ ո՞րտեղ, մի երկու տարի կարողացել է զրաճանաչ լինել և մտել է հին գաւառական դիւանատները, որպէս ստորին գրադիր, բաւական տարիներ զրադրի ուճկով կատարել է իւր մեծաւորների տան սպասաւորի և ծախսարարի պաշտօնը, վերջին արտօնութիւնն առաւելապէս վայելել է ամուսնացած մարդկաների մօտ, իւր շողոքորթ ազուէսական ծամածուծութիւններով, սորաքարչ շարժումներով, կանացի մանր պահանջները ճշգրութեամբ հասկանալու համար՝ նա միշտ տիկնոջ ներքին յանձնարարութեանց պաշտօնեան է եղել: Նատ գաւառներում է նա պաշտօններ վարել և միշտ երկրորդական դերի մէջ. շատ զրազիրներ եկել, իրանից յառաջ են անցել, բարձրացել են, ասենադպիր, օգնական են դարձել, իւր վերայ իշխանաւոր են կարգուել և ինքը միշտ քթի տակին ծիծաղելով՝ յայտնել է իւր ուրախութիւնը՝ նրանց բարձրանալու մասին:

Քանի քանի անգամ նրան ծառայութիւնից արձակելու խնդիր է ծագել և միշտ նա հնարքը գտել է տեղումը մնալու և շատ էլ

ուրախ է, որ իւր երեսնամեայ պաշտօնավարութեան մէջ կրտսեր օգնականից չի բարձրացել:

Ահա՛ հէնց այս մարդն էր, որի գլուխն երևեցաւ և կրկին յետ քաշուեցաւ. խոհեմութիւնը թոյլ չէր տալիս նրան առանց իւր մեծի հրամանին ներս դալու:

— Ну, вотъ, вотъ! թո՛ղ Վասիլ Վասիլիչը վճռի, ուղի՞ղ եմ ասում, թէ սուտ, էլի շարունակեց իւր ծիծաղը Մելնիկովը՝ հետն էլ չը սպասելով տանտիրոջ կոչմանը, ինքը ձայն տուեց. МИЛОСТИ ПРОСИМЪ.

Վասիլ Վասիլիչը զգոյշ մկան նման, ստորադրելոց բնատրոշ յատկութեամբ և ժպիտով դեռ մի աչքով իւր մեծաւորին էր նայում:

— Մտէ՛ք, կիսաիշխանական եղանակով հրամայեց դաւառապետը, և օգնականը ներս եկաւ, անվտաճութեամբ ձեռք տուեց Մելնիկովին ու նստեց դրան մօտ հեռուումը դրուած աթոռի եզրին. նա նման էր փշի վերայ նստողի:

Սկզբումը Վլադիմիր Նեստորիչին հեշտ չեղաւ կարծիք դուրս կորդել Վասիլ Վասիլիչի լեզուից, ամեն մի խօսքի հետ դեռ նախ գլուխը դարձնում էր նա դէպի իւր մեծաւորը, և երբ բոլորովին ասպահովեցաւ, որ իւր խօսքերը չը պիտի զրգռեն իւր իշխանաւորի զայրոյթը, սիրտ առաւ, աթոռն յառաջ քաշեց և սկսեց Մելնիկովին արդարացնել:

Նա միանգամայն համաձայն էր Բալասան պղպշի հետ, թէ պաշտօնեան մի մեքենայ է, իւր սեպհական կամքը չը պէտք է ունենայ, պէտք է աշխատի իւրաքանչիւր ազդեցիկ մարդի կամքովն ընթանալ և այլն և այլն:

— Բայց ի՞նչ կասէ հասարակաց կարծիքը, Վլադիմիր Նեստորիչ, ասաց դաւառապետը:

— Քանի՞ կուպէկի կառնեմ հասարակաց դատաստանը, իմ բանն աջ է, թո՛ղ ով կ'ուզէ՝ հաչէ, այնպէս չէ՞, Վասիլ՛ Վասիլիչ:

Օգնականը կմկմաց. նա հասկացաւ իւր սխալը, իւր մեծաւորը համաձայն չէր Մելնիկովի հետ, այժմ ի՞նչ պատասխան տայ, որ երկու սրի արանքից դուրս պրծնի:

— Да, не боёв братъ! (եղբայր, Ֆե՛ վախե՛ր) ասա՛ կարծիքդ, ես նեղացողը չեմ, ես զիտեմ, որ դու վազուց այդ տէօրիային ես հետևում, հրամայեց դաւառապետը:

—Իմ կարծեօք՝ Վլադիմիր Նեստորիչի դատողութիւնը ճշմարիտ է, կիսալստահ վիզը ծռած արտասանեց Վասիլ Վասիլիչը. հիմի չը կայ հասարակաց կարծիք, ամեն գլխից մի միտք է դուրս գալիս, մարդ ո՞ր մէկին լաի. նա որ ետեւիցդ քեզ դատապարտում է, երեսիդ շողքորթում է և քո ինկարկուն է դառնում. խելօքութիւնը Վլադիմիր Նեստորիչի ասածին համաձայն վարուելն է:

—Այո՛, ա՛ռ, կե՛ր, քանդի՛ր, օդուտդ ճանաչի՛ր, մեծիդ կամքը լաւ հասկացի՛ր, թո՛ղ՝ ով ինչ կամենում է՝ խօսի՛ միայն քո գրպանդ լիքը լինի, քո իշխանութիւնից պատիւներ ստանաս, հաստատում էր Մեչնիկովը:

—Մեզանից ամեն մէկը, կրկնեց Վասիլիչը, մի մի հասարակ զիւղացու որդի է, ի հարկէ բացի ձեզանից, Գրիգոր Պետրովի՛չ, սխալն ուղղեց նա. իմ հայրս կապոցն ուսին գիւղերումը թափառում էր, Վլադիմիր Նեստորիչը մի զիւղացու որդի է. ամեն մէկս մի հնարքով դուրս ենք եկել մեր նախկին զրութիւնից, բայց ի՞նչ կը դառնայինք, եթէ մեր քսակը մոռանայինք և մեր իշխանութեանը հակառակ գնայինք:

—Զուր ես կեղծաւորում ինձ, Վասի՛լ Վասիլիչ, ասաց նաչալնիկը, ես ինքս էլ մի իշխանական ցեղից չեմ, բայց ի հարկէ երկուսիցդ էլ առաւել պատուելի տանից եմ և. համալսարանական կըրթութեամբ: Խոստովանում եմ՝ համալսարանի գաղափարները հետզհետէ օղը ցնդեցին, շրջանն իւր ուժեղ թաթն իմ վերայ էլ դրեց, ականջներս խլացրել եմ բարձր ձգտումների և ներքին ձայնի զէմ, ինքս էլ հաւասարապէս դատապարտելի եմ, բայց չեմ կարող ուրանալ հասարակաց դատաստանի ահաւորութիւնը:

—Վարելի՞ է, դուռն երեք անգամ բաղխելով՝ դրսեւից գոչեց մի ձայն:

—Դէ հիմա խօսի՛ր, Վլադիմիր Նեստորի՛չ, գլխով դուռը ցոյց տուեց գաւառապետը և յառաջ գնաց ու դուռն իւր ձեռքով բաց արաւ:

Ներս եկաւ մի մաքուր հազնուած երիտասարդ, քաղաքավարութեամբ ողջունեց ամենքին և ասաց.

—Զը խանդարեցի՞:

—Ընդ հակառակն, շա՛տ ուրախ եմ, հրամայեցէ՛ք նստել, աթոռ ցոյց տուեց գաւառապետը:

Օգնականն օգուտ քաղելով յարմար դէպքից՝ զլխարկն առաւ և շտապ զլուխ տալով՝ առանց նկատուելու՝ դուրս ծլլուեց:

— Ի՞նչպէս էք, պարո՛ն Սմբատ, քաղաքավարի հարցրեց Բալասան աղան:

— Շնորհակա՛լ եմ, պարոն Մելնիկեա՛նց:

— Ի՞նչ էք անում, ընչո՞վ էք պարապած:

— Այժմ ես, պարոն Մելնիկեա՛նց, մեր ժողովրդի ներքին կեանքին եմ ուսումնասիրում. անմխիթա՛ր է, վերին աստիճանի տգիտութի՛ւն, աղքատութի՛ւն...

— Այո՛, պարոն Սմբատ, այո՛, ի՞նչ պէտք է լինի մեր ստորին դասակարգի վիճակը, ամեն կողմից ճնշումն, հարստահարութիւն, վաշխառուների ձիրանների մէջ սեղմուած, անտեսական դրութիւնն անսպահով, ներքին և արտաքին յեցերից կերուած, կեղեքուած, տգիտութեան մէջ թաղուած, նայողի աչքիցն արիւն է կաթում: Հինգ րոպէ յառաջ պարոն զաւառապետի հետ այլ ցաւերի մասին էինք խորհրդակցում, մոլորուել մնացել ենք. այնպէս չէ՞, պարոն Գրիգոր՛:

— Բ՛մ... ը՛մ... ը՛մ... արաւ նաչալնիկն և ուսերը անխօս վեր քաշեց: Այդ նշանակում էր՝ չը զիտեմ ի՞նչ ասեմ աներես ստախօսութեանդ համար:

— Հա՛, շա՛տ ցաւալի է, շա՛տ, պարոն Սմբատ, մի քանի օր առաջ մեր զիւղն էի գնացել, շարունակեց Մելնիկովը, տարին մի երկու անգամ սովորութիւն ունիմ գնալու. գնում եմ, ժողովում եմ հասարակութիւնը, իւրեանց պակասութիւնները հասկացնում, միջոցներ եմ առաջարկում նոցա վիճակի բարելաւութեան համար, իմ կողմից յանձն եմ առնում ըստ կարեացս նիւթապէս օգնելու, ազգասէր և հասկացող մարդկանցից օգնութիւն խնդրելու և այլն և այլն: Դէ՛, հարկաւոր է, զիտեցողը չը զիտեցողին պարտական է, հայրենասիրութիւնը մարդուս առաջին պարտականութիւնն է, ազգասէր մարդն ազգի շահերի համար իւր կեանքը պէտք է զոհի, տգէտ, ընկած եղբօր համար իւր կարողութիւնը չը պիտի խնայի: Այս անգամ էլ գնացել էի հողալու, որ մի տարրական դպրոց բանանք մեր զիւղումը, իմ կողմից որքան ձեռքիցս կը զար՝ յանձն առայ նպատտել, շնորհակալ եմ պարոն զաւառապետից, սա ևս իւր

աջակցութիւնը չը խնայեց. այն օրը տանուտէրի ընտրութիւն ունէր, ինքն իւր գործը թողած՝ ինձ հետ միասին խրախուսում և յորդորում էր, գործի չաջողութեան համար էլ մի արժանաւոր մարդի տանուտէր ընտրեց, որը բաւական հասկացող և ուսման նշանակութիւնը ճանաչող անձն է: Ես այսօր եկել եմ իմ շնորհակալութիւնս մատուցանել պարոն գաւառապետին. ըստ որում երէկ նոր տանուտէրն ինձ մօտ էր, աւետեց, որ ինքը ժողովրդի մեծամասնութեան համաձայնութիւնն արդէն ստացել է: Ես էլ ձեռքը սեղմեցի, մօտս ճաշի պահեցի և խոստացայ իւր արածները լրագրում հրատարակել տալ. շատ ուրախացաւ խեղճը, պատուական տղայ է:

— Լսել եմ ձեր այդ հասկացող զիւղացու մասին, Գոմշակերեանց ծաղրալի ազդանուն ունի, ասում են՝ բաւականին զարգացած մարդ է, ցանկանում էի հետը տեսնուել:

— Ա՛յ, ձեր ասածը չը կամեցաւ տանուտէր լինիլ, նա օտարութեան մէջ է. այս նոր տանուտէրը նորա կանգիպատն էր, փոքրի շատէ կարգալ գրել էլ զիտէ, շարունակ կարգում է իմ ուղարկած լրագիրները, ուրիշներին էլ տալիս է կարգալու. ես այժմ իմ չնչին ծառայութեամբս կարող եմ պարծենալ, որ մեր Ս. զիւղը գաւառի բոլոր զիւղերից յառաջադէմ է. ձեզ էլ կը խնդրէի՝ մի անգամ իմ այնտեղ եղած ժամանակը շնորհ բերել, շատ կը հաւանէիք և կ'ուրախանայիք. այնպէս չէ՞, պարոն գաւառապետ:

— Ը՛մ... ը՛մ... ը՛մ... այսի՛նքն... ը՛մ... ը՛մ... ը՛մ... ԽՅ, Աձ!

— Վարժեմ, պարոն Սմբատ, դուք ևս իմ և պարոն գաւառապետի հետ համաձայն էք, որ հարկաւոր է շարունակ մտրակել ազգի ցեցերին, աստիճանամոլ և հացկատակ պաշտօնեաներին, ժողովրդի արիւնարբու վաշխառուներին, դաւաճաններին, մասնիչներին և այն բոլորին, որոնք անձնական շահի համար խեղղում են ժողովրդի մէջ ամենատեսակ բարի ձգտում:

— Ի՛նչ կարծիք:

— Միւնտոյն մաքրենք ես և մեր Գրիգորը՝ պարոն գաւառապետը— խօսակցութիւնը հասարակաց դատաստանի մասին էր. մենք երկուքս նշանակութիւն էինք տալիս հասարակաց դատաստանին, բայց պարոն օգնականը... (վերջին խօսքի հետ Բալասան աղէն զարձաւ դէպի Վասիլ Վասիլի: ի նստած աթոռը և զարմացական զէմք

ցոյց տալով՝ հարցրեց գաւառապետին) այս ե՞րբ զնաց, որ մենք չը տեսանք:

—Նա զնաց, շտապում էր, գլուխը շարժեց գաւառապետը:

—Ինչ և իցէ, շարունակեց Սելնիկովը, պարոն օգնականը մեր հակառակն էր պնդում, նա ասում էր, որ ծառայողը մեքենայ է իւր իշխանաւորի նպատակներին, ասում էր, որ իւր օգտի համար մեղք չէ՛ մարդուս յափշտակել, գողանալ, մատնութիւններ անել, ժողովրդի արիւնը ծծել, ասում էր, որ հասարակաց դատաստանը չիմար բան է, չիմարների և իմաստակաների ստեղծածն է և թէ՛ ողորմելի ու ծիծաղելի են այն մարդիկը, որ ազնուութիւն, սրբութիւն, պատիւ բանի տեղ կը զնեն և իւրեանց քսակին կը վնասեն, պնդում էր, որ բարձրանալու համար ոտնատակ տալու է ամենայն նուիրականութիւն, թէ հազարաւոր մարդիկ սպանել և վրայովն անց կենալ խղճի ընդդէմ չէ և կարեւոր է՝ եթէ միւս կողմում քո նպատակիդ իրագործումն է:

—Հրէշի՛ խօսքեր, բացականչեց Սմբատը:

—Մեղադրելի չէ, խեղճը տղէտ, փթած, դիւանատների ստորին խաւերի պողոզ է, ստորաքարշութիւնից աւելի ի՞նչ էք պահանջում: Այգալիսիների կարծիքն ինձ համար հաւասար է զրօյի ուրիշ բան էր, եթէ պարոն գաւառապետի նման զարգացած մարդիկն ասէին, թքանք էր, եթէ իմ բերանից դուրս դար, ձեր մասին՝ բերանս էլ չի զօրիլ խօսելու, դուք միանգամայն թարմ ոյժ էք, զնացել էք, մտաւոր զարգացումն ստացել և եկել, պաշտօն, կոչումն, հաց, ամենայն ինչ մոռացել էք և հոգւով, մտքով ու մարմնով նուիրուել ազգային վերաշինութեան սուրբ գաղափարին. զլսով մատաղ կը լինի՛մ ձեզպէսներին:

—Ամենքիս պարտքն է:

—Ձե՞ք հաւատում, հոգիս փառաւորում է, երբ մեր նոր երիտասարդութեան ձգտումները դիտում եմ, ձեզ քաջ յայտնի է իմ պաշտօնս, որ պահանջում է ճշգրիտարութիւն. բայց անիծուի՛մ ես իմ ազգովս, Ասասի կոչուի՛մ, եթէ ես իմ ազգի գաւառիներին խէթ նայիմ, կարծիքներս լինում են միշտ նպատաւոր:

—Աննպատ ոչինչ էլ չը կայ. այսօր ամեն մի բանապէտ մարդու պարտքն է իւր գիտեցածը տղէտ եղբօրը հաղորդել. նոյն ուղղու-

թեամբ կրթում է ամեն մի լուսաւոր վարչութիւն իւր նոր սերընդին, ի՛նչ կարծիք, ուրեմն, որ նա ուրախ կը լինի, երբ իւր սուած դաստիարակութիւնն արդիւնաբեր է լինում:

— Իրա՛ւ էք ասում, սիրելի պարոն Սմբա՛տ, բայց իմ փոխարէն ուրիշը կարող էր զանազան հայեացակէտերից նայել ամենքի բռնած գործին և ըստ այնմ իւր անելիքը կարգադրել. այսօր, դիցուք, պարզ ուսումնասիրական նպատակաւ դուք ժողովրդի կեանքն էք հետախուզում, մի՞թէ դժուար էր ինձ ծուռը մեկնութիւններ տալ այդ ամենին:

— Հրէշների մեծն այդպիսի անպիտանները կը լինին:

— Մի՛ դարմանաք, կը լինին և կան, բայց ես նրանցից չեմ, ինձ համար հասարակաց դատաստանը սուրբ է, պարոն զաւառապետը կարող է վկայել: Սակայն այդ թողնենք, պարոն Սմբա՛տ, ամեն մարդի գործ իւր համար կը վկայի, չը կայ ծածուկ, որ չը յայտնուի. դուք այս ասացէ՛ք, չէ՞ր կարելի ձեր կողմից մի բանով մասնակցէիք մեր ձեռնարկութեանը. վատ չէր լինիլ, եթէ լրագրութեան մէջ մի քանի տող գրուէր, ժողովուրդը կը քաջալերուէր և իմ շնչին ծառայութիւններս կարող էին ուրիշների բարի նախանձը շարժել:

— Ամենայն ուրախութեամբ, պարոն Մենիկեա՛նց, ես շարունակ գրում եմ պարբերական թերթերում, այդ ևս անպատճառ կը հաղորդեմ. սակայն ներեցէ՛ք, ես ուշանում եմ, մէկին ժամադիր եմ, ես եկել էի պարոն զաւառապետից մեր զաւառի հայ ժողովրդի վիճակագրական տեղեկութիւնը խնդրելու, բայց միւս անգամ կը գամ, այժմ ցտեսութիւն:

Այս խօսքերով երիտասարդ Սմբատը հրաժարական տուեց իւր խօսակիցներին:

— Ամմ...մա՛ լեզու, Վլադիմիր Նեստորի՛չ, բացականչեց զաւառապետը:

— Այդպէս տխմարներին ուրիշ տեսակ չի կարելի, Գրիգոր Պետրովի՛չ, հասարակաց դատաստանը գորա նման չխմարների տեղծածըն է, դրանց զէնքն է, պետք է դրանց փշրել իւրեանց զէնքով:

— Սխալուում ես, սիրելի՛ս, ճշմարտութիւնը չի մեռնիլ, դուք ասացիք, որ ամեն գաղտնիք յայտնի կը լինի:

— Ի հարկէ՛ եթէ յիմարի պէս կը քնենք ու այդպէսներին լայն ասպարէզ կը տանք: Մի հարցնող լինի՛ թէ ո՞վ ես. ինքն երէկուան մածնի աման լսատողն է, հայրը ղիւանատանը զրազրութիւն անելով՝ մի քանի կոպէկ հաւաքեց. աշխարհքի կոյր ժամանակն էր, լաւ լաւ կալուածքներ յետ ձգեց, որ այս տգէտն անխնայ փչացնի. բարեգործութիւններ է անում, ընկերներին է ուղարկում, զիւղերումն է վատնում, հէնց կարծում է, թէ շարունակ անսպառ աղբրի նման կը բղխի. արդէն շատ չի քաշիլ, մէկ այգին իմ ճանկը կ'ընկնի, իւր խնամատարի հետ ծրագիրը կազմել ենք, վաղը միւս օրը փողի կարիք պէտք է ունենայ և ինձ զիմի: Խելքից պակաս, զեւ մեծ մեծ է փրթփրթում, ղեռ նոր է եկել, թող լիառատ ցրուի. յետոյ ուշքի կը դաչ, այդպէս մնալ չի. շատերին ենք տեսել՝ բարձր իղէա՛, վսեմ գաղափա՛ր, աղղային զգացմունք, ազնուութիւն, ճշմարտութիւն և այդպիսի անհամար բաւեր թութակի պէս կըրկնելուս, անգիր արած վշելուս. բայց ո՛ր են. եկել են, խառնուել մեր մէջ, կեանքի հոսանքին ենթարկուել և մեզանից աւելի նիւթապաշտ ու շնական դարձել: Այդպէսներց մէկն էր և իմ խելօք փոքր եղբայրս՝ Արտեմը. չը գիտեմ՝ լսե՞լ էք, որ նա սկզբումը Պետրոս էր, իւր ծննդականումն էլ զրուած էր՝ Պետրոս Մեսրոպով. այդ անունովն էլ զիմնաղիւումն էր շարունակում: Գնում է այնտեղ, ի՞նչպէս է լինում, ո՞վ է խելքին փշում, աշխատում է անունը փոխել՝ Արշաւիր Մեսրոպեանց: Ես, ի հարկէ, նեղացայ, երբ ստացայ իւր նամակը, բայց յիմար էի, որ խօսեմ, կամ գէմք ցոյց տամ. ղեռ հաւանութիւն տուի և խրախուսեցիս Վերջը՝ երբ եկաւ այստեղ, ծառայութիւն մտցրինք, մի տարուց՝ տեսեմ, տրտնջում է իւր արած յիմարութեան վերայ, թէ շատ անհաճոյ և զժուարալուր է ականջի համար՝ Արշաւիր Մեսրոպովիչ Մեսրոպեանց կոչումը և կամենում է կրկին փոխել: Նստել ենք, մի քանի օր մտածել և հազիւ կարողացել ենք Արշաւիրը փոխել Արտեմ Նեստորիչ Մելնիկովի:

— Հապա էլ ընչի՞ էր սկզբումը յիմարանում, որ վերջն այդպէս պէտք է անէր, հարցրեց զաւառապետը:

— Պեռ. այդ ոչինչ, ծիծաղելին սպակուելուց յետոյ մարդ ու կնոջ գործերն էին. նշանուելու օրից մտել էր հարսնացուի տամարը, որ Իսկուհի անունը փոխել տայ Վասիլիսա և նորա հօր՝ Արշալի ա-

նունն էլ շինել տայ Ալէքսէյ: Քանի նշանած էին, աղաչանքներով էր ուզում համոզել, բայց պատկուելուց յետոյ բանը մեծացաւ, փոքր մնաց՝ ահագին անբաւականութիւն էր դուրս գալիս: Ոչինչ բանով հարսս թոյլ չը տուեց իւր անուան փոփոխութիւնը. Եսկուհի մը կըրտուել եմ, ասում էր, Եսկուհի էլ գերեզման եմ մտնելու: Վերջը մի տեսակ ընտանեկան խորհրդով այդ կրակը հանգստացրել ենք. վճռել ենք, որ ամենքին էլ վարժեցնենք հարսիս տիկին կոչել. և ինչպէս տեսնում ես՝ հարսս իւր կարգի կանանց մէջ միակ բացառութիւնն է, որ տիկին բառով է վերակոչուում:

— Ես այդ չը գիտէի, ինչպէս երևում է՝ եղբայրդ սկզբումը շատ եռանդոտ է եղել:

— Ի՞նչ եռանդ, Գրիգոր Պետրովի՛չ, ինչպէս ասում են, գլուխը հոպոպներով լիքն էր ո՛հ, Боже мой (Աստուած է՛մ), ի՞նչ նամակներ էր գրում, ի՞նչ փոթորիկներ էր բարձրացնում, ի՞նչ ցնորամիտ առաջարկութիւններ էր անում ինձ այնտեղից, смѣшно! (Ժիժուղէ՛ն է) ասում եմ настоящимъ фанфоронѣ. (Հասարէտը Լէ՛լէ-ուշի՛ն) то есть (այսինքն) օրական հինգ նամակ էր գրում:

— Թէ ի՞նչ, որպէս թէ...

— Բլխիս զայլի աւետարաններ էր կարդում, շարունակեց Մելնիկովը, թէ լսում եմ, որ ինձ համար ուղարկած 150 մանէթը դու ժողովել ես մի չքաւոր ուսանողի անունով մի հայաբնակ քաղաքում, այն էլ կրկնապատիկն է եղել, կէսը քեզ համար ես վերցրել, միւս կէսն ինձ ես ուղարկել և գրել ես, թէ մի մասը քո արդար վաստակից և միւս մասը մեր հայրենական կալուածքի եկամտից ես ստացել, թէ ինձ տեղեկութիւններ են հասնում, որ դու վատ ճանապարհի վերայ ես կանգնած, կաշառակեր ես, ճնշող, հարստահարող ես, մատնիչ ես, անարժաններից կաշառք առնելով ժողովրդի վերայ մոլորեցուցիչներ ես կարդում՝ արժանաւոր ղեկավարների փոխարէն, թէ վատ և անբարեբարոյ անձանց շրջանումն ես, ուղղութի՛ր, ասում է՝ մեր տան անուանը թքանք մի՛ լինիր և հազար ու մի սրանց նման կոյր պառաւի քարոզներ:

Ես, ի հարկէ, քթիս տակին ժպտում էի միայն:

Մէկ էլ դա ինձանից փող է խնդրում և ճանապարհ ընկնում, գալիս է. և ի՞նչ, լսում եմ, որ ամեն տեղ, ծանօթի և օտարի մօտ իմ ստուերի դէմ է կռուում, հայհոյում:

—Ինտինը մտնի՛ Բալասանը, փշուր՛ Բալասանը, ես կը գնամ՝ եթէ իմ խորհուրդս չը լսի և իւր չարութիւններինց յետ չը կենաց, ազնիւ մարդ չը դառնաց, ես նրան բարև չեմ տալ: Ո՛ր քաղաքը մտել է՝ զուռնաց փշելով՝ իմ օձիքիցն է ձաւար ժողովիլ (Քամբասուէ):

—Հա՞, այդ ես չեմ լսել, Ալադիմիր Նեստորի՛չ, զարմացական նշաններ արաւ գաւառապետը:

—Ականջ դի՛ր, Պետրովի՛չ, դա այդ քամիներովն է գալիս, ես այստեղ դորա համար իւր ասած անբարեբարոնների շրջանում իւր նախկին պաշտօնն եմ ստեղծում. քեզ քաջ յայտնի է, որ նորա պաշտօնը առաջին անգամը մեր պարոնի մտնելով բացուեցաւ այն դիւանատանը. ճիշդ է, ծրագիրը կար, բայց բացուելն ես փութացնել տուի՛ բարեկամների եռանդալից աշխատութեամբ:

Սկաւ, իջաւ, առաջին եղբայրական համբուրի հետ առաջին խօսքն եղաւ ինձ կշտամբելը.—ես քեզանից վշտացած եմ, մեր ազգի անունը խայտառակել ես:

—Քչնամու խօսքեր են, ասում եմ, ահա եկել ես, բարի աչքովդ տե՛ս, և ստուգի՛ր, յետոյ պատրաստ եմ խօսքդ լսելու:

—Հետաքրքիր է, Ալադիմիր Նեստորի՛չ, խնդրեմ պատմէ՛ք:

—Այո՛, դեռ հագուստը չը փոխած՝ ես սկսեցի հիմնկուայ յիմարին ծախած խօսքերս նորան էլ շուայլել.—բարձր ձգտումներ ազնուութի՛ւն, ժողովո՛ւրդ, ուսո՛ւմ, ստորին խաւե՛ր՝ սովորական ոճեր ու նախագասութիւններով դորա քաղցած ուղեղը լցրի:

Այդ յիմարը ձեռաց խօսքերս հալած իւզի տեղ ընդունեց, վեր թռաւ, նորից գրկեց ինձ ու սկսեց դատապարտել իմ մասին սուտ սուտ լուրեր տարածողներին, իրեն վրդովողներին: Միւս օրն առանց երկար մտածելու՝ գրեց այնտեղ իւր ընկերներին, որ իբր թէ, ինձ վերայ ասուածները բոլորը չարալեզուների մտացածին զրպարտանքներ են:

—Попался несчастный! (Նախորդն է ընկել Նշուսուը):

—Попался և այն ի՞նչպէս: Դա, ի հարկէ, փող չունէր. սկզբներումը թող ևս չէի տալիս խնդրելու: Ամեն առաւօտ քնած ժամանակը մտնում էի սենեակն և իմ ձեռքով կարմիր տասանոց թղթադրամը քսակը դնում: Առաջին անգամը միայն զարմացաւ, թէ հրաշքով իւր քսակումը փող է երևեցել: Միամտացրի, որ ես եմ

դրել՝ ձեռքին մխելու և ծխախոտի համար:—Ս'հ, ասաց. մարդկային հրեշաւոր տգիտութեան մեծն այդ անախտան բոյսը դործածելն է, ես ոչ ծխում եմ և ոչ ծխողներին սիրում:

—Հիմա բերանիցը չի ձգում այդ ցանցաւը՞:

—Համբերի՛ր: Մի օր՝ առամն ցաւում է, ասաց. ծխախոտը ձեռքովս վառեցի և առաջարկեցի ծխել, ծուխն առամի տակին պահել: Թէև մեծ դժուարութեամբ՝ բայց համաձայնեց: Իմ բարդից՝ ծուխը զօրաւոր ազդեցութիւն գործեց: Այդ իմ պարզամիտս սկաւովսանաներ կարդալ հրաշագործ ծխախոտի մասին: Ես, ի հարկէ, այդքանն էի ցանկանում. նոր վարժուող ձիւ մտրուկի նման սկսեցի փոքր աւ փոքր վարժեցնել. ձրի ծխախոտ՝ բարձր տեսակից՝ քսակումն անվաստակ փող՝ մէկի փոխարէն հինգն էր ծծում և փքուն փքուն բաւեր ցրիւ տալով՝ քամիներ անում:

Պէտք է տեսնէիք, Կրիզոր Պետրովի՛չ, ի՞նչ ուտոտախեններ էր անում, երբ պաշտօնի անուն էի տալիս.—Ի՞նչպէս. ինքը պէտք է մտնի նեխած մթնոլորտի մէջ, սեւահոգիների շրջա՞նը: Լսել չէր ուզում, ախանջները փակում էր, անկիւնից անկիւն էր փախչում, մանաւանդ կատաղում էր, երբ իւր ծառայակիցների անունն էր լսում:

—Անմե՛ղ երեխայ:

—Կա՛ց, ասում եմ մտքումս: Սկսում եմ դրա օրաթոշակը պակասեցնել, տասանոցի փոխարէն՝ հնգանոց, հետզհետէ երեքանոց, միանոց և մի օր էլ՝ բան չը կայ: Մոռացայ ասել, որ այդ ցանցաւն իւր հաշիւները չէր հասկանում, և ի՞նչ հարկ կար, քանի որ իւր ասածով և իմ հաստատածով՝ փողը ձեռքի ազտոտութիւն է, չարժէր ուշադարձութիւն անել. անմիտը տեսնում էր, որ տասանոցի մանրորդը քսակումը չէ և չէր էլ հետաքրքրում, թէ ո՞ւր է:

—Ի՞նչպէս թէ քսակումը չէ, հարցրեց զաւառապետը:

—Ո՞րտեղից կը լինէր, միշտ ես հանում էի. երեկոցեան անկողին մտնելու՝ քսակն անհող շարտում էր սեղանի վերայ, ես քնելուց յետոյ ներս էի գնում, դատարկում և մի կարմիր տասանոց փոխարէնը զետեղում, դուրս գալիս: Եղբա՛յր, այդ խելքի պտուկը ոչ մի օր չը հետաքրքրուեց, թէ իւր փողերն ո՞ւր են:

Մի օր էլ, ինչպէս ասացի, ո՛չ ծխախոտ կայ և ո՛չ փող: Չայն է տալիս ծառային և բարկանում.—Ինչո՞ւ այստեղ ծխախոտ չը կայ:

—Որովհետև մեծ աղայի մօտ փող չը կայ, որ դնենք, ասում է նախապատրաստուած ծառան և աւելացնում է. այսօր իմ ձեռք հարեանից մի մանէթ խնդրեց:

—Ի՞նչպէս, աչքերը չռելով՝ զարմացմամբ հարցնում է ծառային, դու ասում ես, որ եղբայրս փող չ'ունի՞:

—Ո՞րտեղից պէտք է ունենայ խեղճ մեծ աղան, խաղինայ (դրամ) հօ չէ՞ կորում, կրկնում է սատանայ ծառան. քանի դուք եկել էք, օր ըստ օրէ պարտքի տակ է ընկնում, սրա՛նից, նրա՛նից վերցնում, ձեզ էր տալիս և հիմա ամենքը մերժում են:

—Ուրեմն ես մեծ ծանրութիւն եմ եղել քեզ համար, ասում է ինձ այդ օրուան մեր սովորականից աղքատիկ ճաշի վերայ:

—Ընդ հակառակն, պատասխանում եմ, քո եկած օրից ուրախութեանս սահման չը կայ, թշնամեացս լեզուները պապանձուել են, ինքդ աջ ու ձախ հարց ու փորձ ես անում և ստուգում, որ հակառակորդների մեքենաներ էին իմ դէմ իւրեանց տարածած լուրերը:

—Այդ թո՛ղ, եղբա՛յր, վշտացած ընդհատում է ինձ, ես լսում եմ, որ դու պարտքեր ես անում իմ հաճոյքներիս համար:

—Չ'արժէ, ասում եմ, դորա վերայ խօսել: Թէպէտ քանի մի օր է անպիտանները զլանում են ինձ պարտք տալ և այն անկասկած շարակամներիս զրգմամբ, բայց ես առաջիկայ ծննդեան տօներին իմ պաշտօնատեղից հարիւր մանէթ պարզև պիտի ստանամ, ամենքին կը վճարեմ և քեզ համար էլ փոքր ինչ ծախսելու փող կը խնայեմ. դժուարն երկու շաբաթի չափ է: համբերի՛ր, մի տեսակ կառավարուի՛ր՝ յետոյ:

—Ասում ես՝ կառավարուի՛ր, ներս է գալիս պարոն եղբայրս միւս օրն ինձ մօտ, ի՛նչ անեմ, ծխախոտ չ'ունեմ, թերատ թափածներս երեկոյեան ժողովեցի կառավարուեցի, իսկ այսօր դժուածի պէս ծըխել եմ ցանկանում և չ'ունեմ:

—Համբերենք, ասում եմ, ես ևս չ'ունեմ, անպիտան վաճառողըն էլ մի քանի մանէթ պարտականութեանս պատճառաւ ապառիկ տալը մերժում է:

—Եւ մի՞թէ որ և իցէ գործ չեմ կարող ես կատարել, հարցնում է ինձ յուսահատութեան դաղաթնակէտումը, մի ծխախոտի զի՛ն ևս չեմ կարող վաստակել:

—Մի տե՛ղ միայն կայ պաշտօնի մտնելու, ասում եմ, բայց փրած մթնոլորտի մէջ չէի ցանկանալ քո մաքուր և լուսաւոր միտքը պղտորել:

Յետոյ առաջարկում եմ խելքի բուն սիրելոյս իւր համար նախապատրաստած տեղը, ուր եթէ խօսք կը տայ չը տողորուիլ շրջապատողների փշացած բնաւորութիւններով, ապա ինքը վաղուանից կարող է շարունակել:

—Նրեխա՞ց եմ, ի՛նչ է, վիրաւորուած պատասխանեց եղբայրս, փորձանաց բովի մէջ է զտուում ոսկին ուրիշ խառնուրդներից:—Եւ որ զլխաւորն է, շարունակում է նա, ես յոյս ունիմ անձնական ազնուութիւնով օրինակ հանդիսանալ այդ սեւամազ ճ և սեւահոգիներին՝ դառնալու դէպի իւրեանց կորցրած ճշմարտութեան ճանապարհը:

—Եւ որ զլխաւորն է, կրկնում եմ իւր խօսքերը, ես առաւելապէս ցանկանում եմ քո այնտեղ մտնելը, որպէսզի և այնտեղի մասին փարատես քո թիւր կարծիքներդ՝ ինչպէս արիւ իմ վերաբերութեամբ. իսկ մեր մեծը, ի պատիւ իմ, քո երեք ամասկանդ այս զլխից է խոստանում վճարել՝ իբրև նոր մարդի:

—Մտնե՛լ, անպատճա՛ռ մտնել, շեշտեց եղբայրս, ճի՛շդ է, ես աննպատ գաղափարներ եմ կազմել ձեր պաշտօնակիցների և մանաւանդ ձեր զլխաւորի դէմ, խոշոր խոշոր յանցանքներ եմ լսել, բայց աչօրուանից սխտւմ եմ համոզուել իմ ակամայ սխալանացս վերայ:

—Այո՛, այո՛, հաստատում եմ ես և միւս օրը ոտնամուտը շնորհաւորում 225 կլորիկ մանեթներով իբրև թէ մեր զանձապետից ստացած և ի հաշիւ իւր ստորագրած:

—Մնացեալն աւելորդ է, ընդհատեց Վլադիմիր Նեստորիչի երկար ու ձիգ պատմութիւնը գաւառապետը, այնուհետև ես քո եղբօրդ քեզանից լաւ եմ ուսումնասիրել, թէ նա ի՛նչ պտուղ է. այժմ նա անպիտանութիւնով քեզանից ամեն բանում երկու աստիճան յառաջ է գնացել, դու ողորմութիւն ես, վաղն Աստուած հեռու ասնի, քո թշնամին չ՛ընկնի նրա որոգայթների մէջ:

—Ճի՛շդ եղբօրս նման է այժմեան գնացող մեր ցանցառ Սմբատը. միամիտ ողորմելի՛, դեռ քառիք են զլխումը բզզում, վզզում, դեռ նոր է շնորհ բերել, դեռ հայրենական դառը վաստակը ջուրը գցելու օրերն են. թո՛ղ անի, թո՛ղ ժողովուրդ ուսումնասիրէ. դեռ սպասենք

մի քանի ժամանակ, եթէ դա էլ չը մնաւ փորձանաց բովի մէջ՝ իմ եղբորնման ոսկի դուրս գալու, այն ժամանակը մենք կը մտքերէնք մեր աշխարհքն այդպիսի ցաւերից. կամ այնպէս կ'անենք, որ ինքը կը խրանի, պոչը անկած՝ մին կը փախչի, կամ վաղի մեղաւորի նման, որ չէր կամենում դժոխք մտնել, զլսին վէր հատելով կը գլորենք անդունդ և կամ կը կակղի, կուտի, և, ինչպէս առածն ասում է, եկել է մեր մէջէն (անգոստ), կը սովորի մեր փէշէն (արհեստ):

— Ը՛հ, օ՛՛՛՛, փնչացրեց Սեղնիկովը, այդպէսների ռիսերիմն եմ, դրանք մեր անունը մեռցնողն են, դրանցից մէկն էլ մեր գիւղումը կայ, թող՝ ես դաւաճան անուն տանեմ, միայն թէ այդ երկաթի ձուաներ ածող նոր նոր հաւերի արմատը կարեմ:

— Ո՛ւմ մասին է խօսքդ, հարցրեց դաւառապետը, մի Գոմշակերեան ունէինք, զլուխը խաշեցիր:

— Նրանից աւելի փոանդաւոր Սիաակն է, Գրիգոր Պետրովի՛ն, եթէ չեմ մեռնիլ, նա էլ Արտօյի հացը կուտի:

Վլադիմիր Նեստորիչի շարունակութեանը վերջ տուեց դաւառապետի ամուսինը, որ տուն եկաւ, ողջունեց և նորա թւը մանելով ասաց.

— Հերիք է, շատ խօսելով կատիկդ չորացաւ, ձեր ձայնը չէր թողնում իմ գառնուկին օրօրոցումը հանգստանալ, հիմա գնանք մի կլթղաց օղիով թաց անենք կոկորդը:

## ԺԸ.

### ՏԱՆՈՒՏԷՐ ԽՈՒԴՅՈՆ

Տանուտէր Խուդօն երկու-երեք շաբաթ է պաշտօնի մէջ է իւր ընկեր սուգիաների հետ. նա ամենքին տակն է կոխել. բարակ կարմիր թբլիսի փայտի ձիպտը ձեռքն է առել, տանուտէրական մեղալը պարանոցից կախել, շղթայն երևեցնում է, իսկ մեղալը դեղնագոյն ուղտի բրդից չուխայի վերնածոցումը թագգրած՝ գիւղի էս զլից մտնում, միւս ծայրից դուրս է գալիս:

Խուդօյի առաջին գործն եղաւ դատարանը կարգի բերել: Քեղափարական օրինադրքի կանոններին համաձայն՝ տանուտէրը դատարանի վճիռների կատար ածողն է միայն, իսկ նա՝ իւր քամակին կանգնած

հովանաւորողի ուժով՝ ամենից յառաջ իւր բռան մէջ ժողովեց դատաւորներին:

Խուզօն բաղմած է մի հողայտասկ շինութեան մէջ՝ սեղանի ճակատին, նորա աջ կողմից շատ մօտ նստած է գրագիր Վանեցին. սեղանի աջ և ձախ երկայնութեամբը դատաւորներն են երկայն իշոտնուկ ասած նստարանի վերայ կկղած, սեղանի վերայ անկարգ անկանոն սիւռուած են մի քանի թղթեր, երկու մատեան և կիսաբաց գիւղական օրինատետրը:

Մինչև այսօր դատարան նստում էին գործից ազատ օրերը. իսկ հիմա տանուէր Խուզօյի նոր սնօրէնութեամբ շարաթն երեք անգամ դատարան կայ և միշտ բողոքաւորներն անպակաս են:

Սենեակը լիքն է գիւղացիներով:

—Ո՛վ գանգատ ունի՝ յառաջ դայ, ձայն է տալիս գրագիրը և ահա մօտենում է մէկն և իւր տրտունջը յայտնում:

—Նու մեղաւոր ես, կամ զլուխը քա՛րն է տուել քո հակառակորդը, գոռում է Խուզօն և խելքի կտրած վճիռը դնում ու հրամայում գիւղական գրագրին՝ գրել ու առաջարկել դատաւորներին ստորագրելու:

Դատաւորներն անխօս և հլու հպատակ են Խուզօյին: Սկզբներումը գրագիրը ծածուկ, աշկարաց մի քանի անգամ օրէնքի տաւը չիշեցնելով Խուզօյին՝ հասկացրեց իւր ապօրինի վճիռները, բայց նա շան տեղ չը գրեց իւր Մենտորին:

—Շատ մի՛ դուրս տալ, ասում է տանուէրը, առաջնորդը ես եմ, բալկէն իսա շա ծ ե մ ց ան ու մ, ես քեզ հրամայում եմ պի ս ր լ ու թ ի ւ ն դ անես, ինձ խելք չը սովորցնես, թէ չէ պոչդ կը խուզեմ, լակտներդ կատուի պէս ուխդ տուած՝ բոբիկ ոտով մինչև Վան մին կը փախցնեմ:

Վանեցին ծործորակը քորեց ու ձայնը փորը քցեց:

—Ձեր ոտք մեր գլխէն առաւել կը հասկնայ, արդարութիւն ձեր բերանով կը յաղթանակէ, շողոքորթեց նա և սաղ արեց:

Խուզօն միայն դատարանումը չէ վճիռ կտրում. ո՛ր փողոցումը կ'ուզես, ի՛նչ քունջ ու պուճախում ասես՝ նա է բուսնում. էնքան լինի, որ լսեց, թէ մի տան մէջ երկու եղբայր իրար ստուր խօսքեր են ասում, մարդ ու կին մի ընտանեկան խնդրում անհամաձայն են:

գտնուում, մէկի անասունը հարեանի բակն է մտել, մեր շունը ձեր կտերը հաչացել է՝ վերջացաւ. յանկարծ կամ փայտը հետուից վրէկ թափ տալով՝ ինքն է անձամբ շարձակուում կատարի դայլի աչքերով, կամ թէ զգիրն ու ետսավուն երկուսը միասին եկան, առանց այլ և այլութեան քեզ քարշ տունն տանուտէրի դիմաց և այն ժամանակը վա՛յ քո օրին. խոհեմութիւնը պահանջում է լուել, ապա թէ ոչ, կակուղ թբլխին թիկունքիդ շամփրի նման երկան շերտեր կը թողու:

Սակաւ մարդիկ մնացին զիւղումը, որոնց փողը չը մտաւ կարճ միջոցում Խուղօյի գրպանը. արդար ես, թէ մեղաւոր, միւսնո՞ն է, դու է՛լ, քո հակառակորդն է՛լ պարտական էք տալ. հերթը քո՛նն է, թէ ուրիշինը, քո գործը չէ քննելը, դու լռիկ մնջիկ մի մարդի օրավարձ տուր, կամ զնա՛ արքունի կու ու բէրաւը քաշելու. կարեւորութիւն և պահանջ կայ, կամ ոչ՝ քո հարցնելիքը չէ. տանուտէրը հրամայում է ձիդ հեծնել, սայլը լծել, կամ հետուակ զնալ մի տեղից միւս տեղը զինուորական պաշար տեղափոխելու, թուղթ տանելու, մեծաւորի ուղեկցելու և այլն:

Ի՞նչ անելու է, առաւել լաւ է 40, 50 կողէկ վճարել, քարէ քար, սարէ սար չ՛ընկնել, քան թէ զգիր ետսավունի անպատկառ հայհոյանքներին և տանուտէրի մահակներին ենթարկուել, քան թէ պատիւդ ոտնատակ անել և բանտումը մի օր փակուիլ:

Մի քանի հողի միացն ազատ էին պրծել Խուղօյի հալածանքներից. չը հաշուած դատաւորներին, իւր մերձաւորներին ու Վանեցի զրազրին՝ նոքա էին Սելիք-Յաղալն և Սիսակը:

— Իրանք բռնումն հուպ տուած են, դեռ դրանց համար պահած ա, չեմ շտապում, ա՛խ էր քաշում մի երեկոյ Վանեցու մօտ Խուղօն. փորս եփ ա գալիս, որ չեմ կարում ճանգա քցել Գոմշակերի թուանը—մեր ազայ Սրտեմ Սէրգեիլլիչին: Ասենք հողին հանել ենք, ունեցած չունեցածը փեշատի (չնիչ) տակ ենք դրել, բայց ինքը նախուանում ընկած՝ օխտն օրուան ճամփայ հեռու ա, ինքը պախ ձեռս ընկնի, որ օրը մէջ ծակը կոխեմ (բանասրէլ), խեղդեմ, հողին կատիկը (չնիչ) թռցնեմ:

— Ի՞նչ այնքան բարի գտնուած էք սակայն, որ Գոմշակերիանի եղբայր մանրավաճառ Պետրոս շարունակ ձեր ստուերին դեմ կը տըր-

սընջաց, իւր եղբօր վրէժ ձեզնէ առնել կը սպառնայ և դուք ազատ թող կուտաք զնա իւր փոքրիկ խանութիով զիւղ կեղեքել, համեստ պտտասխանեց զրազիրը:

—Շաբաթ չի անցկենալ, որ ես նրան շորափի տակ չը քցեմ, կու ու բէգեառ չառնեմ: Էլ ի՞նչ անեմ, մարդը գիւղի ա (Տառ) ասիլիս՝ առ ու տուր անում, հօ չե՞մ կարող դուքանը փակել, զարմացաւ տանուտէրը:

—Սակայն օրինազանց միշտ կարելի է պատժել, եթէ ձեր բարերարութիւն թողատրէ զձեզ:

—Սխար ի՞նչ դռնով, մտամոլոր հարցրեց Խուզօն:

—Բաւական է, եթէ մի հատ երիզ քակած ծխախոտի փաթեթ գտնաք խանութին մէջ, այդ ինքնին մաքսանենգութիւն է:

—Պէտօն էն շունն ա, որ բաց արած պապիրոսի պաշկէք պահի՞:

—Մենք երեկ մեր ձեռքով չորս հինգ հատ քակեցինք և յետքի կողմը թագուցինք, երբ ինք տաճկին փշատ կը վաճառէր, աչքով արեց Գնթունին:

—Հա՞, բաս թո՛ղ լիսը բացուի, ուրախութիւնից ճխաց տանուտէր Խուզօն:

Լոյս չը բացուեց, սև ու մութ բացուեց Արտեմ Սերգէյեւի եղբայր Պէտօյի զլիսին:

Կիսազագը ձեռքին չիթը չափում էր յաճախորդի համար, որ տանուտէր Խուզօն իւր դատաւորներով, դրագրով ու զգիր-եասավուլով տուն մտաւ, յառաջ գնաց դէպի Գնթունու աչքի պոչով ցոյց տուած ապրանքի շարքը, քրքրեց ծխախոտները, ջոկեց նրանց միջից տանի չափ բաց արած փաթեթներ և բարձր ձայնով ասաց.

—Թագաւորի խազինին խէթ մտիկ տուողին օրէնքը պատժում ա, դու բաց պաշկէքանցից (ֆալէն) հատով պապիրոսներ ես ծախել. էս օրուանից դուքանդ փէչատում եմ (չիքէլ), մինչև աքցի զնի չի նոզնիկի (Տառապէս) և սլէստչու (չիքէլ) գալը:

—Պապիրոսի պաշկէքն իրաւունք ունիս փէչատելու և պրտակօլ (արչանագրու-լիսին) անելու, մէջ խառնուեց յաճախորդը, բաց դուքանի վրայ փէչատ զնելու՝ ոչ:

—Ունչանք ե՞րբ Փահրատի փուշ դառնաս, առաջիս ցցուես, զուզ ճամփիս քար շաղ տաս, բորբոքուած յարձակուեց տանուաէր Խուզօն ճշմարտախօս մարդի վերայ և ձեռքի թբխի կակուզ ճիպտան այնպէս անզուշաբար վրայ բերեց նորա կրծքին կախած ոսկի մեղալին, որ ճիպտոտի ծայրը երեսախառն զխաւ աչքի աղբիւրականք և արիւնը շուաց ինչպէս շաղբուանի խողովակից:

—Այ մարդիկ, վկայ կացէք, դարձաւ վիրաւորը դէպի խանութի առաջին ժողոված հասարակութիւնը. Մելիք-Բաղալն օր ծերութեան՝ ոսկի մեղալը դօշին՝ հարամկերի աման լլատող Խուզօյի ձեռքով ձեծ կերաւ. փոշիմանողի (զ. զ. շ. ա. զ.) մէրը տղայ բերի:

—Ձեռիցդ եկածը չը խնայե՛ս, հեռացող Մելիքի քամակից ճիպտը ձօձեց տանուաէր Խուզօն և Գոմշակերենց Պէտօյի զուքանը փէշատեց:

Յաճախորդը Մելիք-Բաղալն էր:

## ԺԹ.

### ԳԻՒԳԱԿԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

Երեկոյ է. տանուաէր Խուզօյի վերնայարկումը բոլորակ բարձին թիկնած է մեծ տախտի երկայնութեամբ մի կարճահասակ, թխադէմ և շիլ պարոն. նա օտարական հիւր է: Անձանօթի հաղուստը մի խառնուրդ է հին և նոր տարազի. զաւառական քաղաքի թերուս եւրոպական զերձակի կարճ սև սերթուկի տակին երևում է հաչատանցի նորահարսի պողունցով բամբակած կինամոնազոյն արխալուղը. նորա գլխին զրած ռուս մոլժիկի մահուզեաց գտակին հակասում են տախտի առաջին դրուած սև սեկի կոշիկներն ու ոտքերի խորասանու նշանկար գուլպեքը. նորա մէջքը պնդող արծաթապատ փոկէ զօտին անհամերաշխ է կապտազոյն կիսազինուորական անդրավարտիկին. մի խօսքով՝ պարոնի մէջ ակնյայտնի նկատուում էր համեստ արհեստաւորի շրջանից տեղական ազաների, կամ ծառայողների զասկարզին հասնելու զգալի ձգտումն:

Օտարականը միայն չէր. նա երբեմն երբեմն գլխի ծանր շարժումներով, կամ բացասական նշաններով իւր հաւանութիւնը, կամ

տհաճութիւնն էր արտայայտում իւր ոտքերի մօտ տախտին նստած խօսակցին:

—Այս բոպէին, ասաց հիւրը և վեր կացաւ, մօտեցաւ սենեկի միւս անկիւնումը դրած ճանապարհորդական խօւրջին կոչուած պաշտակին և հանեց նորա մէջից մի կապոց:

Հիմա նա անձանօթ անձնաւորութիւն չէ. իւր կաղ ոտքն իրեն մատնեց, նա հանրահոգի փաստարան Զոլախ Յարութիւն զիւզական ազվակատն է:

Պարոն Յարութիւնն իւր կապոցով եկաւ նստեց տեղը, քակեց փաթեթը և տախտի վերայ փռեց նորա միջի առարկայքը, որ ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մի քանի թերթ հասարակ թուղթ, մի երկու կարած դործնական մատեններ և մի հաստ ու կարճ զոյնզոյն շերտաւոր կազմած զիրք:

—Սա՛ կը խօսի, սա՛, տանուտէր Խուզօ՛, ինքնապարծութեամբ երեք անգամ ձեռքով զարկեց փակած գրքին Զոլախ Յարութիւնը և բաց արաւ զիրքը. տեսնենք դեռ ի՞նչ է ասում զակօնը՝ մեղալաւորին ծեծելու համար՝ յետոյ մեր չանդախները քցենք չորս կողմից:

—Բաց ասեմ, ոչ ամաչեմ, պարոն Յարութիւն, ծեծել եմ, սուտ չի, հէնց տուի ձիպոտով, որ ծծի վրայ կախ ընկած ոսկի մեղալի զնդոցը քո Սելիք-Բաղալի կնկայ ականջը հասաւ՝ զլուխը խումորի թունդիբը կոխած ժամանակ, աչքի արիւնը օխտը զազ շկրկի էր տալիս, ափսո՛ս, որ միանգա կից պիպիկը չը պլխաց (չը պարտաւորեց), որ լուսաւորուէր (հարանալ), վերջանար, չը թաղցրեց տանուտէր Խուզօն:

—Да братъ! դժուար է, զակօնը շատ սարօգի է, (խիստ է), ծանր ծանր զլուխը շարժեց փաստաբանը: Բայց այնումդ մի՛ քցիլ, տանուտէր, ես ողջ լինեմ քեզ համար. հինդ այնչափ էլ ծեծած լինէիր, կը մարտէիր, էնքան լինի՛ էս գիւղից լօնդի Բարանովի ոտը կտրես, իմ կլիենտոներս (ծիւր)՝ նրա ճանգը չը քցես:

—Եղ ի՛մ շնքին, կնպէս ոտը կտրեմ ես զեղիցը, որ շուաքը չ'երևայ. էն վախտը քանի կարաս՝ ծոցդ տուզացրու թուղթ փողի ծալքերով. ա՛յ, հէնց հիմի որտեղ որ ա, մի դմագճիկ կարմրախէտ ձուկը թօւղ կ'ընկնի: Հողս մի՛ անի, դու քանի կուզես՝ հուպ տո՛ւր, նրա խօսքերից սիրտդ չը պակսի, տեղը կայ. ինչքան փող պէտք

զայ՝ մեր Բալասան աղի քիսէն սաղ ըլնի, մի թղթի կտոր ա, կը գրիլ տանք ու փողերը քո ջեբը կը լցնենք:

—Սողոմն էս տեղ ա, ներս մտաւ և յայտնեց զգիրը:

—Վանչի՛ր, հրամայեց տանուտէրը:

Ձուախ Յարութիւնը շտապեց կրկին թիկնել բարձի վերայ և յօնքերը ժողոված՝ քիթը կախած և աչքի բիբերը սեղմած՝ առաստաղին նայել. կարծես խորիմաստ փիլիսոփայութիւնով ուզում էր սան թանձր ծածկի միջով թափանցել երկնից համատեղութեան զաղտնիքը զննելու. նա արժան անգամ չը համարեց գէ՛թ մի ակնարկ ձգել ներս մտնող գիւղացի երիտասարդի խոնարհ երկրպագութեանը. նա, ինչպէս ասում են, վերացել էր և իւր ոտքի տակը չէր տեսնում:

—Արա՛, փուշ կենդանի Սողո՛մ, ցածր և ակնածական ձայնով ու հնչումով ասաց ներս եկողին տանուտէրը, էդ ի՞նչ հալի (բրոնէտֆէ) ես տուն գալիս մի պատուաւոր աղայ մարդի առաջ, կարծես թթի զէրին (Լուլան) վախացնելու համար թթենոնց վրայ գրած հին շորերից ճղքան վրայ հագցրած ու յուղ ըլնիս. չես կարում մի քիչ շորհարով, շէնքով հագնուի՞լ:

—Գլխի՛դ մեռնիմ, տանուտէ՛ր, քեզ յայտնի չի՞ իմ ափայը (բրոնէն). հէնց կարողացանք պատիկներին չուշիկ ու փուփու (հագուստ եւ կերակոյր) հասցնիլ, որ մեր գլխի հոգն էլ քաշե՞նք:

—Ընչի՞, դեռ եկամուտդ չես ծախե՞լ:

—Ի՞նչքան մասիլ (քէր+) ունիմ ինձ, որ ի՛նչ փուշ հանի իմ մատիցը. ջհանդամի էն գլխին կորած երկու տախտակ բազ ունինք, որ դեռ հաւողը ջուր չընկած՝ չը չալած (Լեքահոս շէնէլ), որը ծըտերն են կտցահարում, որը թուրք ու շուն ա տանում. մի կալատեղի չափ հող ունինք՝ էնքան չի բերում, որ եկող տարուայ սերմացու վեր ունինք, դառը քրտնքով, ատամներս հուպ տալով մի տեսակ ծէրը ծէրին անջախ ենք հասցնում, էլ ո՞րտեղից հագուստի քամակիցն ընկնիմ:

—Հիմի որ ես քեզ հարստացնեմ, էս գիւղի առաջաւոր մարդկանց շարքումը կարգին համփայ շինեմ, ինձ ի՞նչ ես տալիս, ձեռս պաշո՞ւմ ես:

—Ձեռդ չի՛ ոտդ էլ կը լիզեմ. բայց դու հօ՛ Աստուած չե՞ս,

որ բռնով հողը վերցնես, ոսկի շինես, զոգս լցնես. մեր ճակատին ըսէնց ա զրուած՝ էսպէս էլ պէտք ա ըլնենք:

—Հանաք չեմ անում, քո արևը, Սողոմ, մեղքս զալիս ես, ես ուղում եմ քեզ ձեռիս տակն առնեմ. ասում ա՝ «մի առւելով որ մի ժամանակ ջուր ա դնացել, էլի կերթայ». քո լիսահողի հէրդ էս զեղի սներից մինն էր, առաջին համփէն էր. բայց քեզ պարտական են քո մօտ բարեկամներդ, որ դու որք մնացիր, նրանք քեզ զրկեցին ու ահագին կարողութիւնը փորերը քաշեցին:

—Ելածն էլի, անց ա կացել, տանուտէ՛ր, էլ հին դարմանը քամու տալն ի՞նչ կ'անենք:

—Էս կ'անենք, որ ես կ'ընկնեմ էս փիլիսոփայ ազայ մարդի ոտները, (տանուտէրն աչքով ցոյց տուեց Չոլալի Յարութիւնին) կը խնդրեմ, կը պաղատեմ, ձեռդ սրա փէշը կը տամ, Պետրոսեց Գալոյի աժդհայ (ահագին) բաղը, որ վէր ա կոխել ու տում, յետ խլիլ կը տամ ու իր տիրոնը կ'արժանացնեմ:

—Ի՞նչ ես հրամանք անում, տանուտէ՛ր, երկնքիցը կէծակ (չոյծակ) կը տրաքի զլիսս. Գալ-ափունի դառը քրտինքն ինձ ո՞վ հալալ կանի: Էս օրուայ պէս միտս ա զալիս, ես տասը-տասնումէկ տարեկան հօտաղ երեխայ էի, որ ողորմածիկ քեռիս հօրս պարտքի տեղակ ծախեց. դեռ նոր երկու տարէն տնկած բաղ էր, թփերն էլ հետը պոկէիր՝ մի քթոց հաւող չէր հաւաքուիլ: Խեղճ Գալ-ափուն ջանը քանդեց, բէջարեց (ճշակել), բաղ հասցրեց, որ ես էս օր գնամ նրա հասած տղամարդ մէքի զլիսին ցցուեմ, թէ մի ժամանակ մերն ա էլե՞լ. Աստուած մի՛ արասցէ, իր մօր կաթի պէս իրան անուշ ըլնի:

—Ազա՛, շաշ հայվարայ (ահէ), օրէնքն ա հասցնում, դու հօ զօռով չե՞ս խլում, քո հէրենական կայանքն ես յետ առնում, հօ ուրիշի մէքին չե՞ս տէր կանգնում:

—Ձէ՛, տանուտէր ջա՛ն, իմ խելքս ջուր չի խմում էդ տեսակ օրէնքից. ոնց որ տեսնում եմ, դու ուրիշ հրամանք ունիս անելու, պտի ասես, հիմի հանաք ես անում հետս, կամ իշխտեղ ես դնում. բայց չէ՞ որ մենք էլ հացակեր ենք:

—Ձէ՛, իմ որդոնց ա՛րևը, ո՛չ հանաք կայ խօսքերումն, ո՛չ չանաք (չընանաք). թէ չես աւատում, թո՛ղ ազայ Յարութիւնը զլխումդ

մի մին հալի, հասկացնի. փառք Աստծու, ինքն ա Երևանայ հողի (հահանգի) առաջին զակօնադէտ (օրհնագէտ) ազգակառու:

Վերջին խօսքերը Խուզօն բարձրաձայն շեշտում էր:

Ձուխի Յարութիւնն առանց գծագրութիւնը փոխելու, մի հաշեացք ձգեց Սողովի երեսին, մի արհամարհական ժպիտ խաղացրեց շրթունքի վերայ և աչքի կոպով ոտից զլուս զիտում էր իւր դիմացը կանգնած մոլորուած մարդանման կենդանոյն:

— Աղա՛յ Յարութիւն, սկսեց Խուզօն, սա իմ ասած տղէն ա, ինքք շատ պատուական հողի (հնչն) ա, երեք տարի ա՛ պսակուած ա, երեք երեխայ ունի, իր հօր ասլանքն ուրիշներն վէր են կոխել, ուտում ու իր քորփէքը (մանկոտ) թունդիրն ածես, էրես՝ շորահոտ չի գալ: Ես սրան խորհուրդ եմ տալիս, քո փէշը բռնիլ, մի քանի ամսից իր հօր մէքին տիրանալ. սա հէնց կարծում ա, թէ իրա վրայ ծիծաղում եմ, խնդրեմ, սա խեղճ զեղըցի անդէաների մինն ա, հրամանքդ սրան զլսի քցես բանի էութիւնը:

Փիլիսոփայ փաստաբանն ինքնագոհ ժպիտով սկսեց մատները խաղացնել առաջին ընկած շերտաւոր օրինադրքի կազմի վերայ-և հետևեալ պատասխանը տուեց.

— Կերևի մեր եղբայրը մի պրօսաօջ մոլժիկ (հասարակ սոմի) է, զակօնի ստատիէքանցից (օրհնոյ յօդուածներէց) տեղեկութիւն չունի, ապա թէ ո՛չ խելօք մարդն իր դախօղից (օգտեց) չէր փախչիլ. զակօնն ինքն է պաշտպանում որբերին ու նետվերչենօլէտնիքանցը (անշահագոտ): Ես, ի հարկէ, կարիք չ'ունիմ զլիացաւանքի մէջ մտնել, ժամանակս էլ չի ներում էդպէս պոլսօջ (չնչն) զործերը վերցնել, զիշեր ցերեկ պարապած եմ, զիշերները պրօշէնիքըն ու զաեա վլենիքն (ինդիլ և զէնոցոմ) եմ պատրաստում, ցերեկը սղերումն եմ զաշիշչատ անում (բոսորաններու՞ պաշտպանել). բաց որ ինքդ, տանուտէր Խուզավէրցի, ինձանից սովէտ (խորհուրդ) ես հարցնում՝ կասեմ, զիտեցողը չը զիտեցողին պարտական է. ես տեսնում եմ, որ դու բարեսիրտ տանուտէր ես, չես ուզում, որ քո ժողովրդի մէջ անիրաւութիւններ կատարուին: Լսի՛ր ուրեմն, եթէ ինչպէս ականջովս ընկաւ ձեր խօսելու ժամանակը՝ այս եղբայրը 10 տարեկան մանուկ է եղել, երբ քեռու ձեռքով սրա այգին ծախուել է, սա կարող է այժմ իւր հայրենական անշարժ

կարուածքը չետ ստանալ: Հարկաւոր է մե տրիչ սկի ս վի դէ տ ե լը ս տ-  
վօ (Ծննդաւան վէպտիան) ձեռք բերել. դժուար չի, կոնսիստորի չլէն-  
ներին (անդամ) կամ սե կրե տ ա թին (սպէնտոդիթ) մի քանի շահի,  
կամ մի գլուխ շաքար ուտացրիր, 30 տարեկանը տասը կը շինեն:  
Երբ որ այդ վկայականը ձեռքիդ ունեցար, կայքիդ էլ կը տիրանաս,  
Ծախուած օրից մինչև այս օրուայ դա խօզին (էլիմոս) էլ հետը. թէ  
որ չ'անեմ, աջ ձեռս կը կտրեմ, ս դի մէջ տեղը՝ չլէններին՝ (անդամ)  
առաջին դէն կը ձգեմ ու դուս կը դամ, որ իմ օտս ս դի դունովը  
միւս անգամ ներս չը մտնի:

— Էդ ասա՛ է՛, աղայ Յարութի՛ւն, մի լաւ հասկացրո՛ւ էս ան-  
պող անասունին, արի՛ ու սրա պէսներին լաւութիւն ցանկացի. Ծա-  
մում ես, բերաններն ես դնում՝ չէն ուզում կուլ տալ, կամենում են՝  
որ մատով ներքեւ խցկենք, արդարացաւ տանուտէրը:

— Ա՛յ ձեր գլխին մեռնեմ, ուսերը վեր քաշեց Սողոմը, ախա՛ր  
մին՝ որ մեր բաղը հօրս պարտքի տեղակա ծախուել, մէկ էլ՝ որ  
նաչար Քալ-ափուն իր մատների միւր կերել ա, ընչանք հասցրել ա.  
էդ ո՞ր զակօնը կարաց հալալ աշխատանքին խէթ աչքով մտիկ  
տալ:

— Այդ քրոյորը ոչինչ, սիրելի եղբայր Սողոմն, նախ՝ այդ պա-  
րոն Քալուսարը զակօնի ստատիացի դէմ է գնացել՝ մեղաւոր է.  
նորան ասած էր, որ իրաւունք չ'ունի նե սովեր շէնօլէանի մա-  
նուկի ապրանքին մօտ գնալու, ի՞նչ ասնովանիա (էլիմոս) ու-  
նէր չը լսելու, և երկրորդ՝ որքնա քո այգու դա խօզն է կերել. ուրեմն  
դու իրաւունք ունիս առանց մեծ փող մտնելու՝ կայքին տիրանալ:

— Քալ-ափուն օրէնքն ի՞նչ էր հասկանում:

— Է՛... սիրելի՛ս, ամեն մի թագաւորի հպատակ պարտական է  
օրէնքը դիտենալ, դու այդ խօսքով մեղանշեցիր, մէկ անգամ բերա-  
նիցդ հանեցիր, միւս անգամ դուրս չը թողնես ուրիշի մօտ,  
թէ չէ փորձանքի մէջ կ'ընկնես. քեզ խղճում եմ, մեր տանուտէրի բա-  
րեկամն ես, թէ չէ իսկոյն պրօտօկօլ կը կազմէի և դու կը կորչէիր:

— Բաշխի՛ր, աղայ Յարութի՛ւն, չը լսելու դի՛ր, գլուխը քարը  
սուեց, միջնորդեց տանուտէրը և զարձաւ Սողոմին—տօ աւանա՛կ, իշի  
քուռա՛կ, դու թագաւորի ազլակատի մօտ թագաւորի օրէնքին չես  
հաւանո՞ւմ. հիմի վեր կենամ՝ կաշի-մաշիդ պլոկեմ:

—Բաշխի՛, աղայ ջա՛ն, ես մեղայ Ասածու, վիզը թեքեց Սողոմբը:

—Այդ ոչի՛նչ, ես անյիշաչար հայ մարդ եմ, դու այժմ կարճ կապիր, եթէ չես ցանկանում քո սեպհական այգիդ յես ստանալ, քո կամքդ է, գնա՛, իսկ եթէ յօժար ես, կարող ես մի քանի մարկայ (որոշ ճանիշ) առնելով՝ իմ ձեռքովս կարճ միջոցից մի պատուական այգու տէր դառնալ:

Տղան ծործորակը քերեց, նա մտածմանց մէջ ընկաւ՝ աչքերն աննպատակ յաւելով յիմար ոչխարի նման:

—Դէ ի՛նչ ես կմմում, գե ա դ ա՛յ (որոյ), մօրքօղլի՛ (Տօրաքէսորի), աղայ Յարութիւնին պա վ էր ն ի (Երաշխասօր) շինում ես, որ քեզ ձեռաց էս դեղի համիէքանց շարքումը խստնի. թէ չէ ասեմ ա խ տը (արչանագրուլին) զրի, ընչանք Սիբիր մին քշի, կիսահեգնօրէն, կիսասպառնալից հարցրեց տանուտէրը Սողոմբին:

—Քո կամքն ա:

—Դէ արի՛, բալամ՝ (դասիս), արի՛ աղայ Յարութիւնի ոտը պաշի, հարցրու՛ ի՛նչքան մարկի փող կը հարկաւորի, գնա՛ բեր, թո՛ղ էգուց էս մարդն երեսին խաչ հանի ու գործիդ ձեռք տայ:

—Առ այժմ դեռ 20 մանէթից աւել պէտք չ՛ունինք, հարկաւոր է առաջ մի բոլոյ սղոււմը (հաշարօր արէսն) պօշլին (ճախ) տամ, թղթի փող տամ, յետոց երբ որ գործն օկրուժնօց սուղը (նահանգական դասարան) կը մտնի, այնտեղ էլ մի չնչին բանով զլուխ կը բերենք, ապահովացրեց փաստաբանը:

Սողոմբը նորից զլուխը քերեց և վախվախելով՝ տանուտէրի աչքերին նայեց:

—Հասկացայ, զլուխը շարժեց տանուտէրը, մեր Սողոմբը պատրաստ փող չ՛ունի: Վնաս չ՛ունի, որդի՛, սիրա տուեց նա, առաւօտը Տաճառ վարժապետին 40 մանէթի մի վէքսիլ (Տարհալ) գրել տո՛ւր մեր Բալասան աղի անումով, դաւէրն ի անիլ տուր, բեր փէչաւը դնենք, ես աղայ Յարութիւնին եօլա կը տանեմ, մնացածն էլ գործիդ համար կը հարկաւորի, թո՛ղ ինձ մօտ մնայ, ուտեմ էլ՝ կորած տեղ չի, մի օր քեզ պէտք կը գամ:

Մի քանի անգամ էլ ծռմնատուեց Սողոմբը, փէչերքն ուղղեց, թեքով քիթը սրբեց, աջ նայեց, ձախ նայեց, թակարդում բռնը-

ւած աղուէսի նման ոտքի մէկն յառաջ դրեց, միւսը յետ, վերջը մի հազաց ու համաձայնեց տանուտէրի առաջարկութեանը՝ խոտոացաւ միւս օրը գնալ աղայ Յարութիւնի հետ Հաշտարար-նօտարի մօտնրան երաշխաւորական տալու՝ Գալուստ Պետրոսեանցից իւր հայրենական այգին յետ պահանջելու մասին:

Բայց, քար ընկնի՛ Սողոմի զլիսին, տանուտէրի տանից դուրս եկաւ և ուղղակի Գալ-ափունի դուռը բաղխեց, ամեն ինչ մանրամասնօրէն նորան յայտնեց:

— Խիղճս տանջում է, ասում է, չեմ կարող թագցնել, դազանների ճանգն եմ ընկել, ձեռներից չեմ կարող ազատուիլ, հաւատացնում էր, բայց դու, Գալ-ափո՛ւ, ինչ գիտես՝ էն արա՛:

— Խնչ անեմ, մտածեց Գալոն Սողոմի գնալուց յետոյ և տրեխները հագաւ, շտապեց Մելիք-Բաղալինց տունը:

Այս անգամ Գալօյի գործը լաւ յաջողեց:

Մելիք-Բաղալին հիւր էր գաւառական միւս փաստաբանը— Զոլախ Յարութիւնի ակոյեան լօնդի Պողոս Բարանովը:

Նրան հրաւիրել էր ինքը Մելիքը՝ իւր ծեծուելու վրէժը պահանջելու տանուտէրից:

Նորա առաջին էլ թափուած էին նոյն օրինազիրքը, նոյն թըղթերն ու գործերն, ի՛նչ տեսանք Զոլախ Յարութիւնի մօտ:

Արդէն Մելիքի բողոքազիրը պատրաստ էր, որ Գալ-ափուն մտաւ և ամեն բան մի ըստ միջէ յայտնեց:

— Ես էդ քո չոլախ շանն էն օրը քցեմ, էնպէ՛ս փախցնեմ սդիցը, որ միան ծակը հարիւր թումանով առնի. էդ քո Սողոմոնիդ էլ աղլորացնեմ, վերջին շապիկը թողնեմ, սուղեբնի իզդեր ժկէքն էլ (գրաստանական ծախէքը) վզին բարձեմ և չը թոյլ տամ պարոն Գալուստի այգու մօտովն անցնելու. այս բոպէին տասնից աւել այդպիսի գործեր ունիմ այդ անպիտան չոլախի դէմ, չպարծեցաւ Բարանովը:

— Ընդուր են ասել՝ փէշաքեարը (արհեստագործ) փէշաքեարին թշնամի ա, նկատեց Մելիք-Բաղալը: Լիսը որ բացուեց, ձի կը նստենք, պարոն Պողոսի հետ կերթանք սրան պավէրնի կը շինենք, ինչ ծախս էլ կը՛հասնի՛ կը տանք, կարգադրեց ինքը Մելիքն և Գալօյին ճանապարհ դրեց:

— Եղբա՛յր սիրելի, քսան անգամ այդ անպիտանին սուաջարկել եմ, որ ազնիւ խօսք տանք միմեանց, ուէզդի (գառաւ) բոլոր գիւղերը վիճակ ձգենք մեր մէջ, ես նորա բաժինը ոսք չը զնեմ, նա իմն. բայց չի լսում, որ զիւզը գնում եմ, լսում եմ, որ եկել է խառնչատրել, չեղած տեղից իսկ եր (պահանջ) ստեղծել ու վերցրել:

— Դէ՛, էդ հօ քո՛ օգուսն ա, մէկդ գործ սխողի կողմից կընիք պավէրնի, մէկէլդ՝ դիմացի մարդի՛ ինչպէս որ մեր Գալօջի գործումը, եթէ չուրախ Յարութիւնը Սողամին չը համոզէր, դու նորանից շահմունք կունենայի՞ր, հարցրեց Մելիքը:

— Աւելի օգտակար չէ՞ր լինիլ, եթէ գործն էլ ստեղծէինք, երկու կողմիցն էլ ստանայինք:

— Յետոյ ի՞նչպէս էիր վերջացնում, ո՞ւմ օգտին:

— Վերջ ի վերջոյ օգուտը մերը կը լինէր, իսկ գործի տէրերը կամ կը հաշտուէին, կամ միանգամայն կը քանդուէին՝ այնպէս յետ կը կանգնէին:

— Ձեր այդ աղվախատութիւնն ու տէրտէրութիւնը մին ա, ընչացքի տակից ժսրալով սասց Մելիք-Բաղալը, մեռելիցն էլ էք պոնում, կենդանուցն էլ:

— Պարոն Պօղո՛ս, սասց միւս օրը Մելիք-Բաղալը, էս օր իմ ու Գալօջի քեզ ընկերանալը յետ մնաց, խիստ հարկաւոր գործ ա պատահել. դու հրամանքդ զնա՛, մենք մի երկ՝ օրից կը դանք քեզ մօա, թղթերը շինել կը տանք:

— Ձեր խաբեբայ հէ՛րն անիծած, ձեռքը թափ տուեց Մելիք-Բաղալը Բարանովի քամակից. սատկած իշան էք գտել, նայները քաշել էք, խեղճ գեղըցոնց արիւնն էք ծծել. թէ չեմ մեռնիլ, երկուսիդ ոտն էլ էս մհալիցը կը կտրեմ ու էնպէս աղվախատների կերթամ, որ գործս շինեն, ոչ թէ ինձ աղքատացնեն:

## Ի.

### ԽՈՓԸ ՔԱՐԻՆ ԱՌԱԻ

Ամեն տան ճրագները հանգել են. Ս. գիւղի փողոցներում ոտքը խաղաղուել է. պառաւները մի հանդէքնել են ու զարթնել, դուրս զնացել, իրանց հովին տուել ու սոււն մտել: Այդ միջոցումը

մի տան վերնաշարիկի պատշգամբի վրայ մի եափնջում կորլուած մարդ մօտենում է լուսամտին և յետ քաշուում: Պատշգամբը երկու դուռն ունի, նոցանից մէկը տանում է տան մեծ սենեակը, միւսը՝ նոյն սենեկի հետ ներսի դռնով կապ ունեցող կանանց բաժինը, ուր միաժամանակ կերակուր եփելու փոքր թոնիրն է սարքած: Շարժումներից երևում էր, որ գիշերաշրջիկն այս տան համար օտար էր, նա սովորական դռնովը չէր բարձրացել պատշգամբը, նա ուղղակի փողոցից պատուհն էր վեր ելել:

Ահա կանանց և սենեկի դուռը բացուեց, մի նորահաս աղջիկ դուրս եկաւ, քարշնցեափնջին ու երկուսը միասին մօտեցան պատին: Պատշգամբի պատի տակին մի ծառի մեծ կոճղ տարիներով ընկած է և նստարանի տեղ է պէտք գալիս:

Այս տեսակցութիւնն առաջինը չէր երկու ժամադիրների մէջ:

Այն օրից, երբ Օ. գիւղացիք աշնան բերքը ժողոված՝ տուն հաւաքուեցան, կոճղի պաշտօնը մեծացաւ. այս տարի գիշերն էլ անշունչ փայտի կտորը չը հանգստացաւ. խաղաղութիւնը տիրելուն պէս՝ այդ երկու հոգին մինը կանացի սենեակից էր դուրս գալիս, միւսը պատիցն էր վեր բարձրանում և կոճղի վերայ նստած՝ փսփրսոցի մէջ էին մտնում:

Աքաղաղն առաջին անգամը թեւը թափ էր տալիս և դեռ նոքա նստած էին լինում: Ինչպէս երևում էր, սենեկի մէջ քնած երկու ուրիշ անդամներից մէկին անցայտ չէր անքուն պիւերի (սեւերի) այս արարքը: Սակաւ չէր պատահիլ, որ մի միջահասակ կին զգուշութեամբ բաց կանէր կանացի սենեկի դուռը, զլուխը կը հանէր, իսկ մարմնով ներսը կը մնար, որպէս զի իւր շապկանց լինելը չը նկատուի և ներս կը կանչէր կոճղի վրայ նստողներից մէկին, իսկ մէկէլին քաղցր յանդիմանութեամբ խորհուրդ կը տար բաւականանալ և գնալ քրնելու:

— Հէնց հիմի գնում եմ, հէնց հիմի գալիս եմ. լսում էր միամիտ կինը երկուսից միասին և մի կնճիւռով իւր ահաճութիւնը յայտնում ու գնում անկողին մտնում: Խառն երազները չէին թողնում մտատանջ կնճըր երկար քնել. էլի շուտով զարթնում էր, ձեռքով շօշափում իւր աջ կողմի դատարկ անկողինը, ձրբալով վեր կենում, նոր խոստումն առնում իրեն զիւրադար անողներից և նորից պառկում:

Երկու նստողները մեր լաւ բարեկամներն են. Սամփսոնն ու Սօնան էին նոքա:

Այն օրից, որ Գալ-ափունն ու Բարսեղն այդու ծառի տակին արևելեան խնդիրը վերջացրին, Բարսեղը թեթև աչքով էր նայել և չէր բարկացել երեկոները շատ ուշ երբեմնապէս Սամփսոնին իւր պատշգամբումը տեսնելուս:

— Աղա՛, զեռ ջուրը չը հասած ոտքերդ հանեցի՞ր, նկատողութիւն արեց առաջին երեկոյին Բարսեղը Սամփսոնին. բացց երբ ամաչկոտ փեսացուն կարմրեց ու զլուխը քարշ ձգեց, Բարսեղն իւր մի նկատողութեամբ ամենայն փակ դուռը բաց արեց:

— Դու մեղաւոր չես, որդի՛, աշխարհքն ա շուռ անցել, վշացել, մեր ժամանակը պտէիր, որ աթարոցով հետ ածէի, փեսէն աներանց շէմքից քթեթի (նորահարսին հագցնելու շորքը) հետ պէտք է տուն մտնէր. բացց հիմի ամեն ինչ փոխուել ա, տեսում ես՝ նշան էլ չես դրած, մի գարդակ խօսք ենք տուել, արևի շողքի պէս՝ պուպուզ՝ տուն ես ընկել. վրաս չունի, ջահէլ էք, քէ՛՛ Քաշեցէք, հիմիկուայ սերը քաղցր կը լինի:

— Քիչ մնաց՝ մկան ծակը հարիւր թումանով էր առնում, երբ ոտիդ շիլթունն (չա՞ն) առաւ, ուղում էր զոզ կատուի պէս փանջարովն իրան վէր քցի, համա էլ ո՛րտեղ, դուռը բաց արիր, հոգէառի պէս գլխավիրեւը ցցուեցիր, մեր լեզին էլ ջուր շինեցիր, շողքորթեց կինը մարդին:

— Բաս էդ անդդամ Սօնին չե՞ս ասում, որ քունջն ա մտել պանրազոզ մկան նման գլուխը կախ քցել, աչքերը պղղացրել, սաքի թէ շատ ամանչում ա. դէ՛, շան աղջի՛կ, հրէ՛ս, ա՛ռ ոտներն աչքդ կոխի, ոտով գլխով քեզ բաշխեցի, կիսակատակ տալով՝ բռնեց Բարսեղը Սամփսոնի կուռն և հրեց դէպի ազջիկը:

— Գնա՛, Սամփսոն, զնա՛ անօրդ ձեռը պաշի, որ քեզ իզին (խրահան) ա տալիս մի մին գալ-դնալ. ես զմիշ չէի անում սիրադ կտարել, բացց հէնց որ երևացիր՝ մահուան դող տուի, մաքումս ասում էի. հիմի Սօնի հէրը տուն կը դաց, քեզ քարհալած՝ ինձ ու Սօնիս էլ սալջարդ կանի, բացց լաւ սհաթի ուստո կկար (հանքիդեցար), բաղդդ կորուկ ա:

Ուղիղ էր Մարգարտի ասածը. եթէ Բարսեղն էս բուզէին Սամփ-

անկնց սեղանի վրիցը չի վերկացած լինէր, եթէ նա Գալ-ս-փունի հետ երկարակոթ դուռը՝ ջան ասելով՝ վայելած չը լինէր, էսպէս թեթեւ չէր անցիկնալ փեսացուի առաջին հանդիպումը:

Սատանայ էր Սամփոսնը. հէնց որ նկատեց, թէ հօր ու աներոջ քէթը տեղն եկաւ՝ ինքը դռնի դուռս՝ ու կատուի նման վեր շուրջուեց (բարչբոյս)՝ նշանածկնց պատիցը:

— Դէ գնացէ՛ք գեազմի վրայ (պարզութիւն) մի քի: ասուլիս արէք, թող հերդ թէք ընկնի, քնի, ձեռքով դուռը ցոցց տուեց Մարգարիտը փեսացուին ու աղջկանը:

Այդ օրից Սամփոսնի համար Սօնկնց տունը ջրի ճանապարհ էր դարձել, նորա ոտքը բացուել էր:

Այդ օրից Սամփոսնն իւր ընկերներէ համար ուրբաթախօս չէր, կատակներն ամենքից վաղ ինքն էր սկսում, պատմում էր, որ նշանածի մօտիցն է գալիս, որ զոքանչի ձուածեղը սիրաբ բռնել է և այլն: Այդպիսի միջոցները միշտ չիշում էին իւրեանց ընկեր թշնամու գընդակին զոհ գնացած խեղճ Բօնդարեանց Ասոյին, հայհոյում էին, ուստում էին վրէժխնդիր լինել նրան սպանող Բովակոթենց Հայրօյից, որ շատ ժամանակ չէր Բալասան աղի երաշխաւորութեամբ արձակուել էր բանտից:

Բայց ահա մի քանի օր է, որ Սամփոսնը ոչ ցորեկն է գիւղամիջին երևում և ոչ զիշերները ընկերական խմբակին է այցելում:

Չարաղէտ նշանի երեկոյից յետոյ էր այս:

Մի քանի անգամ Սամփոսնի ընկերները բաղխեցին նրանց դուռը, հօրը հարցրին, մօրից տեղեկութիւն լսնդրեցին, բայց միշտ մի տեսակ անորոշ պատասխանով վերադարձան:

— Տղէ՛ք, մեր գլխինը լաչակ ա, թէ որ մեր ընկերի հաւարին չը հասնենք (օգնել), մենք խօսք ենք տուել մեր գլուխը Սամփոսնի ուղուրին յետ գնել, պաօշտով էլ պայման ենք կապել, էս օր մեզ ամօթ ա, որ թողանք նրա թշնամիքն ուրախանան, մենք պաի կաշիներիցս զուս գանք, նրանց տունը կրակողին գտնենք, շամփուրը քաշենք, խորովենք ու ու՛ որ էլ նրա սրտի մուրազն ուզում ա խափանել, Սամփոսնի նշանածին կառնում ա տիրանալ, պաի բռնենք, կամ խօսք առնենք, որ յետ քաշուի, կամ թէ չէ՛ շինքիցը մի սև զագիլ (հողէ

ապրիլի 15-ին) պէտք ա կապենք, ձեռները կպրի մէջը հինա զնենք ու արևը մէր մոցնենք:

Սամփոնի ընկերները կատակ չէին անում. նրանք գտան տունը կրակ տուողներին. տանուէր Խուրոյի տղայ Կարապետն իւր բերանով պարծեցել էր, որ ինքն է կրակ տուել Բալասան աղայի քրոջ որդի Վասակի հետ և թէ շատ չի քաշիլ՝ ինքը Սօնային էլ կը տիրանայ:

Սամփոնի տրտմութեան պատճառն իսկապէս ոչ նշանի յետ մնալն և ոչ հրդեհն էր:

Իւր աները միւս օրն իւր բերանովն էր հրամայել, որ սիրտը չը կտորի, գայ ու դնայ, Սօնի հետ խօշ ու բէշ անի: Բարսեղը Գալ-ափունի հետ էլ խորհուրդ էր արել, որ մենձ տէրտէրի խօսքերը պարանի տեղ չը դնի, մի կերպով զիւղի միւս քահանայից համոզի, մէկի ծուխը դառնայ, նրանց ձեռովը մի իրիկուն նշանը տայ, մէկէլ օրը հարսանիքը նստացնի, պսակի, դուշմանին (Թշնամի) տրաքացնի, իրաւորին ուրախացնի:

Եւ աշխատում էր Գալօն, և շարունակում էր իւր երեկոցեան աչցելութիւնները Սամփոնը. բայց շատ չ'անցաւ՝ հօր ու որդու ստաքը միանգամից քարին առաւ:

Գալօյի երեսին ամեն դուռը փակուեց, զիւղի երկու տէրտէրները կտրական կերպիւ մերժեցին նորա ինդիրը, պարզ ասացին, որ մեձ տէրտէրը երկու տարի իւրեանց երկուսի հետ էլ խռով էր, խռով էլ պաշտօն էր կատարում, հեաները չէր խօսում, իր լեզուովն է պատուիրել իրանց, որ չը համարձակին էդ նշանի գործի մէջ լատնուիլ, ապա թէ ոչ, սղառնացել էր՝ մէկին Սեանի խոնաւ խրցերի մէջ փթացնել տալ, միւսին Խորվիրապի Լուսաւորչի վիրապի մուտքի գտնապանն անել:

— Եթէ բանն էդ տեղն ընկաւ, Սամփոն ջա՛ն, դէմ ու դէմ երեսին ասաց մի երեկոց Բարսեղը, էս օրուանից իմ տունը քեզ համար պաս էլաւ, իմ աղջկայ անունն ես չեմ թողալ աշխարհքովը մին ըլնի. երկու շարաթ ձեզ ժամանակ, գնացէ՛ք, քարէքար դիպէ՛ք, թէ կարացիք մաղի զլուխը մի բան քցել (յաջողեցնել): Էս քո տունը, էս քո նշանածը, արի՛ զուրս քաշի տար, մօրդ կաթի սկս քեզ հալալ. թէ չէ՛ զուք ձե՛զ համար, ես ի՛նձ համար:

զօռով բան չի գլուխ գալ, ճակատներիդ ինչ գրած ա՛ էն պոի կատարուի: Ահա հէնց այս սառը պայմանն էր, որ Գալոյի տունը սզի մէջ էր դրել. հայրը մոլորուած՝ չը գիտէր ի՛նչ անէր, որդին երեք օր ցորեկը մթնասենեակից զուրս չէր դալիս, իսկ գիշերը Բարսեղենց պատի տակից չէր հեռանում: Ինչպէս ասում են՝ Սամփսոնի խոփը քարին դէմ եղաւ:

—Ե՛հ, վճռեց մի երեկոց էլ Սամփսոնը, ջուրն ընկնողն անձրևից չի վախիլ, էս էլ մի կեանք չի, որ քաշում եմ. ասում ա՛ պղինձը վէր ընկաւ չը կոտորուեց, բայց ձէնը վեր էլաւ. աշխարհքին յայտնի ա, որ ես Բարսեղի փեսացուն եմ, հիմի ես թողամ՝ իմ նշանածը ուրիշի ճանգն ընկնի ու ապրի՛մ. թո՛ղ որտեղ բարակի՛ էնտեղ կտրուի:

Այս խօսքերով նա կապեց իւր երկսայրի դաշոյնն ու քայլերն ուղղեց դէպի իւր սովորական պատի ճանապարհը:

—Ուրիշներն անձանթ տեղից աղջիկ են դուս քաշում, փախցնում, իրանց մուրագին հասնում. իմ Սօնին մի խօսք ասեմ, հետս չնդատան կերթայ. դնամ բերանիցը խօսք ասնեմ, էգուց իրիզուն ձին նստեմ, թարքս քաշեմ, գործակալի առաջին հետը չոքեմ, պրսակուեմ ու օրով ցերեկով կուռը բռնած՝ գեղը մտնեմ, տեսնեմ ո՞վ չի ասիլ՝ բարաքեալլա՛հ (հէցցե՛ս):

—Կա՛ց, Սամփսո՛ն, մեռանք քեզ ման գալով, Բարսեղենց պատի տակին շրջապատեցին նրան երեք չորս հոգի:

Մեղաւոր չէր Սամփսոնը, որ գլուխը երևակացութիւններով լիքը, միտքը օղի մէջ պտտելուս, նա առաջին անգամից չը ճանաչեց իւր ընկերների ձայնը և դաշոյնը պատենիցը հանեց ու կամենում էր իւր ճանապարհը կտորոգների վերայ յարձակուել:

—Ագա՛, մենք ենք, Սամփսո՛ն, Սօնայիդ արևը կը սիրես՝ դժուր թիւնդ յեա զի՛ր:

Սիրեկանի անունը նորա կուները թուլացրին, նա ուշքի եկաւ և ճանաչեց իրեն շրջապատողներին:

Ընկերներն ամեն բան պարզեցին նրան, խոստացան իւրեանց աջակցութիւնը, պատրաստականութիւն յայտնեցին Բալասան աղաչի դուռը կուպր քսել, տունը կրակել, տանուտէրի աջդին արմատահան անել, նորա ախոյեան Կարապետին էն աշխարհքն ուղարկել. բայց Սամփսոնը մերժեց բոլորը:

— Իմ խնդիրքս ձեզանից էս ա, իմ ազիզ աղօլէրնե՛ր, ասաց նա, որ էս տանիցը դուք մի քանի օր հեռու ման գաք, պէտք եկած վախտը ես ձեզ կը կանչեմ:

Ընկերները հեռացան սրտները կոտրած. իսկ Սամփսոնը բարձրացաւ պատուիւն և ոտքերի ծալքով մօտեցաւ լուսամուտին ու ներս նայեց:

Ոչինչ ձայն, ոչինչ շշուկ. ամենքը խաղաղ քնի մէջ են:

Բայց ահա ներսի մթութեան մէջ կրակ կտրած պատանուն քաջ ծանօթ կէտից, ուր նորա աչքերն էին յառած, մի ստուեր սպիտակին տուեց:

Սամփսոնի սիրտը ժամացուցի ճօճանակի նման սկսեց ճկճկալ, նորա բերանն անզիտակցաբար յետ բացուեցաւ, ձեռքն ու ոտքը բարակ ծղօտի նման՝ ինչպէս մի խիստ քամուց՝ կանդնած տեղը դողդողում էին. նա մխուած մնացել է տեղը, նորա ուշքն էլ իրան չի ղեկավարում, նորա աչքերը սևացան, մի բուպէ՛ և նա գետնոյն է զիպչելու և աղմուկ բարձրացնելու:

Յիրաւի նա ընկաւ, բայց մի գրկի մէջ. նորա ընկնելու ձայնը չը վեր ելաւ:

Սառել էր Սամփսոնի անձը, սակայն սկսեց տաքանալ, ջերմութիւնը սկիզբն առաւ ճակատիցը. այն ի՞նչ կրակ էր, որ ճակատի ուղիղ միջակէտից մի ակնթարթում տարածուեցաւ բոլոր ջղերի մէջ:

Այդ իւր նման քունը կտրուածի համբոյցն էր, որ ղիւթական բալզամի ազդեցութիւնը գործեց:

Այդ Սօնան ինքն էր. մի քանի ղիշեր է՝ մինչ հայրը ճանապարհ էր ցոյց տուել իւր ապսղայ թագ ու սպակին՝ Սօնան անքուն սատանայ էր դառել, մտնում էր անկողին, գլուխը բարձի տակը կոխում ու հեկեկանքների մէջ խեղդում, որ հայրը չը լսի իւր հառաչը, որ մայրը չը կշտամբի իւր յանդգնութիւնը:

Հայրն ուշք չէր դարձնում, բայց մօր սրտազգաց աչքերից չէր փախչում զաւակի երեսի թախիծը, նկատում էր իւր սիրելու զգալի կերպիւ փոփոխութիւնը, զուսատութիւնը, խոր ընկած աչքերը և իւր վիշտն իւր սրտումն էր խեղդում, ոչ մարդին, ոչ Սօնային էր մի բան ասում. ամուսնուցը վախենում էր, իրեն խստիւ պատուիրած էր Սամփսոնին ներս չը թողնել, աղջկանն էլ խնայում էր:

Զգում էր Սոնայի սիրտը. նա անհամբեր սպասում էր ամեն երեկոյ, նա մինչև անգամ զարմանում էր, որ երեք ղիշեր իր սրտի սիրելին կարողացել է համբերել ու պատր չը բարձրանալ:

Մի քանի անգամ նա ծնողաց խոր քնի մէջ մտած ժամանակ դուրս էր գալիս պատշգամբը, աչքերն ուղղում էր իւրեանց հարեան տան մթութեան մէջ նշմարուող լուսամտին, ժամերով կանգնում էր և նորից տուն մտնում:

Նիշերն այս գործողութիւնը անընդհատ կրկնուում էր: Հէնց այս բողբոջներից մէկն էր, երբ Սոնան չը թողեց վայր ընկնել իւր դրկի մէջ ապաստանարան գտած ուշագնացին:

—Ո՛չ, պատասխանեց աղջիկը Սամիսոնի վճռական քայլի դէմ, էդ ճամփէն ամեն սհաթ մեր առաջին ա, հօրդ ասա՝ թող էլի դէս ու դէն դիպչի, բալբի մի հնարքով պսակի հրաման բերի, թէ չէ որ բանն էդ տեղը հասնի, հինգ օր առաջ՝ հինգ օր յետ, ես քոնն եմ՝ դու իմը, քեզանից սավահի ուրիշներն իմ նաչս մենակ իրաւունք ունին էս տանիցը դուս տանելու:

—Բաս ես ո՞նց համբերեմ, անունիդ մատա՛ղ, երեք օր ա ես ոչ կենդան եմ՝ ոչ մեռած, մի օր որ քեզ չեմ գրկում, հէնց իմանաս՝ մահն ա շլինքս փաթաթուում:

—Հո՛ղս մահի գլխին, ո՞ւր եմ թողում, որ տեղս բռնի. ընչանք բանի գլուխ գալը՝ հօրն ու մօրս քնելուց յետոյ՝ քեզ կառնեմ, կը մանեմ մեր գոմի օդէն ու վզիցդ պոկ չեմ գալ՝ ընչանք աքլորի երեք բերան կանչելը. թէ որ մեր աքլորն էլ շուս կը կանչի, կը խեղդեմ:

Այդպէս էլ անում էին սիրահարները. հաւերը պատրաստուում էին թառից իջնել, որ Սամիսոնը հեռանում էր իր սիրելուց:

(Կը շարունակւի)

# ՏԵՆՊԵՐԱՄԵՆՏ

ԵՒ

## ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մի հոգեբանական եւ մանկավարժական հետազոտութիւն

Յ. ԲԱՐՍԻՈՒԴԱՐԵԱՆՅԻ

(ՆԻՒՐ ՀԱՅ ՌԻՍՈՒԾԻՉՆԵՐԻՆ)

Եթէ մենք բնութիւնը զիտենք, կը տեսնենք որ սա հասարակ, պարզ և միակողմանի չէ, այլ բարդ ու բազմակողմանի: Տեսէք, չարգելի ընթերցողներ, բնութեան գործերը. ինչպէս բազմակողմանի և բարդ են նոքա. չէք կարող գտնել երկու տերև, երկու ծաղիկ, որ միմեանց նման լինին. զոցանից իւրաքանչիւրը մի առանձին գործ է, որի նմանը չէք կարող գտնել, որ թէ՛ ձևով և թէ՛ գոյնով միւսից չը զանազանէր: Մտնենք մարդկային աշխարհը. չենք կարող երկու մարդ, երկու երեխայ գտնել, որ իրար նման լինին: Այ միայն մարդկային մարմինը, այլ և մարդկային հոգին զանազան է և կրում է իւր առանձնապատկութիւնները: Թողնենք որ այստեղ Պէրէ'ն խօսի. «Նրեք երեխայ, 8-ից մինչև 9 ամսական, նստած են կապերտի վերայ, սենեակի մէջ տեղը. ես խօսում եմ բարձր ձայնով, որպէս զի նոցա ուշադրութիւնը գրաւեմ և շտապում եմ կապերտի վերայ, երեխաների նստած տեղից մի մետր հեռու, մի փոքրիկ փայտէ ձի դնել: Նոցանից առաջինը ուրախութեան ձայներ է արձակում, բաց է անում իւր բերանը և նայում խաղալիքին: Երկրորդ երեխան նայում է նորան սառնասրտութեամբ: Անցնում է 5 վայրկեան, առաջինը բարձրացնում է իւր ձեռքերն և սկսում է ձեռքով անել և գլուխը առաջ է տանում: Երկրորդն ևս ձեռքերը բարձրացնում է, բայց աւելի հանդարտութեամբ քան թէ՛ առաջինը, աւելի հետևում է առաջինին: Երրորդը նայում է ինչպէս իւր ընկերները վրդովւում են և սկսում է ինքն էլ ձայներ հանել: Առաջինն այլ ևս չէ կարողանում իրան զսպել, առաջ է ձգւում և վալը է ընկնում կողքի վերայ, գլուխը

զարկելով չատակին: Նա լալիս է. ես բարձրացնում եմ նորան և նա սկըսում է կրկին շարունակել իւր առաջնայ գործը և չետոջ աշխատում է չորս ոտով մօտենալ ձիուն: Երկրորդը սուր նայում է խաղալիքին, երբեմն ևս նայում է իմ վերայու մի տեսակ ակնարկութիւններ է անում և պատրաստ է լաց լինելու: Իսկ ինչ երրորդին է վերաբերում, նա նայում է ինչպէս առաջինը սողում է գետնի վերայ, կարծես թէ նորան այդ է աւելի հետաքրքրում քան թէ ձին»: Այս օրինակից կարելի է տեսնել, թէ միևնոյն առարկայից առաջացած գրգիռի և ցանկութեան ոչժը որքան զանազան է զանազան անհատների մէջ:

Սակաճն այսպիսի զանազանութեամբ հանդերձ, բոլորս էլ միևնոյն բարոյական նպատակին ենք ձգտում, այն է՝ «ներքին ազատութեան»: Այս առանձնապատկութիւններն պէտք չէ ոտնակոխ անենք, որովհետև մենք չենք ցանկանում բարոյական մարդկանց միանման օրինակներ զարգացնել: Բացի դրանից, սուանց այդ առանձնապատկութիւնների, չէինք կարող մենք առհասարակ դաստիարակել, ինչպէս տուն չենք կարող շինել, առանց հիմք դնելու, որովհետև այդ առանձնապատկութիւնները դաստիարակութեան հիմունքներն են. ինչ կը լինէր դաստիարակութիւնը առանց անհատականութեան: Օղի մէջ շինած, առանց հիմքի մի տուն, մի լոկ արհեստ, մի մեքենապահանութիւն է, որ ոչ մի նպատակի ծառայել չէ կարող:

### I.

Իւրաքանչիւր մարդ գտնուում է հոգու և մարմնի զգալարանական (օրգանական) միութեան մէջ: Այս միութեամբն ենք մենք անհատականութիւն կազմում: Մարմինը ու հոգին միասին ստեղծում են մարդուս խոհական էութիւնը և մարդկային բնութեան էութեան չատկութիւններն են կազմում: Նախ նմանում ենք իրար այս տեսակէտից. սակաճն մարդուս այդ բնութեան վերայ իշխում է անհատականութեան օրէնքը, որի համաձայն ամբողջ բնութեան մէջ չկան երկու միանման էութիւններ. իւրաքանչիւր մարդ ունի իւր մէջ մի առանձնապատկութիւն, այսինքն՝ մի սկզբնական որոշումն, որը հոգու վերաբերմամբ կոչւում է տեմպերամենտ (Temperament):

Որ այսպիսի մի սկզբնական որոշում իւրաքանչիւր մարդու մէջ նկատել կարող ենք և որ դա անհատականութեան հիմքն է՝ հիմնած է փաստերի վերայ. սակաճն թէ այդ սկզբնական չատկութիւնը մարդ իւր հետ է աշխարհ բերում թէ ոչ՝ թողնում ենք առանց պատասխանի, ըստ որում շատ կը հեռանալինք մեր նիւթից. միայն այսքանը կ'ասենք, որ, եթէ մարդս այդ չատկութիւնը իւր հետ էլ աշխարհ չը բերէ, անշուշտ ծնւելուն պէս՝ նա կը ստանալ:

Այդ սկզբնական չատկութիւնների տարբերութիւնը հիմնած է ոչ թէ

միմիազն հոգու և մարմնի դանազան, տարբեր առանձնապատկութիւններէ ալ ալ փերջինից շառաչացած հոգու և մարմնի փոխադարձ չարաբերութիւններէ փերաջ: Մարմինը և հոգին միշտ իրար վերաջ փոխադարձաբար ազդում են՝ հոգին մարմնի և մարմինը հոգու վերաջ: Հոգին կախումն ունի մարմնից, ըստ որում նա վերջինի ճեալ կոչնած, թող, ուժեղ, զւարթ է: Ամբողջ մարմնի մէջ հոգին ևս առողջ է, մինչդեռ հիւանդ մարմնի մէջ հոգին ևս կրում է հիւանդութիւն: Մի կաթիլ արիւնը, որ հոտում է աննպասակ մեր մարմնից, կարող է մեր մտաւոր կարողութիւնը թուլացնել: Մարմնի փոփոխութեան ճեալ, որ սեղի է ունենում դանազան հասակներում, տեղի է ունենում դուզնթացաբար և հոգու փոփոխութիւն: Անր հոգին աճում և հասունանում է մարմնի ճեալ, ալ փերջինը երեխայական է՝ երեխայի մէջ, ծերացած և թուլացած է՝ ծերունու մէջ: Մարմնի հոգուց կախումն ունենալը երևան է գալիս դանազան դէպքերում: Անր մարմնի անդամների բոլոր շարժողութիւնները մեր հոգեկան զրութիւնների հետեւանքներ են. հոգին արտապատում է իւր միտքը նպակացրով, ձայնով, խօսքով: Նպակացքի մէջ սպրում է ցանկութիւնն ու փափազը, փալում է քաջութիւնը, խռովում սիրտը, մթնանում ավրութիւնը, դադարում բարկութիւնը: Հոգին ընծալում է ձայնին բաղմաթիւ գեղգեղանքներ. նա ստիպում է նորան երբեմն թնդալ հաստ ու դօրեղ, երբեմն ձշալ բարակ ու մեղմ. նա երբեմն փոթորիկի պէս անցնում է աղաղակելով ու շօինդ հանելով, իսկ երբեմն ցոյց է տալիս իւր վառ արամադրութիւնը, մաղասաւորութիւնը իւր ձղձուկն և կիսաձալն ձշումով: Լեզուի մէջ կատարելապէս ցոլանում է մարդու հոգին, ուստի և իրաւայի են դատում մարդու իւր լեզուով. «Ծօսիր, որպէս զի ևս քեղ տեսնեմ», ասաց Սոկրատէսը Խարմիտեսին: Բացի դորանից, հոգին շատ բաղմալան և բաղմանչան շարժողութիւններ է ընծալում մարմնի անդամներին, դրկիէ հոգու իւրաքանչիւր զրութիւնը նորա մէջ գտնում է իւր կատարելարտապատութիւնը: Զարմացածը ծափահարում է, բարկացածը ուրբում է իւր ձեռքերը, սպառնացողը ցոյց է տալիս իւր բռունցքը, բարկացածը արտփում է ոտներով (Drbal—Psychologie):

Հոգու և մարմնի այն փոխադարձ չարաբերութիւնը տեղի ունի նեարդերի միջնորդութեամբ: Բաց որովհետե թէ մարմնի կազմութիւնը և թէ նեարդերի համակարգութիւնը (սխտեմը) իւրաքանչիւր անհատի մէջ տարբերում են, ուստի հոգու և մարմնի մէջ տեղի ունեցող փոխադարձ չարաբերութիւնը իւրաքանչիւր անհատի մէջ տարբեր է:

Նեարդերի համակարգութիւնը բաղկացած է զգալութիւնների և շարժողութիւնների նեարդերից, որոնցից առաջինը ոչ թէ միմիազն մեր սեպհական մարմնի զրութեան լրաբերն է, ալ և արտաքին աշխարհի երեւոյթները զրգիւնների ձեով մեր հոգուն հասցնողը: Աերջինները սակաչն հոգուց են դուրս գալիս և ուղեւորում դէպի միանունքներն, որոնցով շար-

ժողովիւններն են չառաջացնում անդամների մէջ, որով հողու իրաւունքն և հրամանը կայտարարւում են: Այդ վերջիններն հողու մի տեսակ ծառաներն են, որոնք արիւղ ամեն մի սրաւէրը տեղ են հասցնում: Մի խօսքով՝ այդ նեարդերը ծառայում են ինքնագործունէութեան համար: Աւրեմն ազդեցութեան չարարելութիւնը ոչ թէ միմիայն տեղի է ունենում մեր սեպհական բնութեան չրջանի մէջ, այլ և մեր սեպհական բնութիւնը կախումն ունի մեզ չրջապատող բնութիւնից: Հողու և մարմնի մէջ տեղի ունեցած փոխադարձ չարարելութեան գործարանն է նեարդային սիստեմը (համակարգութիւն), իսկ մարդուս և արտաքին աշխարհի միջի գործարանը զգալարանքներն են:

Ոչ սք չէ կարող արտաքին աշխարհի ազդեցութեանը դիմադրել, ըստ որում ոչ սք չէ կարող հողու դոներն, զգալարանքները բոլորովին փակել: Մարդս ամբողջութեան միայն մի մասն է, այդ վերջինի զօրութիւնից չէ կարող հեռանալ: Քիչ նշանակութիւն չունի նաև, թէ ինչ ծնողներից ենք ծնւել և ինչ տեղ ենք կրթւել, ինչ հողի վերայ ենք մեծացել:

Նոյնպէս ճիշդ է, որ բնութեան միևնոյն իրերն իւրաքանչիւր մարդու վերայ միակերպ չեն ազդում: Ինչ բան մէկին ողորում է, միւսը ընդունում է նորան ստանձարտութեամբ: Ով ուզում է թող գիշերով հիանայ, զմայլւի լուսնեակի վերայ, բայց ես, ասում է Վակերնագիւր իւր դասախօսութեան մէջ, մէկին գտայ, որ զգում էր լուսնեակի գիշերից և այդ պարոնը բանաստեղծ և երաժիշտ էր: Ահաւասիկ հետեւալն է պատմում Դիտմերը:

«Մի բաղմանդամ ընտանիք մի առաւօտ կանգնած էր իրանց սրտչգամբի վերայ: Բնութիւնը իւր զեղեցիկութիւնը մի տեսակ հպարտութեամբ ցոյց էր տալիս: Արևելքում երևում էին արեղակի փայլուն ճառագայթներն, իսկ լուսնեակին, ուժը կորցրած, իր դժգոյն դէմքը հեռուից ցոյց էր տալիս: Բողոքեկան հիանում էին այդ զեղեցիկ տեսարանով. սակաճն անդամների մէջ մէկը դանձեց, որ երեսը շուտ տալով դէպի անդամներն՝ ասաց.— ինչ կայ այստեղ տեսելու, միթէ իւրաքանչիւր օր չէք տեսնում միևնոյն արեղակը, միևնոյն լուսինը և միևնոյն բնութիւնը»:

Այս օրինակից վատչ սանք հետեւալ հարցը. սրտեղից է չառաջանում բնութեան այս տարբեր ազդեցութիւնը և ներգործութիւնը մարդկանց վերայ: Այս հարցին շատ հեշտ է պատասխանել: Ինչպէս վերեն ասացինք, հողու և մարմնի փոխադարձ չարարելութեան գործարանը նեարդերի սիստեմն է, մարդուս և արտաքին աշխարհինն էլ զգալարանքներն են. ուստի եթէ նեարդերի զրգիւն և ուժը դանձողան անհատների մէջ տարբեր են, ապա պէտք է արտաքին աշխարհի սպաւորութիւններն էլ տարբեր լինին: Ուրեմն մեր նեարդային սիստեմի բնաւորութեանց ցատկութիւնների չնորհիւ մեզ չրջապատող արտաքին աշխարհի սպաւորութիւններն էլ տարբեր են ազգում իւրաքանչիւր անհատի վերայ: Բայց այդ սկզբնական նեարդային սիստեմի ցատկութիւններն ժամանակի ազդեցութեան տակ չեն փոփոխ-

ւում, այլ իրանց նախկին դիրքի մէջ ամրանում են: Նեարդալին սխտեմի անփոփոխ չատկութեանց հետևանքն՝ հոգեկան դրութիւններն անփոփոխ չատկութիւնն է: Հոգու դրութեանց անփոփոխ չատկութիւնը ուժի և գըր-գիւռի վերաբերմամբ, եթէ այդ վերջինը նեարդալին սխտեմի անփոփոխ չատկութեանց հետևանքն է, կոչւում է տեմպերամենտ:

Աչքի առաջ ունենալով տեմպերամենտի նշանակութիւնը դաստիարակութեան համար, մանրամասնօրէն քննենք այս ինդիքն և մի առ մի թւենք տեմպերամենտի չատկանիչ կէտերը: Հիմնելով մեր վերևում ասածների վերայ, նկատենք որ իւրաքանչիւր անձնաւորութիւն առանձին մի տեմպերամենտ ունի. սակայն եթէ աւելի մանրամասնօրէն քննելու լինինք, իւրաքանչիւր անհատի հոգեկան դրութիւնների բնական չատկութիւնները կարող ենք չորս տեմպերամենտների բաժանել.

1. Արիւնալին (sanguinischer Temperament) կամ սանգւինական
2. Բարկացիտո (cholericher                   »           ) —խօլերական
3. Մելամաղձոտ (melancholischer           »           ) —մելանխօլալին
4. Մաղասալին (flegmatischer                   »           ) —ֆլեգմալին

## II.

### ԱՐԻՒՆԱՅԻՆ ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

Արիւնալին տեմպերամենտի էական չատկութիւնն է դիւրագրգիռ լինել արտաքին տպաւորութիւններն ընդունելու, սակայն ոչ լուսանկարչի թերթի նման, որ մեքենապարար ընդունում է արտաքին տպաւորութիւններն, այլ որպէս մի կենդանի էակ, որը արտաքին աշխարհին ընդդիմադրում է և ներգործող է: Արտվհետև սանգւինիկը կախումն ունի ներկալի փոփոխութիւններից, ուստի և նա ապրում է ներկալումս և ներկալի համար: Այս տեմպերամենտի դրական կողմն է, ինչպէս վերեն ասացինք, հեշտ ըմբռնելը, հեշտ գրգռւելը և ուշադիր լինելը հետաքրքրական երևութիւներին, ոգևորող իդէալներին: Ահաւասիկ սոքա են լաւ կողմերն:

Եթէ մենք այդ տեմպերամենտը կրողի էական չատկութիւններից մէկը զւարճութիւնն ենք համարում, այդ նորանից է, որ նա կեանքի վատ կողմերի վերայ շատ չէ մտածում, ապա թէ ոչ կեանքը նորա համար դրական բարիքներ չէր ունենալ: Նա աւելի իրերի և զանազան դէպքերի լաւ կողմերն է գուրս բերում, քան թէ վատը: Բացի դորանից գրգըռման փամփոփ ընդունակ է նա խօսուին համարձակ վճիռներ տալ և մինչև անգամ իւր կեանքը զոհ բերել: Բայց այդ չարատե չէ, նա ուզում է շատ բան և գործում է քիչ. նա դրադմունքից շուտ չօգնող է: Սանգւինիկը ընդունակ է մինչև անգամ կեանքի բոլոր դրութիւնների մէջ մտնել. նա տրամադիր է բոլոր տեսակ զւարճութիւնների, լինին դոքա թէ մտաւոր և

թէ ֆիզիքական: Նա անհող է, փամանակի զաւակ է, իւրաքանչիւրին հաւատ ընծայող և չտող իսկոյն զղջացող, ուստի և սանգւինիկն է մի բնական անդամ ընկերութեան: Նա ուզում է որ բոլորեքեան իրան հաւանեն: Նա քաղաքավարի է, զւարճախօս և փալլուն երևակալութեան տէր է:

Ո՛վ չէր ուրախանալ սանգւինիկի լաւ կողմերի վերայ: Բայց մի մոռանալ, ընթերցող, ուր որ շատ լոյս կա, աչնտեղ և շատ սոււեր կա, սանգւինիկի այլ դիւրագրգուլթիւնը, գիւրմըռնողութիւնը և արագ եզրակացութիւն կապացնելն տանում է նորան դէպի արտաքինը և ճոխարանութիւնը: Նա չէ սիրում մի բան ամուր պահել. նա դիմում է ամեն բանի միակողմանի կերպով: Նորա հալեացքներն ընթանում են միշտ արագութեամբ, նա համոզմունք չունի: Նա խոստանում է, բայց խօսքը չէ պահում, որովհետև նա առաջ խորը չէ մտածել, թէ արդեօք իւր խոստմունքը կատարել կարող է: Նա չափազանց բարի է և ընդունակ է ուրիշներին օգնելու. նա իսկոյն ձգում է իրան, որպէս փամանակի զաւակ, մի որ և է կուսակցութեան մէջ: Ուրիշների հաւանութեան արժանանալու համար՝ նա արտաքին փալլի է ձգտում:

Սիրելի ընթերցող, նայիր վրայ, ուսումնասիրիր քո կեանքը և քո «ես»-ը. «ժանճիր գըզ», գուցէ դու ես պատկանում ես այդ տեսպերամենտին:

Ոչ թէ միմիայն հին հելլենական ազգն, այլ և ժամանակակից ազգերի մէջ շատերը կան, գլխաւորապէս երեսանների և աշակերտների մէջ: Արիւնաին տեսպերամենտն աւելի բտուկ է քաղաքների քան գիւղերի մանուկներին: Պարզ է որ գիւղական երեսաւի միակողմանի կեանքը, չըրջապատող բնութեան, մարդկանց և սնունդի միակողմանի լինելը խանգարում են սանգւինական տեսպերամենտի զարգացմանը: Մինչդեռ քաղաքի ճոխ և փարթամ կեանքն աւելի զարկ է տալիս վերոյիշեալ տեսպերամենտի զարգացման: Մենք վերեւում որոշեցինք սորա լաւ ու վատ կողմերն և նոյնպէս վիշեցինք, որ սա աւելի բտուկ է մանուկներին: Ուրեմն ինչպէս պէտք է լինի առհասարակ ծնողների և դաստիարակների վարմունքի եղանակը դէպի այսպիսի մանուկներն:

Որպէս վատ կողմեր այս խառնածքի կարելի է համարել՝ ցրւածութիւն, արտաքին փալլի ձգտումն, շատախօսութիւն, ինքնահաւանութիւն և փոփոխամտութիւն: Եթէ մանուկը սկսում է իւր արտաքինի մասին մտածել, շատախօս լինել, որն և սանգւինիկ մանկան գլխաւոր բտուկութիւնն է, պէտք է արգելել նորան մտնել հասակին անհամապատասխան ընկերական շրջանի մէջ և սովորեցնել նորան լուռ լինելն, ոչ մի փամանակ չը գոմել նորա լաւ վարմունքը, այլ ցոյց տալ, որ նոր ասարածն ամեն մարդ կարող է կատարել. մի խօսքով նորա լաւ կողմերին մանկան առաջ մեծ նշանակութիւն չը տալ, բայց և չը մոռանալ՝ նորան այնպիսի դրութեան մէջ ձգել, որ նոյնը երկրորդ անգամ կրկնէ, մինչև սովորութիւն դառնալ նորա համար այդպիսի վարմունքը:

Յրևածութեան դէմ պէտք է կուսել հետաքրքրական, մտածական ուժը զարգացնող դաստաստութեամբ, որը լարած ուշադրութիւն է պահանջում: Վերջապէս տանք մեզ հետեւեալ հարցը, ինչ կարող է դառնալ այս տեմպերամենարը: Իսկ այս հարցին կարելի է պատասխանել մի ուրիշ հարց տալով: Արդեօք Շիլլերը, Հայնէն, Լայբնիցը, Վոլտերը սանդղինիկ էին թէ ոչ: Այս հարցին պէտք է զրահան պատասխան տանք, և այն ժամանակ կ'ունենանք առաջին հարցի պատասխանը:

## III.

## ԲԱՐԿԱՅՈՏ (խոլերական) ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

Վերադիչեալ զիւրազրդիտ տեմպերամենարին հետեւում է տաքարիւն խոլերականը: Առաջինը զգալութիւնների տեմպերամենարն էր, իսկ՝ սա գործունէութեան: Խոլերականը գործում է ներկայումս, աչքի ստաջ առնելով անցեալը՝ ապագան բարենորոգելու համար: Այս խօսքերիցս երևում է, որ խոլերականի գեղեցիկ կողմն է գործելու ուժը: Խոլերականը նոյնպէս ունի սանդղինիկի դիւրըմբռնողութիւնը, սակայն ոչ թէ առաջինի նման մանրակրկիտ է և փոփոխամիտ, այլ միմիայն մի մտքով է լարած. ալզ կարող է լինել՝ պատիւ, ազատութիւն, ճշմարտութիւն. նա աշխատում է միմիայն մի զաղափարի նւիրել իրան: Սորա համաձայն նորա զգացումները միշտ անբաժան են կրքից. նա կամ իւր անձի համար է միայն, կամ ազատութեան ոգևորւող բարեկամ, կամ ստրկութեան ոխերիմ թշնամի է:

Այս զգացումները հիմնւած են ուժեղ մտապատկերների փոխադարձ շարաբերութիւնների վերայ, ուստի և չառաջացնում են խոլերիկի մէջ հաստատ և ուժեղ կամք: Այդ վերջինի հետ և չառաջանում է ինքնազիտակցութիւն, այսինքն՝ ճանաչումն իւր սեղհական (սո)-ի: Ուստի նորա կամքը հաստատ վճռող է, բայց ոչ խկոյն գործին զիւտող, ինչպէս սանդղինիկը: Նորա կամքը չէ նմանում գիսաւոր ատողի, այլ հաստատ և շարասե է. նա սիրում է նախ մտածել, խորհել, աշխատել. նա ատում է վերացական զաղափարների վտակից ընկնելը, աւելի ուրախութեամբ զբաղւում է նա ծրագիրներով և գործով: Խոլերիկը սիրում է ճշմարտութիւնը, նա ատում է ծուռ ճանապարհները. նորա համար նոյառակն չէ արդարացնում միջոցը: Խոլերիկը կարող է սիրել, այն էլ երկարատե սիրով վառուել, բայց և այնպէս կարող է նա նոյն չափով ատել: Բնութեան և արեւոտի մէջ սիրում է նա նշանաւոր գործերը, իսկ գիտութիւնների մէջ՝ գործնականը:

Մինչև այժմ մենք գործ ունէինք այս տեմպերամենարի լաւագոյն կողմերի հետ. այժմ թւենք նորա վատ կողմերը:

Վերեր նկատեցինք, որ նորա էական ցատկութիւնն է՝ գործել, կամքի ուժը: Բայց այդ ուժը չէ կանգնած մի որոշեալ սահմանի վերայ, չը կաջ

մի որոշ չափ, տեղն ընկած տեղը՝ անցնում է նա իւր չափից: Իւրաքանչիւր ընդդիմադրութիւն մղում է նորան զէպի մարմնական ուժը. ուժեղ հակառակորդները առջև նա կրքոտ է, բարկացկոտ և անխրաւացի: Նորա բարկութեան լաճախ հետևում է արիւնհեղութիւն: Նորա հիմնական լատկութիւններից մէկն է կամակորութիւնը. նա ամեն գործի մէջ ստակալի կամակոր է: Նապօլէօն առաջինը պատկանում էր այս տեմպերամենտին: Իւրաքանչիւր գործ լառաջացնում էր նորա մէջ նոր զրդիւններ: Պատերազմի ժամանակ մտածում էր նա խաղաղութեան լաջող դաշնագրութեան մասին, գաշնագրութիւնից վետո՛ւ՝ թէ ինչպէս պէտք է կրկին աղ վերջինը քանդել: Ֆրանսիայում նստած՝ մտածում էր նա Ռուսաստանի մասին, Ռուսաստանում— Հնդկաստանի մասին: Նոյն իսկ ս. Հեղինէ կղզու վերայ գրադեցնում էին նորան իւր կամ ուրիշ զօրավարները, ինչպէս Կեսարի, գործերի նկարագրութիւնը: Նորա բոլոր գործերի մէջ աչքի էր ընկնում իւր սեպհական «ես»-ը: Այդ վերջինը խոլերիկի մէջ իւրաքանչիւր զէպքում ուզում է իշխող լինել, մեծ դեր կատարել. խոլերիկը ուզում է ամեն ինչ ինքը արած լինի, ամեն բանի վերայ ինքն իշխող լինի: Նա լաճախ օգնում է թողլին, ոչ թէ միմիայն օգնելու նպատակով, այլ որպէս զի իւր սեպհական «ես»-ը փալկէ: Հէնց այդ պատճառով նա պաշտում է ձեռակաշնութիւնը և արտաքին փալը:

Խոլերական տեմպերամենտին են պատկանում բոլոր մեծ քաղաքագէտները, զօրավարները, վերանորոգիչները: Մի խօսքով այդ տեմպերամենտի օրինակներ առատ կարելի է գտնել ազգերի պատմութեան մէջ: Թող վիշեք Մոլիսին՝ Իսրայէլացոց օրէնսդրին և հովւին, Աղէքսանդր Մեծին, Ֆրիդրիխու Երկրորդին, ազգերի ճնշող Նապօլէօնին, քարասիրտ Գրիգոր VII-րդ պապին և մեծ վերանորոգիչ Լիթերին. իսկ նոր ժամանակներում Բիսմարկին (Eiserner Kanzler):

Այս տեմպերամենտը թէև գտնւում է երեխաների մէջ, սակաջն նոյնպէս սակաւ, ինչպէս հասակն առածների մէջ:

Ընթերցողներ, չէք տեսել վալրենի, չարամիտ երեխաներ, որոնք ձգտումն ունին գործելու թէկուզ զէպի չարն. չէք տեսել ընտանիքներ, որոնք իրանց չար պատուհասից զվւում են, որը ամբողջ ընտանիքն իրանով է դբաղեցնում, իրատ, խօսք, լաց, սրադատանք չէ լւում: Չէք տեսել մանուկներ, որոնք սիրով և ուրախութեամբ ուզում են սովորել, հետաքրքրւում են և հարցասէր են ամեն բանի մէջ: Մանուկներ, որոնք աննկատելի կերպով ըմբռնում են աջն, որին ուրիշները սխտեմական դարգացման ձանապարհով են հասնում, մանուկներ, որոնք արդէն ստացել են ինչ որ պէտք է մատակարարէինք, մանուկներ, որոնք ուզում են ամեն բանի մէջ խառնուել, փորձել: Ի՞նչպէս պէտք է այժմ պապիսի մանուկներին կրթել: Ազգայիններին դուցէ ընթերցողը կարծէ թէ հնչա է կրթել, դատախարակել, սակաջն նա մեծ սխալ գործած կը լինի, ըստ որում մենք

վերևում տեսանք, որ նորա կամքի ուժը մի որոշ չափ չունի, նա չաճախ անցնում է իւր սահմանից, այսինքն կարող է իւրաքանչիւր դէպքում իրան կորցնել: Այս դէպքում թողնենք Wackeznagel-ին խօսելու. «Նորա սանձը բաց չը թողնել, բայց և աչնպէս նորան անբնական սահմանների մէջ չը ձգել, ուրիշ խօսքերով՝ շատ չը ճնշել»:

Եթէ նորա սանձը, ղեկը մեր ձեռքին չը պահենք, աչն ժամանակ կը ստանանք մենք կատարեալ վայրենի տիպ, որից ամենաչն չարամտութիւն, անբարոյականութիւն սպասել կարելի է: Խսկ եթէ աշխատենք նորան բուրովին ճնշել, աչն ժամանակ ճնշումից աղատելուն պէս կը նմանի մի վայրենի ձիու, որով մենք ճանապարհորդել ենք ուզում և անշուշտ ամեն մի բուպէ պէտք է մի փորձանքի սպասենք:

Ուժի դէմ ուժ գործ զնելով՝ կը հասնենք կամակորութեան: Այս դէպքում ուսուցչի և աշակերտի չարաբերութիւնը կը նմանի պատերազմական դրութեան: Խողերական երեխայի դաստիարակութեան համար հարկաւոր չեն գինւորւած և խիստ մարդիկ, այլ մարդիկ, որոնք ամենաչն ժամանակ կարող են սառնասիրտ լինել և աշխատել երեխայի հոգու մէջ մտնել, խօսքերով աղղել, հասկացնել, պարզել նրանց զբաղմունքը:

Աչն ժամանակ միաչն ուսուցիչը կարող է օգուտ բերած լինել, աչն ժամանակ միաչն կարողացած կը լինինք սպապալում ազգին, պետութեան, եկեղեցւոյն մեծ մարդիկ տալ: Սխալ չէ ասում Կոմենիոսը այս տեսնելու մեծութիւն պատկանող երեխաների մասին. «Աչսպիտինները ուսումնարանում ատելի են. սակաչն կարող են մեծ մարդիկ դառնալ, եթէ մարդ նոցա հետ վարուելու եղանակը խմանալ»:

## IV.

## ՄԵԼԱՄԱՂՁՈՏ (մեղանխողային) ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

«Եթէ արիւնային տեմպերամենտը նմանում է ժպտող պարնանը, խողերականը—տաք և սօթ ամբանը, ապա մեղամաղձտը նմանում է ամպամած, տխուր աչնանը»:

Մեղանխողային տեմպերամենտը մի կողմից խողերականի, միւս կողմից արիւնայինի հակառակն է. եթէ խողերականը ձգտում է գործունէութեան, ապա մեղամաղձտն աշխատում է իրան հեռու պահել, ապրել ներքին աշխարհով միաչն: Յիշողութիւնը նորա գործունէութիւնն է: Եթէ սանդւինիկը զանազան սպաւորութիւններ հեշտ է ըմբռնում, ապա մեղանխողիկը զիմաւորում է արտաքին աշխարհին բոլորովին սառնասիրտութեամբ: Նա շատ զժւար պրոպոսու է: Նորա սիրտն օտար տարաւորութիւնների համար բոլորովին անմատչելի է. նա չէ կարող ասել և բացատրել աչն, ինչ որ զգում է, նա նմանում է մի ոչխարի, որի գէմբից երեսում է, որ անմխտ է և իրան օգնել չէ կարող: Սակաչն երբ նա իւր զգացածը մշակում է, որ կարող է

տեղի ունենալ միաջնակութեամբ, այն ժամանակ նորա գիտեցածը ամենահիմնաւորն է և նորա գործունէութիւնն ամենալարատեւը. ուստի այս տեմպերամենտը պարունակում է իւր մէջ ոչ սանգւինիկի թուրութիւնը, ոչ էլ խոլերիկի չափազանց ուժը, այլ այդ երկուսի մէջ տեղն է գտանւում:

Հետեաբար մեղանխողիկի վերաջ աղղողը ոչ ախթարթն է և ոչ էլ անմիջական գրգիռը, այլ այն աշխարհը, որ իւր ներսում արդէն կազմակերպուել է. նորա անփալ աչքերն ոչ թէ դէպի արտաքինն են ուղղւած, այլ դէպի ներքինը:

Ուստի և մեղանխողիկը չէ սիրում ըստէական ներկան և ճոխ աշխարհն, այլ միաջնակութիւնը և խորին լուութիւնը, ուր նա կարող է անցեալի վերաջ մտածել: Նորա գործունէութիւնը կապնում է գլխաւորապէս անցեալի շնորհութեան մէջ, և եթէ անցեալը նորան չէ գոհացնում, այն ժամանակ շնորհութեան փոխարինում են չուտոյ երազներ ապապալի վերաբերեալ:

Ուրեմն եթէ սանգւինիկը ապրում է ներկալի և խոլերիկը ապագալի համար, ապա մեղանխողիկը ապրում է անցեալի համար: Եթէ սանգւինիկին աշխարհս ներկայանում է իբրև մի ժպտող պարտէզ, խոլերիկին մի ահարկու պատերազմական դաշտ, ապա մեղանխողիկին՝ մի հանգստարան, որի մէջ միմիայն խորին լուութիւնն է իշխողը: Եթէ սանգւինիկի սիրած երգն է «Աւրախասացուք ուրեմն» (Gaudeamus igitur...), ապա մեղանխողիկին՝ «Ունձ համար չէ գարնան գալը...»

Որովհետև մեղանխողիկը արտաքին աշխարհի աղղեցութիւնից անկախ է, ուստի նորա զգացութիւններն և զգացումները չարատեւ են, ըստ որում այդ վերջիները չեն ազդում ներկայ երեոյթներից: Հէնց այդ հիման վերաջ, նորա կամքը չարատեւ և անփոփոխելի է, նա չամբընթաց է, դժւար հասկացող և ամեն բանից անբաւական:

Սակայն այդ լաւագոյն կողմերի հետ սերտ կապւած են և վատ կողմեր, ըստ որում անցեալում խորասուզւելուս հեռանում է նա ներկայիցս, որովհետև չեղում է ապագալի մասին ուղիղ կարծիքից, համոզմունքից:

Ահա այս կէտումն է կապնում մեղանխողիկի վտանգաւոր կողմը. ներկան չը հասկանալով ձգում է նա իւր երեսին մի սև քօղ, որով և երևում է կեանքից արդէն դադարած, լողնած և կուշտ: Զգելով այդ սև քօղն իւր երեսին, նա ձգտում է ինքնահաւանութեան, որն և միմիայն կախումն է ունենում իւր սեպհական տրամադրութիւնից և զգացումներից, որն և հեռու է մտում իրական կեանքի խնդիրների վերլուծումից: Այսպիսով հեշտութեամբ ընկնում է նա մանրագրողութեան լիտից և սկսում է կատկածանքով վերաբերուել դէպի իւր մերձաւորն և անբաւական լինել Աստուծոց:

Բայց չը նախելով այս խաւար կողմերին, այս տեմպերամենտին են պատկանում բազմաթիւ բռնաստեղծներ, փիլիսոփաներ և գլխաւորապէս ներկայ սրբազան պատմութեան մէջ գտնում ենք մենք երկու խոր մտածող

անձեր՝ մէկը հինի, միւսը նորի մէջ. այնտեղ Երեմիա մարդարէն, իսկ ալստեղ Յովհաննէս առաքեալը. այդ վերջինը ի հարկէ խառնուող է խուրական և միլանխոլալին տեմպերամենտների՝ Թող չլի՛ն՝ ընթերցողը այդ վերջինի երկասիրութիւնները, նորա աւետարանը, որ մեզ սովորեցնում է թէ ինչպէս պէտք է մենք հաւատանք, նորա նամակները՝ թէ ինչպէս պէտք է իրար փոխադարձաբար սիրենք, և նորա շարունակութիւնը՝ թէ ինչպէս պէտք է շուտանք: Երեք աւետարանիչները նկարագրում են մեզ Տիրոջ պատկերի արտաքինը, իսկ նա՝ ներքինը: Յիշենք նոյնպէս Սոկրատէսին, որ, մուսանալով կեանքի կենդանութիւնը, ընկել էր մտածողութիւնների մէջ և խորհում էր մինչև իւր վերջին րոպէն Աստուածային զօրութեան մասին: Յիշենք ժամանակակից բանաստեղծներից՝ Լորդ Բայրոն, Նիկոլայոս Լենաու և այլն:

Նոյն տեմպերամենտին է պատկանում մեծ փիլիսոփայ Ալլնոտան, որը վաճառում իսրաէլական ժողովարանից (սինագոգ), առանձնացած էր իւր սենեակում և թողնում էր այդ վերջինը միմիայն այն ժամանակ, երբ մի ճանճ էր բռնում և ձգելով սարդերի որոգայթը՝ նստում սարդի և ճանճի պատերազմին: Այդ առիթ տաւ նորան արտասանել այն միտքը, որ աշխարհն է պատերազմական դաշտ և կենդանի էութիւնները՝ պատերազմողներ. բնութեան օրէնքն է՝ ուժեղը պէտք է թուլին կլանէ, ոչնչացնէ:

Այս տեմպերամենտը դառնում ենք նաև Լիւթերի օգնական հուշակաւոր Փրիլպպոս Մելանխտոնի մէջ: Մինչդեռ Լիւթերը պատերազմում էր իւր կատաղի թշնամու՝ պապականութեան դէմ, Մելանխտոնը, որպէս Praeceptor Germaniae «Բողոքական վարդապետութեան սերմերը» ցանում էր 2000 Լիւթերիները ռասանողների արտերի մէջ և խօսակցում էր նոյն նիւթերի մասին տասն և մէկ լեզուներով իւր սեղանակիցների հետ: Մինչդեռ Լիւթերը Վորմսի ժողովում իւր դաւանութիւնն է խոստովանում, Մելանխտոնը լուծեամբ չօրինում է Ասպարուրդի խոստովանութիւնը (confession): Մանենք մանուկների աշխարհը՝ Նալս տեսնենք թէ այս տեմպերամենտն ինչպէս է երեխաների մէջ արտայայտուում: Յիշենք, որ մելանխոլիկը մի տեսակ ձգտումն ունի մտնելու բնութեան ծածկւած խորութիւնների մէջ, մտածելու Աստուածայինը, հոգեկանը, զիւականը: Նա մի տեսակ սիրով է վերաբերում դէպի դարմանալին, խորհրդաւորը. ուստի մենք չենք սխալւիլ, եթէ ընդունենք, որ նա հակումն ունի դէպի կախարդալինը և անբնականը: Եթէ երեխալի մէջ արդէն նկատուում է, որ նա աւելի ներքինն է զիտում քան թէ արտաքինը, այն ժամանակ կարող ենք դուշակել, որ այդ երեխան պատկանում է միլանխոլիկ տեմպերամենտին: Եւ եթէ դաստիարակը նկատում է, որ մանուկը հոգեկան, վերացական մտքերով է հետաքրքրւում, պէտք է անուշաղիւր չը թողնի այդ կողմի կատարելապէս զարգացման նպատակուն և ոչ էլ կատարութեամբ խորտակէ երեխալի երեւիպետութեան աշխարհը: Եթէ մենք թողնենք մանկան,

որ նա խորասուզի հողեկանի, վերացականի մէջ, այն ժամանակ նրանից կարող ենք ստեղծել մի նախապաշարած, կախարդութեան պաշտող էակ. ուրիշ խօսքերով, կը բացենք մենք անսանձ երևակալութիւնների դռներն: Երկրորդ զէպքում խորտակելով նորա երևակալական ուժը, կը փակենք նորան իւր մտածման շրջանի մէջ և մեղանխողալին տեմպերամենտի մի կատարեալ պատկեր կը ստեղծենք:

V.

ՄԱՂԱՍԱՅԻՆ (Ֆլեգմալին) ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ

Շատերը կարծում են թէ այս տեմպերամենտը աւելի վատ կողմեր, աւելի պակասութիւններ ունի, քան թէ առաջիններն: Սակայն կ'աշխատենք այդ կարծիքները լուրորովին ջրել, ցուց տալով որ սա ևս նոյն չափով ինչպէս առաջիններն, իւր լաւ կողմերն ունի: Մաղասային տեմպերամենտի էական լատկութիւնը կալանում է հոգու հաւասարակշռութեան մէջ, որի ներքոյ հասկանում ենք զդալութեանց չափաւոր ընդունակութիւն, ոչ թէ խստառ անզգալութիւն, ինչպէս շատերն այս տեմպերամենտի վերաբերեալ կարծում են: Հետևարար վերոյիշեալ տողերից կարելի է եզրակացնել, որ այս տեմպերամենտի դրական կողմը կալանում է հոգու հանգստութեան, խաղաղութեան, հողեկան ուժերի հաւասարակշռութեան մէջ: Ֆլեգմատիկը թշնամի է շտապելուն, արագ մտածման և գործունէութեան. նա ամեն բանի համար ժամանակ է պահանջում, գործում է կամայ, սակայն հիմնաւոր կերպով է հասնում իւր նպատակին:

Ֆլեգմատիկի լաւագոյն կողմերից մէկն կարելի է համարել այն, որ նորա սիրտը չնորձիւ հողեկան հանգստութեան հետու է լուրր ճնշումից, զգացումներից և կրքերից և վազելում է կատարեալ ազատութիւն. նա ոչ սատիկ ուզեորտղ է, ոչ էլ խոր ընկզմող մի որ և է գործի մէջ, ուստի և աղատ է շատ բարոյական սխալմունքներից:

Մաղասայինը սիրում է հանգստութիւն և ատում է աշխատութիւնը և գրադմունքը: Նա դիմադրում է լուռ և հանգիստ տպաւորութեանց և նորա ընդունածները լինում են լարատե և հաւատարիմ: Նա շատ սակաւ է բարկանում, ամեն մի ջնչին բանի համար նա իւր հոգու և սրտի հանգստութիւնը չի խանգարիլ: Բայց այս հանգստութիւնը, ծածկած պանդաղկոտութեան քօզով, բնութեան և մարդկային կեանքի ամենազօրեղ ուժն է: Սա չաղթում է իւր լարատեութեամբ ներքին և արտաքին կեանքի մէջ տեղի ունեցած լուրր մեծ արդեւքների:

Բնութեան այս լուռ և աննկատելի աղբեղութիւնը ֆլեգմատիկի ամենահաւատարիմ պատկերն է: Ֆլեգմատիկի կամքն արագ վճռող չէ, սակայն և թէ նա մի բան վճռում է, այն ժամանակ ոչ մի արդեւքից չէ քաշ-

ուում, համբերութեամբ և չարատևութեամբ ամենամեծ ղեւարութիւններին առաջն առնելով՝ հասնում է նա իւր նպատակին, որի ազգեցութեան ներքոյ լաւաջանում է նորա մէջ չափաւորութիւն և սովորութիւն ղէպի բարին: Երկու օրինաւոր չատկութիւններ ունի Փլեգմատիկը՝ սէր ղէպի կարգապահութիւն և մաքրութիւն: Գլտտի և այս տեմպերամենտն է խորհող զիւս անողներին, աշխատասէր մեքենաղէտի, լաւ քաղաքացու, հանգիստ մշակի տեմպերամենտը, որոնք իւրաքանչիւր օր, թէև ոչ ոգեւորած, բայց և այնպէս ամենայն ճշդութեամբ կատարում են իրանց պարտքը և իրանց կատարածը ամենալաւն և ամենալաջողն է:

Հանգստութիւնը, կրքից հեռու լինելը, համբերութիւնը և հաստատ կամքը մաղասացին տեմպերամենտի զրական կողմերն են: Սորան աւելացրու նոյնպէս սրտի ուրախութիւնը, լաւ տրամադրութիւնը: Զեզանից ուլ չէ տեսել, ընթերցողներ, ընկերական շրջանների մէջ անձնաւորութիւններ, որոնք պարզ և զւարթ նայեացքով, ուրախ տրամադրութեամբ ընկերութեան մէջ ուրախութիւն և փայլ են ներշնչում:

Ի հարկէ Փլեգմատիկի այս լաւագոյն կողմերից ծագում են և նորա վատ կողմերն: Հանգստութիւնն աւելի մարմնական դառնալով՝ կարող է փոխադրել դանդաղութեան և ծուլութեան և զւարթութիւնը—սառնասրտութեան և անտարբերութեան: Այդպիսի պատկեր կարող է ընթերցողը տեսնել նոյն մեր երկրում, մեր ժողովրդի մէջ, լիչելով այն աղաներին, որոնք ծուլութիւնից մինչև կէս օր խալաթն հագած անտարբերութեամբ մեռցնում են իրանց առաւօտեան ժամերն և մնում են այդպիսի զրութեան մէջ, մինչև որ ստիպւած են լինում շորեր հագնելու:

Փլեգմատիկի հոգին գրեթէ վախենում է խոր մտածմունքից և նորա մտածողութիւնները և վճիռները կարող են լինել ոչ ծանրակշիւ: Գոցանից կարող է հետեւել զլւանք ղէպի կեանքը և այն ժամանակ նորա գլխաւոր ճգտումն կը լինի կշտանալ և քնել: Նա կարող է սառնասիրտ դառնալ ղէպի Աստուածապիւնը և իղէալականը: Այն ժամանակ նա կը լինի ամենաուղիմեղի էակ աշխարհում:

Ահաւասիկ այս է չորրորդ և վերջին տեմպերամենտն իւր լաւ և վատ չատկութիւններով:

Յիշենք այժմ մի քանի անձնաւորութիւններ, որոնք այս տեմպերամենտին են պատկանում: Յունական պատմութեան մէջ երևան է գալիս Արիստիդէս, նոր պատմ, մէջ՝ Ալոլոմբտը, մեծ փիլիսոփայ Էմմանուէլ Կանտը, որ 80 տարեալ կեանքում մի քալ անգամ իւր ծննդեան տեղից դուրս չէր եկել: Նա սիրում էր ամենայն կողմից լուս և հանգիստ տեղ, ուր կարողանար իւր ներքին կեանքով զրազել, սիրում էր հանգստութիւն և լուութիւն, որը առասպելական չափազանցութեան էր հասցրել: Ալենիսքերդ քաղաքի խուլ մասերում ապրելուս, առաւօտներն ժամի 4-ից մինչև 5-ը լուութիւնը ընդհատում էր հարեանի սքաղստն, ուստի նա զիմից հարեանին ապ

աքաղաղը գնելու, իսկ հարևանը կանտի առաջարկած մեծ դինն էլ չ'ընդունեց, և մեծ փիլիսոփան ստիպւած էր քաղաղի պատճառով, որ առաւօտները կանչուած էր, տունը դատարկել տալ, և ուրիշ տեղ փոխադրել: Յիշենք կանտի կեանքից մի ուրիշ դէպք, ուր աւելի պարզ երևան է դալին նորա Ֆրեզմատիկական տեմպերամենտն: Մէկ անգամ նա ճանապարհին պատահում է իւր ընկերներից մէկին, որը կառքով զբօսնելու է դնում, այդ վերջինն առաջարկում է մեծ փիլիսոփային իրան ընկերակցելու. նա ընդունում է նորա առաջարկութիւնը. բայց մեծ փիլիսոփան շատ ուշ է վերադառնում տուն և աչն էլ զբօսանքից չօգնում է և իւր հանդատութիւնը խանգարում. աչն ժամանակ վճռում է նա և գրում է իւր չիշտակարանի մէջ հետևեալն. «Ո՛չ մի ժամանակ չը պետք է ձրի ուրիշի կառքի մէջ նստել»:

Չը մտանանք մանկական և աշակերտական շրջանը, աչն է ընտանիքի և ուսումնարանի մէջ:

Ֆրեզմային տեմպերամենտն միւսներից ամենաքիչ չատուկն է երևխաներին, ուստի Ֆրեզմատիկ երեխան նոյն չափով անբնական երևոյթ է, ինչ չափով սանգւլինական ծերունին: Բայց և աչնպէս ո՛ւր չեն պատահել տանն և ուսումնարանում աշխատութիւնից և մտածելուց փախչող, մի կարծ վճռի անընդունակ երեխաներ և աշակերտներ: Ի հարկէ իւրաքանչիւրը կը խոստովանուի, որ մինչև անգամ լաճախ տեսել է աչպիտիներին: Այդ վերոփշեալ կէտերը Ֆրեզմային մանկան ճիշդ չատուկութիւններն են: Իսկ դորա հակառակ դատարարակը պէտք է ամենաչն զղուշութեամբ և առողջ դատողութեամբ պատերազմի, որովհետև այսպիսի մանուկներին ամենաազգու դատարարակութիւնը մեծ արդիւնքներ չէ տալիս, ըստ որում աչ տեմպերամենտի վատագոյն կողմերն արդէն մարդուս թունաւորում են նորա ծաղիկ հասակում:

Մանկավարժական հետևեալ միջոցները պէտք է դատարարակը աչքի առաջ ունենայ:—Մարդ պէտք է ոչ շատ առատաձևոն լինի վարձատրութեան, ոչ էլ առատ՝ պատիժների մէջ: 1)

Առաջին միջոցով դատարարակը պէտք է աշխատի աշակերտի մտածողական տգծն և աշխատութիւնն ուղիղ շաղի վերայ կանգնեցնել. ամեն մի փոքրիկ պարտաճանաչութիւն պէտք է պսակել վարձատրութեամբ, թող լինի դա միայն մի լոկ դովտանք: Բայց չէ նշանակում, որ երևխավին պիտի տանք դորանով ձգտումն ամեն բանի մէջ իւր սեպհական օգուտն աչքի առաջ ունենալու և դարդացնենք դորանով մատաղ սերնդի մէջ օգտամոլութիւն (Principium utilitatis): Այդ կարող է շարունակուել միմիայն մի կարճ ժամանակամիջոց, իսկ երբ անմիջական հարցասիրութիւնն արդէն թիւ թէ շատ զարդացրել ենք, կարող ենք վարձատրութիւնը մի կողմ ձգել:

1) Տե՛ս «Արձագանք» 1887 թ. №№ 48, 49 «Մանկավարժական պատիժ» վերնադրով յօդւածը:

Երկրորդ միջոցով, այն է՝ ահ տալով աշակերտին, աշխատում ենք ոչնչացնել նորա մէջ ծուլութիւնը, թնկ լինի այդ նկատողութիւն, վատաբանութիւն, ակնարկութիւն և այլն:

Գիտմեքը պատմում է հետեւեալ դէպքը. «Մի ֆլեգմալին մանուկ պէտք է մի որոշ ժամանակի ընթացքում մի թւարանական խնդիր լուծէր: Նա չէր կարողանում, բայց այնու ամենայնիւ պէտք է կարողանար: Վարձատրութիւնն էր մի խմորեղէն: Մանուկը նկատեց իւր դրութիւնը և երկար մտածելուց վետո՞ կարողացաւ վերոյիշեալ խնդիրը լուծել և դորանով անցաւտացաւ ֆլեգմալին ճնշող ուժը: Արտասովոր սիրով և չարատեւութեամբ սկսեց նա պարասպել մաթեմատիկայով և վերջն էլ ընտրեց ասպարէզը մաթեմատիկայի ուսումնասիրութիւնը:

## ՎԻ.

Մինչև այժմ փորձեցինք չորս տեմպերամենտներն իրանց լաւ և վատ չատկութիւններով նկարագրել: Այս նկարագրութիւնները միմիայն կոնտուրներ են, ուստի և, չարդելի ընթերցողներ, գուցէ ձեր կատարեալ պատկերները վերոյիշեալ նկարագրութիւնների մէջ չը գանձէք:

Ձգուչ ինքնադիտողութիւնը, ուրիշները վերաջ արած փորձերը ցոյց են տալիս մեզ, որ իւրաքանչիւր անհատի մէջ տեմպերամենտներից մէկը գերիշխողն է, բայց ոչ մէկը զուտ չէ պատկերանում, այլ միշտ փոքր ի շատէ ուրիշ տեմպերամենտների խառնուրդների հետ միացած: Սորա սկզբը՝ նապատճառը հեշտ չէ մի քանի խօսքով բացատրել: Պարզ է, որ մի հասակն առած անհատի մէջ տեմպերամենտներից մէկը գերիշխողն է, այն ինչ պէտք է դա նոյն անհատի մասնական հասակում աւելի մաքուր լինէր, ըստ որում կեանքի, կրթութեան ազդեցութիւնը շատ անգամ տեմպերամենտի այս կամ այն չատկութիւնները բոլորովին ոտնակոխ է անում:

Սանդւինիկին կրթելով կարող ենք մենք նորա շատ չատկութիւններն ոչնչացնել: Գիւղական սանդւինիկ երեխայի ծննդեան տեղի միակողմանի լինելը, կեանքի միակերպութիւնը կարող են հէնց սկզբից սանդւինիկի մի քանի չատկութիւնները ոտնակոխ անել: Եթէ այդ գիւղական երեխան քաղաքում աղբեր, գուցէ աւելի կատարեալ սանդւինիկ լինէր. ուրեմն կեանքի ազդեցութիւնն է, կեանքի փոթորիկներն են, որ թույլ չեն տալիս մի որ և է տեմպերամենտի կատարեալ դարգացումը: Սանդւինիկն ընկնելով կեանքի ծովի մէջ, կուեւրով ալիքների դէմ, կարող է մեղանխովի դառնալ, իւր այն մասնական դարթութիւնը կորցնել, փոթխամտութիւնը հաստատականութեան փոխել: Նոյն խսկ մեղանխովին կարող է ժամանակով սանդւինիկի այս կամ այն չատկութիւնը իրան սեպհականացնել: Սանդւինիկը կրթութեան, ուսման միջոցով կարող է ժամանակով խուրբիկ չատկութիւններից շատերն իրան չատկացնել. գուցէ տեսած լինի ընթեր-

ցողը, որ մէկը բնութեամբ սանդղինի՛ր ջերմ պաշտպան է հանդիսանում՝ մինչև իւր մահւան վերջին բոսէն մի որ և իցէ գաղափարի:

Եթէ իւրաքանչիւր անհատի տեսպերամենտի ճիշդ որոշումն դժարութիւններ է չառաջացնում, ապա աւելի դժարին կը լինի որոշել ազգերի և ցեղերի տեսպերամենտը:

Ինչ առաջինին է վերաբերում, հանրածանօթ ճշմարտութիւն է, որ Ֆրանսիացիք՝ սանդղինիկ, անգլիացիք՝ մելանխոլիկ, գերմանացիք՝ Փլեգմատիկ և իտալացիք՝ խոլերական են: Ըստ ցեղերի, նեղրները սանդղինիներ են, մոնղոլներն առաւելագէտ մելանխոլիկ, մալաչներն՝ խոլերիկ, ամերիկացիք՝ Փլեգմատիկ և Կովկասեան ցեղը՝ չափաւոր խոլերիկ:

Կլիմայի հանգամանքներն աչքի առաջ ունենալով, արեմուտքը սանդղինական է, արեւելքը՝ խոլերական, հիւսիսը՝ մելանխոլիկ և հարաւը՝ Փլեգմատիկ:

Տեսպերամենտների նկարագրութիւնից վետոյ, տեսնենք որը դոցանից աւելի արժանաւոր պէտք է համարել, որքն աւելի կը ցանկաւնք ձգտել, որն է աղջ տեսպերամենտներից աւելի դեղեցիկը: Աղջ հարցը ինձ համար աչքան քիչ նշանակութիւն ունի, որքան հետեւալն, որն աւելի օգտաւէտ է մարդկութեան՝ շոյենաւ թէ երկաթուղին:

Տեսպերամենտների մէջ լաւն և վատը չենք կարող որոշել, որովհետեւ բնութիւնը կողմնապահ չէ, որ մէկին աւելի առաւելութիւններ չնորհէր քան միւսին, ուստի իւրաքանչիւր անհատ թող բաւական լինի իւր տեսպերամենտով: Եթէ արժանաւորութեան մասին խօսելու լինինք, անշուշտ իւրաքանչիւրն իւր հաշիցակէտից կարող է որոշել, օրինակ, խոլերիկը Փլեգմատիկի հետ աչքան սակաւ բարեկամական դաշնակցութիւն կապել կարող է, որքան սանդղինիկը մելանխոլիկի հետ. դոցա ուղղութիւններն հակասող են իրար: Սակաւն փորձը ցոյց է տալիս, որ Փլեգմատիկը ուրախութեամբ է որոնում սանդղինիկի շրջանը և խոլերիկն ուրախութեամբ մելանխոլիկի հետ է չարաբերութիւն ունենում, ըստ որում դոքա իրար գործի չեն դիպչում: Նոյնպէս հանրածանօթ ճշմարտութիւն է, որ տեսպերամենտն աչտեղ ևս մեծ դեր է խաղում, երբ երկու անձնաւորութիւններ ցանկանում են միշտ իրար հետ ապրել: Տեսպերամենտների նոյնութիւնը ամուսնութեան բաղաւորութեան համար շատ վտանգաւոր փորձաքար է. եթէ կինը սանդղինիկ է, իսկ մարդը՝ խոլերիկ, ապա առաջինը ընկնում է մարդու ազդեցութեան տակ, տարածաչնութիւնը, նեղութիւնը անցնելուց վետոյ, նա՛ կրկին աւելի է որոնում մարդուն դէպի իրան քաշել և ամեն բան մտածալ տալ: Հակառակ դէպքում մարդն է ընկնում կնոջ ազդեցութեան տակ և նոյն դերն խաղում: Եթէ երկուսն էլ խոլերիկ են, աչն ժամանակ լաճախ անբաղդութիւն է տիրում ընտանիքի մէջ. եթէ մարդը խոլերիկ է, իսկ կինը Փլեգմատիկ, աչն ժամանակ ընտանիքի բաղաւորութիւնը չէ

խանդարում, ըստ որում այդ վերջինը մարդու ամեն մի խօսքին մեծ ուշադրութիւն չէ դարձնում և այլն: Մնացածը թողնում եմ ընթերցողներին մտածելու:

Վերելի սողերում չափոնեցինք, որ այս կամ այն տեմպերամենտի չարերակիան արժէքը կարելի է միմիայն սեպհակիան տեմպերամենտի միջնորդութեամբ որոշել, գորանից զատ կազ և մի ուրիշ նպատող միջոց, այդ այն հանգամանքն է, որի մէջ գտնուում է մի անձնաւորութիւն: Օգնութեան գործի մէջ աւելի լաւ օգնութիւն հասցնողների չենք կարող զիմել, քան խողերիկներին և Ֆլեգմատիկներին: Մինչդեռ ով ուզում է որ իրան ցաւակցին, այդ երկուսից ոչինչ չէ կարող սպասել: Նթէ ուղում էք միւլթարել մի որ և իցէ անբաղդ դէպքից, գնացէք մեւանխողիկի մօտ, ըստ որում նա շատ չաճախ է այլախի անբաղդութիւնների վերաջ մտածել: Նթէ արտապատելու մի բան ունիք և ուզում էք, որ ձեզ լսող լինի, գնացէք սանգլինիկի մօտ. նա պատրաստ է ընդունել ձեր աւաջարկութիւնը, նա ձեզ հետ կը ծիծաղի, նա ձեզ հետ միասին կը ցաւի, նա ժամանակաւորապէս կը մտնի ձեր զրուցեան մէջ, նա մասնակից կը լինի ձեր բոլոր ցաւերին և ուրախութիւններին, բայց օգնութիւն հասցնել չէ կարող. սակայն չաճախ աւաջինն աւելի նշանակութիւն ունի քան օգնութիւնը:

Այժմ զիմենք մի ուրիշ խնդրի, որն աւելի կարող է պարզել տեմպերամենտի չափութիւններն: Անշուշտ պէտք է կուսել այն սխալ կարծիքի դէմ, որ իբր թէ տեմպերամենտներից մէկին չատուկ է ստաքինութիւն, միւսը տանում է դէպի չարն և այլն: Սորանից կարելի է եզրակացնել, իբր թէ բարոյականութեան կամ անբարոյականութեան սկզբնապատճառը գտնուում է անհատի բնական չափութիւնների մէջ:

Անշուշտ պարզ է, որ իւրաքանչիւր տեմպերամենտ կարող է դանաղան դժարութիւններ չառաջացնել, բայց ոչ ուղղակի տանել դէպի աւաքինութիւնը կամ անբարոյականութիւնը, ըստ որում տեմպերամենտների տարբերութիւնը չէ բարոյական, այլ բնական. բարոյականը կամ անբարոյականը կ'որոշուի, երբ կամքը մէջը կը խառնուի, այս կամ այն կողմն կը շեղի: Ուստի մեծ սխալ կը լինէր, եթէ տեմպերամենտը բնաւորութեան տեղ ընդունէր և բնաւորութիւնն էլ՝ տեմպերամենտի տեղ: Այն պահանջողութիւնը, որ մարդ իւր տեմպերամենտն փոխէ ուրիշն ընդունէ՝ կարող է մեր կողմից ծաղրալի պահանջողութիւն համարուել: Սակայն եթէ մարդ իւր վստ բնաւորութեան դէմ է գործում, ինչպէս ստախօսութեան, չարամրտութեան դէմ, անշուշտ մենք կը գովասանենք այդ անձին:

Բնաւորութիւնն է ներքին ազատութեան արդիւնքը, ներքին ազատութիւնն է կամքի խղճին ենթարկելը: Նթէ մարդ իւր խղճի համաձայն է գործում, եթէ մարդու ամեն մի գործի մէջ նորա խիղճն է որոշողը և հրամանատարն, այն ժամանակ նա կը վազիէ ներքին ազատութիւն: Բայց և այնպէս պէտք է կամքը ուժեղ և չարատեւ լինի:

Հետևաբար բնաւորութիւնն է մի բարոյական որոշումն, որ մենք ինքներս մեզ պէտք է սանք: Մարդու բարոյական բնաւորութիւնն ոչ թէ կարող է իրան փոփոխել, այլև պէտք է փոփոխւի, եթէ բնաւորութեան մէջ բարոյականութեան հանդիպող տարրեր ենք նկատում: Բայց բնաւորութիւնը պէտք է բնական հիման վերայ կառուցանել: Ուստի բնաւորութեան հիմք զնոզը տեմպերամենան է, իսկ նորա ուղղութիւնը, զեղիցկութիւնը փալ տուող բարոյական կամքն է. ուրեմն իւրաքանչիւր տեմպերամենտ ինքն ըստ ինքեան լաւ ե գեղեցիկ է ե ոչ մէկը նոցան ից կեանքի բարոյական խնդրի լուծող չէ, ալ լնա ստեղծւած է բնաւորութեան հիմքը լինելու համար:

Հաջ ուսուցիչներ, դաստիարակներ, այս խօսքերս ձեզ են նւիրւած. ուստի չարգէք իւրաքանչիւր տեմպերամենտ և մտէք իւրաքանչիւր երեխայի հոգու մէջ, քննեցէք նորա հոգու չափութիւնները: Այն ժամանակ միայն ձեր դաստիարակչական կոշումն կը պսակւի, այն ժամանակ միայն կարող էք իւրաքանչիւր տեմպերամենտի մէջ ծածկւած ոսկին դանել, կեղտերից մաքրել և նորա վերայ բնաւորութեան հիմքը կառուցանել:

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԱՂԲԻԻՐ» Միամսեայ պատկերազարդ Հրատարակութիւն մանուկների  
և դաստիարակների համար: Եօթներորդ տարի. Խմբագիր-Հրատա-  
րակիչ Տիգրան Նազարեան: Թիֆլիս. Յ. Մարտիրոսեանի տպարան.  
1889 թ. №№ 1, 2, 3:

Ընթերցանութեան միջոցով նպաստել մանուկ սերնդի մտաւոր ու բարոյական դարգացման և օժանդակել դաստիարակներին՝ ահա «Աղբիւր» ամսագրի նպատակը: Բոլոր ներքոյ ասածները առաջ են գալիս միայն մի ցանկութիւնից, աչն է՝ տեսնել «Աղբիւր»-ը իրագործելիս ստանձնած գործը օրինաւոր կերպով: Փոյթ չէ, որ մեր մամուլը արդէն արմատացրել է հալի հասկացողութեան մէջ աչն համոզմունքը, որ կարծիք չպատնել կարելի է զրդւած կամ կատաղի, կոյր կըրքից կամ շողքորթելու ցանկութիւնից. փոյթ չէ նոյնպէս, որ «անսխալականութիւնը» ոչ միայն Հոռմի պապի առանձնաշնորհումն է համարւում, այլ նաև ամեն մի հալի: Մենք անաչառութեամբ և ուղղամտութեամբ չպատնում ենք մեր զիտողութիւնները, թողնելով «Աղբիւրի» խումբագրութեան (որի ընտրած նպատակը պահանջում է ոչ միայն մտաւոր պատրաստութիւն, այլ նաև բարոյական՝ առաքինութիւններ) որոշել արդեօք մեր ասածները կարդալուց չեսու, հետեւել հաչ գործիչների ընդհանուր տղեղ սոյորութեան, թէ՛ գեղեցիկ բացատրութիւն կաղմել:

«Աղբիւրի» արտաքինը աչն կատարելութեան է հասել, որ աւելի շատ դժւար է պահանջել. նկարները աչնքան զիւր են գալիս բոլորին, որ պ. Ղ. Աղաչեանցի ասելով — «Աղբիւրը» ձեռքէ ձեռք են լախշտակում, միջից պատկերները կտրում և զրկում խեղճ բաժանորդներին (ճիշդ որ խեղճ. ախր էլ ինչ է մնում եթէ պատկերներն էլ չը լինին), իսկ պըրէմիաները աչնքան հրաշալի են որ «ուսները, որոնք բաժանորդ չեն գրւում «Աղբիւրին», որովհետև հաչերէն չը գիտեն (եթէ ոչ անպատճառ երեխաների համար հրատարակող ոռուսաց ամսագրիւնը կը թողնէին և «Աղբիւրին» կը գրէին), առնում են միայն պրէմիան, ամենաչն ուրախութեամբ վճարելով երեք բուրլի:

Ուլ ականջ ունի լսելու՝ թող լսէ, սով  
ամաչելու առ ի թ ունի, թող ամաչէ»  
(տե՛ս «Աղբիւր» № 1, 1889, Երկր. բաժ.  
Եր. 15): Այս բոլորը այսպէս լինելով  
հանդերձ, ցանկալի է որ մանկական  
ամսագրում սրբազրու թիւնը այնպէս  
կատարէր, որ չը պատահէին, օրինակ,  
այսպիսի վրիպակներ. երկու թիւնե-  
րով, ա ա զ ե ր ս ան ք, հ ր ե շ տ ա-  
կ ա կ ի, ե գ ե լ, ա ե գ ա կ ան, տ ղ տ ս,  
և այլն (Եր. 13, 69, 79, 101, 222):  
Գալով ներքինին, նախ տեսնենք  
ինչ է ասում ինքը պ. խմբագիրը:  
Պատասխանելով (տե՛ս № 1, բաժ. երկ.  
Եր. 16) «բարենենգ (?) հակառա-  
կորդներին», որոնք հաւատացնում  
են պարզամտներին, թէ «Աղբիւրի»  
խմբագրութիւնը ու է կլամներ է  
գրում (ինչպէս կարելի է!), պ. խմբ-  
ագիրը ասում է՝ «մեր արածը մի  
չնորհք, մի աղնիւ ձգտում է, որից  
զուրկ են մեր շնորհալի և աղնիւ  
հակառակորդները», և չետոյ շարու-  
նակում է. «Նւ մի թէ «Աղբիւրի» խմբ-  
ագրութիւնն այնքան մօտատես է,  
որ չիմանալ, թէ ինչումն է ճշմարիտ  
գրաւչութիւնը և կառաջադիմութեան  
զաղանիքը (?): Մենք միամիտ  
չենք (?), պարոններ, զիտենք ա-  
ւելի տալ, որ ունենանք կիսով չափ  
պահանջելու իրաւունք: Նւ մենք այ-  
սօր տալիս ենք տասնապատիկ աւելի  
քան թէ պահանջում ենք, որ ով-  
հետև «Աղբիւրը» անհամեմատ  
բարձր է եւրոպական նման  
հրատարակութիւններին (re-  
թ...թե...թե!): Օ'... այդ չափից զուրս  
է արդէն, պիտի բացականչէք: Ոչ  
թէ չափից զուրս է, աչլ բնական-  
ապէս աչսպէս էլ պէտք է

լինի (?): Եւրոպան հասունացել է,  
Երիասարդ է. աչնտեղ աչլ և ս  
չը կաչ(?) մանկական կեանք,  
մինչդեռ մեր ամբողջ կեանքը  
զեռ և ս մի մանուկ է, հա-  
րուստ մանկական նիւթով:  
Մի թէ միևնոյն մանկական կեանքի  
աղքատութիւնը, ժողովրդական տար-  
բից զուրկ լինելը չի երևում և Պօլտոյ  
«Մանկական Բուրաստանի» մէջ:  
(Աստուծ վկայ, անգիտակցաբար մի  
անարժան «կոմպրիմենտ» էք անում  
մեր մանկամիտ հոտոներին, կարծե-  
լով այդ արմարներին էլ հասունա-  
ցած եւրոպացիներին պէս, կարծելով  
որ մանկական կեանքի աղքատու-  
թիւնը նոյն պատճառներից է, թէև  
այդ էլ բոլորովին սխալ հասկացո-  
ղութիւն է, որ Եւրոպայում այլ և ս  
մանկական կեանք չը կաչ: Լնւ, էլ  
աչխարհիս որ ծալում այնքան մա-  
նուկներ, երեխաներ, որքան Պօլ-  
տում է, մի թէ այնտեղ «հասունա-  
ցած» շատ մարդ կը գտնէք...): Խը մ-  
բագիրն աչնտեղ մեղաւոր չէ,  
(այնպէս որ կարող է ամեն չիմա-  
րութիւններ և անհամութիւններ սը-  
պել, որովհետև... «հասունացած» հա-  
սարակութեան անդամ է) այլ կեանք-  
ըն է սնանկացած, իսկ մեր կեանք-  
ի մանկական աչխարհը զեռ  
դոչութիւն ունի իր բնական  
վիճակի մէջ (ահն ինչ բարեկա-  
ջող պալմանների մէջ է հրատարակ-  
ում «Աղբիւրը» և դնք, բարենենգ-  
ներ, ցնծալու և ուրախ լինելու տեղ՝  
տրտունջ էք չայտնում...): Աստ-  
ւած տաչ միայն, որ «Աղբիւրի»  
տաղանդաւոր (ընթմ...) աչխա-  
տակիցները այս հանգամանքն

(որ միայն կովկասեցի հայերս մանկական հարուստ կեանք ունինք) ի նկատի ունենան և մեր մանկական հարուստ կեանքից սրբան կարելի է, (ոչ աւել և ոչ պակաս) շատ պաշար հասցնեն «Աղբիւրին»: Ահա բուն գաղտնիքը (!) «Աղբիւրի» կենդանութեան (կաւեւացնենք՝ նաև անմեղութեան), հետևապէս նորա գրաւչութեան և սիրելիութեան»: Այս հրաշալի և խորիմաստ խմբադրական ծանօթութիւնից դառնանք «Աղբիւրի» բովանդակութեան:

Ծայրէ ի ծայր կարգալով առաջին երեք համարների մանկական բաժինները, չէ կարելի գտնել համարեան ոչ մի գրածք հետաքրքրելի ու մատչելի 8—12 տարեկան երեխաներին: Չը նալած վերև բերած սլ. խմբագրի կարծիքին, որ Եւրոպայում այլ ևս չը կայ մանկական կեանք և աչտեղ ուրեմն և մանկական գրականութիւնը աղքատ պէտք է լինի, իսկ մենք ունինք մանկական նիւթով հարուստ կեանք, աչնու ամենաչնիւ «Եւրոպայի» մանկական գրականութիւնից արած թարգմանութիւնները բռնում են «Աղբիւրի» մեծ մասը, իսկ կարգին, ինքնուրոյն բան չը կայ համարեա: Բացի այդ, ինչպէս թարգմանական, նոյնպէս ինքնուրոյն յօդածների մէջ եթէ կան փոքր ի շատէ՛ չաջողածները, աչն էլ լիապէս մատչելի չեն կարող լինել 8—12 տարեկան «մանուկներին»:

Բուն բովանդակութիւնը քննելուց առաջ կը նկատենք, որ շատ գեղեցիկ է առհասարակ ձգտումը՝ ծանօթացնել նկարներ տպելով մեր գոր-

ծիչներին, պատմական անձերի ու վիշատակների հետ, բայց հազիւ թէ լոկ պատկերները մի սր և իցէ ուսանելի աղղկութիւն ու նշանակութիւն ունենան: Ուրիշ խնդիր է, եթէ աղղ պատկերներին կից լինէին մանուկների համար գրած կենսագրական—պատմական յօդածներ, որոնք ծանօթացնէին թէ ինչու այս կամ այն գործիչը արժանացել է հոյ աղղի չարգանքին և սիրտոն, թէ ինչ թանկագին վիշտութիւնների հետ են կապած այս կամ այն պատմական անձնաւորութիւնը, շինութիւնը, և աչն: Ահա՛ չարմար առիթ՝ պատկերացնել հայոց պատմութեան մի քանի էջերը (օր. ս. Շուշանիկի, ս. Վարդանի պատկերների առիթով) մանուկների երևակալութեան առաջ: Արդարև փորձ կայ (№ 3) մեր գործիչների կենսագրութիւնը կցել տրուող պատկերներին (Չմշկեանի աթիւ): Բայց լոկ տարիների, հիմնարկութիւնների և ազգանունների ցուցուկը հետու է մանուկների համար կենսագրական յօդած լինելուց. նա ոչինչ չէ ասում ոչ նոյա սրտին և ոչ խելքին: Առաւել ևս անչարմար է տպել այն ձևով գրած նկարագիրը, որպիսին է «Արշալույսը» («Աղբիւրի» պրէմիալի առիթով № 3-ում). ոչ բառերի ու լեզուի գրաբարեան ճոխութիւնը, ոչ հոետօրական շեղումները ու զեղմունքը (излияние), ոչ էլ թափօր, լուսահատութեան և ալ սարափելի մուսլ զգացմունքների արտաչափութիւնը կարող են գրաւել և հասկանալի լինել «մանուկներին»:

Պ. Փ. Վարդանեանի (պէտք էր յօդածի վերնագրում վիշած պարսիկ

բանաստեղծի անունը) «Ռուստեմ և Ջոհրաբ» վեպը այս տարւոյ «Աղբիւրի» (առաջին երեք համարներէ) ամենալաւ և չաջող արձակ գրածն է: Ազգային գրածներ լաւիչտակութեամբ կարդացուած են փոքրիկ ընթերցողներէց. իսկ դորա նման ճոխ, գեղեցիկ ու կանոնաւոր լեզուն աննկատելի կերպով գրոյմում է մանուկ ինքեքրում մարտնի լեզուի համը և ողին: Մի ժամանակ պ. Ղ. Աղապեանցն էլ ճոխայնում էր «Աղբիւրը» իր հէքիաթներով. ախսս, որ նա իր ընդունակութիւնները և օգտակար գործունէութիւնը այդ ասպարիզում թողել է և ակոյգան դուրս եկել բանակուական ասպարիզն դաշտում: Համեմատաբար թող են «Տ. Վիօլետտայի երազը», Թարգմ. Մարիամ Աքիմեանցի (№ 2), և «Ամբի ուժը — Միքէլ Փարալէս» Չարուհու: Աւելի հետաքրքրական է իմանալ, արդեօք այդ վերջինը փոխադրութիւն է, թէ ինքնուրոյն, քան թէ որ դա մի «նւէր» է ինչ որ պ. Տ. Միքէլ Բաղապեանցին: Այս կենսագրութիւնը կարող է հասկանալի լինել այն հասակի երեխաներին, որոնք հասկանում են բնագրում պատահող այս բառերը. «հանրագիտական բառարան, կալի, նտոր, տարրական քիմիա, ելեքարականութիւն, ֆիզիկա, Վօլտալի սիւն, գալվանական ելեքարականութիւն, քաղաքական, գրական գործեր, հակազմալեւց, լաբօրատօրիա, և այլն»: Թէն հալիւ մինչև անգամ այդ «մանուկներն» էլ համաձայնեն այս փիլիսոփայութեան հետ. «այն կազմարարը, որ չի հետաքրքրուել իր կազմած գրքերի լուսնադակութեամբ, նա երբէք չի

էլ կարող (փիէ) լաւ կազմարար լինել» (եր. 27):

Թարգմանական լուսնադակութեամբ մասին խօսելը վերջացնենք «Վարպետ Կոննէլի վարմունքը» (Ալֆօնս Դօլէից) թարգմանութիւնով, նկատելով միայն որ նա չի արտապայտում բնագրի ոչ ողին և ոչ սրամտութիւնը: Ի դէպս. միթէ ալիւր ու ցորեն կրում են «քսակներով» և ոչ ասպրակներով կամ պարկերով. չէ որ «քսակը» (кашелоу, мешечек) շատ է փոքր, որ նորանով ցորեն կրէին շրաղացը:

Դաւով ինքնուրոյն, «մեր հարուստ մանկական նիւթով կեանքից» վերցրած արձակ լուսնադակութիւն՝ մենք չենք կարող ցոյց տալ ոչ մէկը՝ իբրև անպալման լարմար և հետաքրքիր մանկական ընթերցանութեան նիւթ. էլ չենք խօսում պ. Ա. Օհանջանեանցի «Չմեռնալին երեկոյ» գրածներն պէս թող, անբնական, անհամ կարկատանների մասին, որոնք ցոյց են տալիս, որ «Աղբիւրի» «տաղանդաւոր աշխատակիցներին» (տես № 1 բաժ. 2. եր. 16) շատերը չեն կարողանում օգուտել այն «հանդամանքից», որի վրայ մատնանիչ է անում պ. խմբագիրը, այսինքն՝ «որ Եւրոպայում ալ ևս չը կազմանկական կեանք, մինչ դեռ մեր ամբողջ կեանքը դեռ ևս մանուկ է, հարուստ մանկական նիւթով»: (Ի հարկէ այդ դեռ չի նշանակում, որ մեր մանկական գրականութիւնը պէտք է հարուստ լինի մանկամտ, խակ նիւթերով...)

Յարգելի Պերճ Պօօջեանցի «Ծերունի դաշտեցու պատմածը իր անցեալ կեանքից» (№ 1) գրածքի նըպատակն է, ինչպէս հեղինակն է ա-

սում, «իր փոքրիկ կարդացողներին լուսնարի 1-ին նոր տարին կատարելու ալիշեցնել, որ մենք նաև առաջ ենք ունեցել: Բայց երկար ու բարակ պատմութիւնից լիտու, վերջը էլի անհասկանալի է մնում փոքրիկ ընթերցողների համար թէ, ախր երբ էր լինում առաջ մեր այդ նոր տարին, որ օրը, որ ամսին. միթէ երեսխաներին բան են պարզում «ճախրաթողի շաբաթ օրը, հորթաթողի շաբաթ օրն» բառերը: Համարձակում ենք կարծել, որ եթէ այդ պակասութիւնը և մի քանի անտեղի շեղումները ու գաւառական չը բացատրած բառերը (օր. կթղան, բըղուղ, բասմա թալա և այլն) չը լինէին, աւելի հետաքրքրութեամբ կը կարդային երեսխաները այդ «պատմածը»: Օր. Պերճանուշ Պռօշեանցի «31-ը դեկտեմբերի» գեղեցիկ է իւր տեղեկացիւթիւ, բայց ախտո՛ս, որ քիչ անմշակ է գրած: Արձակ ինքնուրոյն գրածներէից ուշադրութիւն է դարձնում իր վրայ նոյնպէս՝ «Մի քանի օր Գուգարաց աշխարհում» պ. Թ. Զաքարեանի ճանապարհորդութիւնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ որքան լաւ միջոց է ճանապարհորդական գրածներով ծանօթացնելու երեսխաներին զանազան երկիրների և հայրենիքի բնութեան ու ժողովրդի հետ. բայց դրա համար ճանապարհորդութիւնը պէտք է զըրւած լինի մատչելի և հետաքրքրական ձևով, իսկ այն հրապարակախօսական դատողութիւնները, որ բընում են պ. Թ. Զաքարեանի ճանապարհորդութեան մեծ մասը, բոլորովին իրանց տեղումը չեն «մանկական» ամսագրում:

Հիմա անցնենք ոտանաւորներին, որոնց մասին ընդհանրապէս, ինչպէս և առհասարակ բոլոր նիւթերի մասին, կարելի է անել մի նկատողութիւն: Ամսագրում ղետեղելիս աչքի առաջ չի ունեցում որ ամսագիրը «մանուկները» կամ աւելի ճիշդ «երեսխաները» համար է հրատարակում, ուրիմն նիւթերն էլ պէտք է երեսխաների հասկացողութեան և ըզգացումներին մատչելի լինին: Միակ անպայման լաջող և լարմարն է Յ Ռ-ու՛մ տպւած «Միժեռնակ» տոանաւորը պ. Բարկասի. անս այդ օրինակ պարզ, կոկիկ ոտանաւորներ պէտք է լինին «Աղբիւր»-ում. փոյթ չէ կթէ քիչ լինին, բայց այնպիսի, որ ուրախութեամբ երեսխաները բերան անէին նրանց. միայն այն ժամանակ ոտանաւորները կը հասնէին իրանց նպատակին՝ ազնւացնել մանուկների թէ բարոյականը և թէ մարտնի լեզուի ճաշակը: Պ. Յ. Յովհաննիսեանի «Չմեռնալին երգը», պ. Բայուղեանի «Իմ երգը» (իոխադր.) և պ. Մատուրեանի «Թռչնիկները» (նմանողութիւն), ունենալով բանաստեղծական արժանաւորութիւններ այնուամենայնիւ շատ էլ մատչելի չեն կարող լինել մանուկներին իրանց լիրիզմով: Իսկ պ. Ա. Նգեկեանի «Ի սէրն» ոտանաւորը իր մուպ թախիծով բոլորովին անհասկանալի կը մնայ նրանց և առհասարակ անհամապատասխան է մանուկների ուրախ, զարթ բնաւորութեան. որտեղից որտեղ՝ թախիծը, լոռեստեղութիւնը և մանուկները: Բայց էլի այս բոլորի մէջ բանաստեղծութիւն կա. սակայն պ. Ղ. Աղայեանցի «Առ Ղեռնդ հայր Ալիշանեան»

ճոճոան ոտանաւորը բարբոտիլին իր ակ-  
 դումը չէ և իսկն ասած բանաստեղծու-  
 թիւն էլ չէ: Մանուկները հայ «Պրո-  
 մէթէոսի» (պսիւնքն Ալիշանի) . . . . .  
 . . . . . «Մեծագոր հսկայ,  
 Անտխեղձ լուսոյ հրոյն սիրահարի»  
 մասին, հաւատացէք, որ նոյն իսկ պա-  
 տանիները ոչինչ չեն հասկանալ և  
 ոչ մի գաղափար չեն կազմիլ: Երե-  
 խաներին մեր գործիչներին հեա  
 ծանօթացնելը պէտք է ուրիշ կերպ,  
 ինչպէս վերեւ ցոյց աւինք: Բանաս-  
 տեղծական նշույլից անդամ զուրկ է  
 «Ճէր Ղ. Աղպեանցին նորա սիրելի  
 աշակերտ Մուշեղ Մամիկոնեանից»  
 ոտանաւորը: Գովելլի է, ի հարկէ, ա-  
 շակերտի զմալման և սիրոյ արտա-  
 չայտութիւնը իր նախկին վարժապե-  
 տին: բայց այդ սրտի զեղմուքը  
 թափուած այդպիսի անհամ ոտանա-  
 ւորով՝ ոչ ոքի համար, նամանաւանդ  
 մանուկներին, հետաքրքրական չէ, բա-  
 ցի գուցէ ուսուցչին իրան, որը և կա-  
 բող էր իր սիրեցեալ աշակերտի  
 «Ճէրը» դնել ոսկեգօծ չըջանակում  
 և կախ տալ իր զրասեղանի գլխին . . .  
 Դրաշար Յակ. Ղազարեանի «Չմեռ»-ն  
 բաւականին աջողած է:

«Գիտութեան» բաժնում շարու-  
 նակում է տպել քահանայ Բէդնա-  
 վարեանցի «Երկրիս և իր վրայ եղած  
 արարածներին մասին զրուցները»: Այդ  
 չօղածներին մասին կը խօսենք ուրիշ  
 անգամ նոցա վերջանալուց չետոյ, երբ  
 կը քննենք առ հասարակ բնական գի-  
 տութիւնների վերաբերեալ մեր ամ-  
 բողջ գրականութիւնը: Միայն ի դէպս  
 նկատենք, որ մեզ վարմացնում է ան, որ  
 մեզանում շատերը իրանց թող են  
 տալիս բնական գիտութիւնների վե-

րաբերեալ գրականութեան մէջ: Օրի-  
 նակ, միինչ որ հոսոս ընդօրինակում  
 է, արտասպելով նաև բարբ պատկեր-  
 ները, պրօֆ. Paul Bert-ի չպանի  
 «Դասախօսութիւններ կենդանաբա-  
 սութիւնից» գիրքը \*): Այդ աշխա-  
 տութիւնը վերագրելով իրան, միայն  
 աչքակապութեան համար կտորնե-  
 րը լետ ու առաջ տանելով, նախա-  
 դասութիւնները փոփոխելով, նա ոչ մի  
 բառ չի էլ ասում հեղինակի մասին,  
 իսկ պարզամիտներին խաբում է իր  
 չառաջաբանում նկատելով՝ «աշխա-  
 տութեանս գլխաւոր առաջնորդներն  
 (!?) եղան մեծահմուտ ուսուցիչներս  
 Ռէնեառ, Պլանչառ, Փալլէօ, Վէսքօ,  
 Փառնօ և ալ Երեսնի (?) մօտ  
 ամենակարևոր հեղինակաց ու գիտ-  
 նոց գործերն»): բայց իսկական հեղի-  
 նակի՝ Պօլ Բէրի անունն անգամ չի  
 տալիս, չը նախելով որ ամենաանամօթ  
 կերպով սկզբից մինչև վերջը գողա-  
 նում է այդ չպանի գիտնականի աշ-  
 խատութիւնը: Եւ այդ գրակա-  
 նական գողը տեսէք ինչպէս է  
 իրան չորջորջում գրքի երեսին (տը-  
 պած է Պօլիս 1886 թ.): Բնական  
 Պատմութիւն և ալն.

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ  
 Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ  
 ՀԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՐԿՐԱԳՈՐԾ  
 ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏ

Փարիզու երկրաբորժական համալսարա-  
 նին (?), նոյն քաղաքի ծառաբուժական  
 եւ այգեբանական վարժարանաց, Մէրի-

\*) Այս գիրքը թարգմանուած է ռու-  
 սերէն — Лекція Зоологін проф. Поля  
 Бера.

նու գործնական եւ տեսական երկրագործական կրթարանին եւ Տնօրէն Արամեան երկսեռ երկրորդ. վարժարանին Քաղկեդոնի, Տնօրէն խմբագրապետ (?) «Գիտնական Շարժում» ամսօրեայ հանդիսի, եւ այլն, եւ այլն, եւ այլն (!!!?):

Եւ ալսպիսի հոստոններին «Աղբիւրի» խմբագիրը զնուով եւրօպացիներին հետ մի շարքում!...:

«Նոր լուրեր» և «Այլ և այլք» բաժիններում չառաջ են բերւած «Հանդէս Ամսօրեայից» մի քանի կտորներ, որոնք պէտք է փոփոխւէին և չարմարացէին «Աղբիւր»-ում արտատպելիս: «Զուարճալիք» և «Այլ և այլք» բաժինները լաւ են 3 №-ում:

Գալով «Աղբիւրի» երկրորդ՝ զատարակների համար հրատարակող՝ բաժնին, պէտք է նկատել, որ ոչ մի չօղւած զատարակութեան և առհասարակ մանկավարժութեան վերարբեղեալ նորա մէջ չէք գտնիլ: Գատարակների համար միեւնոյն է թէ ալք բաժինը գոլութիւն չունի: «Ծառն լուրերի» և «խմբագրական պատասխանների» համար «Գատարակների համար» բաժին ունենալն աւելորդ է, իսկ մի քանի չօղւածներն էլ, որոնք զեանդւած են ալք բաժնում, ոչինչ

կապ չունենալով զատարակութեան հետ, շատ շատ կարող էին տեղ գտնել մի որ և է լրագրի էջերում: Աւելի լաւ կը լինէր, եթէ «Աղբիւրի» խմբագրութիւնը ձեռք վերցնէր բոլորովին այդ բաժնից, քանի որ երկար տարիների միջոցին չը կարողացաւ նորան տանել ինչպէս հարկն է, և իր ուշքը դարձնէր ամսագրի առաջին՝ երեխաների համար բաժնի վրայ, որի մէջ աւելի լաւ ընտրւած նիւթերը դասաւորւէին երկու առանձին մասերում. մէկում նիւթերը չարմար և մատչելի լինէին 8—12 տարեկան երեխաների հասկացողութեան, միւսում՝ աւելի մեծ պատանեկականին մօտ հասակին: Նիւթերը ընդունելիս պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ տպւում է երեխաների համար, որոնց խելքը մի անշունչ գրատախտակ չէ, որի վրայ ամեն բան կարելի է գրել և սպունգով ջնջել: Շատ ցանկալի է, որ լըրջօրէն ուշադրութիւն դարձնել «Աղբիւրի» ներքինի վրայ, և հասցնել նրան առնւաղն նոյն կատարելութեան, ինչպիսին է նորա արտաքինը:

Լ. Ս.

#### ՆՈՐ ՄՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

1) Սահակեանց Սիսակ քահանայ—Սրբազան պատմութիւն Հին-Ուխտի: Աշակերտաց և աշակերտուհեաց համար: Հատոր I. Տիփլիս, տպարան Ռօտինեանցի, 1888 թ.

2) Նոյն հեղինակ—Գասաղիքը կրօնի: Ուղեցոյց հայ կրօնուսույցների համար: Հին-Ուխտի մշակութիւնը: Հատոր I. Կոնստեղ. 1888 թ.

3) Նոյն հեղինակ—Սրբազան պատմութիւն Նոր-Ուխտի: Հատոր II. Կոնստեղ. 1889 թ.

4) Գարբիէլի Անդրէաս—Ինսուրութեան կրթութիւնը (Թարգմ. Գ. Շահրուզաղեանցի): Թիփլիս, տպարան Մարտիրոսեանցի. 1889 թ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Թէ՛ որքան անպաշտպանելի է թեմական դպրոցների կառավարչութեան աշխատանքը եւ թէ՛ ժողովրդական հոգաբարձութեան անձեռնհասութիւնը թեմական դպրոցների ուսումնական մասը կառավարելու գործում արդէն ինչ թշուառ ապագայ է պատրաստում նոյն ալք դպրոցների համար—զորա նորագոյն ապացոյցը տեղց Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցը իւր մարտի 22-ի նիստում: Բնտրում էին նոր տեսուչ հրաժարեցրած նախկին տեսուչ տեղ: Եւ ընտրեցին մէկին, որի անունը մեղաճանաչում հէնց ալք ընտրութեան պատճառով չարտնի եղաւ: Դա է պ. Սպէնդերեանցը: Այսքանը պարտաւոր ենք համարում մեր ընթերցողներին ասել, որ նորան, ալք մեզ ամենքիս անպատ մարդուն, ընտրողներն են եղել՝ պ. պ. Մելիք-Ղարաղոզեան, Աթաբեկեան եւ միւսները, թեմիս առաջնորդի հոգաբարձութեան նախագահի հետ միասին: Աւելացնենք եւ այս, որ պ. Սպէնդերեանցի հետ քաւարկուելու վիճակը կրողներից զբխաւորն եղել է պ. Սեղրակ Մանգիլեան, ներկայ հաշմանկավարժներից ամենազլխաւորը: Իսկ է, որ «Արձագանքը», բոլորովին վստահ աղբիւրից առաջ բերելով կատարւած քաւարկութեան եղանակը, ուղեց ապացուցել, թէ ընտրւածը պ. Մանգիլեանն է եւ ոչ պ. Սպէնդերեանցը: Մենք համակարծիք չենք: Երբ արդէն պ. Մանգիլեանցը ընտրւած էր եւ համաձայնուել են նորից քաւարկութիւն կատարել, եւ դորա դէմ նիստում ոչ ոք չէ բողոքել եւ քաւարկութեանը մասնակցել են—ուրեմն վերջին քաւարկութիւնը միայն պարտադիր նշանակութիւն ունի եւ ոչ դորանից առաջ եղածը: Ա՛հ, պ. Սպէնդերեանցն է ընտրւածը, Բայց մենք չենք հասկանում, թէ ինչպէս լրագիրները դտան, թէ նա ընտրւած է տեսուչ Ներսիսեան Դպրոցի, քանի որ նա ընտրւած է միայն թեկնածու տեսուչութեան եւ ոչ տեսուչ: Տեսուչ կը լինի նա միայն այն ժամանակ, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգաբարձութեան ընտրութիւնը չկը հաստատի: Ուրեմն, մեր աչքում ոչինչ կասկած չը կայ, թէ ընտրւածը պ. Սպէնդե-

րեանցն է. կասկած չը կայ նաև, որ նա առայժմ միայն թեկնածու է տեսչութեան, մինչև այդ ընտրողութեան հաստատումը: Այդ դրութիւնը մենք անհնարին ենք գործում և հաստատ համոզած ենք, որ հողաբարձական հաստատութիւնը իւր այժմեան իրաւունքներով խալտառակում է այն հաստատութեան պատիւը, որը, ինչպէս մեր այս համարի առաջնորդողում ասում ենք, ամենամեծ գործն է, որ հալութիւնը կարողացել է կատարել ներկայ 19-երորդ դարում: Փորձը, երկարամեալ փորձը, ցոյց է սալիս, որ հողաբարձութիւնները, իրանց այժմեան կազմութեամբ և նշանակութեամբ, չեն հասկանում միջնակարգ դպրոցների նշանակութիւնը: Նոյն խոյ եթէ ընտրած լինէր պ. Մանդլինեանը, այսինքն նա, որը ամենից շատ իրաւունք ունի գերազաւելու բոլոր եղածներէրից,—նորա կախումը հողաբարձութեան նման հաստատութիւնից պիտի գրեթէ իսպառ չէղծացնէր նորա միւս ղիտաւորութիւնները: Չէ կարելի և չը պէտք է զնել տեսչին մի այնպիսի դրութեան մէջ, որտեղ նա պիտի կախում ունենայ քէներից այնպիսի անձերի, որոնք լաւ չեն վերաբերում դէպի դպրոցական գործը: Գիտենք և այն, որ հողաբարձութիւնից աւելի վատ կառավարչութիւն կարող է լինել և գիտենք, որ այդ վատթարագոյնի համար էլ մեղանում կարող են կուսակիցների գտնել: Մեզ մնում է հասարակաց կարծիքը պատրաստել մի լաւագոյն կառավարչական եղանակի համար և հրաւիրել դպրոցական գործին մօտ անձերի ուշադրութիւնը՝ չը խնայել իրանց խորհուրդները՝ այդ խնդրի մշակման գործում մեզ օգնելու համար:

#### ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՆԵՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ներկայ սպրիլի 2-ին, Թիֆլիսի քաղաքական վարչութեան տան մեծ դահլիճում, կապցաւ չիչևալ Ընկերութեան տարեկան Ընդհանուր ժողովը: Այդ ժողովը գրաւեց իւր վերայ բացառիկ ուշադրութիւն տեղիս մանաւանդ գրագիտական դասակարգի կողմից: Գորա գլխաւոր պատճառն այն էր, որ այդ ընկերութիւնը հասած էր արդէն անկման դրութեան, մինչդեռ ամենքը գգում էին, որ դա մէկն է մեր սակաւ օգտակար հաստատութիւններից և որ նորան պահպանելը պատւի խնդիր է գրագէտ դասակարգի համար: Մինչև այժմ, համարձակ կարելի է խոստովանել, ընկերութիւնը գտնուում էր այնպիսի մարդկանց ձեռքին, որոնք ամենայն եռանդով չէին նւիրած գործին. խոյ խմբագրական մասնաժողովի մէջ գտնուում էին այնպիսի մարդիկ, որոնք դէպի հայկական դրականութիւնը չունին ոչ մի հետաքրքրութիւն և մինչև անդամ նոցա մէջ կար մէկը, որ հայերէն անգամ չը գիտէ:

Ընկերութիւնը արդէն գոյութիւն ունի 10 տարի, որի ընթացքում հրատարակած են 22 գիրք, արժողութեամբ ընդամենը 13 ր. 85 կոպէկի:

ասել է թէ ընկերութեան տարեկան գործունէութիւնը կզած է երկու գրքի հրատարակութիւն՝ արժողութեամբ 1 ր. 38 կոպ.։ Այդ նոյնն է, թէ մի գիրք 200—300 երեսանի։ Իսկ տարեկան մի-երկու հարիւր երեսանի գիրք հրատարակելու համար ծառայեցնել մի ընկերութեան անուն, 5—6 վարչական անդամներ, նոյնքան խմբագրական մասնաժողովի անդամներ, նիստեր, ընդհանուր ժողովներ, աղմուկ, չօղածապրութիւն, հաշվետուութիւն, քարտուղարական պաշտօն եւ այլն և այլն—դա ծիծաղելի է։ Հարկաւոր էր ուրեմն մտածել ընկերութիւնը վերակենդանացնելու։ Գեռ անցեալ տարւանից սկսած էր մի չպտնի ազ ի տ ա ց ի ա չօգուտ աչք գործի և, բնականաբար, շարժումը կենարոնացած էր հակակական խմբագրութիւնների շուրջը։ Վարելի է համարձակ ասել, որ բարի նախանձը գրգած էր բոլոր խմբագրութիւններին նոր անդամներ որոնելու, աչնպէս որ ժողովի օրը փոխանակ անցեալ տարւալ 13 անդամների, ներկայ էին 65 անդամ, գրութի բոլորը նոր մարդիկ, և որ աչք օրը ընկերութեան անդամների թիւը համնում էր մօտ 80-ի։

Ժողովի մէջ քննադատութեան գլխաւոր առարկան կզաւ նախկին վարչութեան գործունէութիւնը, որը բաւարար արդիւնքներ չէր ցոյց տւել և որը շատ կէտերում քննադատելի էր։ Վարչութեան կողմից տւած բացատրութիւններից խմայեց, որ նա աշխատել էր 1) տպագրել գրքեր, որոնք հարկաւոր լինելով հանդերձ, չէին հրատարակւիլ մասնաւոր հրատարակիչների ձեռքով, 2) որ վարչութիւնը ունեցել է իւր ուղղութիւնը գրքեր ընարելու մէջ, որը, եթէ շատ էլ արդիւնաւէտ չէ եղած, բաց օրը ունի իւր օգտակարութիւնը. դա է՛ դասական գրքերի հրատարակումը, գլխաւորապէս հին գրականութիւնից՝ աւելի աժան գնով, քան Վենետիկի հրատարակութիւնները։ Որովհետեւ ժողովականների մի մեծ մասը բուլրովին հակառակ ուղղութիւն է ուզում մտցնել ընկերութեան հրատարակչական գործի մէջ, ուստի պարտաւոր ենք համարում վարչութիւնից տւած բացատրութիւններից վերը վիշատակածները չարգանքով ընդունել, հետեւել անգամին թողնելով չպտնելու մեր կարծիքը, թէ ինչպիսի գործունէութեան կզանակով ընկերութիւնը կարող է ամենամեծ արդիւնք ցոյց տալ։

Ժողովը ամսի 2-ին կարողացաւ ընտրել վարչութեան նոր ատենապետ և նոր փոխ-ատենապետ։ Առաջինն է ալփմ պ. ֆիլիպպոս Վարդանան, երկրորդը՝ պ. Գրիգոր Տէր-Գրիգորեան։ Մնացին ընտրւելու վարչութեան միւս անդամները և խմբագրական մասնաժողովի անդամները։

## Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Ա Ր Դ Ի Ի Ն Ա Հ Ա Ն Գ Է Ս

Կովկասեան արդիւնահանդէսի Կարգադրիչ Մասնաժողովը հրատարակել է մի լրացնող չափերւած, որի գլխաւոր կէտերը սորա են:—

1. Արդիւնահանդէսին մասնակցելու չափաւորումները պէտք է հաստատուած ձևով նախօրօք հաղորդելին Կարգադրիչ Մասնաժողովին, ըստ կարելուցն վաղ, որ Մասնաժողովը կարողանայ ժամանակին հոգալ առարկաների համար հարկաւոր տեղեր պատրաստելու:

2. Առարկաները կարող են ուղղուել թիֆլիս, Մասնաժողովի անունով, որը իւր գործակատարի միջոցով կը հոգայ նոցա ստանալու թէ երկաթուղու կայարանից, թէ ապրանք փոխադրող գործակալութիւններէց և հասցնելու մինչև արդիւնահանդէսի շինութիւնը: Հանդիսաբերներէց սակաւ ապահովածները, եթէ ցանկանան, կարող են իրանց ցուցառարկաները ներկայացնել տեղական գլխաւոր գործակալներին, որոնց անունները չափոնի կը լինին գաւառական վարչութիւններում և որոնք կը հոգան ուղարկելու առարկաները թիֆլիս, Կարգադրիչ Մասնաժողովին հաշուով:

3. Առհասարակ արդիւնահանդէսի համար նշանակած բոլոր առարկաները պէտք է ներկայացուած լինին Մասնաժողովին՝ այս կամ այն միջոցով՝ ոչ վաղ քան յուլիսի 1-ը և ոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը, հետեւեալ բացառութիւններով.

ա) Ձմեռուայ պտուղները (տանձ, խնձոր և այլն) և ուշ հասնող բանջարանոցի հնդեղէնները և բօստանների արդիւնքները կարող են ներկայացնել և արդիւնահանդէսը բացելուց վետու, բայց ոչ ուշ քան հոկտեմբերի 5-ը: Խացիկներով բուսերը կամ այն բուսերը, որոնք պէտք է տնկելին հողի մէջ (այդ նպատակով նշանակած է պարարտացրած և բրած հողի առանձին բաժին), կարող են ներկայացնել ամեն ժամանակ, ուրեմն ամբողջ դարձան և ամառուայ ընթացքում, իսկ արդիւնահանդէսը սկսելուց վետու՝ մինչև հոկտեմբերի 5-ը:

բ) Այն գինիները, որոնք հանդիսաբերը կը ցանկանար նախ քան փորձաքննելը ենթարկել լուծումի, պէտք է ներկայացուին ըստ կարելուցն վաղօրօք, օրինակ՝ երկու ամիս արդիւնահանդէսը բացելուց առաջ:

գ) Ծերամ, կօկօծներ և սերմը թիթեռներով հանդերձ (տոպրակների մէջ)—արդիւնահանդէսը բացելուց մի ամիս առաջ:

դ) Սարքւած երկրագործական գործիքները—մինչև սեպտեմբերի 8-ը:

4. Յուցակադրերում պէտք է չափուած լինի, թէ ինչ դնով կարող են վաճառուել ցուցառարկաները: Բացի դորանից շատ ցանկալի է, որ ցուցակադրերում աւելացրած լինին ամբողջ մի շրջանի կամ անտեսութեան վերաբերեալ անտեսա-վիճակագրական տեղեկութիւններ ի միջի պլոց և հետեւեալ բովանդակութեան.—դանազան արդիւնքների տեսակը (խաղողի, հացաբլոսների, գինու և այլն), այս կամ այն վարուցանքսի դեւատիճատեղի

հունձը, արդիւնքների տեղական դները (տէրունական կամ տեղական չափերով), այս կամ այն արդիւնագործութեան մեծութիւնը (տարեկան դրամաշրջանը, աշխատողների և արհեստաւորների թիւը, տնտեսութեան հողածաւալը, արդիւնքների քանակութիւնը և այլն), այս կամ այն արդիւնագործութեան ժամանակը, արդիւնքները վաճառելու տեղը և կազմակերպութիւնը, գործիքները և այլն:

Մանօթութիւն: Մասնաժողովը խնդրում է խնամք տանել Հաղորդած տեղեկութիւնների ճշգրտութեան մասին, թողնելով Հաղորդողի վերայ նոցա լիակատարութեան չափը:

5. Գործարանական արդիւնագործութեան ներկայացուցիչները իրանց բռնած տեղի համար վճարում են—VIII բաժնում՝ իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 2 բուբլի ծածկած (և Մասնաժողովի ծախքով շինած) տեղերի համար և 1 բուբլի՝ բաց օդում: Միւս բաժիններում, նոյնպէս և առանձին դարպասներում, նպած տեղին, 2-ից մինչև 10 բուբլի քառակուսի սաժէնից:

6. Այն անձերը կամ տները, որոնք զանազան բաժինների կամ խումբերի վերաբերեալ առարկաներ են արդիւնագործում, կարող են իրանց բոլոր արդիւնքները միատեղ ներկայացնել այն պայմանով, որ նոքա այդ նպատակի համար իրանք իրանց հաշուով շինեն առանձին դարպասներ, վճարելով բռնած տեղի համար Մասնաժողովի հաշուարկութեան համեմատ: Միևնույն ժամանակ հանդիսաբերի արդիւնագործած այդ առարկաները պէտք է դրած լինին համապատասխան բաժիններում և խմբերում:

7. Նոքա, որոնք իրանց առարկաները լաւ ցոյց տալու համար կը ցանկանան ունենալ չարմարեցրած պահարաններ, պէտք է շինել տան իրանց հաշուով, բայց բաժնի կարգադրիչի ցուցմունքներով և առաջնորդութիւնով:

8. Այն հանդիսաբերները, որոնք կը ցանկանան օգտուել երկաթուղով կամ շողեհաւով ուղարկելու իրանց ցուցառարկաները, պէտք է Մասնաժողովին դորա մասին չալտարարեն, նշանակելով ուղարկողի անունը, ազգանունը կամ սունը և թիֆլիս ուղարկելիք առարկաների տեսակները, որ Մասնաժողովը տալ հարկաւոր հաւատարմութեղթը՝ ներկայացնելու երկաթուղու կալարանին կամ շողեհաւական գործակալութեան:

Այլ ընդհանուր ցուցումներից անկախ՝ կարգադրիչ Մասնաժողովը հարկաւոր է համարում առաջարկել հետեւեալ բացատրութիւնները.

Ա. ո ա ջ ի ն ը բ ա ժ ն ի վերաբերմամբ (երկրագործական արդիւնքների) ցանկալի է, որ արդիւնահանդէսը ներկայացնէր երկրագործութեան խսկական վիճակը, այսինքն, որ հանդէս բերած առարկաների քանակութիւնից կարելի լինէր կանոնաւոր գաղափար կազմել՝ թէ երկրի ինչ մասում ինչ մշակութիւն և արդիւնաբերումն է ղերակշռում, ինչ տեսակ հացաբոսեր և

ուրիշ բույսեր են աւելի տարածւած, և որոնք են միայն մի քանի տեղերում արդիւնաբերում: Հանդիսաբերներն պէտք է խմանան, որ երկրագործական արդիւնքները պէտք է խկապէս համապատասխանեն վաճառանոցի նմուշներին և ոչ թէ հատիկ-հատիկ ընտրւած լինին՝ չատկապէս արդիւնահանդէսի համար: Միակ բացառութիւնը, որ կարելի է թող տալ, դա սերմերը երկու տեսակի բաժանելն է ցանկու և վաճառելու համար: Առաջին բաժնում թէև բոլոր առարկաները պէտք է բաժանւին խմբերի և իւրաքանչիւր խմբում պէտք է կարգւին համեմատ տեսակին, ցեղին, նույնպէս ջրարբի և անջրղի տեղերում բուսցրած լինելուն, բաց թող են տըրւելու և առանձին անտեսութեան արդիւնքները միախմբւած ժողովածուներ՝ աչն պալմանով, որ հանդիսաբերը այդ տեսակ ժողովածուն կազմի իւր հաշւով, կարգադրելի ցուցումի համեմատ:

**Ն ր կ Ր Ո Ր Գ Բ ա ժ ն ի** (ալգեգործական և բանջարանոցական) վերաբերմամբ ցանկալի է, որ առարկաների համախմբումը կատարւի աչնպէս, ինչպէս սահմանւած է այդ բաժնի մանրամասն ծրագրում: 1) Աչն անձերը և տները, որոնք ցանկանում են արդիւնահանդէսին իրանց գործով մասնակից լինելու, կարող են պահանջել ալգեգործական բաժնում մինչև 25 քառակուսի սաժէն տեղ ցանկու, զանազան բույսեր տնկելու: Այդ նպատակը իրագործելու համար հանդիսաբերները պէտք է իրանց վերաջ առնեն հողի մշակութեան և բույսերի խնամելու ծախքերը, իսկ ջուրը կը ստանան Մասնաժողովից ձրի, որչափ հարկաւոր լինի:

**Ն ր Ր Ո Ր Գ Բ ա ժ ն ի** (զինեգործութեան) վերաբերմամբ պէտք է աչքի առաջ ունենալ՝ ընդունւած գինիները հետեւալ տիպերի բաժանելու:

I. Սպիրտակ գինիներ. ա) սովորական սեղանի գինիներ, բ) նուրբ սեղանի գինիներ. վերջիններս նոյնպէս բաժանւում են նոր և կարգին պահւած գինիներ, պատրաստ շիշեր ածելու:

II. Կարմիր գինիներ. ա) սովորական սեղանի գինիներ, բ) նուրբ սեղանի գինիներ (որոնք նոյնպէս են բաժանւում, ինչպէս և սպիրտակ գինիները), գ) ծանր գինիներ՝ կտրելու (coupage) համար գործածւող:

III. Դեսերտի գինիներ. ա) լիկօրի և բ) քաղցր գինիներ:

IV. Ֆշչացող գինիներ, շամպանեայ:

V. Կօնեակ և օղի:

Յանկալի է, որ առանձին ուշք դարձրւած լինի սովորական սեղանի գինիների հանդէսի վերաջ, որովհետև կովկասի զինեգործութեան գլխաւոր ուժը կազմում է գինիների այս դասը: Հանդիսաբերները պէտք է որոշակի մատնացուց անեն, թէ հանդէս բերող գինիները վերալիշւած խմբերից որին է չատկացնւում:

1) Աւելորդ ենք համարում առաջ բերել այդ մասնաւոր ծրագիրը, որ բխած է մեր ընթերցողին արդէն յայտնի ծրագրից («Մուրճ» № 3):

Իւրաքանչիւր գինին առանձնակի, որչափ կարելին է, պէտք է ունենալ հետը իւր ծագման համառօտ նկարագրութիւնը, որի մէջ նշանակւած լինին՝ տեղը, սրթան սյը (ջրաբքի և անջրղի), գինու հասակը, խաղողի տեսակները, որից պատրաստւած է գինին (եթէ գինին որոշ տեսակ խաղողից չէ ստացուել, աչն ժամանակ բաւական է վիշել, որ նա պատրաստուել է չափոնաւորում բուսնող այս ինչ և աչն ինչ տեսակներից), գինը՝ հաշւած սալլի սապալնէի, վեղրօյի կամ շիշի վերայ: Եթէ հանդիսաբերը՝ միևնոյն ժամանակ և արդիւնագործող-վաճառող է՝ պէտք է ցոյց տալ միջին տարեկան արդիւնահանութիւնը և նշանակած գնով վաճառելի արդիւնքի քանակութիւնը: Քննիչ լանձնաժողովը իրաւունք ունի գինիները խմելից խումբ տեղափոխել, եթէ հանդիսաբերը սխալ է դասակարգել իւր գինիները:

Համախմբւած գինիների ժողովածուների ղեկավարութիւնը և պարզեաբաշխութիւնը պէտք է իւրաքանչիւր հանդիսաբերի համար առանձին կատարուի:

Հանդէս բերւած արդիւնքների արժանաւորութիւնը հանգամանօրէն ցոյց տալու նպատակով՝ աչելուների համար շինելու է առանձին փորձասենեակ, որտեղ իւրաքանչիւր ցանկացող կարող է փորձել գինիները՝ նոցա ճաշակելով: Քինիների փորձը կատարելու է բաժնի կարգադրիչներին մէկի հսկողութեան տակ և հանդիսաբերների կամ նոցա հաւատարմատարների ներկայութիւնով: Հանդիսաբերներից իւրաքանչիւրը իրաւունք ունի ցանկացողների համար փորձելու տալ իւր գինիները. ցանկալի է որ կովկասում արդիւնաբերող բոլոր գինիների նմուշները լինին փորձասենեակում:

Տակտիկներով գինիներ չեն ընդունուում փորձասենեակում:

Ըստ հանդիսաբերի ցանկութեան, գինիները անօթով կարող են փորձի համար վաճառուել. բայց Մասնաժողովի սահմանած կանոնների համեմատ, գինիների վաճառումից դուրս փողերի մի չափնի տոկոսը պէտք է վերցնել՝ փորձասենեակ շինելու ծախքերը ծածկելու նպատակով:

Քինիները պէտք է ներկայացնին արդիւնահանողէսը սկսելուց երկու ամիս առաջ և ոչ պակաս քան 5 շիշ քանակութիւնով. իսկ փորձասենեակի համար ոչ աւելի քան 10 շիշ: Գրոշմների վերայ պէտք է նշանակած լինին հանդիսաբերի կամ առևտրական տան հասցէն, գինը և հունձի տարին:

Չ որ ուր դ բ ա ժ ն ի (չերամապահութեան և մեղուապահութեան) վերաբերմամբ պէտք է աչքի առաջ ունենալ, որ գործիքներ, նկարներ, մակարդակներ, հաւաքածուներ և այլն կարող են հանդէս բերել, բացի կովկասեան և անդրկասպեան հանդիսաբերներից, նաև ոռու և ալաղզի տները:

Հ ի ն դ ե ռ ու ղ բ ա ժ ն ի (տաւարապահութեան և կաթնատնտեսութեան արդիւնքների) վերաբերմամբ ցանկալի է ցուցահանդէսին ներկայացնել բոլոր տեղական պանիրների նմուշները, աչն է՝ օսի պանիր, թուշի,

աջարկան, կանաչ (Ախալքալաքի գաւառում), թեւ, ջիւ, բղուղի կամ քիւրի (մանրած և կանաչի հետ խառնած, ինչպէս Գարալապեազում պտորատուում է և կամ աղաջրի մէջ), մօթալի, թալիչի, բազու-գուբալկան (աներես պանիր), շիթիլի, թան, չերքեղա-արմաւիրական (ծխահար և միւս տեսակ), զազախի (հիւսային Կովկասից), քիւրի (Գաղստանից): Նոյնպէս քեֆիր, կաթնալին օղի և չոր սեր: Տնային կենդանիների բրդի հանդիսաբերները պէտք է նմուշները ներկայացնեն ամբողջ զնդմբով, վաճառելի ձևով և զանազան հասակի ու սեռի կենդանիներին:

**Վ և ց եր ու ղ բ ա ժ ն ի** (անտառապահական) վերաբերմամբ ցանկալի է, որ բացի այն առարկաներից, որ ցուց են տւած 6 խմբերում, ներկայացնեն փայտի փոխ-արդիւնքները. տօրֆ, եղեղն, խալի և այլն:

**Յ օ թ ն ե ի ո ղ բ ա ժ ն ի** (ձկնապահական) վերաբերմամբ: Գործիքների անունով պէտք է հասկանալ որսալու գործիքները և ածօթները, ինչպէս են՝ ուղկաններ, ցանցեր, թակարդներ և այլն. զանակներ, կացիններ և այլն. նաւակներ և այլն կաղապարակերտներով կամ բնական մեծութիւնով:

**Ու թ ն ե ի ո ղ բ ա ժ ն ի** (գեղջկարհետի և արհեստի) վերաբերմամբ: Ծրագրի մէջ չափնւած ցանկութիւնը—տեսնել արհեստաւորներին և գեղջկարհետաւորներին իրանց գործիքներով բանելիս ի ցուց հասարակութեան—պէտք է այն կերպ հասկանալ, որ արդիւնահանդէսին կարող են դալ և արհեստով պարապել ոչ թէ բոլոր հանդիսաբերները, այլ մի քանի նշանաւոր վարպետներ, ամեն մի նահանգի իւրաքանչիւր արհեստից մի մարդ: Եթէ գործը պահանջում է բացի վարպետից և օգնական, ի հարկէ վերջինիս ներկայութիւնը անհրաժեշտ է: Մեծ կարիք զգացած դէպքում, Մասնաժողովը կարող է գեղջկարհետաւորներին նպատակը թիֆլիս դալու և տուն դառնալու: Ընտրւած վարպետները, գործելով արդիւնահանդէսում, կարող են վաճառ հանել ոչ միայն իրանց կերտածքները, այլ և բոլոր այն համարհետաւորների, որոնք կը հաւատան առաջիններին իրանց ապրանքները: Մասնաժողովը չուս ունի, որ վարպետները իրանց կերտածքների վաճառումից զոչացած շահով կարողանան ծածկել իրանց դնալ-գալու և թիֆլիսում ապրելու ծախքերը: Յանկալի է տեսնել արդիւնահանդէսում գեղջկարհետաւորների նա մանաւանդ հետեւեալ խմբերից. 74, 76, 77, 78, 79, 80, 85, 86, 88 և 90 (տես «Մուրճ»-ի № 3. էրես 529):

**Ի ն ն ե ի ո ղ բ ա ժ ն ի** (մանկավարժական-արհեստագիտական) վերաբերմամբ—ցանկալի է, որ արհեստաւորական զարդների ձեւագործները ներկայացնեն ամենալաւերը և դասատուն-դասատուն. աճյալս որ կարելի լինի պարզ գաղափար ստանալ մի չափնի փամանակամիջոցում սովորեցրածի չաջողութեան մասին: Նոյնպէս օգտակար է այն գործիքների ներ-

կապացնելը, որոնց միջոցով և շնորհով պատրասուել են հանդէս բերած առարկաները:

Գարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը ներկայ համարում տպուղ պ. Լևոն Սարգսեանցի գրածքի վերայ, որտեղ, ի միջի աչրոց, երես 580—581, ակնարկում է եկեղեցապատկան և վանքապատկան կալածների անխնամ դրութիւնը: Մենք գտնում ենք, որ արդէն ժամանակ է այդ խնդիրը օրակարգ խնդիրների շարքը անցկացնել և նորանով լրջօրէն զբաղուել: «Մուրճ»-ը այդ խնդրով կը զբաղուի:

## „ՄՈՒՂ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ: «Մուրճ»-ի առաջին և երկրորդ ՆՆ-ները ուղարկւեցին հասարակ բանդերոշով, իւրաքանչիւրը 10 կողէկի մարկայով: Բանից դուրս եկաւ, որ այդպէս ուղարկելով, համարներից մի քանիսը կորան և մենք ստացանք այդ երկու ՆՆ-ների համար 6—7 դանդառներ մեր բաժանորդներից և մենք ստիպւած պէտք է երկրորդ անգամ ուղարկէինք մեր ամառղրի ՆՆ-ները, մանաւանդ առաջին Ն-ները: Դորա ղէմն առնելու համար, մենք լճուեցինք աջուհեան պատուիրած ուղարկել: Մի քանի տեղեր, որտեղ կարող ենք լոյս ունենալ մեր բարեկամների աջակցութեան վերայ, մենք ուղարկում ենք մէկի անունով որոշած տեղի բոլոր օրինակները, իւրաքանչիւրի վերայ նշանակած հասցեով. իսկ մնացած տեղերը մենք 3 Ն-ից սկսած ուղարկում ենք պատաստան հետ կապած պալմանագրութեան համաձայն, աջնպէս որ համարի կորստեան համար պատաստուէր կը լինի պատասխանատուն: Այն քաղաքները, ուր մենք հասնելիքներով ենք ուղարկում, հետևեալներն են՝

- 1) Ադուլիս (վերին և ներքին) պ. Մկրտում Արասխանեացին:
- 2) Ալէքսանդրոպօլ.—պ. Յ. Տէր-Միրաքեանցին:
- 3) Բաթում.—պ. Ա. Խօջամիրեանցին:
- 4) Բաքու.—պ. Ա. Դաւթեանցին:
- 5) Երևան.—պ. Արամ Մելեանցին:
- 6) Նուխի.—պ. Աբր. Բունեաթեանցին:
- 7) Շուշի.—պ. Ա. Բաբախանեանցին:
- 8) Հաշտարխան.—պ. Թոմաս Փանեանցին:

ԱԿԿԵՐՄԱՆ. Հայոց հոգևոր դպրոցին: Ուղարկում ենք «Մուրճ»-ը որպէս ճէշ պ. հոգաբարձու և երէցփոխան Խուղալիբեկի Աստուածատրեանի կողմից, որից ստացանք 10 բուբլի:

ԲԱԹՈՒՄ. պ. Կ. Տիւրեան: Այդ ինչպէս է պատահել, որ Դուք «Հանդէս Ամսօրեայ»-ի համար լօղւած էք զրում Պերճ Պաօշեանցի մա-

սին, տալիս էք կենսագրական տեղեկութիւններ և նորա վի-  
պասանութիւնների մասին մի քանի դատողութիւններ, և չէք  
վիշատակում Ձեր տեղեկութիւնների գլխաւոր աղբիւրը, որը,  
որպէս ենթադրում ենք, պէտք է «Մուրճ»-ը կրած լինի: Նթէ  
մեր ենթադրութիւնը ճիշդ չէ, այն ժամանակ Գուք վատ հե-  
տեղ էք ուսա-հայտց գրականութեան, քանի որ մի երկու  
կցկաւոր տեղեկութիւններ, որ դատած էք «Աղբիւր»-ի մէջ, Գուք  
գերադասել էք «Մուրճ»-ի տւած տեղեկութիւններից: Բայց Ձեր  
տւած տեղեկութիւնների մէջ կան այնպիսիները, որ Գուք միայն  
«Մուրճ»-ից կարող էիք վերցրած լինել: Աւ Վետու: Նրբ գրում  
էք մի անձի մասին, Գուք պարտաւոր էք վիշատակելու նորա  
վերջին գրւածքի գոնէ անունը, այն է՝ «Յեցերը»—վիպասանու-  
թիւն, որից արդէն մի մեծ կտոր պէտք է կարգացած լինէիք  
«Մուրճ»-ի մէջ Ձեր գրւածքը գրելիս (16 փետր.): Իսկ եթէ  
չէիք կարգացել—դա պատիւ չէ բերում Ձեզ, որպէս մի մար-  
դու, որը «ուսա-հայտց գրականութեան» մասին տեղեկութիւններ  
է ժողովում: «Առւածաղիկ»-ը Գուք համարում էք Պոօլեանցի  
գլուխ գործոց, այդ Ձեր գործն է:

ՆՈՒՒԻ. Հայտց ծխական դպրոցին: Ուղարկում ենք «Մուրճ»-ի համարները  
սկսած 1 №-ից, որպէս նւէր պ.պ. Յովհաննէս և Աբրահամ Բու-  
նեսիթեանցիների կողմից, որոնցից ստացանք 10 բուբլի Նուխուց:

ԺԸՆԵԻ. Ուսանող պ. Յոնան Գալթեանցին: Ձեր ուղարկած 10 բուբլուց  
վտ տւինք պ. Քր. Թագէտեանին 2 բուբլի, որպէս զիջումն  
ուսանողներին և ստացանք 28 կոպ. հասցէն փոխելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ուսանող պ. Գրիգոր Արեշեանին: Ստացանք պ. Կ. Նաղու-  
բեանից Ձեր ուղարկած 2 բ., ունիք վճարելու ևս 6 բ., որ կա-  
րող էք ուղարկել կամ երկուսական կամ երեքական բուբլիներ-  
րով, ինչպէս Ձեզ չարմար է:

«ՄՈՒՐՃ»-ի ընթերցողներին: «Մուրճ»-ի գրախօսութեան բաժնի մասին մի  
քանի բաժանորդներից տացել ենք նկատողութիւններ, որոնք  
մենք անուշաղիբ չենք ուզում թողնել: Նախ՝ նոքա չափում  
են իրանց ուրախութիւնը, որ վերջապէս մի այդպիսի բաժին  
բացւեց հովիտական մամուլի մէջ. երկրորդ՝ նոքա գտնում են,  
որ «Մուրճ»-ի գրախօսութիւնը տարբերում է մինչ աչժ տե-  
սածներից, նախ՝ սիստեմականութեամբ և երկրորդ՝ անաչառու-  
թեամբ: Բայց և այնպէս նոքա կարծում են, թէ իւրաքանչիւր  
գրքի մասին պէտք է աւելի խօսացւի, քան ինչ «Մուրճ»-ը  
խօսում է: Ահա այդ է, որ մեզ ստիպում է ներկայ պատաս-  
խանը տալ:

Գրախօսութիւնը մի բաժին է, որի նպատակն է չափանել ընթերցողներին լուս տեսնող գրքերի մասին: Ուրեմն այդ բաժնի ղլխաւոր նպատակն է չափարարութիւնը: Բայց չափարարութիւն ոչ թէ հեղինակի կողմից, այլ խմբագրութեան կողմից, որի նպատակները այլ են, հեղինակինը՝ այլ: Հեղինակը չափարարութեամբ ղլմում է հասարակութեան, որ նորա գիրքը ղնեն. իսկ խմբագրութիւնը իւր չափարարութեամբ ասում է, որ եթէ ընթերցողը ալն ղիրքը ղնի, ինչ կարող է ղանել նորանում: Խմբագրութիւնը այդպիսով ներկայանում է որպէս հեղինակաւոր բարեկամ իւր բաժանորդներին առջև: Իսկ այդ բանի համար հարկ չը կաջ անպատճառ երկար խօսել ամեն մի գրքի մասին: Պարզ է, որ բանը աչտակ երկարութեան մէջ չէ, այլ չափած կարծիքների հեղինակաւոր լինելու մէջն է: Կարճ խօսքերով պէտք է չափանել գրքի բովանդակութիւնը և կարծիքը, թէ սրքան չաջպած ղորժ է գրւածքը: Բոլոր խնդիրը սորա մէջն է, թէ մի թերթ ինչպիսի սովորութիւն ունի գրքի մասին խօսելու՝ բան հասկանալով, թէ ոչ, բարեխղճաւոր, թէ ոչ: Երբ որ մի օրպան, որպէս «Մուրճ»-ը, մի քանի ժամանակ ղորժ վարելուց չնտոջ կը վաստակի հեղինակութեան և բարեխղճութեան անունը, որին մենք ձգտում ենք, ալն ժամանակ ընթերցողը, փորձած լինելով «Մուրճ»-ի բարեխղճութիւնը, աւելի ես մեժ հաւատով կը վերաբերւի ղէպի ամսագրի չափած կարծիքները: Որքան էլ կարճ լինի մեր ղատողութիւնները, ընթերցողը թող համոզւած լինի, որ «Մուրճ»-ի քննադատը ամբողջ ղիրքը կարդացել է ու ալնպէս ղրել իւր մի քանի սողերը:

Մեր «Գրախօսութիւնը» քննադատութեան մի տեսակն է, որին եւրոպացիք անուանում են «բիբլիօգրաֆի» (bibliographie), ուսնները՝ «բիբլիօգրաֆիա»: Գա, ասում ենք, քննադատութեան մի տեսակն է, ժանրն է, որը իւր չատկանիչներն ունի: Այդ չատկանիչներից մէկն է՝ կարճութիւնը, երկրորդը՝ կարծիքի բացարձակութիւնը և երրորդը՝ սահմանափակումն: Բացարձակ, ալսինքն՝ անապացուց: Գուք երևի ղարմանում էք ղորա վերալ. ինչպէս թէ քննադատութիւն՝ առանց ապացուցների: Ահն լինչպէս. գրախօսը իւր ապացուցները պարտաւոր չէ առաջ բերել: Ապացուցներ բերել նշանակում է վիճաբանել կամ թող տալ վիճաբանութիւն. իսկ գրախօսութեան մէջ չը պէտք է վիճել. գրախօսութեանը խորթ է վիճաբանութիւնը նոյնքան, որքան նա չատուկ է ընդարձակ քննադատութեան, բայց մանաւանդ բարձր քննադատութեան: Գրախօսութեան մէջ քննա-

դատը իւր ասպացոյցները պահում է իւր մօտ, իսկ ընթերցողներին չափանում է միայն իւր կարծիքը. օրինակ՝ լնւ է, թէ վատ կազմած գիրքը, ոճը չարմար է թէ ոչ, ասպացոյցները համոզիչ և սպաւորութիւնը չաջող է, թէ ոչ և այլն: Եթէ գրախօսը օրինակներ է բերում, այդ ոչ թէ ասպացոյցանելու համար, այլ որ ոչ նշու կամ պարզելու համար իւր միտքը, որ պէս զի ընթերցողը աւելի լաւ ըմբռնի քննադատի ասածը:

Ասացինք, որ գրախօսութեան երրորդ շտականիչն է՝ սանձանափակումն, ալսինքն՝ գրախօսը չը պէտք է քննադատող գրքի նիւթից դուրս գալ: Կա պարզ է, ում արդեւած է վիճաբանել, ասպացոյցանել, նա հարկաւորութիւն չը պիտի չգալ, իւր հակացքները պարզելու նպատակով՝ դուրս գալ գրքի բովանդակութեան շրջանակից և աշխատէ իւր ասածը ասպացոյցանել ուրիշ նիւթերից քաղած եղբակացութիւններով:

Այդ բոլորից ինչ է դուրս գալիս: Ահա ինչ. երբ ընթերցողը չը պիտի իմանալ հիմունքները, թէ ինչո՞ւ քննադատը այս կամ այն կարծիքն է չափանում, ինչպէս նա հաւատալ գրախօսին: Այդ դժուարին պայմանի տեղ լուրջ օրգանը կրում է պատասխանատուութիւնը իւր վերայ: Մասնաւորելով մեր խօսքը «Մուրճ»-ի վերայ, մենք ասում ենք մեր ընթերցողներին, որ խմբագրութեանս մէջ ստացած մի գրքի մասին կարծիք չափանելը առաջարկում ենք այս կամ այն մարդուն, որին մենք ճանաչում ենք, իբրև ձեռնհաս, բարեմիտ, անաչառ: Երբ կասկածում ենք թէ մի գուցէ քննադատը սխալ է հասկացել կամ բաւականաչափ բարեմտութիւն չէ ցոյց տւել, մենք ինքներս պահանջում ենք բացատրութիւններ և կամ ինքներս ստուգում ենք:

Գրախօսութեան բաժնի համար ուրեմն խմբագրութեան գլխաւոր պարտականութիւնն է՝ գրքերը քննադատել իւր, թէ ուրիշներին, բայց անկասկած բարեմիտ և ձեռնհաս մարդկանց ձեռքով: Մեր ներկալ հանգամանքներում որքան է չաջողում մեզ այդ՝ վրաւի դժուարին գործը—այդ կը վկայեն ընթերցողները մի քանի ժամանակից և գուցէ տարիներից չետոյ Բայց միայն այս կ'ուզենք, որ իմանան ընթերցողները, թէ մեր ձևով հասկացած «գրախօսութեան» գիւտի պատիւը մեզ չէ պատկանում, այլ եւրոպական մամուլին: Այս բոպէին բոլոր եւրոպական և ռուսական ամսագիրները իրանց «գրախօսութիւն»-ը այդ ձևով են վարում, այս զանազանութեամբ, որ նոցա չափի գիտնականներ չունինք մենք, և մէկ էլ՝ որ նոցա գրախօսութիւնը աւելի կատարեալ է իւր կարծութեամբ. իսկ մեր գրականութեան մէջ դուրս եկող շատ թէ քիչ չնչին գրքերի մասին՝ հազիւ հազ վի-

չատակութիւն են անում: Ի հարկէ դա նորանիցն է, որ ևւրոպացիք անհամեմատ աւելի շատ դրքեր են հրատարակում, քան թէ մենք և ոչ տեղ և ոչ ժամանակ ունին՝ ամեն մի աննշան երեւոյթի մասին երկար խօսելու:

Ահա ձեզ երկու օրինակ հէնց այս շաբաթ մեր խմբադրութեանս մէջ ստացուող «Գրական Կենտրոնական թերթ» անւանած շաբաթաթերթից, որը սմբողջապէս նւիրած է գրախօսութեան (մարտի 2, 1889, թ. № 10):

«Հիրշբերգ, Ժ. Մ. դօքտօր, պրօֆեսօր, Նիւյօրկից մինչ Սանֆրանցիսկօ (ուրեմն մի տեսակ «Սալեանից—Էջմիածին»), ճանապարհորդական նկատողութիւններ, Ալպայից, 1888, տպարան Վալտ և Ընկ. (չառաջարան VIII և 276 երես, փոքր 8-ածալ) գինն է 4 մարկ:—

«Որպէս արդիւնք թեթև և միամտեղ ճանապարհորդութեան Միացեալ Նահանգների միջով և իբր երկասիրութիւն մի հեղինակի, որը ինչպէս պարզ երևում է, երբէք իրան նեղութիւն չի տւել աւելի խորը ճանաչել իւր մեծ երկրի և զարմանալի ազգի էութիւնը, այս գիրքը կարող է միայն մակերևութական (թեթև) լինել: Եւ որովհետև գրքի տեսակը և ձևը շատ սովորական են, ոչ մի բան չի տալացուցում այդ գիրքը, որ ոչ նորութիւն և ոչ հրատարանք է ներկայացնում: Մի քանի երեսներում պատահող քննադատական նկատողութիւնները կրկնապատիկ օտարութիւն են երևում համեմատած բնագրի մի քանի ծուռ դատողութիւնների և անհամբութիւնների հետ»:

Ահա մի ուրիշ օրինակ, որտեղ խօսքը մի իրաւագիտական լուրջ գրքի մասին է, զբւած գիտնական ոճով:

«Կօլեր, Գ-ր, Ի. պրօֆ., Դատը որպէս իրաւական չարաբերութիւն: Նախապատրաստութիւն քաղաքացիական դատի սխտեմի համար: Մանհայմ, 1888, թ., 152 երես և ալլն:

«Բիւլուլը, որ առաջին անգամ ընդունեց դատը որպէս իրաւական չարաբերութիւն, մի քանի հակառակորդներ ունեցաւ. բաց նորերումս աւելի ու աւելի հետևողներ դուաւ: Հեղինակը ներկայ գրածքով կամենում է դատավարութեան զանազան փոփոխութիւնների ընթացքի միջով անցկացնել նոյն կարծիքը և այդպիսով քաղաքացիական դատավարութեան մի սխտեմի համար հիմք դնել: Բնատրոշ է, սակայն ըստ մեզ անաջող, որ նա կողմերի դատավարական չարաբերութիւնը գէպի դատարանը չի ընդունում, այլ այդ չարաբերութիւնը նա միմիայն կողմերի իրաւ մէջն է տեսնում: Մասնրամասնութիւններն և բի մէջ մտնելը մի գրքի աւելի թով աչսքան լաչնածաւալ

տե՛նդե՛նց ո՛վ անհնարին է աչս տեղում (Auf rinzulheiten einzugehen bei einer Schrift von so umfassender Tendenz verbietet sich an dieser Stelle von selbst): Գառախան շարաբերութիւնները չէնքը գլխաւոր նիւթն է, բայց շարմար ղէպքերում նաև մասնաւոր խնդիրներն են շոշափում):

Ահա՛ ձեզ և գրախօսութիւն մի աղքատ գիտնական գրքի առիթով: Ան մի քանի տող մենք՝ շխտամբ ջոկեցինք միւսները: Եւ չը կարծէք թէ գրախօսին միաջն տեղն է պակասել, որ մանրամասնութիւնները մէջ մտնին. ո՛չ, այլ որովհետև դորան հակառակ է «գրախօսութիւն» բաժնի բնաւորութիւնը: Նթէ գրախօսը սկսէր մանրամասնութիւնները մէջ մտնել և հեղինակի մտքերը քննադատել հիմնաւոր կերպով, պաշտպանէր կամ հակառակէր նոցա—այն ժամանակ նա պէտք է գրէր մի ընդարձակ լօղւած, որը, սակա՛ն, չէր տպւիլ գրախօսութեան բաժնում, այլ կը տպէր մի այլ բաժնում, որպէս ընդարձակ քննադատութիւն, որպիսին «Մուրճ»-ը տեսց պ. Պռօշեանցի վէպերի մասին, որպիսին գուցէ դալ համարում տալ մեր նոր բանաստեղծների, մասնաւորապէս պ. Յովհաննիսեանի մասին: Նկատեցէք, որ այն գերմանացի գիտնական գրախօսը իւր կարճատօտ զեկուցման մէջ մի տեղ ասում է՝ «ըստ մեզ անաջող». ուրեմն նա համաձայն չէ հեղինակի հետ. բայց և այնպէս նա չի վիճարանում և չի էլ ասում թէ ինչու է գտնում անաջող: Եւ, չը նաչած դորան, այդ կարճ զեկուցումը, որի մէջ քննադատութիւն էլ կալ, վալը ի վերոջ չէ և ինչո՛ւ. որովհետև այդ փոքրիկ զեկուցումը, այն, անապացուց զեկուցումը, պատկանում է այն մարդու գրչին, որին կարող էր հաւա տալէրը լիշած «Գրական Անտորոնական թերթ»-ի խմբագիր պրօֆեսսոր դօկտօր Յարնկէ: Իսկ ընթերցողները, այդ թերթը կրկար տարիներ կարդալով, արդէն համոզւած են, որ պ. Յարնկէն վստահելի մարդ է և որ նորա թերթի մէջ տպւածը անպատճառ ըղխում է հեղինակաւոր մարդուց: Իսկ ընթերցողներն էլ կարդում են այդ թերթը, որը ամբողջապէս գրախօսութիւն է, միմիայն նորա համար, որ խանան՝ ինչ նոր գրքեր են տպւել, մօտաւորապէս ինչ բովանդակութիւն ունին և արժէ՞ արդեօք ձեռք բերել և կամ, ձեռք բերելուց վատու, ինչ կէտերի վերաջ պէտք է ուշադրութիւն դարձնեն, վիճելի տեղերը որոնք են և ալն: Մենք բերինք միայն մի թերթից օրինակներ. բայց ամապիրներումն էլ գրախօսական բաժինը նոյնն է ներկայացնում:

Այդ հօ այդպէս: Բայց «Մուրճ»-ը շարմարելով մեր հանդամանքներին, իւր գրախօսութեան բաժնում այն նեղ շրջանակից դուրս է գալիս, և, օգտւելով ղէպքից, զեկուցող գրքերից օգտակար քաղածներ է անում, ինչպէս օրինակ, անցեալ Ռօ-ում, խօսելով Գանձակի նահանգի վերաբերեալ պ. Ջէլզլիցի գրքի մասին և ալն: Այդ և դորա նման զեկուցումները աւելի են, քան ինչ հարկաւոր է գրախօսական բաժնի շնամար. բայց ամեն բան խստութեամբ իրարից բաժանելու կարիք այս բոլորին հասարա-

կութիւնը դեռ ևս չի ղզում. այդքան կատարելութեան դեռ ևս չենք հասած:

ԲԱԳՈՒ Պ. ԱԼ. Աբելեանցին: Ստացանք Ձեր լողածը, բայց աւելի վաղ ստացածներ կան, աչնպէս որ պատասխանը մինչ մի ամիս հազիւ կարողանանք սալ:

Մեր ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ: Յանկանարով Չատկից առաջ դուրս բերել ներկալ Ռ-ը, ստիպեցինք այս անգամ կրճատել Ներքին Տեսութիւնը և Բաղաբական Տեսութիւնը բաց թողնել, որպէս բացառութիւն:

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

---

## „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Ուսուցիչներին, վարժուհիներին և բարձրագույն դպրոցներին ուսանողներին համար:**

ԹԻՖԼԻՍՈՒՄ վճարում են կամ միանւաղ 8 ռուբլի տարւայ սկզբին և կամ տարեկան 10 ռուբլի այսպէս՝

Յունւարի 1-ին . . . . .	2 ռ.
Փետրւարի 1-ին . . . . .	2
Մարտի 1-ին . . . . .	2
Մայիսի 1-ին . . . . .	2
Սեպտեմբերի 20-ին . . . . .	2

ԳԱԻԱՌՆԵՐԻՅ ուղարկում են տարեկան 9 ռուբլի այսպէս՝

Յունւարի 1-ին . . . . .	3 ռ.
Փետրւարի 1-ին . . . . .	3
Մարտի 1-ին . . . . .	3

Բարձրագույն դպրոցներում ուսանողները վճարում են տարեկան 8 ռուբլի այսպէս՝

Յունւարի 1-ին . . . . .	3 ռ.
Փետրւարի 1-ին . . . . .	3
Մարտի 1-ին . . . . .	2

Հասցէ՝ Тифлисъ. Редакція журн. МУРЧЪ.

Ի Ս Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ր Ե Մ Ե Ք Ե Ն Ա Ն Ե Ր  
 „Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Ի Ն Գ Ե Ր Ի“ Ն Ի Ի - Ե Օ Ր Կ Ո Ւ Մ

Ա Ր Ժ Ա Ն Ա Յ Ա Մ

աշխարհի մէջ կարեւորեցանք ըրր ցուցանողէսներում

Ա Մ Ե Ն Ա Ր Ա Ր Զ Ր Պ Ա Ր Գ Ե Ի Ն Ե Ր Ի

Կարևոր ընկերներ տան արկիւնների և աղքիւ օգնականներ ըրր արհեստաւորների համար

Գ Տ Ն Ի Ո Ւ Մ Ե Ն Մ Ի Մ Ի Ա Յ Ն

Թիֆլիսում. Ձեռքեր ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօ-  
 լովնսկի պրօսպեկտի վերայ, Միլիտանովի տան և նրա բաժանմունք-  
 ները մէջ:

Բազում. Մեքայէլեան փողոցում,  
 Մերգա Աւագեանի տ.  
 Բուժայիտում. Բուլվարի դէմ  
 Չերեկովի տ.

Բաթումում. Պօլեցիական փողո-  
 ցում, Թէքլի օլլու տ.  
 Թէհրանում. Մարշ-Մէյդանի  
 դէմ, բուլվարի վերայ:

և նրանց շանապարհորդող Գործակալները ծոց

Միջին եւ Հիւսիսային Ամերիկայի ՀԱՄԱՐ ՁԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.  
 ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ




արտանուծիւն ստացած



աւետարական դրօշմը.


Գ. Ն Ե Յ Գ Ի Լ Ի Ն Գ Ե Ր

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, ահն է՝ չարաթով կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ զրաւակիանով զրամը վճարելու համար:  
 Յ. Գ. Ձինգերի և ընկ. ըրր պահեստներում գտնուում են մերկենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենայի պատկանելի իրեղէններ ամենազափաւոր գներով:



# THE HISTORY OF THE

ROYAL SOCIETY OF LONDON  
AND THE  
ROYAL SOCIETY OF MEDICINE





# Մ Ո Ւ Ր Ճ

## ԱՄՍԱԳՐԻ

ԲԱՃԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

Տարեկան բաժանորդագիրը . . . . .	10	ր.
Կէս տարւանը . . . . .	6	ր.
Երեք տնւանը . . . . .	4	ր.
Մի գրքովը . . . . .	1	ր. 50 կ.

Աստղիչները, փարձուհիները և բարձրագոյն դպրոցների սանտոյները փաշտում են զիջումներ, համեմատ սանձին տղած չաչարարութեան:

Մարձի սմէն մի համարը, որպէս սանձին «Հրակր»-ի մէջ սուսած էր, ունենարու է 8 — 10 տարադրական թիւրթ, կամ որ նոյնն է՝ 128 մինչ 160 երես: Մարձը դարձմ տուած է 113 երես աւելի, քան միջին թուով խոտուցածը: Ամբողջ տարին Մարձը կազմէրու է 12 գիրք, երեք մեծ հատարներ, շուրջ 1800 երեսով:

Ներկայ № 4-ով լրանում է սանձին հատարը:  
Նոր բաժանորդները կը ստանան նախորդ համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսուկան մի երեսի համար . . . . .	10	ր.
„ կէս երեսի համար . . . . .	6	ր.
„ քառորդ երեսի համար . . . . .	4	ր.

Գրքերի չաչարարութիւնների համար կարելի է վճարել նաև չաչարարուած գրքերով՝ տղա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРՄԻ“ Խմբագրութիւնը գտանուում է՝ Գանուկան փողոց, սանն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ Іоаннісіани), բոլորովին մօտ Նրեանեան հրատարակին: